ՇՈՒՇԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2004

338.48
Հ - 42

Գիրքը հրատարակման է երաշխավորել
ԵՊՏԻ տնտեսական աշխարհագրության ամբիոնը

ՀՏԴ 338.48
ԳՄԴ 75.81
Հ 422

Մասնագետ խմբագիր՝
Աշխ. գիտ. դոկտ. պրոֆ. Ս. Ա. Սերգեյան

Գրախոսներ՝
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա. Հովհաննիսյան
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մ. Թոխատյան

Հարությունյան Շ. Լ.
Հ 422 Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն.– Եր.: Զանգակ–97, 2004, 160 էջ:

Աշխարհագետ, հայրենագիտության և էքսկուրսիոն գործի կազմակերպման մասնագետ Շուշան Հարությունյանի տույն գրքում քննարկված է միջազգային զբոսաշրջության ձևավորման, զարգացման գործընթացը: Վերլուծված են զբոսաշրջության ինդուստրիայի ձևավորման, կառուցվածքին, տեսակներին, ձևերին վերաբերող հարցերը:

Առանձնահատուկ տեղ են հատկացված այդ ոլորտի զարգացման գործում վճռական դեր խաղացող երկրներին, տարածաշրջաններին, դրանց յուրահատկություններին, ստացվող եկամուտներին, զբոսաշրջության աշխարհագրությանը: Մեծ տեղ է հատկացված Հայաստանում այդ ոլորտի ձևավորման, զարգացման նախապայմաններին, արդի վիճակին ու հեռանկարային զարգացմանը վերաբերող հարցերի քննարկմանը:

Այն նախատեսված է ուսանողների, դասախոսների, զբոսաշրջությամբ զբաղվող, հետաքրքրվող մասնագետների համար:

Հ $\frac{4205000000}{0003(01)-2004}$ 2004 ԳՄԴ 75.81

203580
SV00900102

ISBN 99930 – 2 – 794 – 4

© Հարությունյան Շ., 2004
© «Զանգակ-97» հրատարակչություն, 2004

Հրատարակչության տնօրեն՝ ՄԱՇԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ ՆԱՎԱՐԴ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ ԼԱԼԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
Կազմի համակարգչային ձևավորումը՝ ԱՐԵՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16
ծավալը՝ 10 տպ. մամուլ, տպաքանակը՝ 200

Երևան, 375012, Կոմիտասի 49/2:
Հեռ. 23–25–28, 23–25–95, ֆաքս 54-06-07
E-mail: zangak@arminco.com, URL: www. zangak.am

ԵՊՀ ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
SARKIS AND MARIE IZMIRLIAN LIBRARY OF YEREVAN STATE UNIVERSITY

Ներածություն

XX դարի երկրորդ կեսից հետո համաշխարհային չափերով արագորեն զարգանում է զբոսաշրջությունը: Այն այժմ փաստորեն դարձել է շատ երկրների եկամտի կարևոր աղբյուր: Զբոսաշրջությունը սաղմնավորվել և զարգացել է առաջին հերթին եվրոպական երկրներում: Այդ տեսակետից առավել հանրահայտ են Ֆրանսիան, Գերմանիան, Իսպանիան, Իտալիան, Հունաստանը, Մեծ Բրիտանիան, որոնց համար զբոսաշրջությունը դարձել է եկամտի կարևոր բնագավառներից մեկը: Այն այդ առումով արդեն կարևոր դեր ունի նաև Չինաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Թուրքիայում, Կիպրոսում և շատ այլ երկրներում: Վերջին տվյալներով աշխարհում զբոսաշրջիկների թիվը տարեկան կազմում է 600 մլն մարդ, մոտակա տարիներին այն կհասնի 1 մլրդ–ի: Զբոսաշրջությունն արագորեն զարգանում է ոչ միայն Եվրոպայում (որտեղ այն ծնունդ է առել), այլև Ամերիկայում, Աֆրիկայում, Հարավարևելյան Ասիայի երկրներում: Քանի որ մեծանում է հետաքրքրությունը զբոսաշրջության նկատմամբ, ապա անհրաժեշտություն է զգացվում ունենալ այդ բնագավառին նվիրված մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, ուղեցույցներ:

Ընթերցողին ներկայացվող սույն գիրքը նվիրված է միջազգային զբոսաշրջության սաղմնավորման, տարածքային կազմակերպման, հեռանկարային զարգացման խնդիրներին: Մասնավորապես, քննարկված են զբոսաշրջության տնտեսության ձևավորման, դրա կառուցվածքին վերաբերող հարցերը: Վերլուծված ու լուսաբանված են զբոսաշրջության ձևերն ու տեսակները, զբոսաշրջիկների խմբերը, դրանցից յուրաքանչյուրի հետաքրքրությունները, ռեկրեացիոն պահանջմունքները: Օգտագործելով միջազգային զբոսաշրջությանը վերաբերող աղբյուրները, վիճակագրական փաստացի տվյալները գրքում կարևոր տեղ է հատկացված զբոսաշրջությունից ստացվող եկամուտների ու դրանց սոցիալական նշանակության հարցերի քննարկմանը, վերլուծմանը (որոնք տնտեսագիտական հետաքրքրություն են ներկայացնում):

Գրքում մեծ տեղ է հատկացված նաև միջազգային զբոսաշրջության աշխարհագրությանն ըստ տարածաշրջանների ու դրանց բնական պայմանների ու պատմական առանձնահատկություններին, որոնք, ի դեպ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում զբոսաշրջիկների համար:

Աշխատանքի առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող բաժիններից է Հայաստանի Հանրապետությանը վերաբերող գլուխը: Դրանում հանգամանորեն քննարկված, գնահատված են Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ինդուստրիայի զարգացման նախապայմանները, առանձնահատկությունները, դրանց օգտագործման ուղիները:

Մասնավորապես, առանձնահատուկ ուշադրություն է դարձված ինչպես հանրապետության զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող բնական ռեկրեացիոն էկզոտիկ ռեուրսների, այնպես էլ մարդածին ռեսուրսների՝ պատմամշակութային հնագույն կոթողների, հուշարձանների գնահատմանը, զբոսաշրջության առումով: Հանգամանորեն քննարկված է հանրապետության այս ոլորտի արդի վիճակը փաստացի տվյալներով:

Գրքում, որ շատ կարևոր է, հիմնավորված է Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման ուղիները համապատասխան եզրակացություններով: Հիմնավորվում է, որ հիրավի, միջազգային զբոսաշրջությունը կարող է դառնալ ՀՀ տնտեսության առավել եկամտաբեր բնագավառ, որ 2002 թվին այդ ոլորտից ստացված 200 մլն դոլարի փոխարեն մոտակա հեռանկարում այն կարող է առնվազն հինգ անգամ ավելանալ:

Գիրքն օգտակար կլինի զբոսաշրջության ինդուստրիայով, աշխարհագրությամբ զբաղվող մասնագետների, բուհերի ուսանողության և այդ բնագավառը կառավարող մասնագետների համար:

ԳԼՈՒԽ I

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՆՐԱ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Զբոսաշրջությունը որպես աշխարհագրական և տնտեսագիտական ուսումնասիրման, գնահատման բնագավառ

Հասարակության զարգացման, աշխարհի, շրջապատի նկատմամբ մարդու հետաքրքրությունների ընդլայնման արդի ժամանակաշրջանում համաշխարհային չափանիշով գնալով հասարակության կողմից առավել մեծ ու լայն հետաքրքրություն է ներկայացվում զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրներին: Հիրավի, զբոսաշրջությունը մարդկանց մեծ մասի պատկերացմամբ կապված է հանգստի, նոր տպավորությունների, հրապուրանքների բավարարման և աշխարհն ավելի լավ ճանաչելու հետ: Այդ առումով, զբոսաշրջությունն արդեն իսկ բազմակողմանիորեն մտել է մարդու կյանքի մեջ, որը ձգտում է իր համար հայտնաբերել, ճանաչել նոր տարածքներ, բնական և պատմաճարտարապետական հուշարձաններ, ինչպես նաև աշխարհի տարբեր ժողովուրդների սովորույթներ և այլն:

Զբոսաշրջության զարգացումը պայմանավորված է բնական պայմանների՝ կլիմայական, ռելիեֆային առանձնահատկությունների, աշխարհագրական միջավայրի, տրանսպորտային ուղիների, տնտեսական համակարգի բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսների առանձնահատկություններով, որոնց օգտագործումը փաստորեն բերում է խոշոր եկամուտ, որն ապահովվում է տնտեսական տարբեր գործառություններով: Ինչպես ասվեց, զբոսաշրջության գործընթացը պայմանավորված է աշխարհագրական բազմաթիվ գործոններով: Մասնավորապես, այն զուգակցվում է երկրների, տարածաշրջանների ջերմային ռեժիմի, տեղումների քանակի, պարզկա օրերի, կենդանական ու բուսական աշխարհի առանձնահատկությունների, բնակչության ազգային ու էթնիկ կազմի, նրանց սովորույթների, մշակույթի, պատմաճարտարապետական կոթողների գնահատման, դրանց զբոսաշրջային նշանակության և աշխարհագրական այլ առանձնահատկությունների հետ: Իսկ

այս բոլորի գնահատումը զբոսաշրջության համար կատարվում է ինչպես աշխարհագրական, ճանաչողական, այնպես էլ տնտեսագիտական մեթոդներով, արժեքային արտահայտությամբ: Հետևաբար զբոսաշրջությունը հանդիսանում է ինչպես աշխարհագրական, այնպես էլ տնտեսագիտական ուսումնասիրման բնագավառ:

Զբոսաշրջության մասին հստակ պատկերացում կազմելու համար, անհրաժեշտ է իմանալ, որ այն արդեն իր ուրույն տեղն ունի տնտեսագիտական, տնտեսաաշխարհագրական կոնկրետ այն գիտությունների համակարգում, որոնք ուսումնասիրում են աշխարհի կամ առանձին երկրների ազգային տնտեսությունների ոլորտները (մասնավորապես երկրների, տարածաշրջանների տնտեսությունները, համաշխարհային տնտեսությունը, տնտեսական, տնտեսաաշխարհագրական միտքը):

Անժխտելի է այն փաստը, որ զբոսաշրջությունն այժմ դարձել է համաշխարհային տնտեսության առավել բարձր եկամտաբեր ճյուղերից մեկը: Շատ երկրներում այն տնտեսության եկամտի վճռական դեր խաղացող աղբյուրն է: Այսպես, օրինակ, ընդամենը 9 հազ. կմ² տարածք, 750 հազ. բնակիչ ունեցող Կիպրոսը տարեկան 2 մլրդ ամերիկյան դոլար եկամուտ է ստանում զբոսաշրջությունից: Ամեն տարի այս երկիր է այցելում շուրջ 2 մլն արտասահմանյան զբոսաշրջիկ: «Սեյշելյան Կղզիներ» հանրապետությունը, որն ունի ընդամենը 405 կմ² տարածք և 73 հազ. բնակիչ, տարեկան 117–130 հազ. միջազգային զբոսաշրջիկ է ընդունում, և նրա տնտեսությունը հիմնականում հիմնված է միջազգային զբոսաշրջությունից ստացվող եկամտի վրա [21, 348]: Մալթան, որն ունի ընդամենը 316 կմ² տարածք և 400 հազ. բնակիչ, ամեն տարի ընդունում է մինչև 1 մլն զբոսաշրջիկ, և զբոսաշրջությունն արդյունաբերությունից հետո նրա եկամտաբեր վճռական դեր խաղացող ճյուղն է հանդիսանում [25, 31]:

Զբոսաշրջությունը լայն զարգացում ունի նաև Հունաստանում, որտեղ այդ ոլորտի զարգացման արմատները շատ հին պատմություն ունեն: Ամեն տարի այդ երկիր է այցելում մինչև 12 մլն արտասահմանյան զբոսաշրջիկ: Հետաքրքիր է, որ այս երկիրը 1990–ական թվականների սկզբներին զբոսաշրջությունից տարեկան ստացել է 4.0–4.5 մլդ. դոլար եկամուտ, իսկ 2002 թ. այն հասել է շուրջ 9.0 մլդ [2003 թ. զբոս. զեկույց]:

Կարևոր ենք համարում նշել, որ այդ բնագավառում՝ զբոսաշրջության զարգացման համար, Հայաստանի Հանրապետության պոտենցիալ հնարավորությունները ևս բազմազան են: Սակայն, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ հնարավորությունները դեռևս չեն օգտագործվում կամ օգտագործվում են խիստ անբավարար չափով:

ՀՀ տնտեսության զարգացման արդի ու հեռանկարային հրամայական պահանջներից է այդ ռեսուրսների բազմակողմանի ուսումնասիրությունն ու գիտականորեն հիմնավորված գնահատումը և դրանք շրջանառության մեջ դնելը: Փաստորեն ունենք հարստության աղբյուր, բայց չենք օգտագործում:

Վերջին տվյալներով աշխարհի չափանիշով զբոսաշրջության համակարգում զբաղվածների թիվը կազմում է ավելի քան 350 մլն մարդ [22, 3]:

Տնտեսագիտական ուսումնասիրությունների առումով շատ հետաքրքիր է, որ այս բնագավառում զբաղված են աշխարհի բնակչության բոլոր աշխատողներից յուրաքանչյուր 10–րդը: Այս բնագավառում զբաղվածների թիվն աճում է երկու անգամ ավելի արագ, քան սպասարկման մյուս ոլորտներում:

Հետաքրքիր է նաև, որ դեռ 1996 թ. տվյալներով, միջազգային զբոսաշրջությունից ստացված ընդհանուր եկամուտը կազմել է 425 մլդ դոլար: Իսկ դա կազմում էր այդ տարվա համաշխարհային արտահանումների ընդհանուր ծավալի 8%–ը և համաշխարհային ծառայությունների ավելի քան 30%–ը [28, 3]:

Այս ճյուղի մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար, ասենք, որ զբոսաշրջիկ ճանապարհորդողների թիվն ամբողջ աշխարհում արդեն տարեկան կազմում է շուրջ 600 մլն մարդ: Ըստ որում, տարեցտարի դրանց թիվը մեծ չափով ավելանում է: Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ԶՀԿ) կանխատեսումների համաձայն 2010 թվականին աշխարհում զբոսաշրջիկների թիվը կհասնի մեկ միլիարդի: Նշենք նաև, որ այժմ երկրագնդի ողջ բնակչության թիվը կազմում է ավելի քան 6 մլրդ մարդ:

Գիտական հետազոտությունների առումով հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ զբոսաշրջությանը բաժին է ընկնում աշխարհի ներդրումների ամբողջ ծավալի 7%, հարկային եկամուտների մուծումների 5%, ինչպես նաև սպառողական ծախսերի 11 %–ը [20, 5]:

Զբոսաշրջությունը խոշոր ազդեցություն է թողնում տնտեսության այնպիսի կարևոր բնագավառների վրա, ինչպիսիք են տրանսպորտն ու կապը, առևտուրը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, լայն սպառման արտադրանքի թողարկումը և այլ բնագավառներ: Այսինքն, այն հանդիսանում է սոցիալ–տնտեսական զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը:

Զբոսաշրջությունը, փաստորեն դարձել է տնտեսության առանձնահատուկ ոլորտ, որտեղ բնականաբար գործում են տնտեսական զարգացման այնպիսի օրենքներ, ինչպիսիք են՝ արտադրության արդյունավետության բարձրացման, արժեքի, պահանջարկի ու առաջարկի, գնագոյացման և այլ օրենքներ: Բացի դրանից, այս ոլորտում ձևավորվում, որոշվում են շուկայական հավասարակշռությունը, սեփականության հարաբերությունները և տնտեսական զարգացման այլ խնդիրներ:

Մյուս կողմից զբոսաշրջությունը, մարդու գործունեության և առհասարակ տնտեսության յուրահատուկ բնագավառ է, հետևաբար տնտեսական զարգացման վերը նշված օրենքներն այստեղ նույնպես յուրահատկություններ ունեն: Այդ օրենքներն այս ոլորտում դրսևորվում են կոնկրետությամբ, այսինքն զբոսաշրջային կազմակերպությունների գործունեությամբ:

Հաշվի առնելով զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի բուռն զարգացման ընթացքը, այդ բնագավառի մասնագետների կարծիքով XXI դարը կդառնա զբոսաշրջության դար:

Անկասկած, յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության համար կարևոր նշանակություն է ստանում զբոսաշրջության շուկայի՝ համապատասխան ապրանքատեսակների, ծառայությունների, այդ բնագավառում կատարվող ներդրումների գիտական բազմակողմանի ուսումնասիրությունը և վերլուծությունը: Դա հնարավորություն կտա ի հայտ բերել տվյալ երկրի հնարավորությունները զբոսաշրջության հեռանկարային զարգացման բնագավառում և որոշել նրա տեղը համաշխարհային զբոսաշրջության համակարգում:

Այդ տեսակետից գիտագործնական հետաքրքրություն է ներկայացնում միջազգային զբոսաշրջության համակարգում Հայաստանի Հանրապետության տեղի ու դերի գնահատումը:

2. «Զբոսաշրջություն» հասկացության բովանդակությունն ու բնորոշումը

Չնայած, զբոսաշրջությունն արդեն դարձել է մարդու տնտեսական գործունեության բավականին եկամտաբեր, արագորեն զարգացող բնագավառ, սակայն դեռևս հստակորեն չի տրված «զբոսաշրջություն» հասկացության բնորոշումն ու բովանդակությունը:

Զբոսաշրջության հիմնահարցերով զբաղվող տարբեր մասնագետների մոտ այն մեկնաբանվում է տարբեր ձևով: Ըստ որում, «զբոսաշրջությունը» դեռևս ընդունված միանշանակ բնորոշում չունի ոչ միայն այդ բնագավառի գիտական, տեսական հարցերով զբաղվող մասնագետների կողմից, այլև զբոսաշրջության կազմակերպիչների, կազմակերպությունների կողմից: Ասենք նաև, որ որպես սոցիալ–տնտեսական բավականին բարդ երևույթ, այն դեռևս անբավարար է ուսումնասիրված: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ զբոսաշրջության ոլորտն ունի բարդություններ ու դժվարություններ քանակական տեսակետից գնահատելու համար:

Այս առումով, հարկ ենք համարում փոքր–ինչ վերադառնալ «զբոսաշրջության» ակունքներին:

Բառարաններում տրված բացատրության համաձայն, ճանապարհորդությունը, «երթևեկություն» կամ «մեկնում» է որևէ տեղ կամ այլ երկիր՝ մշտական բնակության, «մեկնում» որևէ այլ նպատակով: «Ճանապարհորդություն» հասկացությունը չունի միակերպ բացատրություն: Այն պատմական տարբեր ժամանակներում տարբեր բովանդակություն է ձեռք բերել՝ կապված նրա նկատմամբ հասարակության մեջ ձևավորված սոցիալ–տնտեսական պահանջմունքների հետ: Սակայն, դրանց մեջ ընդհանուրն այն է, որ համաշխարհային շատ լեզուներում, որպես կանոն, «Ճանապարհորդություն» հասկացությունը մեկնաբանվում է հիմնականում այսպես – անհրաժեշտությամբ մեկնել որևէ տեղ:

Նախկինում, ցանկացած ճանապարհորդություն կապված էր շատ անհարմարությունների հետ՝ անգամ կյանքին վտանգ սպառնացող:

1815 թ. անգլիացի արիստոկրատ երիտասարդներն իրենց համար փորձեցին ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ, կատարելով ճանապահորդություն հարավային Ֆրանսիա, այնուհետև Իտալիա: Այդպիսի մեկնումները հիմնականում նպատակ ունեին ուղևորությունները զուգորդել զվարճությունների, բավականությունների հետ: Հետագայում փոխադրամիջոցների առավել կատարյալ ձևերի՝ հարմարավետ նավերի, ավտոբուսների, ինքնաթիռների, ավտոմեքենաների հայտնագործելուց հետո միայն հնարավորություն ստեղծվեց զբոսաշրջային ճանապարհորդությունների մեկնել առավել հեռու վայրեր:

Աստիճանաբար «զբոսաշրջությունը» առավել լայն զանգվածային բնույթ ստացավ նաև բիզնեսի աշխարհում:

Այսօր, մենք զբոսաշրջությունն ընդունում ենք, հիրավի, որպես XX դարի զանգվածային ֆենոմեն (երևույթ), որպես մեր ժամանակների ամենապայծառ երևույթներից մեկը, որն իրապես թափանցում է մարդու կյանքի բոլոր ոլորտները և փոխում շրջապատող աշխարհն ու լանդշաֆտը:

Զբոսաշրջությունը դարձել է տնտեսավարման կարևորագույն գործոններից մեկը: Ահա թե ինչու այն պետք է դիտել ոչ միայն որպես ճանապարհորդություն և հանգիստ: Այն շատ ավելի լայն հասկացություն է և իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների ամբողջություն և երևույթների ու կապերի միասնություն, որոնք ուղեկցում են մարդուն ՝ նրա ճանապարհորդությունների ընթացքում:

Առաջին հայացքից «զբոսաշրջություն» հասկացությունը յուրաքանչյուրի համար կարծես թե շատ մատչելի է, քանի որ մարդկանց մեծ մասը ճանապարհորդել և ճանապարհորդում է, օգտվում է ճանապարհորդական գրասենյակների ծառայություններից, դիտում է համապատասխան հաղորդումներ, կարդում զանազան հոդվածներ զբոսաշրջության վերաբերյալ: Սակայն, գիտական, ուսումնական, գործնական նպատակով շատ կարևոր է զբոսաշրջությունը դիտարկել, քննարկել որպես տնտեսության, տնտեսական գործունեության բնագավառ:

Այդ տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում «զբոսաշրջություն» հասկացության տնտեսագիտական բնորոշումների քննարկումը: Այդ բնորոշումները, ինչպես ասվել է, տարբեր են: Քննարկենք դրանցից մի քանիսը:

Միացյալ Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ–ի) համապատասխան հանձնաժողովում 1992 թ. ընդունվել է զբոսաշրջության հետևյալ բնորոշումը.

«Զբոսաշրջությունը – ճանապարհորդություն է և այնպիսի վայրերի այցելում, որոնք գտնվում են զբոսաշրջիկի սովորական միջավայրի սահմաններից դուրս, այցելություն ոչ ավելի քան 12 ամիս ժամանակով, ցանկացած նպատակով, բացառությամբ վարձատրվող գործունեություն ծավալելուց» [24, 6]:

Այս բնորոշումը, որը տրված է ՄԱԿ–ի ճանապարհորդության և զբոսաշր-

ջության վիճակագրության համաժողովի փաստաթղթերում, հավանության է արժանացել 1992 թ. Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կողմից: Իսկ դրանից առաջ նույնպես մի քանի անգամ քննարկվել և ընդունվել են բնորոշումներ, որոնք բերվում են ստորև:

«Զբոսաշրջությունը – գործունեություն է, որը ժողովուրդների կյանքում կարևոր նշանակություն ունի այն չափով, որքանով այն անմիջական ազդեցություն ունի սոցիալ–տնտեսական, մշակութային, ուսումնական և տնտեսական ոլորտների վրա, պետությունների կյանքում և միջազգային հարաբերություններում» [նույն տեղում]:

Այս բնորոշումը ընդունվել է դեռևս 1980 թ. Միջազգային զբոսաշրջության Մանիլայի հռչակագրում: Դրանից որոշ ժամանակ հետո հաստատվել է մի նոր բնորոշում, այն է.

«Զբոսաշրջությունը – մարդկանց հնարավոր, ազատ տեղափոխությունն է իրենց հիմնական, մշտական բնակավայրից և աշխատանքից, ինչպես նաև ծառայությունների ոլորտ է, որն ստեղծվել է բավարարելու այն կարիքները, որոնք առաջացել են այդ տեղափոխությունների հետևանքով» [նույն տեղում]:

Այս բնորոշումը, որը մեր կարծիքով ամբողջական չի արտահայտում զբոսաշրջության բովանդակությունը, ընդունվել է 1989 թ. Հաագայի՝ զբոսաշրջության վերաբերյալ ընդունված հռչակագրում:

Իսկ զբոսաշրջության վերաբերյալ հրապարակված գրքերում տրված են այլ բնույթի բնորոշումներ: Բերենք դրանցից մի քանիսը.

«Զբոսաշրջությունը – երկիր մուտք գործող տարադրամի աղբյուր է, սպասարկման ոլորտի ինդուստրիայի երրորդ բնագավառ, որտեղ զբաղված է աշխատող բնակչության յուրաքանչյուր տասնհինգերորդը»:

Այս բնորոշումը անկասկած չի արտահայտում զբոսաշրջության էությունն ու բովանդակությունը:

Պրոֆեսոր Պիտեր Մերֆին տալիս է զբոսաշրջության այսպիսի բնորոշում.

«Զբոսաշրջությունը – երկրի այն տարածաշրջանների զարգացող ինդուստրիան է, որոնք ունեն այցելողներին հրապուրելու բնական և մարդածին առանձնահատկություններ» [24, 6]:

Այս բնորոշումը, թեև ինչ–որ չափով արտահայտում է այդ հասկացության բնույթը, սակայն մեր կարծիքով այն նույնպես ամբողջական չէ, չի արտահայտում զբոսաշրջության բովանդակությունը և էությունը:

Պրոֆեսոր Կարոլին Կուպերը տվել է այսպիսի բնորոշում.

«Զբոսաշրջությունը – հզոր տնտեսական միջոց է, որը կարող է օգտագործվել թույլ զարգացած երկրների կողմից արժութային հոսքերի ստեղծման նպատակով և որն անհրաժեշտ է միջազգային մակարդակով հաջող մրցակցության պայքարում» [նույն տեղում];

Կուպերի բնորոշումը մեր կարծիքով նույնպես ամբոջական չէ, այն տրված է միայն թույլ զարգացած երկրների համար, մինչդեռ հանրահայտ է, որ զբոսաշրջությունն առավել կատարյալ ձևերով զարգանում և շատ կարևոր

դեր է խաղում զարգացած երկրներում: Հայտնի է, որ Ֆրանսիայում, Իտալիայում, ինչպես նաև Հունաստանում և Իսպանիայում զբոսաշրջությունը դարձել է տնտեսության կարևոր, բարձր եկամտաբեր բնագավառ:

Զբոսաշրջության շատ հակիրճ բնորոշում է տվել Ջոն Ուորկերը, մասնավորապես նա նշում է.

«Զբոսաշրջությունը – գիտություն, արվեստ և հրապուրանքի բիզնես է, որը տեղավորում, զվարճացնում է այն մարդկանց, ովքեր ճանապարհորդում են բավականության համար կամ գործի բերումով» [նույն տեղում]:

Պրոֆեսոր Ուորկերի բնորոշումը յուրահատուկ է մյուսների համեմատությամբ: Սակայն, այն նույնպես ամբողջական չի կարելի համարել: Խնդիրն այն է, որ հատկապես ներկա ժամանակաշրջանում զբոսաշրջությունը միայն հրապուրանք և զվարճություն չէ: Այժմ այն դարձել է նաև միջազգային տնտեսական կապերի, համագործակցության կարևոր ձև:

1996 թ. Ռուսաստանի Դաշնությունն ընդունել է հատուկ օրենք այդ երկրում զբոսաշրջային գործունեության հիմունքների վերաբերյալ (Закон "Об основах туристской деятельности в Российской Федерации", 1996 г.): Այդ օրենքում տրված է նաև զբոսաշրջության բնորոշումը, որը ձևակերպված է հետևյալ կերպ:

«Զբոսաշրջությունը – Ռ.Դ. քաղաքացիների կողմից ժամանակավոր դուրս գալն է իրենց մշտական բնակավայրից՝ առողջական, ճանաչողական, գիտագործնական, սպորտային, կրոնական և այլ նպատակներով, առանց այցելած երկրում վճարովի գործունեության ծավալման» [24, 6]:

Այս բնորոշումը թեև վերաբերում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին, բայց հիմնականում արտահայտում է հասկացության էությունը:

Մինչ այժմ տարբեր մասնագետների ու կազմակերպությունների կողմից «զբոսաշրջության» տված սահմանումները կարելի է բաժանել երկու խմբի: Դրանցից մեկի մեջ ընդգրկված սահմանումներն ունեն նեղ մասնագիտական բնույթ և վերաբերում են զբոսաշրջության տնտեսական, սոցիալական, իրավական և այլ առանձին տեսակների:

Մյուս սահմանումները կոնցեպտուալ են և ընդգրկում են առարկան, երևույթը ամբողջությամբ, բացահայտելով զբոսաշրջության ներքին բովանդակությունը, որոնք միաժամանակ թույլ են տալիս այն տարբերակել համանուն, շատ հաճախ փոխկապակցված, բայց իրականում այլ երևույթներից: Մեր կարծիքով «զբոսաշրջության» սահմանումը կամ բնորոշումը պետք է այնպես ձևակերպվի, որպեսզի դրանում արտահայտվի այդ երկու խմբի առանձնահատկությունները, հիմնական էությունը:

Կա նաև «զբոսաշրջության» այսպես կոչված վիճակագրական բնորոշում: Ըստ որում, վիճակագրության մեջ զբոսաշրջությունը հասկացվում է որպես բնակչության միգրացիայի ձև, որը չի կապված բնակության վայրն ու աշխատանքը փոխելու հետ:

«Զբոսաշրջության» սահմանման, բնորոշման անհրաժեշտությունն առա-

ջացել է հիմնականում XX դարի առաջին կեսին, որը պայմանավորված էր աշխարհի չափանիշով, ամենուրեք զբոսաշրջիկների հոսքերի մեծացմամբ, նրա տնտեսական նշանակության աճով, որոնք և անհրաժեշտություն են առաջացրել հիմք դնելու ճանապարհորդող անձերի վիճակագրական հաշվառմանը;

«Զբոսաշրջիկի» առաջին այդպիսի սահմանումներից մեկը տվել է Ազգերի Լիգայի Վիճակագրական Կոմիտեն 1937 թ.: Նշենք, որ այդ սահմանումն ստացել է միջազգային ճանաչում և առ այսօր էլ գործողության մեջ է, առանձին ճշտումներով: Հետագայում, երկրորդ աշխարհամարտից հետո, երբ զբոսաշրջությունը նոր վերելք է սկսել ապրել, «զբոսաշրջիկի» բնորոշման հարցերը քննարկվել են Զբոսաշրջության Միջազգային Միության խորհրդակցություններում: Մասնավորապես, այդ հարցերը քննարկվել են Դուբլինում՝ 1950 թ. և Լոնդոնում՝ 1957 թ.: Ավելի ուշ, առավել լայնորեն «զբոսաշրջիկի» սահմանման և առհասարակ զբոսաշրջության խնդիրները քննարկվել են ՄԱԿ–ի Միջազգային Զբոսաշրջության և Ճանապարհորդության համաժողովում, որը տեղի է ունեցել Հռոմում 1963 թ., ինչպես նաև զբոսաշրջության հիմնախնդիրներին վերաբերող միջազգային այլ համաժողովներում:

Ներկայումս համաշխարհային չափանիշով լայնորեն օգտագործվում է Զբոսաշրջության և Ճանապարհորդությունների Վիճակագրական Միջազգային համաժողովի մշակած սահմանումը (բնորոշումը): Այդ համաժողովը տեղի է ունեցել Օտտավայում 1991 թ.: Ի դեպ, հենց այդ սահմանումն էլ արժանացել է ՄԱԿ–ի Վիճակագրական հանձնաժողովի հավանությանը: Ըստ այդ սահմանման՝ զբոսաշրջիկը բնութագրվում է հետևյալ կերպ. ***զբոսաշրջիկը այցելու է, այսինքն անձ, որը ճանապարհորդում և ժամանում է այնպիսի վայրեր, որոնք գտնվում են իր մշտական միջավայրի սահմաններից դուրս, ոչ ավելի քան 12 ամիս ժամկետով, ցանկացած նպատակով, բացի այցելության վայրում այնպիսի գործունեությունն ծավալելուց. որից եկամուտ կարող է ստանալ» [20, 6]:***

Առաջարկված սահմանումը հնարավորություն է տալիս ավելի հստակ ուրվագծել ճանապարհորդող անձանց այն հատվածին, որը հանդիսանում է զբոսաշրջության վիճակագրական ուսումնասիրությունների օբյեկտ (առարկա):

Օտտավայի համաժողովի վերջնական փաստաթղթերով «զբոսաշրջիկը» սահմանվում է որպես **այցելու**: Այդ հասկացությունն առաջարկվում է օգտագործել, դիտարկել որպես վճռական հանգամանք վիճակագրական զբոսաշրջության մեջ: Այն հատկապես տարածվում է ինչպես զբոսաշրջիկների, այնպես էլ էքսկուրսանտների պարագայում, որոնց քնորոշ են ընդհանուր հատկանիշներ: Էական տարբերություն չկա նրանց միջև, այդ պատճառով էլ էքսկուրսիոն ճանապարհորդությունները շատ հաճախ դիտվում են որպես մասնավոր դեպքեր և արտացոլվում են զբոսաշրջության վիճակագրական տեղեկատուներում:

Ընդհանուր առմամբ առանձնացվում են երեք հիմնական հատկանիշներ, որոնք թույլ են տալիս միավորել զբոսաշրջիկներին և էքսկուրսանտներին «այցելուների» կատեգորիայում (կարգավիճակում) և միաժամանակ նրանց տարբերել մյուս ճանապարհորդողներից:

Այդ երեք հիմնական հատկանիշներն են.

1. մշտական միջավայրի սահմաններից տեղափոխվելը
2. նշանակված վայրում մնալու տևողությունը
3. ճանապարհորդության նպատակը:

Այսպիսով, «զբոսաշրջության» վերը քննարկված բնորոշումներից, մեր կարծիքով, այդ հասկացության բնույթը համեմատաբար ամբողջական է ՄԱԿ–ի զբոսաշրջության և ճանապարհորդության վիճակագրությանը նվիրված Միջազգային համաժողովում ընդունված բնորոշումը, որը հաստատվել է Զբոսաշրջության Համաշխարհային կազմակերպության կողմից, 1992 թ.:

Սակայն, մեր կարծիքով, այն չի տալիս «զբոսաշրջության» էությունը, նպատակը:

Այդ հասկացության էությունը մասնակիորեն ընդունելի է նաև Ռուսաստանի Դաշնության զբոսաշրջության վերաբերյալ 1996 թ. ընդունված օրենքում: Սակայն, ինչպես վերը նշել ենք, այդ օրենքում տրված բնորոշումը կոնկրետ վերաբերում է Ռ.Դ.–ի քաղաքացիներին: Մինչդեռ, գիտագործնական նշանակության տեսակետից, «զբոսաշրջության» բնորոշման էությունը պետք է համընդհանուր լինի, ընդունելի պետք է լինի բոլոր երկրների քաղաքացիների կողմից:

Մեր կարծիքով այդ հասկացության բնորոշման մեջ անհրաժեշտ է, որպեսզի շատ կարճ, հստակ տրվի «զբոսաշրջության» էությունը, նպատակը:

Այդ պահանջներից ելնելով՝ ձևակերպել ենք հետևյալ բնորոշումը (սահմանումը).

«Զբոսաշրջությունը – մարդկանց կազմակերպված խմբերի կամ անհատների ժամանակավոր մեկնումը, ճանապարհորդությունն է իրենց մշտական ապրելավայրի սահմաններից դուրս, ճանաչողական, կազդուրման, մարզական, գիտագործնական, կրոնական և այլ նպատակներով, ոչ ավելի, քան 12 ամիս ժամանակով, բացառությամբ ժամանած երկրի տարածքում վճարովի գործունեություն ծավալելուց»:

Անհրաժեշտություն ենք համարում տալ նաև «Զբոսաշրջիկի» բնորոշումը, որը բնականաբար բխում է տրված բնորոշումից:

«Զբոսաշրջիկը – անձ, այցելու է, որը կազմակերպված խմբի կազմում կամ առանձին ժամանակավոր մեկնում, ճանապարհորդում է իր մշտական ապրելավայրի սահմաններից դուրս ճանաչողական, կազդուրման, մարզական, գիտագործնական և այլ նպատակներով, բացի այցելած վայրում վճարովի գործունեություն ծավալելուց»:

3. Զբոսաշրջիկների խմբերն ըստ նախասիրությունների

Ուսումնասիրելով զբոսաշրջության մենեջմենթի հետ կապված հիմնահարցերը, շատ կարևոր է նաև իմանալ, թե որ զբոսաշրջիկն զբոսաշրջության ինչ ծառայություններից է օգտվում: Այստեղ, անկասկած, միանշանակ պատասխան չի կարող լինել: Այս հարցի հետ կապված, ընդհանուր առմամբ բոլոր զբոսաշրջիկներին կարելի է դասակարգել նորքոհիշյալ երկու խոշոր խմբի.

ա) զբոսաշրջիկներ, որոնք բնորոշվում են հիմնականում իրենց ակտիվությամբ.

բ) զբոսաշրջիկներ, որոնք բնորոշվում են հիմնականում իրենց յուրահատուկ ոճով.(աշխարհահայացքի, գաղափարների, ապրելակերպի, պահելակերպի, վարվելակերպի, աշխատելու, հանգստանալու և այլ ձևերով):

Դրանք էլ իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի կամ տեսակների: Մասնավորապես, ըստ ակտիվության բնորոշվող խմբի մեջ մտնող զբոսաշրջիկներին կարելի է բաժանել վեց ենթախմբի, տեսակների:

*1. **Խաղաղ հանգիստ նախընտրողներ:*** Զբոսաշրջիկների այս ենթախմբի ներկայացուցիչներն արձակուրդ են գնում, որպեսզի ազատվեն ամենօրյա հոգսերից, հանգստանան խաղաղ և հաճելի միջավայրում: Նրանք խուսափում են օտարներից և մարդկանց մեծ բազմությունից: Խաղաղ հանգիստ նախընտրողներին գրավում է ծովը, հարմար լողափերի մանր ավազը, որոնք շատ կարևոր են հանգիստը հաճելի կազմակերպելու համար:

*2. **Հաճույքի սիրահարներ:*** Դրանք զբոսաշրջիկների շատ նախաձեռնող ենթախումբ են, որոնք հանգստի ժամանակ զբաղվում են նաև տարաբնույթ հաճույքների որոնմամբ և նախընտրում են բարձրաշխարհիկ միջավայր:

*3. **Ակտիվ հանգստի սիրահարներ:*** Այս ենթախմբին պատկանող զբոսաշրջիկները սիրում են բնությունը, կազմակերպում են զբոսանքներ և ստեղծում ակտիվ ծանրաբեռնվածություն իրենց օրգանիզմի համար: Նրանք նախընտրում են համաչափ շարժումներ(մարզական քայլք, ակտիվ խաղեր և այլն) և թարմ օդ: Նրանց այդպիսի հանգիստը փաստորեն կարելի է համատեղել բուժման հետ:

*4. **Մարզական հանգստի սիրահարներ:*** Ի տարբերություն ակտիվ հանգստի սիրահարների, մարզիկ զբոսաշրջիկներն ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են զանազան տեսակի մրցումների վրա: Նրանց համար շատ կարևոր է սպորտը, որը նրանց նախասիրությունն է: Այս խմբի զբոսաշրջիկները չեն խուսափում ֆիզիկական ծանրաբեռնվածությունից:

*5. **Ճանաչողական և ուսուցողական նպատակով հանգստացողներ:*** Զբոսաշրջիկների այս ենթախումբը, որպես բնորոշող կողմ, մտահոգված է իր կրթական, գիտական մակարդակի բարձրացմամբ, նորի, հետքրքիր երևույթների բացահայտմամբ: Այս խմբի մեջ սովորաբար առանձնացվում է երեք ենթա-

խումբ: Առաջին ենթախմբին պատկանում են այն զբոսաշրջիկները, որոնք պարտադիր կարգով պետք է այցելեն այնպիսի վայրեր, որոնք նշված են զբոսաշրջության ուղեցույցներում: Երկրորդ ենթախմբին պատկանողները հիմնական ուշադրությունը դարձնում են ոչ թե արդեն իսկ ճանաչված տեսարժան վայրերին, այլ փնտրում են այնպիսի վայրեր, որտեղ նրանք կկարողանան զգալ տվյալ միջավայրի մթնոլորտը, հոգևոր միկրոկլիման: Նրանց համար առաջնային են զգացողությունը և տրամադրությունը: Երրորդ խմբին պատկանող զբոսաշրջիկներն ունեն վառ արտահայտված մշակութային և սոցիալ–գիտական հետաքրքրություններ: Նրանց հետաքրքրում է նաև բնության հրաշալիքները և առհասարակ բնական գեղեցկությունները:

*6. **Արկածների սիրահարներ:*** Այս ենթախմբին պատկանող զբոսաշրջիկները, որոնք սովորաբար կազմում են ոչ մեծ թիվ, այսպես կոչված արկածախնդիրներ են, որոնք մեկնում են ճանապարհորդությունների միայնակ և շատ հաճախ իրենց ենթարկում լուրջ փորձությունների: Այսպիսիների համար համարձակությունն իրենց փորձելու հնարավորություն է:

Ինչպես արդեն նշել ենք, ըստ զբոսաշրջության տեսակների, զբոսաշրջիկներին կարելի է բաժանել նաև հաշվի առնելով նրանց կյանքի ոճը: Նշենք, որ ըստ իրենց կյանքի ոճի կամ ապրելակերպի դժվար է զբոսաշրջիկներին շատ հստակորեն կամ խիստ տարբերակել:

Այնուհանդերձ, մեր կարծիքով, ըստ կյանքի ոճի կարելի է առանձնացնել զբոսաշրջիների չորս ենթախումբ: 1) Վայելքների սիրահարների, 2) գաղափարական հստակ ուղղվածություն ունեցողների, 3) ընտանեկան, 4) բացառապես հանգստացողների: Պետք է նկատի ունենալ, որ այս դասակարգման մեջ առանձնացված ենթախմբերը կարող են անընդհատ փոփոխվել, հետևաբար դրանց միջև սահմանները խիստ որոշակի չեն:

1) ***Վայելքների սիրահարներ:*** Այս ենթախմբին պատկանող զբոսաշրջիկները սովորաբար բարձր պահանջկոտություն են ցուցաբերում հանգստի նկատմամբ: Նրանց համար ճանապարհորդությունը, հիրավի, ինքնահաստատման և ինքնաարտահայտման, ինքնադրսևորման միջոց է: Հանգստից նրանք ցանկանում են բավարարվածություն ստանալ:

2) ***Գաղափարական զբոսաշրջիկներ:*** Այս ենթախմբին պատկանողների համար հանգիստը – դա իրենց անհատականությունը դրսևորելու հնարավորություն է: Այս ենթախմբին պատկանող զբոսաշրջիկները բարձր պահանջներ ունեն, բայց ի տարբերություն «կյանքը վայելողների», նրանց պետք է ներդաշնակություն բնության հետ, խաղաղ միջավայր, հոգեպես բեռնաթափվելու հնարավորություն:

Նրանք շատ լավ գիտակցում են շրջակա միջավայրի պահպանման հիմնահարցերը, մեծ հետաքրքրություն են ցուցաբերում իրենց այցելած տարածաշրջանի, երկրի քաղաքականության հարցերի և մշակույթի նկատմամբ:

3) ***Ընտանեկան զբոսաշրջիկներ:*** Այս ենթախմբի մեջ բացառապես մտնում են ընտանիքները, այդ թվում երեխաները: Ընտանեկան զբոսաշրջիկնե-

ը սիրում են իրենց արձակուրդն անցկացնել ընտանիքի, ընկերների, հարազատների շրջապատում: Նրանք ձգտում են հանգստանալ խաղաղ և հարմար պայմաններում, նախընտրում են մատչելի ծառայություններ: Ըստ որում, շատ հաճախ իրենք իրենց են սպասարկում:

4) ***Բացառապես հանգստացողներ:*** Այս ենթախմբի զբոսաշրջիկների համար կարևորագույն պայմանը հանգստանալու հնարավորությունն է:

Նրանք նախընտրում են, այսպես կոչված, պասիվ հանգիստ, գերադասում են լռությունը, քնում են երկար, սիրում են համեղ և լիուլի սնվել, կատարում են կարճ զբոսանքներ կամ ոչ հեռավոր ճամփորդություններ: Այսպիսի հանգստի սիրահարներն ուրախ են լինում, արձակուրդի ժամանակ պահպանում են իրենց սիրելի սովորությունները, չեն ցանկանում և չեն սիրում ենթարկվել փորձությունների:

4. Զբոսաշրջության տեսակները և ձևերը

Զբոսաշրջությունն ըստ տեսակների դասակարգելու, խմբավորելու համար մեր կարծիքով պետք է հիմք ընդունել այն շարժառիթները, որոնք մարդուն շահագրգռում, մղում, դրդում են մեկնելու ճանապարհորդության: Թեև շարժառիթները միշտ չէ, որ սահմանվում են միանշանակ, այնուամենայնիվ, կարելի է զբոսաշրջության կառավարման համակարգում առանձնացնել վեց տեսակ, դրանք են.

4.1. *Զբոսաշրջություն հանգստի նպատակով*: Այս տեսակի էությունը, նպատակը կարճաժամկետ կամ երկարաժամկետ հանգստի կազմակերպումն է, օրգանիզմի ֆիզիկական կամ հոգեկան վիճակը վերականգնելու նպատակով: Բացի դրանից, այդ տեսակի, ձևի մեջ պետք է մտցնել նաև առողջարանային հանգիստը: Այս դեպքում բուժման, ուժերի վերականգնման նպատակով օգտագործվում են հողի, լողափի ավազի բնական հատկությունները, կլիման և ծովի ջուրը:

4.2. *Զբոսաշրջություն մշակույթի ուսումնասիրման նպատակով:*

Այն իր մեջ ընդգրկում է պատմական, մշակութային, ինչպես նաև բնական (աշխարհագրական) տեսարժան վայրերի այցելությունը: Ըստ որում, այն զբոսաշրջիկները, որոնք ճանապարհորդում են ճանաչողական նպատակով, շատ հաճախ հետաքրքրվում են նաև իրենց այցելած երկրների սոցիալական և տնտեսական հարաբերություններով:

Անկասկած, այս խմբի մեջ պետք է մտցնել նաև ուխտագնացության նպատակով իրականացվող զբոսաշրջությունը, այսինքն առանձնահատուկ նշանակություն ունեցող վայրերի, կենտրոնների այցելությունը:

4.3. *Հասարակական զբոսաշրջություն*: Այս խմբի մեջ մտնողները սովորաբար այցելում են հարազատներին, ծանոթներին, ընկերներին (միջազգային տերմինալոգիայում հայտնի է ինչպես visiting friends and relatives–VFR):

Բացի դրանցից, այդ խմբի մեջ է մտնում, այսպես կոչված, ակումբային զբոսաշրջությունը: Վերջինիս առանձնահատկությունն այն է, որ ճանապարհորդողները գիտակցաբար, իրենց նախասիրություններից ելնելով, ինտեգրվում են առանձին խմբերի:

Մասնավորապես, այդպիսի խմբեր են ստեղծվում հետաքրքրաշարժ խաղերի, միջոցառումների, մարզական ծրագրերի իրականացման համար: Բնականաբար այդպիսի խմբերի մեջ ընդգրկվում են համապատասխան նախասիրություններ ունեցող զբոսաշրջիկները:

4.4. *Մարզական զբոսաշրջություն:* Մարզական զբոսաշրջության ձևին պատկանում են այն ճանապարհորդությունները, որոնց ընթացքում մասնակիցները հատկապես մարզական ակտիվություն են ցուցաբերում և անպայման մասնակցում են այդպիսի միջոցառումներին:

4.5. *Տնտեսական զբոսաշրջություն*: Այս զբոսաշրջությանը բնորոշ են այն ճամփորդությունները, որոնք կատարվում են մասնագիտական նպատակներով, հաճախ նաև կոմերցիոն հետաքրքրությունից ելնելով: Այս խմբի մեջ մտնող զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում և հիմնականում պարտադիր է նաև այցելությունները բիրժաներ, ցուցահանդեսներ, տոնավաճառներ, ինչպես նաև տնտեսական բիզնեսի տեսակետից հետաքրքրություն ներկայացնող այլ վայրեր:

4.6. *Քաղաքական զբոսաշրջություն*: Այս տեսակն իր հերթին ստորաբաժանվում է երկու խմբի: Մեկը՝ դիվանագիտական զբոսաշրջությունն է, համապատասխան համաժողովների և միջազգային այլ միջոցառումների մասնակցության նպատակով, մյուսը՝ զբոսաշրջություն, որ կապված է քաղաքական միջոցառումների և իրադարձությունների հետ:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունեն շատ մեծ ու լայն հնարավորություններ, որոնք թույլ են տալիս տարբերակել զբոսաշրջության ձևերը, ըստ արտաքին չափանիշների, հատկանիշների: Մասնավորապես, այդ տարբերակումը կարելի է կատարել ըստ զբոսաշրջիկների ծագման, ըստ կազմակերպման ձևի, ըստ ճանապարհորդության տևողության, ըստ զբոսաշրջիկների տարիքի, ըստ տրանսպորտի միջոցների, ըստ տարվա եղանակների և այլն:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե զբոսաշրջության ձևի և տեսակի միջև մեծ տարբերություններ չկան: Երկու դեպքում էլ ճանապարհորդությունը խմբավորվում է՝ ելնելով որոշակի տեսանկյունից: Սակայն, տարբերությունը կայանում է նրանում, որ զբոսաշրջության տեսակները տարբերակվում են ըստ ճամփորդությունը ծնող շարժառիթների, ներքին գործոնների և պատճառների ազդեցության, որն էլ մեծ կարևորություն է ներկայացնում մենեջմենթի համար: Իսկ զբոսաշրջության ձևերը տարբերվում են՝ ըստ այցելության տևողության, ճանապարհորդողների տարիքի, տրանսպորտային միջոցների, տարվա եղանակների, շրջագայությունների խմբային և անհատական կազմակերպման և այլն:

Ինչպես արդեն նշեցինք, զբոսաշրջությունը, կախված կազմակերպման

ԵՊՀ ՍԱՐԳԻՍԻ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
SARKIS AND MARIE IZMIRLIAN LIBRARY OF YEREVAN STATE UNIVERSITY

ձևերից, կարող է լինել խմբային և անհատական: Փորձենք բացատրել դրանց էությունը:

Խմբային զբոսաշրջությունը – դա զբոսաշրջության ծառայությունների կայունացված, նախապես կազմակերպված, կանոնակարգված համալիր է: Խմբային շրջագայության ձևը թերևս ամենաընդունված ձևն է:

Անհատական շրջագայության առանձնահատկությունն այն է, որ զբոսաշրջիկը կազմակերպում և իրականացնում է այն ինքնուրույն: Նմանօրինակ շրջագայությունները երբեմն կոչվում են նաև միայնակ շրջագայություն: Սակայն, դա բոլորովին չի նշանակում, որ զբոսաշրջիկը պետք է ճամփորդի բառիս բուն իմաստով միայնակ: Շատ հաճախ մարդիկ կարող են ճամփորդել ընտանիքով և այդպիսի ճամփորդությունները նույնպես կոչվում են միայնակ: «Միայնակությունը» այս վերջին դեպքում վերաբերում է ընտանիքին:

«Անհատական զբոսաշրջություն» հասկացությունը շատ հաճախ հակադրության մեջ է դրվում «մասսայական զբոսաշրջության» հասկացությանը: Մասսայական զբոսաշրջության սկզբնական իմաստն այն է, որ զբոսաշրջությանը մասնակցում են մեծ թվով մարդիկ: Ժամանակի ընթացքում այդ արտահայտությունը վերաիմաստավորվել է, և ներկայումս *մասսայական* և *անհատական* զբոսաշրջության ձևերի տարբերությունն այլևս նրանցում ընդգրկված զբոսաշրջիկների թվաքանակի մեջ չէ: Ներկա ժամանակաշրջանում ինչպես «մասսայական», այնպես էլ «անհատական» զբոսաշրջությունն ամբողջ աշխարհում հաճախակի, անընդմեջ տեղի ունեցող երևույթ է դարձել:

Զբոսաշրջության ձևերը տարբեր են լինում նաև կախված այցելության տևողությունից:

Զբոսաշրջության տևողությունը վերաբերում է այն ժամանակին, որը ծախսում է զբոսաշրջիկը շրջագայության ժամանակ՝ որևէ երկիր, որևէ վայր այցելության ընթացքում:

Այսպես, մեկօրյա ճամփորդությունները դասակարգվում են հետևյալ կտրվածքով՝ մինչև 3 ժամ, 3–5 ժամ, 6–8 ժամ, 9–11 ժամ, 12 և ավելի ժամ տևողությամբ:

Գիշերովի ճանապարհորդությունները կարելի է դասակարգել հետևյալ կտրվածքով՝ 1–3 գիշեր, 4–7 գիշեր, 8–28 գիշեր, 29–91 գիշեր, 92–365 գիշեր:

Որպես կանոն, երկարատև ճամփորդությունները լրացվում են ոչ երկարատև կամ կարճատև ուղևորություններով: Ոչ երկարատև ուղևորությունների թվին են պատկանում տարանցիկ, մեկօրյա ուղևորությունները և կարճատև զբոսաշրջությունը: Տարանցիկ զբոսաշրջությունը – դա մինչև նպատակակետը հասնելը, ուղևորության ընթացքում զբոսաշրջիկների կանգառներն են: Մեկօրյա զբոսաշրջությունը – դա ցերեկվա ընթացքում կատարվող շրջագայություններն են: Այսպիսի շրջագայության ընթացքում գիշերել չի նախատեսվում:

Կարճատև զբոսաշրջությունն իր մեջ ընդգրկում է գործարար զբոսաշրջությունը և հանգստյան օրերին կատարվող ուղևորությունները:

Անկախ այն հանգամանքից, թե ուղևորությունները կատարվում են գործ-

նական, թե անձնական նպատակով, դրանց միջին տևողությունը կազմում է 2–4 օր, ինչպես նաև դրանք ընդգրկում են նվազագույնը մեկ և առավելագույնը երեք գիշեր:

Զբոսաշրջության ձևերը՝ կախված ճանապարհորդողների տարիքից:

Սովորաբար, զբոսաշրջության ձևերի դասակարգման ժամանակ պետք է հաշվի առնվի նաև զբոսաշրջիկների տարիքը: Ըստ տարիքային սանդղակի՝ առանձնացվում են զբոսաշրջիկների հետևյալ խմբերը. երեխաներ, որոնք ճանապարհորդում են իրենց ծնողների հետ, երիտասարդներ (15–24 տարեկան զբոսաշրջիկները), հասուն տարիքի տնտեսապես ակտիվ մարդիկ (25–44) տարեկան, տնտեսապես ակտիվ միջին տարիքի մարդիկ (45–64): Վերջիններս, որպես կանոն, ճամփորդում են առանց երեխաների, և վերջապես՝ թոշակառու զբոսաշրջիկներ (65 և ավելի տարիք ունեցողներ):

Զբոսաշրջության ձևերը՝ կախված տրանսպորտի միջոցներից:

Կախված տրանսպորտի միջոցներից, որոնք օգտագործվում են զբոսաշրջիկներին մի վայրից մյուսը փոխադրելու նպատակով, առանձնացվում են զբոսաշրջության հետևյալ ձևերը – օդային զբոսաշրջություն, ավտոբուսային, երկաթուղային, ավտոմոբիլային, ծովային, գետային:

Տարբերում են նաև *զբոսաշրջության ձևերը՝ կախված տարվա եղանակներից:* Մասնավորապես, այդ առանձնահատկություններից ելնելով, առանձնացվում են ձմեռային և ամառային զբոսաշրջության ձևերը: Զբոսաշրջության սեզոնային դասակարգման այս ձևերը ցույց են տալիս զբոսաշրջության ծառայությունների պահանջարկի տատանումները տարվա ընթացքում: Իսկ դա, անկասկած, կարևոր նշանակություն ունի այդ գործընթացի խնդիրները կարգավորելու համար: Այն ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվում է առավելագույն թվով ուղևորություն, կոչվում է զբոսաշրջության սեզոն (ժամանակաշրջան), իսկ ճանապարհորդությունների անկման ժամանակահատվածը – զբոսաշրջության միջսեզոնային ժամանակաշրջան:

Զբոսաշրջության ժամանակաշրջանի տևողությունը տարբեր տարածաշրջաններում բնականաբար նույնը լինել չի կարող, ուստի դրանք զբոսաշրջիկների քանակի առումով նույնպես տարբեր են:

Նշվածներից բացի կան նաև զբոսաշրջության այլ դասակարգումներ: Մասնավորապես, որպեսզի դասակարգումը լինի առավել ամբողջական, Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը (ԶՀԿ) առաջարկում է զբոսաշրջությունը դասակարգել ըստ հետևյալ ձևերի.

Ներքին զբոսաշրջություն – դա որևէ շրջանի, տարածաշրջանի սահմաններում իր իսկ բնակիչների համար կազմակերպվող, իրականացվող զբոսաշրջությունն է:

Այսպես կոչված, *մուտք գործող զբոսաշրջություն* – դա երկրում իրականացվող, կատարվող ճանապարհորդությունն է այն անձանց կողմից, որոնք տվյալ երկրի բնակիչներ չեն:

Արտագնա (մեկնող) զբոսաշրջություն – դա այն զբոսաշրջությունն է, որ կատարում են մի երկրի բնակիչները մեկ այլ երկրում:

Զբոսաշրջության թվարկած տեսակները կարող են վերաբերել ոչ միայն առանձին երկրին, այլ նաև տարածաշրջանին:

«Զբոսաշրջություն երկրի սահմաններում» բնորոշումը իր մեջ ընդգրկում է ներքին և մուտք գործող զբոսաշրջությունը:

«Ազգային զբոսաշրջություն» հասկացությունն իր մեջ ներառում է ներքին և արտագնա զբոսաշրջությունը:

Իսկ «Միջազգային զբոսաշրջությունը» – դա մուտք գործող և արտագնա զբոսաշրջությունն է:

5. Զբոսաշրջության պահանջարկը և առաջարկը

Ցանկացած շուկայի, այդ թվում նաև զբոսաշրջության տնտեսական վիճակը, տեսակները, ձևերը, քանակը որոշվում է պահանջարկով և առաջարկով:

Մարդիկ, սովորաբար իրենց ողջ կյանքի ընթացքում որևէ բանի կարիք են զգում, զանազան պահանջմունքներ ունենում: Պահանջմունքը, մարդու օբյեկտիվ կարիքն է որևէ բանի նկատմամբ:

Մարդու պահանջմունքների մի մասը, բնական, ֆիզիոլոգիական բնույթից ելնելով, համարվում է առաջնային: Օրինակ՝ առաջնային են բնակարանի, սննդի, ջրի, քնի, հագուստի բնական պահանջմունքները: Կան նաև երկրորդային պահանջմունքներ: Ի տարբերություն առաջնայինի, վերջիններս հոգեբանական բնույթի են: Ըստ որում, առաջնային պահանջմունքները հաղորդվում են ժառանգաբար (գեներով), իսկ երկրորդայինը առաջանում, ձևավորվում են ժամանակի ընթացքում, աշխատանքային, կյանքի փորձի հիման վրա: Աշխատանքային միջավայրը, պայմանները, հարաբերությունները մարդու մոտ պահանջ են առաջացնում իրենց տեսնելու, հարգելու, գնահատելու, հոգեկան բավարարվածություն ստանալու, հանգստանալու, նոր երկրներ տեսնելու համար: Հոգաբանական այս պահանջմունքների բավարարումը մարդու կենսագործունեության կարևորագույն գործոններից են: Դրանց բավարարման համար շատ խոշոր դեր են խաղում ճանապարհորդությունները, մարզական միջոցառումները, նորմալ հանգստի ու ժամանցի կազմակերպումը: Այս առումով, զբոսաշրջությունը մարդու նշված պահանջմունքների բավարարման թերևս լավագույն ձևն է:

Ընդհանուր առմամբ, պահանջմունքները հնարավոր չէ անմիջականորեն տեսնել կամ չափել: Ժամանակակից սոցիալ–տնտեսական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր տեսություններ, որոնց հեղինակները փորձում են սահմանել ժամանակակից մարդու պահանջմունքների բովանդակությունն ու տեսակը:

Ավստրիացի հոգեբան, գիտնական Զ. Ֆրեյդը առանձնացնում է պահանջմունքների երկու հիմնական դրույթներ (սկզբունքներ), առաջինը՝ գիտակցական, ըմբռնումով, նպատակային ենթարկվելն է բանականությանը, երկրորդը՝ ենթագիտակցաբար, էմոցիոնալ (հուզական) ենթարկումն է կենսաբանական հակումներին և կրքերին:

Ամերիկացի հոգեբան Ա. Մասլաուն, ուսումնասիրելով մարդու պահանջմունքների ազդեցությամբ նրա գործունեության յուրահատկությունները, առանձնացնում է հինգ հիմնական պահանջմունքներ՝ դասավորելով դրանք բուրգի ձևով: Այդ դասակարգումն սկսվում է նյութական բնույթի ցածր պահանջմունքներից և հասնում մինչև բարձր՝ հոգևորին.

1. ֆիզիոլոգիական պահանջմունքներ սննդի, հագուստի, բնակարանի,
2. անվտանգության և ինքնապահպանման պահանջմունքների տարբեր ձևեր,
3. ամենատարբեր տեսակի սոցիալական պահանջմունքներ,
4. շրջապատի կողմից հարգված լինելու պահանջմունք,
5. ինքնահաստատման և ինքնակայացման անձնական պահանջմունք:

Սրանց հիման վրա ձևավորվում է նաև զբոսաշրջության պահանջարկը:

Ընդհանրացնելով զբոսաշրջային պահանջմունքների համակարգի մասին եղած կարծիքները՝ կարելի է եզրակացնել, որ այդ համակարգն ավելի ամբողջական արտահայտում է այն հայեցակարգը, որը ներկայացվել է ՁՀԿ և Պաշտոնական զբոսաշրջային կազմակերպությունների միջազգային միությունը: Այս կազմակերպություններն ընդհանրացնելով տարբեր երկրների զբոսաշրջության երկարամյա փորձը՝ առանձնացնում են զբոսաշրջիկների վեց հիմնական պահանջմունքներ.

1. ռեկրեացիոն, հանգստի ժամանցի
2. հարազատների և ծանոթների այցելություն
3. գործնական և մասնագիտական նպատակներ
4. բուժման
5. կրոնական և ուխտագնացության
6. այլ պահանջմունքներ, որոնք ընդգրկում են մարդու ֆիզիկական, տնտեսական, հոգևոր պահանջմունքների շրջանակները:

Ներկա ժամանակաշրջանում զբոսաշրջիկը (պահանջողը) ավելի մեծ ուշադրություն է դարձնում մի կողմից ծառայությունների որակի, մյուս կողմից դրանց գնի վրա: Ըստ որում, կուտակելով զբոսաշրջության, շփումների, տպավորությունների փորձ, նա փնտրում, ձգտում է նոր ավելի հետաքրքիր տպավորություններ և հաճույքներ:

Այսօր արդեն ճամփորդությունների սիրահարները միայն չեն սահմանափակվում ծովափնյա հանգստով, այլ այցելում են ատոմային էլեկտրակայաններ, «նվաճում» են Հյուսիսային բևեռը, Անտարկտիդան, թռչում են տիեզերք: Ի դեպ, առաջին տիեզերական զբոսաշրջիկն (ԱՄՆ–ի քաղաքա-

ցի) արդեն 2002 թվին կատարել է այդպիսի ճանապարհորդություն երկրի շուրջը ռուսական տիեզերանավով:

Ըստ որում, առաջարկը և պահանջարկը գոյություն չունեն միմյանցից մեկուսացված: Ընդհանուր առմամբ, զբոսաշրջության առաջարկը ներկայացվում է որպես նրա՝ զբոսաշրջության օբյեկտ (առարկա): Դա նշանակում է, որ զբոսաշրջության առաջարկին վերաբերում է այն ամենը, ինչը կարող է բավարարել զբոսաշրջության պահանջարկը՝ կլիման, լանդշաֆտը, բնական հրաշալիքները, ճանապարհները, անվտանգությունը, հյուրանոցները, ռեստորանները, զվարճատեղերը, թանգարանները և այլն:

Թվարկածից կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջության առաջարկն ընդգրկում է շատ բազմազան տարրեր և կառավարման առավել արդյունավետ նպատակներից ելնելով, անհրաժեշտ է լինում դրանք համակարգել:

Զբոսաշրջության առաջարկը բաղկացած է նախնական (սկզբնական) և ածանցյալ առաջարկից:

Նախնական առաջարկն զբոսաշրջիկներին գրավում, հրապուրում է՝ իր բնական օգտակարությունից ելնելով: Ըստ որում, այն ստեղծվում է ոչ միայն զբոսաշրջության նպատակով:

Ածանցյալ առաջարկները կազմվում են այնպիսի տարրերից, որոնք ստեղծվում են բացառապես զբոսաշրջության նպատակների համար: Ըստ որում, ածանցյալ զբոսաշրջության կազմում կարելի է առանձնացնել «զբոսաշրջության ինֆրաստրուկտուրան» (ենթակառուցվածք) և «զբոսաշրջության սուպրաստրուկտուրան» (ենթակառուցվածքներ, որոնք միաժամանակ սպասարկում են ինչպես տվյալ տարածաշրջանի հասարակությանը, այնպես էլ զբոսաշրջիկներին):

Նախնական առաջարկը թեև ի սկզբանե կապված չէ զբոսաշրջության հետ, սակայն, դրանում գոյություն ունեն բազմազան գործոններ, որոնք զբոսաշրջիկների վրա կարող են թողնել բնական գայթակղիչ, շատ հրապուրիչ ազդեցություն:

Նախնական առաջարկը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

ա) երկրի բնական առանձնահատկությունները, հատկապես աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, ռելիեֆը, բուսական, կենդանական աշխարհը. բ) սոցիալ–մշակութային գործոնները, մասնավորապես, մշակույթը, բնակչության սովորույթները, կրոնական և պատմամշակութային հանրահայտ շինությունները, ժողովրդի հյուրընկալությունը, ավանդույթները. գ) երկրի ընդհանուր ենթակառուցվածքը՝ հատկապես տեղեկատվության համակարգը, հաղորդակցության ուղիները, տեսակները, վիճակը, բնական գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարումը, մաքրող–զտող միջոցների, սարքավորումների վիճակը, մշակութային հաստատությունների համակարգը:

Ածանցյալ առաջարկներն ի տարբերություն նախնականի, գոյություն ունեն, այսպես կոչված, հատուկ զբոսաշրջության պայմաններում: Ածան-

ցյալ առաջարկը կազմված է զբոսաշրջության ենթակառուցվածքից և սուպրաստրուկտուրայից: Զբոսաշրջության ենթակառուցվածքը կարելի է բաժանել երկու մասի՝ այսպես կոչված ընդհանուր ենթակառուցվածք, որ պայմանավորված է ընդհանուր առմամբ զբոսաշրջության զարգացմամբ և բուն զբոսաշրջության ենթակառուցվածքով: Զբոսաշրջության զարգացմամբ պայմանավորված ենթակառուցվածքը շատ ընդհանրություններ ունի տվյալ երկրի ընդհանուր ենթակառուցվածքի հետ:

Եթե որևէ վայրում, բացի տեղական բնակչությունից մշտապես հյուրեր են հանգստանում, ապա, բնականաբար, մարդկանց կենսագործունեությունն ապահովող համակարգերի հզորությունն երբեմն չի կարող բավարարել այդ բոլորին: Հետևաբար, անհրաժեշտ է լինում ստեղծել ենթակառուցվածքային լրացուցիչ համակարգեր, որպեսզի ապահովվի մշտապես այդտեղ այցելող բնակիչների կենսագործունեությունը: Լրացուցիչ այդ միջոցառումներն էլ առանձնացվում, դիտվում են առանձին խմբով, որի ձևավորումը պայմանավորված է զբոսաշրջության զարգացմամբ: Հենց այդ լրացուցիչ միջոցառումների խումբն էլ վերաբերում է ածանցյալ առաջարկին:

Զբոսաշրջության ենթակառուցվածքի կարևորագույն, բաղկացուցիչ մասը հանդիսանում է բուն զբոսաշրջության ենթակառուցվածքը, որին վերաբերում են տրանսպորտային միջոցները, զբոսաշրջիկներին տեղավորող կառույցները, առողջարանային կառույցները, զվարճալի միջոցառումների օբյեկտները, ժամանցների հաստատությունները, համաժողովների և սեմինարների անցկացման կենտրոնները, մինչնորդական ծառայություններ իրականացնող կառույցները և այլն:

Զբոսաշրջության սուպրաստրուկտուրայի մեջ մտնում են հիմնականում հյուրանոցային տնտեսությունները և սննդի ապահովման կազմակերպությունները:

Այսինքն այն օբյեկտները, որոնք միաժամանակ սպասարկում են նաև տարածաշրջանի հասարակությանը:

Թեև հյուրանոցային տնտեսությունները և հասարակական սննդի կազմակերպությունները բուն զբոսաշրջության ծառայություններ չեն հանդիսանում, սակայն դրանց դերը խիստ կարևոր է: Խնդիրը կայանում է նրանում, որ զբոսաշրջության ծառայություններն ենթադրում են զբոսաշրջության համալիր պահանջմունքների բավարարում:

Այսպիսով, զբոսաշրջության պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ է մի քանի կարևորագույն նախապայմանների, տարրերի առկայությունը: Ըստ որում, այդ կարևորագույն տարրերից անգամ մեկի բացակայության դեպքում, զբոսաշրջությունը չի կարող հասնել իր ռազմավարական նպատակներին: Օրինակ՝ ձյան համապատասխան շերտի բացակայության դեպքում անհնար է «հանգիստ» կազմակերպել դահուկային բազայում, եթե անգամ առկա են մյուս բոլոր անհրաժեշտ տարրերը, պայմանները:

Հետևաբար, զբոսաշրջության արդյունավետ կառավարման (մենեջմենթի) համար անհրաժեշտ են այդ ոլորտի բոլոր ծառայությունների ի մի բերում, համախմբում:

6. Զբոսաշրջային տարածաշրջան (ռեգիոն)

Եթե հիմք ընդունենք զբոսաշրջության՝ վերը՝ արդեն մեր կողմից տրված սահմանումը, ապա զբոսաշրջային տարածաշրջանին կարելի է վերագրել բազմատեսակ վայրեր: Զբոսաշրջային տարածաշրջան (ռեգիոն) կարող է համարվել, ինչպես ցանկացած համաշխարհային ճանաչում ունեցող քաղաք, այնպես էլ բնակեցված ոչ մեծ տարածք, որն ունի հնադարյան կառույցներ և զբոսաշրջիկի համար հետաքրքրություն ներկայացնող բազմաբնույթ գրավչություններ:

Այսպես, քանի որ զբոսաշրջային ռեգիոնները բնականաբար կարող են շատ ուժեղ տարբերվել մեկը մյուսից, փորձենք համակարգել դրանք: Առհասարակ, զբոսաշրջության տարածական դասակարգման հիմքում ընկած է այն շարժառիթը, որը դրդել է մարդուն ուղևորվել ճանապարհորդության դեպի որոշակի վայր: Նշենք, որ այդ շարժառիթներից կախված՝ զբոսաշրջային տարածաշրջանները կարող են տարբերվել ինչպես լայն մասնագիտացման, այնպես էլ նեղ մասնագիտացման տեսանկյուններից:

Տարբերությունը դրանց մեջ կայանում է նրանում, որ լայն մասնագիտացմամբ զբոսաշրջային տարածաշրջանի ընտրությունը երբեմն կարող է լինել պատահական: Մարդը պատրաստվում է ինչ–որ բան ձեռնարկել, ձգտում է ինչ–որ նպատակի համար ճանապարհորդել: Սակայն, պարզվում է, որ շրջանն, ուր նա պետք է մեկնի ճամփորդության, իր համար հատուկ հետաքրքրություն չի ներկայացնում, նա ընտրվել է այդ վայրը, քանի որ նրան այդ է առաջարկվել, և նա հնարավորություն ունի օգտվելու զբոսաշրջության ծառայություններից: Ճիշտ հակառակ պատկերն է նեղ մասնագիտացմամբ՝ զբոսաշրջության պարագայում:

Այս դեպքում զբոսաշրջության տարածաշրջանը նախապես ընտրվում է, քանի որ զբոսաշրջիկներն այդ տարածաշրջան ուղևորվելու համար հատուկ ծրագրեր և նպատակներ ունեն, բոլոր առումներով նախապատրաստվել են այդ ուղևորությանը:

Լայն մասնագիտացված զբոսաշրջային տարածաշրջաններ

Զբոսաշրջության այս տիպի տարածաշրջանի ընտրության դեպքում, կազմակերպիչների և միջնորդների ուշադրությունը կենտրոնացված է հիմնականում հանգստի կազմակերպման և արձակուրդի անցկացման սեզոնի վրա: Սակայն, լայն մասնագիտացված զբոսաշրջային ռեգիոնները կարևոր են նաև գործարար զբոսաշրջության համար: Զբոսաշրջության

այդպիսի վայրեր են հանդիսանում կրթական, գիտական, արդյունաբերա–վարչական և տրանսպորտային կենտրոնները:

Կրթական–գիտական կենտրոններն այն վայրերն են, որոնք հարմարեցված են վեհաժողովների անցկացմանը: Դրանք կարող են լինել գիտահետազոտական, կրթական բնույթի, նախագծային, կոնստրուկտորական հաստատությունների կենտրոններ:

Արդյունաբերա–վարչական կենտրոնները, ինչպես արդեն նշել ենք, նույնպես պատկանում են զբոսաշրջության լայն մասնագիտացմանը: Դրանք կարող են լինել արդյունաբերական կամ կոմերցիոն և քաղաքական կենտրոններ: Արդյունաբերական կենտրոններ են համարվում այն բնակավայրերը, որտեղ հավաքվում են, որպեսզի կոմերցիոն պայմանագրեր և ապրանքային գործարքներ կնքեն:

Քաղաքական կենտրոնները – դրանք այն վայրերն են, ուր տեղավորված են վարչաքաղաքական կառույցներ, և որտեղ անցկացվում են քաղաքական բնույթի միջոցառումներ:

Տրանսպորտային հաղորդակցության կենտրոններում ճանապարհորդողներն օգտվում են համապատասխան ծառայություններից՝ ելնելով տեխնիկական պատճառներից: Օրինակ՝ մարդը ստիպված գիշերում է օդանավակայանի հյուրանոցում, քանի որ հաջորդ չվերթը լինելու է ավելի ուշ:

Նեղ մասնագիտացմամբ զբոսաշրջային տարածաշրջաններ

Ինչպես արդեն նշել ենք, զբոսաշրջության նեղ մասնագիտացմամբ տարածաշրջանները տարբերվում են լայն մասնագիտացմամբ տարածաշրջաններից նրանով, որ այդ շրջաններ այցելելու համար որոշակի կոնկրետ նպատակներ կան:

Իրենց հերթին նեղ մասնագիտացմամբ զբոսաշրջային տարածաշրջանները բաժանվում են *հանգստի վայրերի, ինչպես նաև պատմամարտարապետական ու այլ տեսարժան վայրերով հարուստ շրջանների:*

«Հանգստի վայրեր» – հասկացությունը հավաքական անվանում է, որը կիրառվում է նշելու համար բոլոր այն վայրերը, որոնք զբոսաշրջության ընթացքում օգտագործվում են հանգստի նպատակով: Այդ խմբին կարելի է դասել առողջարանները, պարզապես հանգիստ անցկացնելու վայրերը, ինչպես նաև բնակավայրից ոչ շատ հեռու գտնվող այն վայրերը, ուր զբոսաշրջիկները մեկնում են ոչ երկարատև հանգստի նպատակով:

«Առողջարաններ (կուրորտներ)» – հասկացությունը դարձել է միջազգային, սակայն նշանակությունը միշտ չէ, որ միանշանակ է:

Այսպես, օրինակ, Շվեյցարիայում կուրորտ կամ առողջարան են կոչվում հանգստի ցանկացած վայր, մինչդեռ Գերմանիայում դրանք պետք է համապատասխանեն օրենքով նախատեսված պահանջներին:

«Կուրորտներ» համընդհանուր բնորոշումը ենթադրում է, որ դրանք առնվազն պետք է ունենան երեք նախապայմաններ՝ *բնական բուժիչ գործոններ, համապատասխան կառույցներ, բուժման որոշակի բնույթ:*

Բնական բուժիչ գործոններ ասելով պետք է հասկանալ տվյալ տարածաշրջանի հողերի, անտառների, ծովի և բնակլիմայական այլ բուժիչ հատկությունները:

Առողջարանային (կուրորտային) կառույցները – դրանք շենքերն ու շինություններն են, որոնցում իրականացվում է բուժումը: Ըստ որում, այդպիսի շենքերն ու շինությունները պետք է համապատասխանեն հիգիենայի կանոններին, ունենան հաճելի, տրամադրող տեսք, իսկ սպասարկող անձնակազմը պետք է ունենա բացառապես կրթական համապատասխան մակարդակ: Շատ կարևոր է, որպեսզի առողջարանային վայրերում իշխի հանգիստ, խաղաղ իրադրություն, և որ այդ շրջապատն ունենա հաճելի և էկոլոգիապես մաքուր լանդշաֆտ:

Հանգստի վայրեր արձակուրդներն անցկացնելու նպատակով

Ճանապարհորդությունների շարժառիթներից ելնելով, «հանգստավայր» կարող է կոչվել ցանկացած այն վայրը, որտեղ կարելի է հանգստի նպատակով մնալ հինգ և ավելի օրեր (առնվազն 4 գիշերումով): Դրանք ծառայում են մարդկանց ֆիզիկական և հոգեկան ուժերի վերականգնմանը: Ըստ որում, կուրորտներից դրանք տարբերվում են նրանով, որ այդ տարածքներում կարող են լինել համընդհանուր ճանաչում գտած բնական բուժիչ այնպիսի գործոններ, որոնք կարող են օգտագործվել բուժման նպատակով:

«Հանգստի մոտակա վայրեր» – հասկացությունն արդեն իսկ հուշում է, որ դրանք պետք է գտնվեն մարդու մշտական բնակության վայրից ոչ շատ հեռու: Շատ հաճախ, հատկապես խոշոր քաղաքներից, մարդիկ մեկնում են դուրս մի քանի ժամով կամ հանգստյան օրերին, ֆիզիկական, հոգեբանական առումներով բեռնաթափվելու, հանգստանալու նպատակով:

Նույն այդ շրջանը, նույն այդ հանգստավայրը կարող են տարբեր կերպ ընկալվել զբոսաշրջիկների կողմից: Ամեն ինչ պայմանավորված է նրանով, թե որտեղից եմ ժամանել և որքան ժամանակ են ցանկանում անցկացնել այստեղ զբոսաշրջիկները:

Տեսարժան մեծ հետաքրքրություն ներկայացնող օբյեկտներով հարուստ վայրերի խմբին են պատկանում պատմական, պատմաճարտարապետական, կրոնական, զվարճության կենտրոնները: Այս բոլորը գրավում են հատկապես այն զբոսաշրջիկների ուշադրությունը, որոնց համար առաջնայինը ոչ թե ֆիզիկական կամ հոգևոր հանգիստն է, այլ ինչ–որ նորի բացահայտումը, ճանաչումը:

Պետք է անպայման նշել նաև, որ զբոսաշրջության տարածաշրջանները, ըստ շարժառիթների առանձնացնելիս ամեն ինչ պայմանավորված չէ միայն տեղանքից և նրա առանձնահատկություններից: Այդ հարցում անկասկած մեծ կարևորություն է ներկայացնում նաև զբոսաշրջիկների նախասիրությունները և տվյալ վայրի ընկալումը: Եթե միևնույն զբոսաշրջային վայրը դիտարկենք տարբեր մարդկանց տեսանկյունով, ապա այն կա-

ռելի է դասել, գնահատել որպես զբոսաշրջության տարբեր նշանակության շրջանի: Օրինակ՝ Ալպերում գտնվող մի գյուղում կարող են լինել ինչպես զբոսաշրջության ենթակառուցվածքը, այնպես էլ սուպրաստրուկտուրան: Որոշ անձանց համար այն կարող է համարվել քաղաքական միջոցառումների կենտրոն, իսկ մյուսներն այն կարող են համարել մոտակա վայր ոչ երկարատև հանգստի համար:

Կամ, եթե Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան կուրորտային գեղատեսիլ քաղաքը, որտեղ փաստորեն կան զբոսաշրջության ինֆրաստրուկտուրան և սուպրաստրուկտուրան, որոշ մարդիկ կարող են այն գնահատել որպես երկարատև ու կարճատև հանգստավայր, իսկ մյուսները, որպես քաղաքական, մշակութային միջոցառումների կենտրոն (որտեղ անց են կացվում քաղաքական, մշակութային գործնական բնույթի համաժողովներ):

Այսպիսով, զբոսաշրջության տարածաշրջանները տարբերվում են զբոսաշրջիկների շարժառիթների այնպիսի հատկանիշներով, ինչպիսին զբոսաշրջային ծառայություններից օգտվելն է:

Առհասարակ, եթե որևէ վայր այցելելը հանդիսանում է նպատակին հասնելու (հանգստանալու, հաճույք ստանալու, նոր բան տեսնելու և այլն) միջոց, ապա այս դեպքում խոսքը վերաբերում է զբոսաշրջության տարածաշրջանի լայն մասնագիտական ուղղվածությանը: Իսկ եթե, այցելությունը դառնում է ինքնանպատակ, ապա այցելության վայրը պետք է կոչել զբոսաշրջության, այսպես կոչված, նեղ մասնագիտացման տարածաշրջան:

ԳԼՈՒԽ II

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՈՒ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Զբոսաշրջության ձևավորման պատմատնտեսական նախադրյալները

Զբոսաշրջությունը, ինչպիսին մենք այն պատկերացնում ենք այսօր, համեմատաբար երիտասարդ երևույթ է, թեև այն ունի պատմական ավելի հին արմատներ:

Եթե փորձենք անդրադառնալ պատմությանը, ապա պետք է սկսել առաջին «փարկաղրված» ճամփորդությունից, երբ Աստված դրախտից արտաքսեց Ադամին և Եվային:

Զբոսաշրջության արդեն ընդունված սահմանման մեջ արտահայտված են նրա որոշ հատկանիշներ՝ բնակության վայրի փոխում, այլ շրջանում գտնվելը, ժամանակավոր լինելը և այլն:

Զբոսաշրջության պատմական մեկնաբանությունը ինչ–որ չափով կարելի է նաև տարածել հնում ժողովուրդների թափառումների, ուխտագնացության, շուրջերկրյա ճանապարհորդությունների, տարաբնույթ շրջագայության, արշավների վրա:

Սակայն, զբոսաշրջության ժամանակակից ուսմունքն անկասկած չի ընդունում առաջին ճանապարհորդներին, որպես զբոսաշրջիկներ, քանի որ նրանց մոտ փաստորեն բացակայում էր «իսկական» շարժառիթները: Ճանապարհորդությունը չէր կատարվում հաճույք ստանալու նպատակով, այն կատարվում էր ոչ անձնական ցանկությամբ և ոչ էլ հանդիսանում էր ինքնանպատակ: Ընդհակառակը, ճանապարհորդությունները շատ հաճախ ծանր, (ֆիզիկական և բարոյական իմաստով) տեխնիկական տեսանկյունից շատ դժվար գործողություններ էին: Վերջապես, դա ընդամենը միջոց էր նպատակին հասնելու համար: Այդ ճանապարհորդությունների հիմնական շարժառիթներն առևտուրն ու կոմերցիան էին, նոր երկրների հայտնագործումը, նվաճումը, կրոնական առաքելության իրականացումը և այլն:

Զբոսաշրջության դասական մենեջմենթում առանձնացվում են զարգացման չորս փուլ, հետևյալ ժամանակաշրջաններով.

նախնական փուլ — մինչև XIX դ.,

սկզբնական փուլ — 1800–1917 թթ.,

զարգացման և վերելքի փուլ — 1917–1990 թթ.,

զբոսաշրջության կենտրոնացված կառույցների փլուզման և զբոսաշրջային ինքնուրույն ձեռնարկությունների, սեփականության տարբեր ձևերի ստեղծման փուլ — 1990 թ–ից մինչև այժմ:

Այդ փուլերը և ժամանակաշրջանները տարբերվում են.

1) առաջին հերթին տրանսպորտային միջոցների ընտրությամբ՝ հետիոտն, ձիերով, շոգեքարշով, ավտոմեքենայով, ինքնաթիռով և այլն,

2) ճանապարհորդության շարժառիթներով – սկսած անհրաժեշտ ճանապարհորդություններից մինչև ինքնանպատակ ճամփորդությունը (աշխարհի ճանաչում, բուժում, հանգիստ և այլն),

3) զբոսաշրջիկների թվաքանակով և հասարակության շերտերին պատկանելությամբ (նյութապես ապահով խավից մինչև զբոսաշրջության մեջ մարդկանց զանգվածային ներգրավմամբ, հասարակության բոլոր շերտերի ընդգրկմամբ): Նպատակահարմար ենք համարում զբոսաշրջության զարգացումը քննարկել ըստ հետևյալ ժամանակահատվածների և փուլերի:

2. Զբոսաշրջության ձևավորման առաջին (հնագույն) փուլ

Զբոսաշրջության մենեջմենթի զարգացման առաջին փուլը (ժամանակահատվածը), հիրավի, ամենաերկարն է եղել և ընդգրկել է սկսած մ.թ.ա. IX–VII հազարամյակները ու տևել մոտավորապես մինչև XVIII դ.:

Պատմությունը վկայում է, որ զբոսաշրջության նպատակով ամենահնագույն ճանապարհորդությունը կազմակերպվել է Հին Եգիպտոսի թագուհի, հրաշագեղ Խատշեպսուտը (1501–1484 թթ. մ.թ.ա.) [22. 31]: Այդ ժամանակաշրջանում ապրած և գործած հռչակավոր թագուհին փաստորեն զբոսաշրջային ծովային արշավ է կազմակերպել դեպի Պոնտական աշխարհ:

Հայտնի է նաև, որ մ.թ.ա. VI դարում եգիպտական փարավոն Նեխաոն կազմակերպել է առավել հայտնի ճանաչողական ճանապարհորդություն Աֆրիկայի շուրջը, որը տևել է երեք տարի:

Իսկ Հին հույները, այդպիսի ճանապարհորդություն են կազմակերպել դեռևս մ.թ.ա. VII դարում: Նրանք ակտիվ մասնակցում էին այդ ժամանակներում կազմակերպվող օլիմպիադաներին՝ որպես մասնակիցներ և որպես դիտորդներ: Բայց անգամ այն ժամանակներում հույների համար նշված շարժառիթը ճանապարհորդելու համար միակը չէր հանդիսանում:

Հանրահայտ աշխարհագետ և պատմաբան Հերոդոտը գիտա–ճանաչողական ճանապարհորդություն է կատարել մ.թ.ա. V դարում: Նա ուսումնասի-

ռում էր իր ժամանակակից երկրների, ժողովուրդների սովորույթներն ու բարքերը: Այդպիսի ճանապարհորդություն նա կատարել է նաև դեպի պատմական Հայաստան:

Իսկ հանրահայտ, այսպես կոչված «Մեծ շրջագայությունը» կատարել են Հռոմեական կայսրության բարձր խավի ներկայացուցիչները: Ավելի ուշ, XVII–XIX դդ. այդպիսի շրջագայությունների նկատմամբ մեծ հետաքրքրություն սկսեցին դրսևորել նաև բնակչության մյուս խավերը: Իսկ երիտասարդության շրջանում մոդայիկ էր դարձել Եվրոպայի տարբեր երկրներ կատարվող երկարատև ճանապարհորդությունները: Հռոմեական «Մեծ շրջագայության» կանգառները սկզբնական շրջանում համարվում էին Եվրոպայի մշակութային առումով այն ժամանակ առավել հայտնի երկրները, հատկապես Իսպանիան, ֆրանսիան, Իտալիան:

Նշենք, որ դեռ հնուց, առաջիններից մեկը, որ բնութագրեց «կառավարումը», որպես գործունեության հատուկ ոլորտ, դա հանրահայտ փիլիսոփա Սոկրատեսն էր (470–399 թթ. մ.թ.ա.): Ըստ որում, նա բազմակողմանի վերլուծության է ենթարկել «կառավարման» տարբեր ձևերը, որոնց հիման վրա էլ հիմնավորել է այդ գործընթացի բազմակողմանի լինելու սկզբունքը: Սոկրատեսին հաջորդել է մյուս հանրահայտ գիտնականը՝ Պլատոնը (428–348 թթ. մ.թ.ա.), որն առաջինը տվեց պետական կառավարման դասակարգման ձևերը՝ փորձելով սահմանափակել կառավարման մարմինների ֆունկցիաները:

Բերված օրինակներն, անկասկած, չեն կարող ամբողջական ընդգրկել անտիկ ժամանակաշրջանի զբոսաշրջային բնույթ ունեցող ճանապարհորդությունների բոլոր այն փաստերն ու դեպքերը, որոնք կարող են լուսաբանել, բնութագրել գիտելիքների և փորձի կուտակման այն ժամանակվա գործընթացը զբոսաշրջության կառավարման բնագավառում: Սակայն, եղած գրավոր փաստերն էլ հիմնականում հնարավորություն են տալիս ընդհանուր առմամբ պատկերացում կազմել Եվրոպայի պատմական անցյալի ճանապարհորդությունների, մշակույթի զարգացման և հատկապես մենեջմենթի (կառավարման), որպես նորագույն գիտության սաղմնավորման, զարգացման մասին:

3. Զբոսաշրջության ձևավորման ինդուստրիալ փուլ (1800–1917)

Այս ժամանակաշրջանի պետական կառավարման զարգացումն իր աշխատություններում հանգամանորեն քննարկել, բնութագրել է հանրահայտ տնտեսագետ, տնտեսագիտության տեսաբան Ա. Սմիթը: Նա հանդիսանում է ոչ միայն դասական քաղաքական տնտեսագիտության ներկայացուցիչը, այլև կառավարման ոլորտի հանրահայտ մասնագետ: Ա. Սմիթը իր աշխատություններում վերլուծում է աշխատանքի բաժանման տարբեր ձևերը, այդ

թվում բնութագրում նաև մի կողմից պետության ղեկավարի՝ թագավորի, մյուս կողմից պետության պարտականությունները երկրի, ժողովրդի հանդեպ: Ի դեպ, հենց այդ ժամանակաշրջանում, մասնավորապես XVIIIդ. վերջում առավել ցայտուն էր երևում արտադրության զարգացման այն գործընթացը, որը հետագայում, մեր ժամանակներում անվանվեց «արդյունաբերական հեղափոխություն»: Այդ գործընթացը ոչ միայն ազդեց շատ երկրների տնտեսությունների զարգացման վրա, այլ նաև հիմք հանդիսացավ ժամանակակից զբոսաշրջության ձևավորման, զարգացման համար: Ինդուստրիալ զարգացման ժամանակաշրջանի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ հենց այդ փուլում երկրագնդի բնակչության թվաքանակը գրեթե կրկնապատկվեց: Իսկ դա հնարավոր էր միայն տնտեսության ինդուստրացման պայմաններում: Ըստ որում, բնակչության աճն իր հետ առաջ բերեց բնակչության տեղաշարժ: Մարդիկ սկսեցին ինտենսիվ կերպով թողնել իրենց մշտական բնակավայրերն ու մեկնել նոր ինդուստրիալ զարգացում ապրող քաղաքներ՝ աշխատանք փնտրելու նպատակով:

Բնութագրական է նաև այն հանգամանքը, որ այդ փուլում սկսվեց մասսայական շինարարություն ծավալվել, միաժամանակ արագորեն մեծացավ պահանջարկը շենքերի, կառույցների նկատմամբ: Ինչպես նաև աշխատուժի կարիք զգացվեց մինչ այդ գոյություն չունեցող և բոլորովին նոր ստեղծվող բնագավառներում:

Այսպիսով, ինդուստրացումը հասարակության մեջ ձևավորեց երկու նոր հատված, մասնավորապես ձևավորվեցին,

ա) *քաղաքային բնակչություն,* որն իր հերթին հիմք հանդիսացավ երկաթուղային ուղևորաշրջանառության զարգացման ու դրա հետ միասին նաև «էքսկուրսիոն» *շուկայի ստեղծման համար:*

բ) ձևավորվեց *ֆինանսիստների և ֆոնդատերերի նոր դաս կամ խումբ:* Այսպիսով, ձևավորվեց հարուստ մարդկանց մի նոր խավ, որն էլ ձևավորեց «ճանապարհորդությունների և զբոսաշրջության շուկան»: Հենց այս վերջինն էլ մեր քննարկման հիմնական օբյեկտն է:

Ըստ որում, այդ ժամանակաշրջանում առաջին կազմակերպված «զբոսաշրջային ճանապարհորդություններից» մեկը կատարվել է 1841 թ., երբ անգլիացի նախաձեռնող (գործարար) Թոմաս Կուկը իրականացրեց ուղևորություն: Այդ ուղևորության նպատակը երկաթուղային ճանապարհով ճանապարհորդելն էր: Բնութագրական էր, որ այդ բնույթի առաջին ուղևորությանը մասնակցեց շուրջ 600 մարդ (այդ ժամանակվա համար դա մեծ թիվ էր): 1845 թ. նա կազմակերպեց այդպիսի նոր ճանապարհորդություն դեպի Լիվերպուլ, որն ուներ էքսկուրսիոն բնույթ [22, 34]:

Զբոսաշրջության ձևավորման, զարգացման բնագավառում կարևոր դեր խաղաց այն, որ Կուկը 1847 թ. կազմակերպեց «զբոսաշրջային միություն»: Հենց այս միությունն էր, որ սկսեց զբաղվել ուղեգրերի վաճառքով, ոչ միայն Անգլիայի տարածքում, այլև նրա սահմաններից դուրս ճանապարհորդելու

նպատակով: Ի դեպ, Թոմաս Կուկի այս կարևոր նախաձեռնությունների շնորհիվ է, որ նրան անվանում են զբոսաշրջության բնագավառի առաջին մենեջեր:

Նախկինում, եվրոպական երկրներում ընդունված էր, որ բարձր խավի երիտասարդ ներկայացուցիչները բարձրագույն կրթություն ստանալուց հետո ուղևորվում էին «Մեծ շրջագայության»: Դրա նպատակն այն էր, որպեսզի մինչ մասնագիտական գործունեություն ծավալելը նրանք ծանոթանան մյուս երկրների տնտեսությանը, բարքերին, մշակույթին և այլն: Հետաքրքիր է, որ «Մեծ շրջագայությունը» այդ ժամանակ տևում էր նույնիսկ 3–4 տարի: Անգլիացիների համար այդ ճանապարհորդությունն սկսվում էր Լոնդոնում և վերջանում Հռոմում, անպայման Փարիզ այցելելու պայմանով (հենց այդ ժամանակներից էլ մինչև այժմ Փարիզը համաշխարհային զբոսաշրջության առաջատար քաղաքն է):

Քանի դեռ ճանապարհորդությունները շատ տարածված չէին և զբոսաշրջային ուղևորությունների թիվը մեծ չէր, ճանապարհորդողներն իրենք էին հանդիսանում իրենց ճանապարհորդության կազմակերպիչները: Ըստ որում, փոխադրումների համար նրանք վճարում էին անմիջապես երկաթուղային և ծովային գործակալներին, գիշերելու համար վճարում էին հյուրանոցներում և այլն: Այսպիսով, ճանապարհորդության ընթացքում յուրաքանչյուր ծառայության դիմաց նրանք վճարում էին առանձին: Հետագայում, այս գործընթացն ավելի կատարելագործվում է: Առաջ է գալիս այնպիսի կազմակերպության ստեղծման անհրաժեշտություն, որն ինքը կիրականացնի զբոսաշրջային համալիր ծառայություններ:

Սկզբնական շրջանում այդպիսի կազմակերպությունները ներկայացվում էին որպես «տրանսպորտային ընկերությունների գործակալություններ»:

Միաժամանակ, ճանապարհորդությունների աստիճանական զարգացումը և արդյունաբերության ու կոմերցիայի վերելքը դրդեցին զբոսաշրջային կազմակերպիչներին գիտակցել, կազմակերպել նաև զանազան տրանսպորտային միջոցներով զբոսաշրջիկներին փոխադրելուց հետո, հոգալ նաև նրանց հյուրանոցներով ապահովելու և այլ ծառայություններից օգտվելու խնդիրները:

Այսպիսով, հենց մարդու պահանջմունքների և հնարավորությունների մեծացումն էլ պայմանավորեցին և նպաստեցին զբոսաշրջության *մենեջեր–գործակալների* հայտնվելուն: Եվ հենց դա էլ կանխորոշեց զբոսաշրջային կազմակերպությունների առաջացումը, ձևավորումը: Ըստ որում, բնակչության այն մասը, որը զբոսաշրջության նպատակ ուներ, արդեն նախընտրում էր օգտվել այդ կազմակերպություններից և իրենց ճանապարհորդությունների ծրագրերի կազմումը սկսում էր վստահել զբոսաշրջության մենեջերին:

Հայտնվեցին նաև տրանսպորտային կազմակերպությունների մենեջեր-

ներ: Ձևավորվեցին նոր այնպիսի կազմակերպիչներ, որոնք կոչվում էին զբոսաշրջության գործարարներ:

Այսպես, զբոսաշրջության գործարարները ցածր, մատչելի գնով (մեծածախ) ձեռք էին բերում տրանսպորտային ծառայությունների մեծ մասն ու դրանք առաջարկում այդ ծառայություններից օգտվողներին ավելի ցածր գներով, քան նրանց կարող էին առաջարկել ուրիշ տեղերում: Այսինքն սկսեց ձևավորվել զբոսաշրջության շուկա:

Հենց այդպես, Թոմաս Կուկը սկսեց իր գործունեությունը՝ ինչպես զբոսաշրջային գործակալ: Ըստ որում, Թոմաս Կուկի փորձի նշանակությունը կայանում էր նրանում, որ նրա գործունեությամբ սկիզբ դրվեց «էքսկուրսիաները – որպես քաղաքակիրթ հանգստի ձևի առաջացման» գործընթացին:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ առաջին մենեջերի գործունեությունը հնարավորություն տվեց, որպեսզի հասարակության ամենաբազմամարդ և ոչ հարուստ խավերը դեռևս այդ դարում զբոսաշրջային ծառայությունների պահանջ ներկայացնեն:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ XIX դարում զբոսաշրջության զարգացման գործում ամենաորոշիչ գործոնները հանդիսացել են հասարակության կենսամակարդակի բարձրացումը, ազատ ժամանակի առկայությունը և որ շատ կարևոր է, տրանսպորտային միջոցների զարգացումը:

4. Զբոսաշրջության զարգացման և մենեջմենթի համակարգման փուլ (1918–1990)

Ինչպես նշեցինք, հատկապես Արևմտյան Եվրոպայում շատ վաղուց արդեն զբոսաշրջությունը ձևավորվել էր և այն զգալի շահույթ էր բերում հատկապես Իսպանիային, Ֆրանսիային, Անգլիային ու մյուս երկրներին: Իսկ Ռուսաստանում 1917 թ. տեղի ունեցած հեղափոխությունից հետո, հենց առաջին իսկ տարիներին արդեն շատ մեծացավ հետաքրքրությունը զբոսաշրջության և էքսկուրսիաների հանդեպ: Իսկ արդեն 1920–ական թվականներին Ռուսաստանի Դաշնությունում, այնուհետև ԽՍՀՄ–ում ժողկոմիսարիատներին կից ստեղծվեցին մոտակա և հեռավոր էքսկուրսիաների կազմակերպման բաժիններ: Դեռ ավելին, ԽՍՀՄ–ում միջազգային զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունից ելնելով, այդ ոլորտի կառավարման հատուկ օրգան ստեղծվեց:

Մասնավորապես, ԽՍՀՄ–ում Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի որոշմամբ, 1929 թ. ստեղծվեց «Ինտուրիստ» համամիութենական կազմակերպությունը, որը հետագայում լայն ճանաչում ստացավ աշխարհում: Իսկ զբոսաշրջության գործունեությունը միջազգային մասշտաբով կոորդինացնելու համար, ինչպես ասվել է, 1968 թ. ստեղծվեց Զբոսաշրջության համաշխար-

հային կազմակերպությունը (ԶՀԿ): Ըստ որում, ԶՀԿ–ի հիմնական խնդիրներն են. ա) միջազգային զբոսաշրջության զարգացմանն աջակցելը, բ) երկրների միջև բարեկամական և մշակութային կապերի ամրապնդումը, գ) պայքար ցանկացած միջազգային զբոսաշրջային գործունեության արգելակումների դեմ, դ) զբոսաշրջության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների, տարածաշրջանային և միջշրջանային մասշտաբով գործունեության կոորդինացումը ՄԱԿ–ի ու զբոսաշրջության զարգացմամբ շահագրգռված միջազգային այլ կազմակերպությունների հետ:

Հենց այս պահանջների հիման վրա էլ այժմ իրականացվում է միջազգային զբոսաշրջության գործընթացը:

5. Զբոսաշրջության առանձնահատկությունները՝ որպես կառավարման օբյեկտ

«Մենեջմենթ» – (manege) անգլերեն ծագում ունի և նշանակում է «կառավարել»:

«Մենեջմենթ»–ը շատ ընդգրկուն և բազմաբնույթ հասկացություն է: Դա բնական է, քանի որ այս կամ այն ձեռնարկության, կազմակերպության գործունեության տարբեր մակարդակներում մենք գործ ունենք մենեջմենթի տարբեր ձևերի հետ (տեխնոլոգիական, ֆինանսական, ֆունկցիոնալ և այլն):

Ընդհանուր առմամբ, մենեջմենթ ասելով պետք է պատկերացնել, որ խոսքը վերաբերում է նրան, թե անկազմակերպ, անկանոն գործունեությունն ինչպես վերածել նպատակաուղղված, արդյունավետ և արտադրողական ուժի: Այլ խոսքով, մենեջմենթը – մարդկային ողջ կարողություններն են, որոնք օգտագործում են ղեկավարները ռազմավարական և տակտիկական նպատակներով:

Որոշ դասագրքերում, գիտական և ուսումնական ձեռնարկներում «կառավարում» և «մենեջմենթ» հասկացությունները նույնացված են: Սակայն, դասական պատկերացման տեսանկյունից «կառավարման» կարգն ավելի լայն է, քան «մենեջմենթինը», քանի որ այն կիրառվում է մարդու գործունեության տարբեր բնագավառներում: Օրինակ, ավտոմեքենայի կամ ավելի բարդ տեխնիկական միջոցների, համակարգերի կառավարում և այլն:

Գիտական տարբեր աղբյուրներում, առանձին մասնագետների մոտ կարելի է հանդիպել «կառավարման» տարբեր բնորոշումների:

«Ավելի հաճախ այն բնութագրվում է որպես կառավարման գործառույթների՝ պլանավորման, կազմակերպման, շարադրման (մոտիվացիայի) և վերահսկողության գործընթաց, որն անհրաժեշտ է կազմակերպության նպատակներին հասնելու համար»:

Այս բնորոշումն ինչ–որ չափով թերի է, քանի որ երևույթի հիմնական, էա-

կան կողմի փոխարեն, հիմնականում ընդգծվում է հետևանքը: Այս առումով, հիրավի, ավելի ընդունելի կարելի է համարել Փ. Դրաքերի կողմից տրված բնորոշումը.

«Կառավարումը գործունեության հստակ տեսակ է, որն անկազմակերպ ամբոխին վերափոխում է արդյունավետ, նպատակասլաց և արտադրողական խմբի»:

«Կառավարման» բնորոշումն ավելի համակողմանի է տրված 2002 թ. լույս տեսած «Մենեջմենթ» գրքում: Այն է. «կառավարումը տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան նյութական ու հոգևոր բարիքների, ծառայությունների ստեղծմանը նպատակաուղղված աշխատանքի վրա համակարգված կարգավորիչ ներգործությունն է»:

Այսպիսով, թեև «կառավարումը» և «մենեջմենթը» նույն բովանդակությունն ունեն, այնուհանդերձ «կառավարումն» ավելի ընդգրկուն հասկացություն է քան «մենեջմենթը»:

«Մենեջմենթ» հասկացությունն այլ կերպ նշանակում է սոցիալ–տնտեսական գործընթացների և անձնակազմի տնտեսական գործունեության կազմակերպում: Տվյալ դեպքում, մեզ հետաքրքրող ոլորտում, «մենեջմենթ» ասելով պետք է հասկանալ զբոսաշրջության ինդուստրիայի բնագավառում տեղի ունեցող սոցիալ–տնտեսական գործընթացների և երևույթների կառավարում:

Զբոսաշրջության բնագավառում իրականացվող աշխատանքը յուրահատուկ է և իրապես, էությամբ բավականին տարբերվում է մեր կյանքի մյուս բնագավառներում զբաղվածների աշխատանքային գործունեությունից:

Չնայած դրան, առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ զբոսաշրջային տարածաշրջանի մենեջմենթը և զբոսաշրջության կազմակերպման մենեջմենթը հիմնվում են միևնույն սկզբունքի վրա:

Զբոսաշրջության կառավարում իրականացնելիս, բնականաբար հարց է առաջացնում, թե ճանապարհորդողների ո՞ր խավերով կողմնորոշվել: Ինչպե՞ս է ստեղծվում առաջարկվող ծառայությունը, այդ բնագավառում ինչպիսի շրջադարձ է սպասվում հաջորդ տարի, ինչպիսի՞ ներդրումներ պետք է կատարել և շատ այլ հարցեր:

Բոլոր այս և շատ այլ ընդհանուր հարցերը կարծես թե սկզբունքորեն յուրահատուկ չեն զբոսաշրջության մենեջմենթի համար: Սակայն, ավելի հանգամանորեն մոտենալու, քննարկելու դեպքում, պետք է նկատել, որ այդ ընդհանրություններն որոշակի դեր են խաղում քննարկման առարկա ոլորտում: Զբոսաշրջության մենեջմենթի խնդիրը միայն այդ բնագավառի զարգացման ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները բացատրելը չէ: Այստեղ անհրաժեշտ է նաև գտնել զբոսաշրջության մենեջմենթի բնորոշ յուրահատկությունները: Միշտ անհրաժեշտ է հիշել, նկատի ունենալ, որ զբոսաշրջությունը ոչ թէ երևակայություն կամ հրաշագործություն է, այլ այդ բնագավառի աշխատողների լուրջ և պատասխանատու աշխատանք է՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով, աշխատանքային յուրօրինակ հարաբերություններով:

Աշխատանքային գործունեության այլ բնագավառներին հատուկ ընդհանրություններից բացի, զբոսաշրջությունը, նրա կառավարումն ունի միայն իրեն բնորոշ մի շարք առանձնահատկություններ, յուրահատկություններ: Հետևաբար, շատ կարևոր է բացահայտել, իմանալ և հաշվի առնել դրանք:

Ըստ որում, այդ առանձնահատկությունները բխում են զբոսաշրջային հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից առաջարկվող յուրահատուկ ծառայություններից:

Զբոսաշրջության առաջին առանձնահատկությունն այն է, որ այն որպես երևույթ կամ գործընթաց ամենուր է, ուր մարդն ապրում է և ունի բազմազան, երբեմն բարդ փոխհարաբերություններ, վերջիններս ձևավորող հիմնական տարրերի միջև (կազմակերպությունների, առանձին մարդկանց հետ և այլն):

Զբոսաշրջային հիմնարկների, կազմակերպությունների գերակշռող մասը շատ խոշոր չափերի չեն:

Զբոսաշրջային համեմատաբար խոշոր հիմնարկներ ստեղծվում են հիմնականում խիտ բնակեցված տարածաշրջաններում, ներկա ժամանակաշրջանում այդպիսի խոշոր կազմակերպություններն էլ ձևավորում են այսպես կոչված «զբոսաշրջության ինդուստրիան»: Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք սովորական արտադրական, թողարկող արտադրամասեր չեն և չեն կարող ունենալ միատեսակ կառավարման, կազմակերպական կառույց:

«Զբոսաշրջային ինդուստրիայի» կառուցվածքում բնականաբար շատ են զբոսաշրջային այն հիմնարկությունները ու կազմակերպությունները, որոնք այսպես թե այնպես պետք է գրանցվեն, մտցվեն տվյալ տարածաշրջանային միասնական կառավարման համակարգի մեջ: Իսկ դա անհրաժեշտ է՝ կապված այն հանգամանքի հետ, որպեսզի շուկայում ապահովվի դրանց երկարատև գործունեությունն ու մրցակցությունը:

«Զբոսաշրջության», որպես կառավարման օբյեկտի, երկրորդ յուրահատկություն կարելի է համարել ոլորտի ոչ պարզ, հստակ և բավականին դժվար «չափվող» նպատակների ամբողջությունը:

Քանի որ զբոսաշրջային կազմակերպությունները փաստորեն չունեն նպատակի, հեռանկարի չափորոշիչներ, ապա հնարավոր չէ, դժվար է հստակորեն գնահատել նրանց արտադրողականությունը, հաջողությունը, արդյունավետությունը: Խոսքը, այս պարագայում, վերաբերում է «զբոսաշրջության ինդուստրիայում» կատարվող գործընթացների հավանականությունների բնույթին: Դա նշանակում է, որ շատ դժվար է զբոսաշրջության բնագավառում ճիշտ կանխատեսել, կանխագուշակել բոլոր երևույթներն ու գործընթացները (մասնավորապես, կարող է հանկարծ փոխվել քաղաքական իրավիճակը, կտրուկ վատանալ եղանակային պայմանները, փոփոխություններ կատարվել հարկային համակարգում և այլն):

Զբոսաշրջության ոլորտի յուրահատկություններից մեկն էլ շահագրգռված կողմի, այցելուների այդ գործընթացի վրա ունեցած մեծ ազդեցությունն է:

Յուրաքանչյուր զբոսաշրջային կազմակերպություն բնականաբար իրականացնում է իր գործունեությունը տարբեր հետաքրքրություններ ունեցող անձանց և այցելուների շրջապատում: Ըստ որում, այդ կազմակերպություններն աշխատում են շահագրգռված մեծաքիվ անձանց հետ, որոնք էլ մեծ ազդեցություն են թողնում հենց այդ կազմակերպությունների վրա:

Ըստ որում, շահագրգռված յուրաքանչյուր առանձին խումբ իր հետաքրքրություններն ունի:

Զբոսաշրջային կազմակերպությունները չեն կարող ակնկալել զբոսաշրջիկներից, որ նրանք բոլորն իրենց կպահեն, կդրսևորեն միանման: Բացառված չեն, որ կարող են լինել որոշակի բնույթի հակասություններ՝ հյուրանոցի տնօրենի, տեղացիների և այցելած զբոսաշրջիկների միջև: Այդպիսի պայմաններում, կազմակերպության անդամները կարող են բաժանվել երեք–չորս շահագրգիռ խմբերի, որտեղ հյուրանոցների տնօրենները հնարավոր է պահանջեն փոփոխել զբոսաշրջության ռեժիմը, կարգը և այլն:

Պետք է միշտ հաշվի առնել, որ անգամ մեկ խմբի ներսում (օրինակ, հյուրանոցային ադմինիստրացիայի ներկայացուցիչների համակարգում) կարող են լինել տարբեր հետաքրքրություններ:

Այսպես, օրինակ, խոշոր հյուրանոցները սովորաբար քիչ են շահագրգռված առողջարանային ծառայություններով, քանի որ դրանք իրենց տրամադրության տակ ունեն բոլոր անհրաժեշտ, համապատասխան կառույցները, ծառայությունները հյուրերին տեղավորելու և հանգիստը կազմակերպելու համար:

Մինչդեռ, ոչ մեծ հյուրանոցները, որոնք հիմնականում գոյատևում են այցելող զբոսաշրջիկների հաշվին, շահագրգռված են, որպեսզի զբոսաշրջային կազմակերպությունները համապատասխան միջոցառումներ իրականացնեն առողջարանային առաջարկն ավելի բարելավելու համար:

Բնակչության բոլոր այն խմբերը, որոնք հետաքրքրվում, շահագրգռված են զբոսաշրջության զարգացմամբ, ինչպես նաև զբոսաշրջության համակարգում զբաղվածները, զբոսաշրջային կազմակերպությունները համագործակցում են վարկատուների, քաղաքական կառուցվածքների, քաղաքային կառավարման մարմինների, ինչպես նաև մատակարարող կազմակերպությունների հետ:

Զբոսաշրջային կազմակերպությունը սովորաբար կարող է շատ արագ հավասարակշռել հետաքրքրությունները ծառայությունների ոլորտում: Իսկ ընդհանուր առմամբ, իրենց գործունեությամբ այդ կազմակերպություններն առաջնորդվում են գործող համընդհանուր չափորոշիչներով և արժեքների մասին ունեցած պատկերացմամբ, ինչպես նաև իրենց առջև մեծածավալ նպատակներ ունեն տարածաշրջանի հետագա զարգացման համար:

«Զբոսաշրջության», որպես կառավարման օբյեկտի կարևորագույն յուրահատկություններից մեկը զբոսաշրջության, այսպես կոչված, ապրանքի առանձնահատկությունն է, նրա անբաժանելիությունը դրա ձևավորման աղբյուրից: Հայտնի է, որ առհասարակ «ապրանքը» նյութական տեսքով (մեքե-

նա, գործիք, հաց) գոյություն ունի անկախ իր արտադրողից, միչդեռ զբոսաշրջային ծառայությունը (իսկ դա նույնպես յուրահատուկ «ապրանք» է) անբաժանելի է իր ստեղծման աղբյուրից: Մասնավորապես, եթե զբոսաշրջային ապրանքի ծառայության սպառողը շրջագայություն է պատվիրել հունիսի համար, իսկ մայիսին զբոսաշրջային կազմակերպությունը դադարեցրել է իր գործունեությունը, ապա բնականաբար այդ ծառայությունը սպառողին չի մատուցվի աղբյուրի բացակայության պատճառով:

Քանի որ զբոսաշրջային ապրանքը ներկայանում է ծառայությունների տեսքով, ապա դրա համար պարտադիր անհրաժեշտ պայման է հանդիսանում պահանջողի առկայությունը: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այդպիսի ծառայությունը հնարավոր չէ պահեստավորել, ինչպես նաև զբոսաշրջային ապրանքը հնարավոր չէ փոստով ուղարկել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջային ապրանքի (ծառայության) իրացումը ուժեղացնում է անհատականության գործոնը, ապա զբոսաշրջային ծառայությունների մատուցման գործընթացի ավտոմատացումը դեռևս ցածր մակարդակ ունի, քան, օրինակ, սովորական ապրանքների արտադրության գործընթացը:

Հետևաբար, զբոսաշրջային մենեջմենթում շատ մեծ ուշադրություն պետք է դարձնել անձնակազմի կառավարման, ինչպես նաև անհատական հարաբերությունների կարգավորմանը:

Այս կարևորագույն խնդիրների իրականացումը հիմնականում վերաբերում է զբոսաշրջային կազմակերպությունների աշխատանքին, որի ծառայություններն անմիջապես կապված և իրականացվում են մարդկանց հետ շփման ձևերով:

Զբոսաշրջային ապրանքի ազդեցությունները, նույնպես կարելի է ներկայացնել, որպես զբոսաշրջային ինդուստրիայի յուրահատկություն: Այդ իմաստով, զբոսաշրջիկի շփումը իրեն շրջապատող մարդկանց հետ, կարելի է քննարկել որպես ազատ հարաբերություններ:

Մարդու առօրյա կյանքում կուտակվում են զանազան հոգսեր, կենցաղային խնդիրներ, իսկ արձակուրդի ընթացքում, հանգստի անցկացման վայրերում նա շփվում է այլ զբոսաշրջիկների, հանգստացողների, ինչպես նաև տեղի բնակիչների հետ՝ ժամանակավորապես փոխելով իր կենցաղը:

Զբոսաշրջությունը, հատկապես ներկա ժամանակաշրջանում, մեծ ազդեցություն է գործում այնպիսի կարևորագույն ոլորտների վրա, ինչպիսիք են տնտեսությունը, էկոլոգիան, քաղաքականությունը, որոնք իրենց հերթին ազդում են զբոսաշրջության վրա:

Քանի որ զբոսաշրջային տարածաշրջանը հյուրերից, այցելուներից եկամուտ է ստանում, ապա այդ գործընթացը կարևոր նշանակություն ունի զբոսաշրջային տարածաշրջանի սոցիալ–տնտեսական զարգացման գործում: Ըստ որում, զբոսաշրջային սպասարկումից ստացվող եկամուտը համարվում է առաջնային և ավելի նշանակալից, քան տարածաշրջանի հիմնական բնակիչներից ստացվողը:

Զբոսաշրջությունից ստացվող եկամուտը նոր հոսքերով ներգրավվում են տեղական տնտեսության շրջանառության մեջ և ունենում կրկնապատիկ դրական ազդեցություն, այն կարծես թե դառնում է տեղական տնտեսության կարևոր միջոց: Քանի որ զբոսաշրջիկները տվյալ տարածաշրջանում կատարում են տարբեր կարգի առևտրական գործարքներ, ապա առևտրական կազմակերպությունները, բնականաբար, մշտապես այդ ճանապարհով եկամուտ են ստանում, որն էլ ներ է դրվում տվյալ տարածաշրջանի զարգացման համար: Գումարի չափը, որը մնում է տվյալ տարածաշրջանում, կլինի այնքան շատ, որքան շատ ծառայություններ կմատուցվեն հենց տեղում, ինչպես նաև որքան հզոր կլինի տեղական արտադրությունը:

Տարածաշրջանի համար զբոսաշրջությունը կարող է նաև էկոլոգիական առումով օգտակար լինել, եթե զբոսաշրջությունից ստացվող եկամտի մի մասն օգտագործվի տվյալ վայրի լանդշաֆտի և առհասարակ շրջակա միջավայրի պահպանման նպատակներով: Շատ հաճախ զբոսաշրջության զարգացման սկզբնական շրջանում այդ գործընթացի հաշվին կառուցվում են տարբեր շինություններ, այդ թվում նաև էկոլոգիական նշանակության մաքրիչ կառույցներ: Միաժամանակ զբոսաշրջիկները, անկասկած, ստեղծում են ավտոճանապարհների ծանրաբեռնվածություն, աղտոտում շրջապատը և անխնա շահագործում շրջակա բնությունը: Հետևաբար, ստացվող եկամուտը պետք է օգտագործվի նաև դրանք վերականգնելու համար:

Հասարակությունը զբոսաշրջությունից անկասկած շահ է ստանում, և որ շատ կարևոր է, դրա շնորհիվ զգալիորեն դադարում կամ նվազում է տվյալ տարածաշրջանի կադրերի, աշխատուժի արտահոսքը: Սակայն, զբոսաշրջության յուրաքանչյուր տարածաշրջան անընդհատ պետք է կառուցվածքային, կադրային փոփոխություններ կատարի, սպասարկող անձնակազմը համալրի նաև դրսի մարդկանցով, հատկապես մասնագետների ներգրավմամբ: Երբեմն, եկվորները ձգտում են այդտեղ ձեռք բերել խոշոր հողամասեր և ձեռնարկություններ, որի հետևանքով տեղի մշտական բնակչության շրջանում կարող են առաջանալ դժգոհություններ: Միևնույն ժամանակ այդ և այլ պատճառներով կարող է առաջանալ տեղի բնակիչների օտարում: Իսկ դա կարող է հանգեցնել նրան, որ տվյալ տարածաշրջանում կդժվարանա զբոսաշրջության հետագա զարգացումը: Այդ առումով, խիստ անհրաժեշտ է, որպեսզի զբոսաշրջության պլանավորումը և ձևավորումը իրականացվի տեղի հասարակության ներգրավմամբ և նրա հետաքրքրություններն ու կարծիքն անպայման, պարտադիր հաշվի առնվի:

Ըստ որում, շահագրգռված բոլոր խմբերի մասնակցությունն այս գործընթացին, (հատկապես տնտեսագետների, էկոլոգների և այլն), առաջնային անհրաժեշտություն է: Բացի դրանից, այդ գործընթացի կատարելագործումը պահանջում է, որպեսզի լինի մի կազմակերպություն, որը կարող է միջնորդ հանդիսանալ զբոսաշրջային գործունեություն ծավալող տարբեր ընկերու-

թյունների միջև: Այնուհետև անհրաժեշտ է այդ գործընթացը կոորդինացնել համակարգող կազմակերպության հետ:

«Զբոսաշրջային ապրանքի» առանձնահատկությունը պայմանավորված է «զբոսաշրջային պահանջարկի» յուրահատկությամբ:

Զբոսաշրջային ապրանքի, ծառայությունների պահանջարկը միատարր չի կարող լինել հետևյալ պատճառներով: Դրանցից առաջինն այն է, որ զբոսաշրջային ապրանքը հնարավոր չէ պահել, պահեստավորել և միևնույն ժամանակ նաև շոշափելի չէ: Հետևաբար, պայմանագիր կնքելիս զբոսաշրջային ծառայությունը հնարավոր չէ տեսնել կամ այդ ապրանքը համտեսել, ինչպես դա արվում է արտադրության բնագավառի ապրանքների դեպքում:

Ելնելով այդ առանձնահատկություններից, զբոսաշրջության մենեջմենթի աշխատանքի դժվարության խնդիրն այն է, որպեսզի նա կարողանա գնորդին համոզել և վստահեցնել, որ հենց իր առաջարկված ապրանքն է ավելի հարմար, ձեռնտու: Եվ այդ գործընթացի կազմակերպման ընթացքում միշտ պետք է հաշվի առնել, որ «զբոսաշրջության ապրանքի» որակը տատանվում է չափազանց մեծ լայնույթների սահմաններում ու փաստորեն այն պայմանավորված է ոչ միայն մատակարարողների աշխատանքով, այլ նաև մեծապես կախված է առաջարկի ժամանակից և վայրից:

Զբոսաշրջային ապրանքը, ինչպես ասվել է, հնարավոր չէ պահել, պահեստավորել, որովհետև եթե գնորդը հրաժարվում է ճանապարհորդությունից միայն վերջին պահին, ապա փոխարինել նրան մեկ ուրիշով, արդեն գործնականում անհնարին է:

Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկի միատարր չլինելու հաջորդ պատճառը պայմանավորված է զբոսաշրջային ծառայություններից օգտվողների բազմազանությամբ:

Զբոսաշրջիկների տարբեր կատեգորիաներ, կարգեր տարբերվում են՝ ելնելով ճանապարհորդության նպատակից, զբոսաշրջության ծառայությունների նկատմամբ ունեցած իրենց պահանջարկով, ինչպես նաև ճանապարհորդության այն արժեքով, որը նրանք ի վիճակի են և պատրաստ են վճարել: Հետևաբար, զբոսաշրջիկների յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է զբոսաշրջային որոշակի շուկա:

Պատկերն ավելի բազմաձրագրային կլինի, եթե հաշվի առնվի հանգստացողների հատուկ կատեգորիաները: Մասնավորապես, պետք է հստակ տարբերակել լեռնային առողջարաններ այցելողներին (նման պայմաններում բուժվողներին), մասնագիտացված առողջարանների կարիք զգացողներին և այլն:

Զբոսաշրջային շուկայի տարբերակման նորագույն մեթոդների համաձայն, հանգստացողներին պետք է բաժանել նաև, ըստ այսպես կոչված «կյանքի ոճի» («նոր ռուսներ», «նոր հայեր»):

Զբոսաշրջային ծառայություններ իրականացնողները (արտադրողները), կողմնորոշվում են՝ ելնելով հանգստացողների նախասիրություններից:

Նրանք հանգստացողների պահանջմունքները պետք է լավ իմանան, քանի որ դրանց բավարարումը զբոսաշրջային ծառայություններին խոշոր եկամուտներ են բերում: Զբոսաշրջային պահանջարկի վրա շատ ուժեղ ազդում են այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են եկամուտները, ընտանիքի կառուցվածքը, ընտանիքի անդամների տարիքը, նրանց մասնագիտությունը և կրթությունը:

Ընտանիքի եկամուտը – սա զբոսաշրջության պահանջարկի վրա ազդող կարևորագույն գործոն է: Հասկանալի է, որ ճանապարհորդել կարող է միայն այն մարդն, ում միջոցներն այդ նպատակի համար բավարարում են:

Այլ խոսքով, այն պահանջմունքն է դառնում զբոսաշրջային պահանջարկ, որի բավարարման համար, բնականաբար միջոցներ կան:

Զբոսաշրջային հիմնահարցի գիտական հետազոտությունների համակարգում կարելի է առանձնացնել երկու հիմնական փոխկապակցվածություն՝ եկամուտների չափը և զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը:

Եթե ընտանիքի եկամուտներն առանձնապես մեծ չեն և հազիվ կարողանում են պահպանել իրենց գոյությունը, միանգամայն պարզ է, որ այդպիսի ընտանիքներն զբոսաշրջության ծառայությունների պահանջարկ չեն կարող ունենալ:

Պատկերը բոլորովին այլ է այն ընտանիքներում, որոնց եկամուտները հնարավորություն են տալիս զբոսաշրջության ծառայություններից օգտվել:

Ընտանիքի կառուցվածքը – այս գործոնը, անկասկած, նույնպես ազդում է զբոսաշրջության պահանջարկի չափի և տեսակի վրա: Կատարած հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ այն անձինք, որոնք ունեն ոչ մեծ ընտանիք (ընտանիքի անդամների թիվը կազմում է 1–2 մարդ), նրանք ավելի հաճախ են ճանապարհորդում:

Բնականաբար, ճանապարհորդությունների հաճախականությունն ավելի ցածր է բազմազավակ ընտանիքներում, հատկապես այդ ցուցանիշը ցածր է հինգ և ավելի անձից բաղկացած ընտանիքների համար:

Եզրակացությունն այն է, որ հասարակության այն խավերը, որոնք ունեն ոչ մեծ ընտանիքներ (միայնակներ, առանց երեխաների ընտանիքներ, արդեն ինքնուրույն դարձած երեխաներ), այդպիսի ընտանիքների համար զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը մեծանում է, քանի որ ընտանիքի բյուջեն բաժանվում է ավելի քիչ թվով անձանց վրա կամ ընտանիքի բոլոր անդամներն էլ եկամուտ են ստանում: Բնականաբար այդպիսի պայմաններ ունեցող մարդիկ ավելի հաճախ են ճամփորդում: Ըստ որում, նրանք մեծ պահանջներ են ներկայացնում հանգստի որակի և ծառայությունների նկատմամբ, քանի որ ճանապարհորդության արժեքը նրանց համար փաստորեն երկրորդական նշանակություն է ունենում:

Բացառություն են կազմում այն ընտանիքները, որտեղ երեխան ապրում է ծնողներից միայն մեկի խնամքի տակ, որի արդյունքում ընտանիքի եկամուտը համեմատաբար ցածր է: Հիմնականում այդ է պատճառը, որ միայնակ

մայրերի ու հայրերի վերաբերմունքը զբոսաշրջության նկատմամբ տարբերվում է այն անձանցից, որոնք ընտանիք չունեն, կամ այն ընտանիքներից, որոնցում և՛ հայրերը, և՛ մայրերը աշխատում են:

Տարիքը – նույնպես զբոսաշրջության ծառայությունների պահանջարկի վրա ազդող կարևորագույն գործոններից է: Հիմնականում տարեց մարդիկ և փոքր երեխաները, տարբեր պատճառներից ելնելով, հազվադեպ են ճանապարհորդում: Նախ, նրանց ճանապարհորդության ընթացքում անհրաժեշտ են ուղեկցողներ, մյուս կողմից, պարզապես կան այնպիսի վայրեր, որոնք նրանց համար պիտանի չեն կարող լինել, կամ այդպիսի վայրերում լինելը պարզապես նպատականարմար չէ:

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ կան թոշակի տարիքում գտնվող և աշխատանքային գործունեությունից հեռացած շատ մարդիկ, որոնք մեծ պահանջարկ են ներկայացնում զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ: Դրանք հատկապես այն մարդիկ են, որոնք ֆինանսական դժվարություններ չունեն, ինչպես նաև առողջական առումով դժվարություններ, հակացուցումներ չունեն:

Հաջորդ ոչ պակաս գործոնը, որով պայմանավորված է զբոսաշրջային որոշակի ծառայությունների նկատմամբ ունեցած պահանջարկը, դա *մարդու կրթությունն ու մասնագիտությունն է:*

Ըստ որում, ճանապարհորդությունների հաճախականությունը կախված է նրանից, թե որքանով է մարդը կապված իր աշխատանքային գործունեությանն ու մասնագիտական հակումներին: Օրինակ՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մանր ձեռնարկությունների տնօրենները ու նրանց ընտանիքները համեմատաբար ավելի հազվադեպ են ճանապարհորդում: Մինչդեռ, ծառայողները կամ պաշտոնյաները ամեն տարի օգտվում են մի քանի շաբաթ տևողությամբ արտոնություններից՝ արձակուրդից: Ընդհանուր առմամբ հանգստացողների կրթությամբ և մասնագիտությամբ է պայմանավորված ոչ միայն նրանց կատարած ճանապարհորդությունների թիվը, այլև զբոսաշրջային այն ծառայությունների տեսակը, որոնցից նրանք օգտվում են: Այդ գործոններով է պայմանավորված նաև այն, թե ինչպես է մարդն անցկացնում իր արձակուրդը:

Հասարակական գործոնների կարևորությունն զբոսաշրջության ոլորտում: Յուրաքանչյուր երկրում տիրող տնտեսական իրավիճակը, էկոլոգիական և սոցիալական գործոնները հանդիսանում են զբոսաշրջության ծառայությունների տարաբնույթ պահանջարկի նախապայմաններից մեկը:

Երկրի տնտեսական իրադրության ազդեցությունը զբոսաշրջության վրա: Հասարակության յուրաքանչյուր անդամի տնտեսական վիճակն անմիջականորեն կապված է երկրի ընդհանուր տնտեսական իրավիճակի հետ: Բնականաբար, որքան լավ է, բարվոք է տնտեսության վիճակը, այնքան բարձր է զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը:

Զբոսաշրջային ռեգիոնի (տարածաշրջանի) էկոլոգիան հատկապես արտադրության զարգացման արդի պայմանները զբոսաշրջության վրա ազդող կարևոր գործոն են: Յուրաքանչյուր տարածաշրջանի էկոլոգիական վիճակն այն կարևորագույն չափանիշն է, որով մարդիկ կողմնորոշվում են հանգստի ու ճանապարհորդության վայրը ընտրելիս: Ըստ որում, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հենց զբոսաշրջությունն իրենից մեծ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի համար:

Հասարակության գիտակցությունից կախված՝ տարածաշրջանի էկոլոգիական չափանիշները զբոսաշրջային պահանջարկի վրա երկակի ազդեցություն ունեն:

Բոլոր այն երկրները, կամ դրանց այս կամ այն տարածաշրջանները, որոնք էկոլոգիական հավասարակշռության առումով բարվոք չեն, բնական միջավայրի հավասարակշռությունը խախտված է, չեն կարող գրավել զբոսաշրջիկներին: Կրթական, գիտական մակարդակ ունեցող զբոսաշրջիկներն իրենք լավ գիտակցում են շրջակա միջավայրին վնաս հասցնելու, այն աղտոտելու անթույլատրելիությունը և իմանալով, որ տվյալ ռեգիոնները չունեն զբոսաշրջային այնպիսի ծառայություններ, որոնք կարող են կարգավորել էկոլոգիական հավասարակշռությունը, իրենք շրջակա միջավայրի պահպանության համապատասխան վերաբերմունք են ցուցաբերում ճանապարհորդության և հանգստի ընթացքում:

Սոցիալական գործոններ: Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկի վրա որոշակի ազդեցություն են ունենում նաև սոցիալական գործոնները: Ընտանիքի կազմը, կառուցվածքի հետ միաժամանակ զբոսաշրջության համար մեծ կարևորություն են ներկայացնում նաև սոցիալական երեք չափանիշները.

ա) կյանքի և աշխատանքի պայմանները, բ) կրթական մակարդակը,

գ) ազատ ժամանակի առկայությունը:

Մասնավորապես, մեզ հետաքրքրող ոլորտի վրա ինչպես են անդրադառնում կյանքի և աշխատանքի պայմանները: Առհասարակ, դեմոկրատական հասարակությունը և տնտեսության շուկայական ուղղվածությունը սովորաբար շատ արդյունավետ են ազդում զբոսաշրջության զարգացման վրա: Ազատ շարժման այդպիսի հասարակությունում զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը բավական բարձր է:

Սակայն, հիմնախնդրի էությունը քննադատորեն գնահատելու դեպքում, արժե իմանալ, թե ինչու զարգացած հասարակարգում ապրող մարդկանց ավելի անհրաժեշտ է ճանապարհորդությունը, արձակուրդը:

Հարցին պատասխանելու համար զանազան տեսակետներ կարելի է բերել: Առավել հիմնավոր տեսակետն այն է, որ մարդիկ գտնվելով, ապրելով ժամանակակից ինդուստրիալ հասարակության պայմաններում, նրանց համար հանգիստը, հրապուրանքն անհրաժեշտություն է:

Իսկ դա խիստ անհրաժեշտ է, որպեսզի վերականգնեն իրենց հոգեկան և

ֆիզիկական ուժերը, քանի որ առօրյա կյանքում նրանք անընդհատ գտնվում են ստրեսների մեջ: Հատկապես աշխատանքային ակտիվ կյանք ունեցողները փաստորեն տառապում են ամենօրյա աշխատանքի միատարրությունից և լարվածությունից: Հետևաբար, հանգիստը անհրաժեշտություն է դառնում աշխատանքային գործունեության ռիթմերի հարթեցման համար: Իսկ արձակուրդը փաստորեն առօրյա կյանքի դժվարությունների վաստակած փոխհատուցումն է:

Ինդուստրիալ զարգացման արդի պայմաններում մեծանում է պահանջարկը զբոսաշրջային ծառայությունների հանդեպ, քանի որ մարդիկ ձգտում են թեկուզ և կարճ ժամանակով դուրս գալ ուրբանիզացված աշխարհի շրջանակներից:

Կրթական մակարդակը: Որքան բարձր է հասարակության կրթական միջին մակարդակը, այնքան նրա անդամները շատ են գնահատում հանգիստը և հնարավորությունը՝ ծանոթանալու նորի և անծանոթի հետ: Որքան շատ է այն մարդկանց թիվը, ովքեր որակյալ կրթություն ունեն, այնքան մեծ է ծառայությունների պահանջարկը, որոնք ճանաչողական և ուսուցողական տարրեր են ընդգրկում:

Ազատ ժամանակը: Ազատ ժամանկի այն քանակը, որը տնօրինում է ինքը՝ զբոսաշրջության սուբյեկտը, զբոսաշրջիկը անկասկած համապատասխանաբար ազդում է զբոսաշրջային ծառայությունների ընտրության վրա: Ազատ ժամանակի առկայությունը կարևոր գործոն է հանդիսանում բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ուղևորվել ճանապարհորդության:

Սովորաբար, զարգացած հասարակարգի պայմաններում մեծահոգաբար են վերաբերվում մարդկանց նկատմամբ, կանոնավոր կերպով նրանց արձակուրդ է հատկացվում, ինչպես նաև նրանց համար սահմանվում է համեմատաբար ոչ շատ երկար աշխատանքային ժամ, ինչպես նաև բացի հիմնական արձակուրդից, աշխատողներին թույլատրվում է կատարել հաճախակի, բայց ոչ երկարատև ուղևորություններ:

Հենց այս գործոններով էլ պայմանավորված է զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը:

Զբոսաշրջությունը, որպես կառավարման օբյեկտի, հաջորդ յուրահատկությունը զբոսաշրջային ծառայությունների ամբողջությունն է:

Զբոսաշրջության ծառայությունն այն ամենն է, ինչի վրա զբոսաշրջիկը ուշադրություն է դարձնում, կամ որից նա օգտվում է ողջ ճանապարհորդության ընթացքում: Այստեղից պետք է եզրակացնել, որ զբոսաշրջային ծառայության համակարգն զբոսաշրջիկի համար անհրաժեշտ ծառայությունների ընդհանրություն է:

Հենց ծառայությունների այդ ընդհանրությունն էլ հանդիսանում է զբոսաշրջային յուրահատուկ ապրանք:

Կան նաև զբոսաշրջային առանձին ծառայություններ, որոնց անվանում են լրացուցիչ ծառայություններ: Ըստ որում, «լրացուցիչ» հասկացությունը

շատ կարևոր է զբոսաշրջության մենեջմենթի համար: Զբոսաշրջիկը, որը «պատրաստվում է արձակուրդ գնալ», դժվար թե ուղևորվի ճանապարհորդության, եթե ուղևորության վերջնակետում ապրելու հնարավորություն չլինի, կամ եթե նա ապահովված չի լինելու անհրաժեշտ սննդամթերքով: Կամ ասենք դահուկորդը հյուրանոցում նախապես տեղ չի պատվիրի, եթե այդ վայրում դահուկներով սահելու հնարավորություն չի ունենալու: Այս ոչ լրիվ թվարկված օրինակները ցույց են տալիս զբոսաշրջության ոլորտի առանձին, լրացուցիչ ծառայությունների ու դրանց համակարգի սերտ փոխկապվածությունն ու կախվածությունը:

Այդ կախվածությունն երբեմն կարող է վճռական հետևանքներ ունենալ համակարգի կառույցների, կազմակերպությունների կառավարման գործում:

Քանի որ զբոսաշրջության առանձին լրացուցիչ ծառայություններ կատարվում են տարբեր կազմակերպությունների կողմից, հետևաբար դրանք կախված են մեկը մյուսից: Այդպիսի իրավիճակից միակ ճիշտ ելքն այդ կազմակերպությունների կոոպերացումն է, այսինքն համատեղ, կոորդինացված աշխատանքը:

Վերջին տարիներին շատ է մեծացել զբոսաշրջային կազմակերպությունների համատեղ աշխատանքի նշանակությունը: Այս ոլորտի ձեռնարկությունների համատեղ աշխատանքը կարող է իրականացնել հորիզոնական կամ ուղղաձիգ մակարդակով:

Ձեռնարկությունների համատեղ այն աշխատանքների հորիզոնական բաժանումը, որոնք ունեն նույնանման հետաքրքրություններ, իրականացվում են տեղաբաշխման, ծառայությունների, զբոսաշրջային միջնորդությունների, առողջապահության, դաստիարակության և տրանսպորտի ոլորտներում:

Վերջին ժամանակներս զուտ արտադրական բազիսի վրա զարգանում է հյուրանոցային շղթան կամ հյուրանոցային խմբերը, որոնք փաստորեն առանձին ձեռնարկությունների և կազմակերպությունների միավորումն է, որոնք ձգտում են իրենց տնօրինության տակ վերցնել շուկան և թուլացնել կախվածությունն այլ կազմակերպություններից: Այդպիսի կազմակերպությունների թվին են դասվում հիմնականում արդեն ձևավորված, կազմակերպված պետական կազմակերպությունները (ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակի սահմաններում), որոնք զբաղվում են զբոսաշրջիկների տեղաբախշմամբ և հանգստի կազմակերպմամբ:

Ըստ որում, այսպիսի կազմակերպություններն ենթարկվում են ինտեգրացման թեթև ազդեցությունների՝ կապված տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակի հետ: Դրանք կարող են լինել նաև ճանապարհորդությունների կազմակերպման, հյուրանոցային հարցերի կարգավորման, տեղավորման ոլորտների ձեռնարկություններ ու այդ համակարգի այլ միավորումներ: Որպես օրինակ, կարելի է բերել օդային ընկերությունները, որոնք միաժամանակ ունեն նաև հյուրանոցային ցանց:

Ինչպես արդեն նշվել է, զբոսաշրջային ծառայությունների համակարգը

հիմնականում կազմված է զբոսաշրջային երկու կարգի առաջարկից՝ առաջնային և ածանցյալ:

Ըստ որում, ինչպես ածանցյալ առաջարկի ներսում, անպես էլ առաջնային և ածանցյալ առաջարկների միջև գոյություն ունի միմյանց լրացնող կապ, որով և պայմանավորվում է առաջարկը կատարողների միջև ստեղծող սերտ փոխկապակցվածությունը:

Զբոսաշրջիկն իր հանգստավայրում լինելու ընթացքում ամբողջական լիարժեք ծառայություններ է ստանում:

Սովորաբար, այս կամ այն վայրի, տարածաշրջանի, երկրի զբոսաշրջային առաջարկի, առաջարկների փաթեթը քննարկվում, գնահատվում է որպես «կոլեկտիվ արտադրանք»: Այդ ծառայությունների ամբողջությունն էլ միավորվում է մեկ ընդհանուր՝ «ճանապարհորդության նպատակ» հասկացության մեջ:

Ճանապարհորդության նպատակը փաստորեն այն միջավայրն է, որտեղ իրականացվում է զբոսաշրջության պահանջարկը (զբոսաշրջության, հանգստի նպատակով):

Եթե ճանապարհորդության նպատակը քննարկվում է զբոսաշրջային պահանջարկի կառուցվածքում, որպես գովազդային ծառայությունների մատուցման մի ամբողջություն, ապա այն կազմակերպությունը կամ անձը, որը կազմակերպել և առաջարկում է այդ ծառայությունների ամբողջությունը, այնպես պետք է ծավալի իր գործունեությունը, որի արդյունքում զբոսաշրջության վայրը դառնա ապրանք: Ըստ որում, այդ հարցերը պետք է քննարկվեն որպես մեկ միասնական ամբողջություն: Այդպիսի դեպքերում չպետք է առաջարկվեն առանձին ծառայություններ (ինչպես, օրինակ, առանձին հյուրանոցային ծառայությունները, միայն դահուկներով սահելու հնարավորությունը կամ ռեստորաններից օգտվելու հնարավորությունը և այլն): Պետք է հաշվի առնել, որ այս առանձին–առանձին առաջարկվող ծառայություններն ի վիճակի չեն զբոսաշրջային շուկայում վճռական դեր խաղալ: Առավել արդյունավետ է, որպեսզի այս բոլոր `առանձին, անջատ ծառայությունները միավորված լինեն մեկ, միասնական ծառայությունների համակարգի մեջ: Բայց չպետք է բացառել նաև այն հանգամանքը, որ պահանջարկով պայմանավորված այս կամ այն առանձին ծառայությունը կարող է փոքր–ինչ ավելի կարևոր դեր խաղալ այդ ծառայությունների մեջ:

Վերջապես, որպես զբոսաշրջության կարևոր յուրահատկություն, անհրաժեշտ է նկատի ունենալ դրա «սեզոնայնությունը», ինչպես նաև զբոսաշրջության ծառայությունների մեջ կախվածությունն առաջին հերթին բնակլիմայական պայմաններից:

Զբոսաշրջության մենեջմենթի խնդիրները լուծելիս, այս երևույթը պետք է անպայման հաշվի առնվի զբոսաշրջային կազմակերպությունների ղեկավարների կողմից այնքանով, որքանով, որ պահանջարկի տատանումները կարող են իրապես վատացնել ամբողջ զբոսաշրջության ինդուստրիայի գոր-

ծունեության պայմանները: Զբոսաշրջության ոլորտի յուրահատկությունները, որպես կառավարման օբյեկտի, հատկանշական են նրանով, որ զբոսաշրջային բիզնեսի մենեջերները պետք է հաշվի նստեն այն հանգամանքի հետ, որ այս ոլորտը բոլորովին նման չէ արտադրության մյուս ոլորտներին և այդ իսկ պատճառով էլ կառավարման մեթոդները, աշխատակարգը, աշխատանքային գործունեության մյուս ոլորտներից մեխանիկորեն տեղափոխել զբոսաշրջության ոլորտ հնարավոր չէ:

Եթե արտադրության մեջ իրեն արդարացրած կառավարման մոդելը տալիս է անհրաժեշտ արդյունք, ապա դրա կիրառումը զբոսաշրջային ոլորտում կարող է հանգեցնել այլ արդյունքի՝ վերջինիս աստիճանական անկման:

Այդ կապակցությամբ կարելի է առանձնացնել և ընդգծել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են և կարող են բնութագրող հանդիսանալ ցանկացած զբոսաշրջային ձեռնարկությունների կառավարման դեպքում:

Առաջին հերթին, զբոսաշրջային գործունեությունը պլանավորելիս, անկյունաքարը պետք է հանդիսանա վերջնական սպառողների (զբոսաշրջիկների) կարիքները, պահանջները և ցանկությունները: Այս հանգամանքները հաշվի առնելով էլ որոշվում է ցանկացած զբոսաշրջային կազմակերպության ծրագրերի ներդրման ոլորտը: Ինչպես նաև, շատ կարևոր է զբոսաշրջային ձեռնարկությունների տեղաբաշխման, աշխատելու գործոնը:

Առաջին հերթին այն պետք է պայմանավորված լինի զբոսաշրջային ապրանքի սպառողների կազմի տեղակայման վայրով, այդ թվում նաև ռեկրեացիոն ռեսուրսների առկայությամբ, կոնկրետ դրանց գտնվելու վայրով, որոնք էլ գործնականում զբոսաշրջային ոլորտի համար հիմնական գործոն են հանդիսանում:

Երկրորդ բնորոշ գործոնը թեև առաջնային լինել չի կարող, սակայն յուրահատուկ դեր ունի:

Դա տնտեսական, գիտատեխնիկական առաջընթացի արդի պայմաններում, զբոսաշրջության նշանակությունն է, որպես մարդու անգնահատելի ուժերի և առողջության վերականգնման միջոցի: Հետևաբար, այս գործոնի վրա նույնպես պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Սակայն, զբոսաշրջային այդ «ապրանքը» դեռևս չի դարձել այս ոլորտի առաջին անհրաժեշտության ապրանք, որի ուղղությամբ առանձնահատուկ կազմակերպական աշխատանքներ պետք է տարվեն:

Նշենք, որ զբոսաշրջային ծառայությունների վրա առավել մեծ է (ավելին քան այլ ծառայությունների) գնողունակության հնարավորությունների փոփոխության ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ զբոսաշրջության զարգացման վրա կարող են մեծ ազդեցություն ունենալ քաղաքական և էկոլոգիական երևույթները:

Բացի դրանից, հատկանշական է նաև, որ զբոսաշրջային ոլորտի վրա չափազանց մեծ է մարքետինգի ազդեցությունը: Դա պայմանավորված է նրանով, որ զբոսաշրջային ծառայության «վաճառողը» հնարավորություն չունի

ներկայացնելու «ապրանքի» օրինակի չափանիշները, հատկանիշները, (ինչպես դա կիրառվում է այլ ապրանքների իրացման դեպքում): Սակայն, նա կարող է շատ հաջող փաստարկներ բերել իր կողմից «վաճառվող ապրանքի» օգտին, իսկ դա կարող է կատարվել միայն շատ լավ ձևավորված կատարելագործված մարքետինգի համակարգում: Բացի այդ, ծառայությունների որակի անկայունությունը, անընդհատ փոփոխությունը, դրա գնահատման հարցում անհրաժեշտություն է առաջացնում անընդհատ և հետևողական հսկողություն իրականացնել: Հետևաբար, ժամանակին համահունչ լինելու և արդի պահանջներից ելնելով, մենեջմենթի գործունեության այս բնագավառը ձեռք է բերում հատուկ նշանակություն:

Զբոսաշրջության միևնույն ուղևորությունը կարող է բոլորովին տարբեր գնահատականի արժանանալ երկու տարբեր մարդկանց կողմից: Իսկ դա երբեմն թյուրիմացությունների տեղիք կարող է տալ զբոսաշրջային կազմակերպությունների և սպառողների փոխհարաբերություններում:

Այդ պատճառով, զբոսաշրջային մենեջմենթը պետք է կենտրոնանա մի ընդհանուր համակարգի ստեղծման վրա:

Քննարկվող ոլորտի կարևոր առանձնահատկությունը նաև զբոսաշրջային ծառայության բացառիկ բնույթն է (ճանապարհորդության երթուղին, սպասարկման պայմաններն ու արժեքը): Փորձը ցույց է տալիս, որ անգամ միևնույն երթուղով, նույն ճամփորդությունը միևնույն զբոսաշրջային կազմակերպության կողմից հաճախ ընթանում է բոլորովին տարբեր ձևով՝ չնմանվելով մեկը մյուսին: Այդ յուրահատկությունը կարող է հատկապես պայմանավորված լինել տրանսպորտի միջոցներով, տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով կամ չնախատեսված այլ երևույթներով:

6. Զբոսաշրջության կառավարման համակարգը և կառուցվածքը

Համակարգման տեսության համաձայն զբոսաշրջության ոլորտի ընդհանուր համկարգը կարելի է բաժանել ենթահամակարգերի: Եթե ասում ենք համակարգված կամ համակարգման տեսություն, ապա անպայման հարց է առաջանում, թե ընդհանրապես ինչ է իրենից ներկայացնում համակարգը: Օրինակ, ավազի կույտը դա դեռ համակարգ չէ: Ավազի կույտը կարելի է խառնել, դրան մի բուռ ավելացնել կամ նրանից մի բուռ վերցնել, բայց միևնունն է, ավազի կույտն ամեն դեպքում կմնա՝ որպես այդպիսին:

Մինչդեռ կառավարման «համակարգում» դա հնարավոր չէ, քանի որ ցանկացած թեկուզ աննշան փոփոխությունների դեպքում էլ նրա առանձին մասերի միջև կապը փոփոխվում է, հետևաբար և փոխվում է նրա ամբողջական բնույթը:

Եթե փորձենք տալ զբոսաշրջության «համակարգ» հասկացության բնորոշումը, ապա այն կստացվի հետևյալ ձևով «համակարգը – դա տարրերի կա-

նոնավորված ամբողջությունն է, միասնությունն է, որոնց միջև գոյություն ունի, կամ կարող է առաջանալ սերտ կապակցվածություն»:

Եթե այս բնորոշումը կոնկրետացնենք քննարկվող ոլորտի՝ զբոսաշրջության համակարգի տեսանկյունով, ապա կարելի է ասել, որ դա զբոսաշրջության ոլորտում տեղի ունեցող հարաբերությունների, երևույթների, գործընթացների միասնությունը, ամբողջությունն է:

Այսպիսով, զբոսաշրջության համակարգը փաստորեն ներկայացվում է այդ ոլորտի հարաբերությունների համակարգով, որտեղ զբոսաշրջային ձեռնարկությունները, կազմակերպությունները և տարածաշրջանները փոխազդեցության մեջ են արտաքին ոլորտի հետ: Ըստ որում, զբոսաշրջության համակարգի հիմքում ընկած են երկու ենթահամակարգեր՝ *զբոսաշրջության սուբյեկտը* (գործող անձը) և *զբոսաշրջության օբյեկտը:* Զբոսաշրջության *սուբյեկտը* – դա զբոսաշրջային իրադարձությունների անդամն է, կամ ավելի կոնկրետ՝ «զբոսաշրջիկը», որը փնտրում է իր պահանջմունքները բավարարելու հնարավորություններ, յուրօրինակ, ինքնատիպ զբոսաշրջային ծառայություններ ստանալու ճանապարհով: Իսկ այդ ծառայությունները փնտրվում են զբոսաշրջության օբյեկտի միջոցով: Զբոսաշրջային օբյեկտ ասելով հասկացվում է այն ամենը, ինչը կարող է զբոսաշրջիկը օգտագործել կամ հանդիսանալ ճանապարհորդության նպատակ: Դա կարող է լինել հատկապես զբոսաշրջային տարածաշրջանն իր լայն կամ նեղ մասնագիտացումներով, զբոսաշրջային բոլոր կառույցների հետ միասին:

Զբոսաշրջության համակարգը մեկուսացված չէ, այն գոյություն ունի հասարակության շրջանակներում: *Զբոսաշրջության* համակարգը շրջապատող աշխարհը ներկայացված է տնտեսությամբ, էկոլոգիայով, տեխնոլոգիայով, քաղաքականությամբ և սոցիալական համակարգով: Ըստ որում, թվարկված համակարգերն, անկասկած, մեծ ազդեցություն են ունենում զբոսաշրջության վրա:

Այսպիսով, զբոսաշրջության յուրահատկություններից մեկը նրա կախվածությունն է միջավայրից:

Ինչպես զբոսաշրջության սուբսիստեմների, այստեղ էլ արտաքին համակարգի և զբոսաշրջության համակարգի միջև գոյություն ունի որոշակի փոխկապվածություն:

Այնքանով, որքանով որ զբոսաշրջության համակարգի և արտաքին աշխարհի (որի մեջ գոյություն ունի զբոսաշրջությունը) միջև առկա են որոշակի փոխկապվածություն, ապա կարելի է ասել, որ զբոսաշրջությունը բաց համակարգ է, որը ոչ միայն կարելի է, այլև անհրաժեշտ է կառավարել՝ օգտագործելով ժամանակակից մենեջմենթի մեթոդները և սկզբունքները:

Այսպիսով, զբոսաշրջությունը, որպես բաց համակարգ, արտաքին աշխարհի հետ գտնվում է փոխկապակցվածության մեջ: Ըստ որում, այդ կապերը իրականացվում են հասարակական այնպիսի համակարգերի միջոցով, ինչպիսիք են տեխնոլոգիաները: Զբոսաշրջության համակարգը բաժանվում է

երկու ենթահամակարգերի՝ (սուբսիստեմների) զբոսաշրջության կառավարման *սուբյեկտի* և զբոսաշրջության կառավարման *օբյեկտի:*

Զբոսաշրջության վրա արտաքին միջավայրի ունեցած ազդեցությունը քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ այն ամենուրեք նույնը չէ: Մենեջմենթի համար շատ կարևոր է կարողանալ բացահայտել արտաքին փոխազդեցության հատկապես իրական գործոնները և ընտրել դրանց արձագանքելու առավել արդյունավետ միջոցները:

Տնտեսությունը և զբոսաշրջությունը շատ սերտ կապով փոխազդում են մեկը մյուսի վրա ու փոխկապակցված են: Ըստ որում, տարբերվում է այդ ոլորտների փոխազդեցության երկու հիմնական ուղղություն: Առաջինը՝ տնտեսության ազդեցությունն է զբոսաշրջության վրա և երկրորդը՝ հակառակը՝ զբոսաշրջության ազդեցությունը երկրի ամբողջ տնտեսության վրա:

7. Տնտեսության ազդեցությունը զբոսաշրջության վրա

Ընդհանուր տնտեսական գործոնները կարող են ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունենալ զբոսաշրջության վրա:

Մասնավորապես, զբոսաշրջության վրա դրականորեն ազդող տնտեսական հիմնական գործոնները հետևյալն են.

ա) իրական եկամտի աճը.

բ) եկամտի առավել հավասարաչափ բաշխումը.

գ) տարադրամի վիճակի կայունությունը:

Իսկ զբոսաշրջության վրա բացասաբար ազդող տնտեսական հիմնական գործոններն են.

ա) տնտեսության կաթվածային երևույթները.

բ) արդյունաբերության անկումը.

գ) տարադրամի անկայուն վիճակը:

Իրական եկամտի մեծությունն ազդում է զբոսաշրջության ծառայությունների պահանջարկի վրա: Ըստ որում, իրական եկամտի մեծացման դեպքում, սպառողներն իրենց տնօրինության տակ մեծ գումարներ են ունենում: Եթե գումարն ավելի է, քան այն անհրաժեշտ է կյանքի ապահովվածությունը ֆինանսավորելու համար, այդ դեպքում արդեն մեծանում է նաև պահանջարկը զբոսաշրջության նկատմամբ:

Եկամուտների բաշխումը նույնպես ազդում է զբոսաշրջության վրա: Որքան հավասարապես են բաշխված եկամուտները հասարակության մեջ, այնքան մեծ թվով մարդիկ կարող են իրենց թույլ տալ ճանապարհորդություն կատարել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ փոխկապակցվածությունն արդեն ակնհայտ էր XIX դարի սկզբներից: Այն ակնառու է հատկապես ներկա ժամանակաշրջանում:

Տարադրամի կայունությունը նույնպես կարևոր գործոն է զբոսաշրջության

համակարգում: Եթե դոլարի կուրսը բարձր է, ապա դա հնարավորություն չի տալիս մեծ քանակությամբ դոլար գնել և հակառակը:

Տարադրամի այդպիսի պայմաններում Հայաստանի Հանրապետության կամ Ռուսաստանի Դաշնության համար ճանապարհորդությունների և հանգստի կազմակերպումը, ասենք արտասահմանյան երկրներում, անկասկած շատ թանկ հաճույք է: Միևնույն ժամանակ, ԱՄՆ–ի բնակչության համար ճանապարհորդությունը դեպի Ռ.Դ. կամ Հայաստանի Հանրապետություն և այլ երկրներ, բավականին շահավետ է:

Տարադրամի փոխանակման կուրսի տատանումները հանգեցնում են նրան, որ գների տարբերությունը միևնույն ծառայությունների համար դառնում են բավականին նշանակալից:

8. Զբոսաշրջության ազդեցությունը տնտեսության վրա

Տնտեսության վրա զբոսաշրջության ունեցած ազդեցության տեսանկյունից, կարելի է առանձնացնել զբոսաշրջության տնտեսական հինգ ֆունկցիաներ (գործառություն):

Դրանք են.

1. արտադրական
2. բնակչության զբաղվածությունն ապահովող (որն ունի երկակի բնույթ)
   ա) ուղղակի ազդեցություն
   բ) անուղղակի
3. եկամուտների ստեղծման
4. տնտեսական
5. վճարման հաշվեկշռի համահարթեցում

Արտադրական ֆունկցիաներ: Առհասարակ, ձեռնարկությունը կատարում է արտադրական ֆունկցիա, այն դեպքում, եթե օգտագործվում են այնպիսի արտադրական գործոններ, ինչպիսին են աշխատանքը, հողը և կապիտալը: Արտադրական գործոնների զուգակցման դեպքում, նոր ապրանք թողարկելու շնորհիվ ստեղծվում է հավելյալ արժեք: Այդպիսի գործընթացը կոչվում է արժեքների կուտակում:

Այն ձեռնարկությունները, որոնք ընդգրկված են զբոսաշրջության ոլորտում, նույնպես թողարկում են նոր արտադրանք, հետևաբար նպաստում են արժեքների կուտակմանը: Այսպիսով, դրանք արտադրական ֆունկցիա են կատարում:

Զբոսաշրջության ապրանքները, ինչպես ասվել է, շատ հաճախ ոչ նյութական ապրանքների տեսք ունեն, քանի որ, դրանք իրենցից ներկայացնում են ծառայություններ: Այդպիսի ծառայությունների «արտադրության» իրականացման համար անհրաժեշտ է անձնակազմ: Ըստ որում, զբոսաշրջության ոլորտը խիստ անձնավորված է, այդ պատճառով էլ զբոսաշրջության հաջորդ ֆունկցիան բնակչության զբաղվածության ապահովումն է:

Ինչպես սովորական արտադրության մեջ, զբոսաշրջության ոլորտում կադրերի քանակական աճը նույնպես կարող է կանխվել միայն տեխնիկական միջոցների ներդրման դեպքում:

Տեխնիկական միջոցները, անկասկած, հեշտացնում են մարդկանց աշխատանքային գործունեությունը, բայց դրանք չեն կարող փոխարինել զբոսաշրջիկների, հյուրերի հետ անձնական անմիջական շփումները:

Զբոսաշրջիկը ուղղակի, թե անուղղակի կերպով նպաստում է ***բնակչության զբաղվածությանը:*** Քննարկելով զբոսաշրջության բնագավառում զբաղվածության վրա ունեցած ուղղակի խնդիրը, նկատի պետք է ունենալ այն հանգամանքը, որ բնակչությունը աշխատատեղեր է ստանում անմիջապես զբոսաշրջության ձեռնարկություններում՝ գլխավորապես հյուրանոցային, տրանսպորտային ձեռնարկություններում և զբոսաշրջության գրասենյակներում: Սակայն, զբոսաշրջությունն զբաղվածություն է ապահովում նաև տնտեսության այլ ճյուղերում, հետևաբար այդ բնագավառներում բնակչության զբաղվածության վրա ուղղակի ազդեցություն ունի:

Եկամտի ստեղծման ֆունկցիաներ: Որպես կանոն, ով աշխատում է, նա էլ իր աշխատանքի համար եկամուտ է ստանում: Հետևաբար, տնտեսագիտական հասկացություններից ելնելով, կարելի է ասել, որ զբոսաշրջության ոլորտում կատարվող տնտեսական գործունեությունն իր լուման է ներդնում ազգային եկամտի ստեղծման գործում: Ըստ որում, դա առաջին հերթին վերաբերում է բոլոր այն մարդկանց, որոնց աշխատատեղերն անմիջապես կախված են զբոսաշրջությունից: Այս դեպքում, խոսքը զբոսաշրջության բնագավառում եկամտի ստեղծման վրա ուղղակի ազդեցության մասին է:

Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ զբոսաշրջային ձեռնարկությունների կողմից կատարած առաջին պտույտից ստացվող միջոցները, որոնք հանդես են գալիս եկամտի տեսքով, ձեռնարկության հաշիվներից նորից կարող են դուրս գալ և կատարել պտույտ:

Այսպիսով, առաջանում են նոր եկամուտներ, բայց արդեն երկրորդ դեմքով: Եթե այդ անձինք հանդես են գալիս զբոսաշրջության ձեռնարկությունների համար որպես մատակարարներ, ապա այդ դեպքում խոսքը գնում է նշված բնագավառում ստեղծվող եկամտի անուղղակի ազդեցության ֆունկցիաների մասին: Օրինակ՝ հյուրանոցի մենեջերը հացթուխին պատվիրում է հաց թխել հյուրանոցի ռեստորանի համար, որտեղից օգտվում են զբոսաշրջիկները: Հացթուխը, այսպիսով, իր եկամտի մի մասը փաստորեն ստանում է զբոսաշրջության ոլորտի հետ համագործակցության արդյունքում, քանի որ իր արտադրանքը, որը նա առաքում է հյուրանոց, օգտագործում են զբոսաշրջիկները:

Զբոսաշրջության ոլորտում ստեղծված եկամուտն, անկասկած, նպաստում է ազգային եկամտի մեծացմանը: Ըստ որում, տնտեսության մեջ սովորաբար գիտականորեն այդ ազդեցության մասին պետք է խոսվի այն դեպքում, երբ նկատի ունեն, որ մի բնագավառում ստացվող եկամուտը նպաստում է մեկ այլ բնագավառում նոր եկամտի առաջացմանը:

Զբոսաշրջության բնագավառում ազգային եկամտի մեծացման ազդեցությունն առաջին հերթին ունի տարածաշրջանային նշանակություն:

Եկամուտների նշանակալի մեծացումը տեղի է ունենում այն դեպքում, երբ զբոսաշրջության ոլորտում առաջնային դրամամուտքը կամ առևտրից ստացված գումարն անցնում է տարածաշրջանի առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտ:

Տարածաշրջանային տեսանկյունով ոլորտի հարցերը քննարկելու դեպքում կարևոր դեր է խաղում զբոսաշրջության հաջորդ կարևոր՝ ***հարթեցման ֆունկցիան***: Այս ֆունկցիայի էությունը կայանում է նրանում, որ զբոսաշրջությունը շատ հաճախ նպաստում է տնտեսապես առավել նվազ զարգացած տարածաշրջանի զարգացմանը: Այսինքն, զարգացման հարթեցման դեր է խաղում:

Որպես կանոն, զբոսաշրջիկների համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն տարածաշրջանները, որոնք ունեն թույլ զարգացած արդյունաբորություն, բայց զբոսաշրջության համար հետաքրքիր լանդշաֆտ և լիակատար էկոլոգիական առումով, հավասարակշռված շրջակա միջավայր, որտեղ շատ հաճախ համեմատաբար լավ է զարգացած լինում գյուղատնտեսությունը: Ըստ որում, այդպիսի տարածաշրջանների բնակչության համար զբոսաշրջությունն իրենից ներկայացնում է լրացուցիչ եկամտի կարևոր աղբյուր: Այս հանգամանքն, անկասկած, զգալիորեն նպաստում է նրանց եկամուտների համահարթեցմանը:

Զբոսաշրջության համահարթեցման ֆունկցիան ունի նաև միջազգային նշանակություն: Օրինակ, եթե կղզային ոչ մեծ որևէ պետություն, որի բնակչությունն ապրում է առավելապես գյուղատնտեսությունից և որսորդությունից ստացվող եկամուտների հաշվին (այսինքն ունի միակողմանի ուղղվածություն), զբոսաշրջությունն այդ երկրի համար լրացուցիչ և շատ կարևոր համահարթեցնող տնտեսական նշանակություն ունի:

Զբոսաշրջիկներին սովորաբար հետաքրքրում և նրանք օգտագործում են էկզոտիկ երկրների ապրանքները, ինչպես նաև օգտվում են տեղի յուրատիպ ծառայություններից: Տվյալ դեպքում զբոսաշրջությունը փաստորեն վերաբաշխում է տվյալ երկրի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի եկամուտը:

Զբոսաշրջության հաջորդ տնտեսական ֆունկցիան ***վճարման հաշվեկշռի համահարթեցումն է:*** Ժողովրդական տնտեսության մեջ գոյություն ունի «վճարման հաշվեկշիռ» հասկացությունը, իր բոլոր բաղկացուցիչ մասերով: Ըստ որում, ծառայությունների հաշվեկշռի բաղկացուցիչ մասն է կազմում երկրի ներսում և դրա սահմաններից դուրս կատարվող ճանապարհորդությունների հաշվեկշիռը: Այս հաշվեկշռում տվյալ երկրի զբոսաշրջիկների այն ծախսերը, որոնք կատարվում են երկրի սահմաններից դուրս, հակադրվում են այն եկամուտների հետ, որոնք առաջանում են այդ երկիր այցելած արտասահմանյան զբոսաշրջիկների կողմից ստացված եկամուտների հետ:

Զբոսաշրջությունը տարբեր կերպ է ազդում յուրաքանչյուր երկրի վճարման հաշվեկշռի վրա:

Հյուսիսային Եվրոպայի շատ երկրներ համարվում են արտագնա մեկնող զբոսաշրջության երկրներ:

Բոլորովին այլ է իրավիճակը Շվեյցարիայում և մի շարք այլ երկրներում, որտեղ զբոսաշրջության հաշվեկշիռը անընդհատ մեծանում է:

Բացի դրանից, արտասահմանյան երկրներից ժամանող զբոսաշրջիկների ծախսերը Շվեյցարիայում շատ ավելի մեծ են, և դրանք գերազանցում են այն ծախսերը, որոնք շվեյցարացի զբոսաշրջիկները կատարում են այլ երկրներում:

Այսպիսով, զբոսաշրջության ժողովրդատնտեսական նշանակությունը պայմանավորված է հետևյալ գործառություններով կամ ֆունկցիաներով. արտադրական, բնակչության զբաղվածությանն օժանդակելու, աջակցելու, եկամուտների կուտակման, հարթեցման և վճարման հաշվեկշռի հարթեցման ֆունկցիաներով:

9. էկոլոգիան և զբոսաշրջությունը

Ներկա ժամանակաշրջանում մարդկությունը գտնվում է էկոլոգիական չափազանց վտանգավոր վիճակում: Մթնոլորտի աղտոտվածությունը, բնական լանդշաֆտի, ռեսուրսների հանդեպ մարդկանց անխնա, բարբարոս վերաբերմունքը շատ լուրջ պատճառ է դարձել շրջակա միջավայրի հավասարակշռության խախտումների համար, որը խիստ բացասական ազդեցություն է թողնում մարդկության նորմալ կենսագործունեության համար:

Մարդու հարատևությունը, բնականաբար պահանջում է, որպեսզի նա ավելի լուրջ, խնամքով, հոգատար վերաբերվի բնության հանդեպ, քան այսօր: Ցավոք աշխարհի շատ տարածաշրջաններում հենց մարդու գործունեության հետևանքով էկոլոգիական հավասարակշռությունը խախտված է:

Ըստ որում, ժամանակակից զբոսաշրջությունը նույնպես որոշակի սահմաններում մեծ վնաս է հասցնում շրջակա միջավայրին: Մարդու գործունեության հետևանքով տեղի է ունենում բնական պայմանների փոփոխություն, հետևաբար նաև հատկապես մարդու կյանքի և ապրելու պայմանների վատթարացում:

Բացի դրանից, այդ բացասական միտումները մեծապես նկատվում են նաև բուսական և կենդանական աշխարհում:

Զբոսաշրջության բնագավառում աշխատողների համար, բնական միջավայրի պահպանությունը, որպես զբոսաշրջության տարածաշրջանի կարևորագույն ռեսուրսի, առաջնահերթ խնդիր է: Ըստ որում, շրջակա միջավայրի վրա զբոսաշրջության թողած ազդեցության և փոխազդեցության գնահատման հարցում մասնագետների կարծիքները տարանջատվում են: Այդպիսի

գնահատման հարցերը քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ էկոլոգիական երևույթների ընկալման, դրանք կառավարելու խնդիրը կայանում է նրանում, որ նշված երևույթներից շատերը որոշակի չեն կարող լինել: Ինչպես նաև, դժվար է հանգամանորեն գնահատել դրանց ազդեցությունը զբոսաշրջիկների և տեղի բնակիչների վրա: Պետք է հաշվի առնել նաև, որ փոխանակային կամ փոխանակվող գործոններով դժվար է գնահատել էկոլոգիական երևույթների հետևանքները:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ էկոլոգիական հավասարակշռության շատ խախտումներ ընկալելի, ճանաչելի են դառնում չափազանց ուշ:

Զբոսաշրջիկների և տեղի բնակիչների բախումը, բնությունը զբոսաշրջիկներով ծանրաբեռնելու խնդիրների քննարկումները, դրանց հետևանքների գնահատումը մարդկային գլխավոր հիմնախնդիրներից մեկն է, այսինքն այն դարձել է մարդկության համամոլորակային հիմնախնդիր:

Միևնույն ժամանակ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջիկների միայն 52%–ն է գտնում, որ զբոսաշրջության ազդեցության հետևանքով բնության, լանդշաֆտի գեր ծանրաբեռնվածությունը մեծ վտանգ է ներկայացնում մարդկության համար: Իսկ զբոսաշրջային ռեսուրսների՝ որպես զբոսաշրջության բացասական ազդեցության առաջին գործոն, բնակիչները համարում են հիմնականում տրանսպորտային միջոցների ազդեցությամբ մթնոլորտի աղտոտումը, ինչպես նաև այդ գործոնի ազդեցությամբ հողատարածքների անարդյունավետ օգտագործումը:

Այսպիսով, ստացվում է, որ զբոսաշրջիկներն իրենց անհատական կարիքների կարճատև բվարարումն ավելի բարձր են դասում, քան բնության երկարատև, արդյունավետ օգտագործումը:

Զբոսաշրջային հոսքեր կառավարելու, էկոլոգիական հավասարակշռությունն ապահովելու նպատակով, կիրառվում են այցելության մենեջմենթի մի ամբողջ համակարգ:

Այցելության մենեջմենթը կառավարում է ճանապարհորդությունների ժամանակը (առավելագույն տևողությունը), այցելության տեսակները (թույլատրվող մարզաձևերը և այլն) կամ տարածաշրջանի օգտագործման լարվածությունը (ինտենսիվությունը), այսինքն այցելուների քանակի առավելագույն թույլատրելիությունը:

Այցելության մենեջմենթի ամբողջ կարողությամբ օգտագործելուն առաջին հերթին խանգարում են հետևյալ գործոնները:

Տեղի բնակիչները չեն ցանկանում, որպեսզի իրենց ազատ ժամանակն անցկացնելու ակտիվությունը սահմանափակվի: Երբեմն տվյալ տարածաշրջանի բնությունը, որը պահպանության կարիք ունի, չի ունենում այնպիսի տնօրեն, որն ի վիճակի է անհրաժեշտ մակարդակով պահպանել այն: Երբեմն նաև ճամփորդությունների սահմանափակումը չեն համընկնում զբոսաշրջային կազմակերպությունների կարճաժամկետ հետաքրքրությունների հետ:

Այսպիսով, բնապահպանական առումով, մարդու կենսագործունեության

պայմաններն ենթարկված են լուրջ վտանգի, իսկ շրջակա միջավայրի նպատակաուղղված պահպանությունը փաստորեն դժվարանում է, քանի որ զբոսաշրջությունը սերտորեն կապված է տնտեսական ճամփորդության հետաքրքրությունների հետ (այսինքն, շահագրգռվածության հետ): Միևնույն ժամանակ, սովորաբար, էկոլոգիական և տնտեսական բախումների դեպքում, առավելությունը տրվում է տնտեսական հետաքրքրությունների բավարարմանը:

Ըստ որում, շատ դեպքերում շրջակա միջավայրի պահպանման և առհասարակ էկոլոգիական խնդիրները, հիմնահարցերը լուծվում են միայն տնտեսական խնդիրները լուծելուց հետո:

Մինչդեռ, իրականում պետք է հաշվի առնել, որ շրջակա միջավայրի ամբողջականության պահպանումը զբոսաշրջության զարգացման կարևորագույն, վճռական դեր խաղացող նախադրյալներից մեկն է: Նկատի պետք է ունենալ նաև, որ միայն էկոլոգիական առումով անաղարտ, մաքուր բնությունն է, որ գրավում, հրապուրում է զբոսաշրջիկներին և նպաստում նրանց լիարժեք հանգստին:

Հետևաբար, այն ունի նաև տնտեսական խնդիրներ լուծելու կարևոր նշանակություն:

Շրջակա միջավայրի աղտոտումը, նրա բնական հավասարակշռված համակարգի կործանումն ուշ թե շուտ կհանգեցնի տարածաշրջանում զբոսաշրջության, որպես տնտեսության, այժմ արդեն կարևոր ոլորտի, վերացմանը: Հետևաբար, զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները, մեր կարծիքով, կարելի է լուծել հետևյալ կերպ:

Մի կողմից, չենք կարող հրաժարվել զբոսաշրջությունից, քանզի այն, ինչպես ասվել է, դարձել է տնտեսական գործոն: Իսկ մյուս կողմից, այն՝ զբոսաշրջությունը պետք է պատասխանատվություն կրի մեր կենսական տարածքների, շրջակա միջավայրը վտանգելու համար:

Հարց է առաջանում, ինչպե՞ս լուծել այս հակադրությունը: Դրա ուղիները, անկասկած, տարբեր են, նշենք մի քանիսը.

1. Մեր կարծիքով շատ կարևոր նշանակություն ունի շրջակա միջավայրի պահպանությունը անհատական նախաձեռնությամբ: Ըստ որում, շրջակա միջավայրի պահպանությունը պետք է գիտակցի յուրաքանչյուր զբոսաշրջիկ և համապատասխանաբար պետք է փոխի իր վերաբերմունքը բնության, շրջակա միջավայրի նկատմամբ:

2. Վճռական դեր կարող է խաղալ պետական մակարդակով խնդրի լուծումը՝ արագացնելով այսպես կոչված «մեղմ զբոսաշրջությունը»: Դա զբոսաշրջության այն ձևն է, որը կոչված է պահպանել հավասարակշռությունը շրջակա միջավայրի, հանգստի և տնտեսական վերարտադրության միջև:

Զբոսաշրջության այս ձևը շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծման ուղղվածություն ունի:

3. Ներկա ժամանակաշրջանում քննարկվող խնդիրների լուծման բնագավառում նշանակալից է նոր մտածելակերպը: Այս գործոնը հատկապես պետք

է վերաբերի այն անձանց, ովքեր պատասխանատու են զբոսաշրջային գործունեության համար: Որպեսզի զբոսաշրջությունը պահպանվի, զարգանա, շրջակա միջավայրի պահպանման նպատակաուղղված խնդիրները, անկասկած, առավել կարևոր պետք է դառնան, քան կարճաժամկետ հետաքրքրությունները, որոնք եկամուտ են բերում:

4. Քաղաքականությունը, անկասկած, նույնպես պետք է նպաստի շրջակա միջավայրի պահպանությանը:

Այսպիսով, յուրաքանչյուր երկրի, տարածաշրջանի էկոլոգիական վիճակը մեծ ազդեցություն է թողնում զբոսաշրջության ամբողջ համակարգի վրա, քանի որ այդ ոլորտը, տնտեսության մյուս ոլորտների համեմատությամբ, ամենից ուժեղ կախվածությունն ունի շրջակա միջավայրից:

Զբոսաշրջությունը, փաստորեն, որպես մասսայական երևույթ, ուղղակիորեն քայքայում է շրջակա միջավայրը: Իսկ որպես տնտեսության ոլորտ՝ սերտ հարաբերությունների մեջ է գտնվում ոչ միայն էկոլոգիայի հետ, այլև սպասարկման ոլորտների, մշակույթի արժեքների, կառույցների հետ և այլն: Այդպիսի կառույցներից մեկն էլ հանդիսանում է սոցիալական ոլորտը:

10. Սոցիալական ոլորտը՝ որպես զբոսաշրջության արտաքին միջավայր

Զբոսաշրջիկները, որոշակի տարածաշրջանի, այսպես կոչված, յուրացման ընթացքում, կամա թե ակամա շփման մեջ են մտնում տարբեր մշակույթների հետ:

Առաջին հերթին դա այն տարածաշրջանի մշակույթն է, որտեղից ժամանել են զբոսաշրջիկները: Ըստ որում, հանգստի ընթացքում զբոսաշրջիկի հանգստի կուլտուրան, կյանքի ոճը և վարվելակերպի կանոնները շփման մեջ են մտնում տեղի բնակիչների յուրահատկությունների, սպասարկման ձևերի հետ:

Մարդկային փոխհարաբերությունների այդ ձևերը երկկողմանի ազդում են մեկը մյուսի վրա: Մասնավորապես, այցելուների կուլտուրան, վարվելակերպը որոշում է նրանց վարքագիծը, հետևաբար նաև բնորոշում է հանգստի կուլտուրան: Իսկ հանգստի կուլտուրան իր հերթին պայմանավորված է նաև սպասարկման կուլտուրայով: Միաժամանակ նաև տեղի բնակիչների ընդունելությունն ինչ–որ չափով արտացոլվում է հանգստացողների (զբոսաշրջիկների) վարքի վրա:

Զբոսաշրջային վայրի կուլտուրայի վրա զբոսաշրջության հասարակական ազդեցության մակարդակը կախված է շատ տարբեր գործոններից: Դրանցից գլխավոր տեղը բնակչության ինքնորոշման հնարավորությունն է և նրանց պատրաստվածությունը նոր ազդեցությունների նկատմամբ: Կարելի է

ակնկալել, որ այն տարածաշրջաններում, որտեղ բնակչությունն ազատ մտածելակերպ ունի և միաժամանակ զբոսաշրջիկներն էլ այդ պարագայում տիրապետում, ընկալում են այցելած վայրի մշակույթը, կենցաղավարությունը, սովորույթները, ապա նրանց համար օտարությունն աստիճանաբար վերանում է: Ըստ որում, այսպես կոչված օտարի կուլտուրան առաջինն ընկալում են երիտասարդները:

Այսպիսի պայմաններում էլ ձևավորվում են զբոսաշրջիկների ու նրանց այցելավայրերի սպասարկող անձնակազմի, տեղի բնակիչների փոխազդեցությունները լեզվի, մշակույթի, սոցիալական մյուս բնագավառներում:

11. Քաղաքականության ազդեցությունը զբոսաշրջության զարգացման վրա

Քաղաքականության և զբոսաշրջության միջև կապն առաջին հերթին կայանում է նրանում, որ պետությունը հենց ինքն է կառավարում զբոսաշրջությունը: Հետևաբար, զբոսաշրջության զարգացումը, ակտիվությունը պահանջում է պետության միջամտությունը: Այդ գործոնը պետական կառավարման տարբեր ձևերում, բնականաբար, տարբեր կերպ է արտահայտվում: Օրինակ, ինչպես է այն արտահայտվում բռնապետական պետության ծայրահեղության պայմաններում: Հասարակական հարաբերությունների այդպիսի համակարգում զբոսաշրջությունն, անկասկած, կատարում է պետական և պետաքաղաքական ֆունկցիա, ինչպես նաև անառարկելիորեն ենթարկվում է քաղաքական նպատակների, պայմանավորվում և կառավարվում միայն պետական հիմնարկությունների կողմից: Իսկ շատ հաճախ էլ այդպիսի երկրներն առհասարակ փակ են արտաքին աշխարհի համար:

Այն դեպքում, երբ բռնապետական պետությունը բնութագրվում է իր պետական դաժան կանոնակարգով, շուկայական նորմալ տնտեսական հարաբերություններ ունեցող երկրներում իրավիճակը բոլորովին այլ է:

Շուկայական, ազատական հարաբերություններ ունեցող պետությունը փաստորեն հեռանում է զբոսաշրջության կառավարումից և յուրաքանչյուրին ինքնուրույն գործելու հնարավորություն է ընձեռում: Իսկ դա նշանակում է, որ զբոսաշրջությունը կարող է անարգել զարգանալ իր բոլոր թերություններով և առավելություններով հանդերձ:

Այս երկու ծայրահեղությունների միջև ընկած է սոցիալ–շուկայական տնտեսություն ունեցող պետությունը, կառավարման տարբեր ձևերով: Սոցիալ–շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր անհատի ազատ գործունեությունն արտահայտվում է հասարակության բոլոր անդամների բարեկեցությունն ապահովելու օգտին: Պետությունը միջամտում է այն նպատակով, որպեսզի ապահովի և ընդլայնի բնակչության լայն զանգվածնե-

ի նյութական բարեկեցությունը: Դա այսպես կոչված սոցիալական քաղաքականությունն է:

Այստեղ զբոսաշրջությունն ենթարկվում է պետական կարգավորման և կառավարման պահանջներին, և պետությունն է ձևավորում զբոսաշրջության քաղաքականությունը:

Զբոսաշրջության պետական քաղաքանությունը կարևոր նշանակություն ունի այս ոլորտի ձևավորման, զարգացման, նրա առավել արդյունավետ ուղղությունների որոշման, դրանց իրականացմանն աջակցելու, այդ բնագավառի կարևոր յուրահատկությունների վրա ազդելու գործում: Ըստ որում, միայն պետական մարմինները չէ, որ այդ ոլորտի հիմնահարցերը պետք է իրականացնեն:

Զբոսաշրջության քաղաքականությունը պետք է ձևավորեն, ստեղծեն նաև ոչ պետական կազմակերպությունները:

Դրանք կարող են լինել զբոսաշրջության միությունների, միավորումների կամ այլ ձևով:

Զբոսաշրջության պետական քաղաքականությունն անկասկած պետք է ձևավորվի, ստեղծվի ամբողջ երկրի տարածքի, նրա առանձին տարածաշրջանների կտրվածքով: Մասնավորապես, պետք է այն իրականացվի ամբողջ երկրի, ինչպես նաև նրա մարզերի, շրջանների, համայնքների մակարդակով:

Այդ քաղաքականությունը կարող է տարբեր ուղղվածություն ունենալ: Ըստ որում, քննարկվող ոլորտի նկատմամբ տարվող քաղաքականության համակարգում անհրաժեշտ է առանձնացնել.

ա) զբոսաշրջության նպատակային զարգացման համար անհրաժեշտ տնտեսական և հասարակական–քաղաքական պայմանների ստեղծման խումբը.

բ) զբոսաշրջային տնտեսության ձևավորումը, զարգացումը, հզորացումը և որ շատ կարևոր է, մրցակցության բարձրացումը.

գ) զբոսաշրջային գործընթացին ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ ընդգրկելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը.

դ) միջազգային զբոսաշրջության համակարգին բազմակողմանի համագործակցության անհրաժեշտությունը:

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ զբոսաշրջության քաղաքականությունը ոչ միայն մշակվում է պետական մարմինների, կազմակերպությունների կողմից, այլ նաև այն, որ այդպիսի քաղաքականության մշակմանը կարող են մասնակցել տվյալ երկրի բնակիչները, քաղաքացիները, իրենց փորձով, գիտելիքներով:

Անկասկած, որքան շատ է պետությունը միջամտում, «խառնվում» զբոսաշրջության գործունեությանը, այնքան մեծ է նրա վարչահրամայական, միակենտրոն լինելու հավանականությունը:

Առհասարակ, գոյություն ունեն զբոսաշրջության քաղաքականության մի քանի հիմնական տարրեր, որոնք տարբեր ձևերով, չափերով ազդում են այդ ոլորտի ձևավորման, զարգացման վրա:

Դրանցից հատկապես առաջնային դեր ունեն տնտեսական քաղաքականությունը, ուղևորների նորմալ, անվտանգ տեղափոխման գործի կազմակերպումը, սոցիալական բնույթի հարցերի հաշվի առնումը, տարածքային քաղաքականությունը, մշակութային բնույթի և հետաքրքիր ժամանցի կազմակերպումը:

Սովորաբար, պետությունների տնտեսական քաղաքականությունն ընդհանուր բնույթ է կրում, և այն վերաբերում է տնտեսության զարգացմանն առհասարակ: Հետևաբար, դա, անկասկած, վերաբերում է նաև զբոսաշրջության զարգացմանը:

Շատ հաճախ այս կամ այն երկրի իշխանությունների այն օրենքները և որոշումները, որոնց իրականացումը չի առնչվում զբոսաշրջությանը, հետագայում կարող են զգալի չափով ազդել, երբեմն ավելին ազդել զբոսաշրջության զարգացման վրա, քան ընդունված այն օրենքները, որոնք մշակվել են հատուկ այս բնագավառի զարգացման համար:

Ինչպես վերը նշվել է, ուղևորների փոխադրման գործընթացի կազմակերպման քաղաքականությունն զբոսաշրջության զարգացման վրա ազդող հիմնական ներգործություն ունեցող տարրերից է: Տվյալ փաստը հաստատվում է արդեն իսկ զբոսաշրջության սահմանումով՝ ուղևորություն + ժամանում: Երբ որ ասում ենք մեկնել ճանապարհորդության, դա նշանակում է արդեն իսկ մասնակից դառնալ ուղևորափոխադրումների: Այստեղ գոյություն ունի փոխկապակցվածություն:

Խնդիրն այն է, որ մի կողմից զբոսաշրջությունը պայմանավորված է ուղևորների փոխադրումներով, մյուս կողմից էլ ուղևորների փոխադրումը նշանակալի չափով պայմանավորված է զբոսաշրջության զարգացումով: Զբոսաշրջության և ուղևորափոխադրության այս փոխկապակցվածությունը հատկապես ուժեղ արտահայտվում է զանգվածային արձակուրդների, զբոսաշրջության եռուն ժամանակահատվածներում: Ի դեպ, տարվա այդ ժամանակահատվածում հատկապես ավտոմայրուղիներում և առհասարակ տրանսպորտային կապի այլ ուղիներում աշխույժ երթևեկություն է սկսվում, որը հաճախ ճանապարհներին առաջացնում է խցանումներ:

Ուղևորների փոխադրումների գործընթացը կարելի է բաժանել երեք հիմնական բաժինների:

1. Կապի միջոցների օգտագործման գործընթաց, որը որոշում, կարգավորում է երկաթուղային ճանապարհների, ավտոմայրուղիների, ավիոուղիների, ինչպես նաև գետային երթուղիների կարգավորումը, օգտագործումը:

Այս գործընթացում զբոսաշրջության համար կարևոր նշանակություն ունի տրանսպորտային ամբողջ համակագի կոորդինացված գործունեությունը:

2. Տրանսպորտի միջոցների հետ կապված գործընթացը կարող է դրական մեծ ազդեցություն ունենալ զբոսաշրջության վրա: Դրանց նպատակառուղղված օժանդակությունը և այդ բնագավառի աշխատանքի արդյունավետության բարձրացման որոշակի առաջարկությունների մշակումը, օգտագործու-

մը (օրինակ, եթե զբոսաշրջության ճեպընթացի երթուղին անցնում է բնության շատ հրապուրիչ ու գեղատեսիլ վայրերով, ապա այդպիսի վայրերով անցնող զբոսաշրջային երթուղին հետաքրքիր կարող է լինել, եթե ճեպընթացի սովորական վագոնների փոխարեն գործողության մեջ դրվի վերասարքավորված այնպիսի վագոններ, որոնց պատուհաններից առավել հարմար լինի դիտել շրջապատի գեղեցկությունները):

3. Սակագնային (տարիֆային) քաղաքականությունը նույնպես կարևոր ազդեցություն ունի զբոսաշրջության գործընթացի վրա: Այն փաստորեն կարգավորում է երթուղիների և հասարակական տրանսպորտի մյուս միջոցների գնային ռազմավարությունը: Ըստ որում, զբոսաշրջության զարգացմանը կարող է նպաստել գնային տարբերակված քաղաքականությունը: Մասնավորապես, երիտասարդներին, հատկապես ուսանողներին, երկրի համար հատուկ ծառայություն, վաստակ ունեցողներին կարելի է ուղևորատոմսեր տրամադրել արտոնյալ սակագնով:

Սոցիալական քաղաքականությունը նույնպես շոշափելի ազդեցություն է ունենում զբոսաշրջության զարգացման բնագավառում:

Սոցիալական քաղաքականության բնույթի միջոցառումների շնորհիվ հնարավոր է կառավարել զբոսաշրջության ծառայությունների առաջարկը: Ընդհանուր առմամբ, պետք է առանձնացնել այս քաղաքականության երեք ուղղություն. աշխատանքային ժամի և արձակուրդի հստակեցումը (այսինքն օրենսդրական կարգավորումը), եկամուտների վերաբաշխումը և սոցիալական զբոսաշրջության խթանումը:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ ճանապարհորդել կարելի է միայն այն ժամանակ, երբ մարդը, քաղաքացին նվաճել, ձեռք է բերել հանգստի իր իրավունքը: Ըստ որում, հանգստի իրավունքի օրենսդրական կարգավորումն իրավական բոլոր երկրներում երաշխավորվում է աշխատող բոլոր քաղաքացիների համար, և այն պետք է տրամադրվի կանոնավոր կերպով:

Կարևոր է այն հանգամանքը, որ պետությունը սովորաբար տարվա տարբեր ժամանակներում է արձակուրդ տրամադրում աշխատողներին, և դա բնականաբար նպաստում է, որպեսզի զբոսաշրջության ծառայությունները բաշխվեն ամբողջ տարվա ընթացքում:

Առհասարակ, սոցիալական զբոսաշրջություն ասելով հասկանում ենք այն ամենը, ինչը պետությունը տրամադրում է, որպես դրամական օժանդակություն հանգստի համար, այդ նպատակով զանազան շինություններ կառուցելու և դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծում որոշակի սոցիալական խմբերի հանգստի լավ կազմակերպման համար: Այս նշվածները մտնում են զբոսաշրջության սոցիալական քաղաքականության համակարգի մեջ:

Եվրոպական զարգացած երկրներում այդպիսի խրախուսումներ տրվում են երիտասարդներին, երեխաներ ունեցողներին և տարեցներին:

Տարածքային քաղաքականության շրջանակներում զբոսաշրջության զարգացման նպատակով, այս ոլորտի համար հետաքրքրություն ներկայաց-

նող տարածքներում մի կողմից ստեղծվում են հանգստի համար առավել նպաստավոր պայմաններ, իսկ մյուս կողմից, միջոցներ են ձեռնարկվում զբոսաշրջության հետևանքով բնությանը հասցրած վնասները վերացնելու, էկոլոգիական հավասարակշռություն ստեղծելու համար:

Այդ բնագավառում իրականացվող խնդիրների շարքում կարևոր նշանակություն է դարձվում բնական տարրերի որակական և քանակական հավասարկշռությունը պահպանելու հարցերին:

Մշակույթի քաղաքականությունը զբոսաշրջության գործընթացի համակարգում յուրահատուկ կարևորագույն դեր է խաղում, կապված այն հանգամանքի հետ, որ առհասարակ զբոսաշրջությունն ինչ–որ չափով, այսպես կոչված, վտանգ է ստեղծում զբոսաշրջության առումով «յուրացվող» երկրի մշակույթն այդ ոլորտին ենթարկեցնելու, ընտելացնելու տեսանկյունով:

Ինչ վերաբերում է ազատ ժամանցի քաղաքականությանը, ապա այն փաստորեն որոշում է ազատ ժամանակի անցկացումը ոչ միայն քանակի, այլ նաև որակի առումներով:

Ազատ ժամանակի որակ ասելով պետք է հասկանալ, թե մարդն ինչպիսի հնարավորություններ ունի իր ազատ ժամանակը կազմակերպելու համար: Ըստ որում, քաղաքային բնակավայրերում հատուկ ուշադրություն է դարձվում գրադարանների, թատրոնների զարգացմանը, լողավազանների ստեղծմանը, ինչպես նաև սպորտային կառույցների, զբոսավայրերի և կանաչ գոտու ստեղծմանը: Այս պայմաններում, անկասկած, ազատ ժամանակի անցկացման առաջարկի որակը բարձրանում է:

Այսպիսով, զբոսաշրջության քաղաքականության ձևավորումը, հիրավի, կարևոր գործոն է այդ ոլորտի զարգացման համար:

Շուկայական տնտեսության պայմաններում պետությունն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևերով ուղղորդում է զբոսաշրջության զարգացումը:

Ընդհանրացնելով, ասենք, որ զբոսաշրջության քաղաքականությունը պետության կողմից զբոսաշրջության ոլորտի զարգացման կանխորոշվող առաջարկությունն է, դրա հիմնական ուղղությունների, բաղադրիչների ձևավորումը:

12. Զբոսաշրջության զարգացումն ապահովող տեխնիկական միջոցները (տեխնոլոգիաները)

Մենք արդեն քննարկել ենք զբոսաշրջության համակարգի կապը տնտեսության, սոցիալական բնագավառի և քաղաքականության հետ: Այժմ քննարկենք, հնարավորին սահմաններում փորձենք պարզաբանել, թե ինչպիսին է տեխնոլոգիաների ազդեցությունը զբոսաշրջության վրա:

Ընդհանուր առմամբ, զբոսաշրջության ոլորտն սպասարկող տեխնոլոգիաները կարելի է բաժանել երեք բնագավառների: Դրանք են՝ տրանսպոր-

տային նշանակություն ունեցող տեխնիկան և միջոցները, հյուրանոցային պայմանները կարգավորող սարքավորումները և ռեսուրսները, հաղորդակցության (մասնավորապես կապի) տեխնիկան, միջոցները:

Տրանսպորտային միջոցները այս ոլորտում նույնպես վճռական դեր են խաղում զբոսաշրջության զարգացումը, արդյունավետության բարձրացումը ապահովելու գործում: Հետևաբար, հատկապես այժմյան զբոսաշրջության զանգվածային զարգացումն անհնար է պատկերացնել առանց ժամանակակից փոխադրման միջոցների: Ըստ որում, ժամանակակից պահանջներին համապատասխան զբոսաշրջության զարգացման համար կարևոր է ոչ միայն փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը, այլ նաև փախադրամիջոցների՝ վագոնների, նավերի, ավտոբուսների, ինքնաթիռների էսթետիկական կողմը, դրանցից օգտվելու հնարավորություններն ու պայմանները: Այս վերջիններս ոչ պակաս նշանակություն ունեն զարգացած հասարակության պահանջների բավարարման գործում: Տրանսպորտային միջոցների կարևոր ցուցանիշներից են նրա շարժունակության պայմանները, որոնք հնարավորություն են տալիս ապահովող զբոսաշրջիկների, ուղևորների ազատ, անկաշկանդ տեղափոխություններ:

Ի դեպ, տրանսպորտային միջոցների շարժական լինելու բարձր մակարդակը, հնարավորությունները բավականին ընդլայնում են յուրաքանչյուր զբոսաշրջիկի, ուղևորի անձնական ազատությունը:

Խնդիրն այն է, որ զբոսաշրջիկն այդպիսի շարժունակ տրանսպորտով երթևեկելիս հենց ընթացքի ժամանակ էլ ավելի լայն հնարավորություններ է ունենում այցելած վայրը, տարածաշրջանը համեմատաբար լավ ճանաչելու, հանգամանորեն ընկալելու, ուսումնասիրելու համար: Հենց տրանսպորտային այդպիսի պայմանների շնորհիվ է, որ զբոսաշրջային տարածաշրջանները այժմ, փաստորեն, այսպես ասած մեկուսացված չեն (ինչպես դա եղել է նախկինում):

Նշենք նաև, որ արտաքին աշխարհի հետ զբոսաշրջային բաց շփումները կարելի է գնահատել երկակի: Մի կողմից այն, մեր կարծիքով, հիմնականում դրական է, որոշ դեպքերում հնարավոր է լինում նաև, որ այն դրսևորվի որպես բացասական գործոն: Մասնավորապես, շարժունակության բարձրացումը կարող է զբոսաշրջության ժամանակ առաջ բերել նաև անցանկալի հետևանքներ:

Այսպես օրինակ.

• տրանսպորտային միջոցները կարող են աղմուկ առաջացնել և աղտոտել մթնոլորտը.

• ճանապարհին մարդիկ փաստորեն պետք է գտնվեն հանգստի վիճակում: Դա առավել բնորոշ է ավտոմեքենայով և ավիացիոն (օդային) փոխադրումներին, որոնցով տեղափոխվում են մեծ հոսքեր.

• ժամանակակից տրանսպորտային միջոցների բարձր արագության և հաճախակի կատարվող տեղափոխությունների ընթացքում ստացված տպավորություններն առավել մակերեսային են լինում, քան չափավոր արագության դեպքում: Այսպիսով, տրանսպորտային միջոցների տեխնիկական կա-

տարելագործումը զբոսաշրջության համար կարող է երկակի նշանակություն ունենալ:

Հյուրանոցային և ռեստորանային տեխնիկան նույնպես զբոսաշրջության վրա մեծ ազդեցություն ունեցող տեխնոլոգիաների բավականին կարևոր և բաղկացուցիչ մաս է: Դրանք ընդգրկում են հյուրանոցներում, ռեստորաններում առկա բոլոր սարքավորումները և միջոցները:

Վերջին մի քանի տասնամյակներում դրանք մեծապես բարելավվել են հատկապես եվրոպական երկրներում, որի հետևանքով էլ առավել պարզեցվել են սպասարկման գործընթացները, ինչպես հյուրանոցային, այնպես էլ ռեստորանային տնտեսություններում: Այս վերջիններս զբոսաշրջության զարգացման շատ կարևոր նախապայմաններ են:

Հաղորդակցման տեխնիկան, ինչպես տնտեսության մյուս բնագավառների, այնպես էլ զբոսաշրջության զարգացման արդի կարևորագույն նախապայմաններից է: Այն պայմանավորված է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմամբ: Համակարգիչների օգտագործումը, հիրավի, հեղաշրջում առաջացրեց տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներում: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ համակարգիչները մեծ ծավալների տեղեկատվություն են պահպանում (հիշում), ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դրանք արագ վերամշակվում և հաղորդվում են: Տեղեկատվական գործընթացները մեծապես բարձրացրել են զբոսաշրջության շուկայի հրապարակայնությունը և հեշտացրել որոշումների ընդունումը (կապված ճամփորդության երթուղիների ընտրության և դրանց նախապատրաստվելու հետ):

Մասնավորապես, ինտերնետից օգտվելու դեպքում, մի քանի րոպեների ընթացքում կարելի է տեղեկություն ստանալ հյուրանոցներում եղած ազատ տեղերի, հնարավորությունների մասին, աշխարհի տրանսպորտային կազմակերպությունների մասին, ինչպես նաև լայն հնարավորություններ է ստեղծվում անմիջապես պատվիրել ցանկացած ծառայություններ:

Այսպիսով, տեխնիկական միջոցների զարգացումը զբոսաշրջիկների տեղափոխման լայն հնարավորություններ և ազատություն է ընձեռում: Բացի դրանից, այն հյուրանոցային և ռեստորանային տեխնիկան պարզեցրել, ստանդարտացրել է ռեստորանների և հյուրանոցների աշխատանքը՝ ապահովելով աշխատուժի մասնակի խնայողություն:

Գործընթացների կարգավորման, տվյալների արագ մշակման, հաղորդակցության ուղիների զարգացման համար այժմ մեծ նշանակություն ունի համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս արագ հաղորդել և մշակել խոշոր ծավալների տեղեկատվություններ, որոնք խիստ անհրաժեշտ են զբոսաշրջային կազմակերպություններին և առհասարակ այդ ամբողջ համակարգին:

ԳԼՈՒԽ III

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՅՆ՝ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Զբոսաշրջության աշխարհագրության ընդհանուր առանձնահատկությունները

Ներկա ժամանակաշրջանում հանգստի և զվարճության նպատակով զբոսաշրջային հոսքերն առավել զանգվածային են դառնում և միևնույն ժամանակ ամբողջությամբ բնորոշում միջազգային զբոսշրջության աշխարհագրական կառուցվածքը:

Ներկայումս այս ոլորտի աշխարհագրությունն առավել լայնորեն արտահայտվում է Եվրոպական, Հյուսիսամերիկյան, Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններում: Ըստ որում, հենց այս տարածաշրջաններն էլ տարեցտարի զբոսաշրջիկների ավելի ու ավելի մեծ զանգվածներ են գրավում դեպի իրենց:

Հանգստի ու զվարճությունների նպատակով իրականացվող զբոսաշրջության կարևոր առանձնահատկությունն այն է, որ այդ նպատակով կատարվող ներտարածաշրջանային ուղևորությունները (հիմնականում հարևան երկրներ կատարվող) գերակշռում են միջտարածաշրջանային ուղևորություններին, մոտավորապես 82:18 հարաբերությամբ: Այս ցուցանիշները կարող են տատանվել ըստ տարածաշրջանների:

Մասնավորապես, Եվրոպայում ներտարածաշրջանային զբոսաշրջության հոսքերը կազմում են բոլոր մեկնողների 90%–ը, Ամերիկայի և Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններում այն կազմում է մինչև 70%–ը: Միայն Հարավային Ասիայում արտագնա զբոսաշրջության կառուցվածքում նկատելիորեն գերակշռում են միջտարածաշրջանային ուղևորությունները:

Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կանխատեսումներով արդեն իսկ III հազարամյակի սկզբին ամբողջ աշխարհում ներշրջանա-

յին և միջտարածաշրջանային զբոսաշրջության հոսքերի հարաբերակցությունը կփոխվի: Կանխատեսվում է, որ տարածաշրջանների միջև զբոսաշրջային փոխանակումներն (այսինքն միջտարածաշրջանային զբոսաշրջությունը) ավելի արագ կզարգանան, քան ներտարածաշրջանայինը: Կանխատեսվում է նաև, որ հատկապես Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանից դեպի Եվրոպա և Ամերիկա զբոսաշրջային հոսքերն ավելի արագ կմեծանան, որոնք էլ հիմնականում կբնորոշեն այդ ոլորտի ընդհանուր պատկերը:

Արդյունքում, կանխագուշակված է, որ 2020 թ. միջտարածաշրջանային զբոսաշրջության բաժինը կաճի ընդհանուրի մեջ և կհասնի 24% (18%–ի փոխարեն), իսկ ներտարածաշրջանային զբոսաշրջության բաժինը համապատասխանաբար կդառնա 76% (82%–ի փոխարեն):

Բացի ներտարածաշրջանային փոխայցելություններից գերակշռող դերից, միջազգային զբոսաշրջության համակարգում պետք է նկատել ևս երկու յուրահատկություն: Դրանցից մեկը զբոսաշրջության հոսքերի միջօրեականային ուղղվածությունն է: Շատ բնորոշ է այն հանգամանքը, որ հյուսիսային երկրների զբոսաշրջիկները հիմնականում գերադասում են հանգստանալ տաք ծովերի ափերին: Մասնավորապես, Կարիբյան ծովավազանի երկրների կուրորտների, հանգստավայրերի հիմնական այցելուները հանդիսանում են ԱՄՆ–ի հյուսիսային նահանգներից և Կանադայից եկածները:

Հյուսիսային Եվրոպայի ծովափնյա (լողափնյա) զբոսաշրջությունը գերազանցապես կենտրոնացված է Միջերկրական ծովի ափերին: Այստեղ են անցկացնում իրենց հանգիստը հատկապես նորվեգացիները, դանիացիները, ֆինները, շվեդները, իռլանդացիները:

Ռուսաստանի հյուսիսային տարածաշրջանների, Սիբիրի բնակիչները գերադասում են իրենց հանգիստը հիմնականում անցկացնել Սև և Ազովի ծովերի ափերին:

Վերջին տասնամյակներում նկատվում է այլ յուրահատկություն՝ դեպի հյուսիս, այսինքն հանդիպակաց զբոսաշրջային հոսքերի ընդլայնում՝ հարավից հյուսիս ուղղությամբ:

Մասնավորապես, մեծանում է հետաքրքրությունը Հյուսիսային Եվոպայի նկատմամբ, որպես զբոսաշրջային ուղղության:

Զբոսաշրջության առումով հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սկանդինավյան երկրները:

Զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես Սկանդինավյան թերակղզու ափերի ամբողջ երկարությամբ ձգվող ֆյորդները, այնպես էլ առհասարակ Նորվեգիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի էկոլոգիական առումով համեմատաբար անաղարտ բնությունը:

Այդ առումով, արդեն մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Իսլանդիան: Այս երկիրը Հյուսիսային Եվրոպայում զբոսաշրջիկների կողմից համեմատաբար ավելի քիչ յուրացված երկրներից է, իսկ այժմ բավականին ակտիվ մասնակցում է զբոսաշրջության շուկայի սուր պայքարին: Զբոսաշրջիկ-

ների հետաքրքրությունը գրավելու նպատակով, դեռ 1996 թ. Իսլանդիան մշակել, առաջարկել է զբոսաշրջային 40 նոր երթուղիներ:

Ըստ որում, դրանցից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն երթուղին, որը հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին՝ դիտելու ծովային հսկա կենդանիների՝ կետերի շարժը, պահելակերպը:

Ի դեպ, ջրային այդ հսկա կենդանիներին բնական միջավայրում և պայմաններում տեսնելու ցանկություն ունեցողների թիվն արագորեն աճում է և դեռ 1991–1996 թթ. այդպիսի զբոսաշրջիկների միջին տարեկան աճը կազմել է 14.7%:

Վերջապես, համաշխարհային զբոսաշրջությունը զարգանում է նաև նախկին գաղութատեր, այսպես կոչված մայր, երկրների (մետրոպոլիա) և նրանց նախկին գաղութների միջև, ըստ որում, առաջինների բացահայտ գերակշռությամբ:

Այս երկրների խմբերի միջև լեզվական արգելքների բացակայությունը և նախկինում ստեղծված կապերի վերահաստատումը նոր որակավորումով՝ առաջին հերթին հատկապես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում, կարևոր նախադրյալ է հանդիսանում դրանց միջև զբոսաշրջային հարաբերությունների ձևավորման և զարգացման համար:

Եվրոպական երկրների բնակչության համար Հարավարևելյան Ասիայի, Ավստրալիայի, Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի անզուգական հեքիաթային բնությունը և հնագույն ինքնատիպ տեղական մշակույթը, արհեստագործությունը շատ մեծ ու լայն հետաքրքրություն են ներկայացնում:

Վերջին տարիներին կատարվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եվրոպացիների, առավելապես անգլիացի, հոլանդացի, իտալացի, իսպանացի և պորտուգալացի զբոսաշրջիկներին հետաքրքրում է իրենց երկրների նախկին գաղութների բնակչության պատմական անցյալը, ներկան, մշակույթը, այդ երկրների բնական էկզոտիկ երևույթները: Հետաքրքիր է, որ վերջին տարիների տվյալներով, յուրաքանչյուր երրորդ եվրոպացի զբոսաշրջիկ, որը այցելել է Աֆրիկա, եղել է ֆրանսիացի: Հետաքրքիր է, որ ֆրանսիացիներից շատերը գերադասում են իրենց հանգիստը անցկացնել Աֆրիկայի անապատային Մարոկկո, Թունիս երկրներում (Միջերկրական ծովին հարող վայրերում), որոնք նախկինում եղել են Ֆրանսիայի գաղութներ և այդ առումով լեզվական խնդիրներ չկան:

Զբոսաշրջային հոսքերի տարածքային այսպիսի տեղաշարժերի առանձնահատկությունները հանդես են գալիս և բնորոշ են ոչ միայն Աֆրիկային, այլ նաև մյուս աշխարհամասերի նախկին գաղութային երկրներին:

Այսպես, օրինակ, Հնդկաստան, Բանգլադեշ, Պակիստան և Հարավային Ասիայի այլ երկրներ այցելող զբոսաշրջիկների ընդհանուր թվի մեջ Անգլիայից ժամանողներն երկու անգամ ավելի շատ են, քան եվրոպական մյուս երկրներից ժամանողները: Ըստ որում, նրանց գերակշռող մասն այցելում է անգլիական նախկին գաղութները՝ Հնդկաստան, Շրի Լանկա, Բանգլադեշ, Պա-

կիստան, որտեղ լեզվական դժվարությունների հետ կապված հանգամանքներ չկան: Իսկ դա զբոսաշրջիկների համար մեծ առավելություն է այցելած երկրում ազատ կողմնորոշվելու, շփվելու համար:

2. Հանգստի և զվարճությունների նպատակով իրականացվող զբոսաշրջությունն Եվրոպայում

Հանգստի և զվարճությունների նպատակով կազմակերպվող միջազգային զբոսաշրջության ամենախոշոր շուկան ձևավորվել է Եվրոպայում: Քաղաքակիրթ այս աշխարհամասում կարելի է առանձնացնել զբոսաշրջության երկու կարևոր՝ Արևմտյան Եվրոպայի և Հարավային Եվրոպայի տարածաշրջանները: Դրանց բաժին է ընկնում ամբողջ Եվրոպայի զբոսաշրջային այցելությունների մինչև 60%–ը:

Նշենք, որ հենց այստեղ են սկսել ձևավորվել եվրոպական գլխավոր զբոսաշրջային հոսքերը, և հենց այժմ էլ այստեղ է ժամանում նաև Եվրոպա ուղևորվող զբոսաշրջիկների գերակշռող մասը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «ներտարածաշրջանային զբոսաշրջության» բնույթը Եվրոպայում առավել վառ է արտահայտված, քան այլ աշխարհամասերում:

Սերտ տնտեսական, մշակութային, էթնիկ կապերը, տրանսպորտային զարգացած հաղորդակցությունն այստեղ շատ դյուրին են դարձնում ներտարածաշրջանային շփումները, փոխայցելությունները: Այդպիսի փոխայցելությունների համար շատ կարևոր դեր են խաղում ոչ մեծ հեռավորության վրա գտնվող տարածաշրջանների բնական ռեսուրսների և պատմամշակութային տեսարժան վայրերի ինքնատիպությունը, յուրահատկությունը, բազմազանությունը:

Ներտարածաշրջանային փոխայցելությունները կազմում են Եվրոպայում իրականացվող այցելությունների 4\5–ը: Այսինքն, Եվրոպայում գերակշռողը ներտարածաշրջանային զբոսաշրջությունն է: Միջտարածաշրջանային զբոսաշրջային փոխանակումները դեռևս համեմատաբար թույլ են զարգանում: Այս բնագավառում կարևոր դեր է խաղում Ամերիկան, հատկապես ԱՄՆ–ը: Վերջինս համարվում է միակ ոչ եվրապական երկիրը, որ Եվրապա ժամանող զբոսաշրջիկների թվով մտնում է առաջին տասնյակի մեջ: Ինչպես Եվրոպայի, այնպես էլ աշխարհի մյուս երկրներից առավել մեծ թվով զբոսաշրջիկներ ընդունող երկիրը Ֆրանսիան է: Այս երկիրն ընդունում է Եվրոպա այցելող յուրաքանչյուր հինգերորդ զբոսաշրջիկ:

Բավականին մեծ են զբոսաշրջային փոխանակումները Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Բելգիայի, Նիդերլանդիայի, Լյուքսեմբուրգի միջև:

Սակայն, Ֆրանսիան առանձնահատուկ տեղ ունի այդ ոլորտում: Հմայիչ լանդշաֆտը, մեղմ կլիման, քաղաքների գեղեցկությունը, գրավիչ ապրանքա-

տեսակները, գերազանց խոհանոցը, գինու տեսակները, հիրավի, Ֆրանսիան դարձնում են զբոսաշրջային անզուգական հրապուրիչ երկիր:

Ֆրանսիացիներն իրենց երկիրը շատ դիպուկ կոչում են «վեցանկյունի»: Իսկապես, աշխարհի քաղաքական քարտեզի վրա այն հիշեցնում է այդ երկրաչափական մարմինը: Եվ որոշ առումով, այդպիսի յուրահատկություններով է պայմանավորված նրա բնական պայմանների ոչ սովորական բազմազանությունը: Աշխարհում շատ չեն այն երկրները, որոնք կարող են համեմատվել «վեցանկյունի» այդ երկրի հետ և ունենան այդքան խայտաբղետ բազմազանություններ: Այս բազմազանության համակարգում մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ալպերը, այդ լեռների կարստային կիրճերը, լայնարձակ հարթավայրերը, խիտ անտառները, ֆրանսիայի անզուգական ծովափերը (որոնք ձգվում են 3 հազ. կմ), Բրետանում գտնվող գրանիտե ժայռերը, դյուրեն երկար թմբերը, որոնք ձգվում են Ատլանտյան օվկիանոսի ափերին, թավշե լողափերը և Միջերկրական ծովի երկնագույն ծովախորշերը:

Իր բնական գեղեցկություններից բացի, Ֆրանսիա մեկնող զբոսաշրջիկներին գրավում է նաև այդ երկրի արվեստը՝ մշակույթի անզուգական կոթողներով: Իսկ Փարիզ, այսինքն Ֆրանսիայի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, այցելելը յուրաքանչյուր մարդու բաղձալի նպատակն է: Բայց ինչպես վկայում են արդեն Փարիզ այցելած ճանապարհորդները, ամբողջությամբ ըմբռնել այդ քաղաքը, հնարավոր չէ: Այն հսկայական է, նրբաճաշակ և նման չէ ուրիշ ոչ մի այլ քաղաքի:

Փարիզի բազում հուշարձանների մեջ, որոնք բաց են զբոսաշրջիկների համար վճարովի հիմունքներով, բոլորից շատ այցելվողը Էյֆելյան աշտարակն է, կառուցված ֆրանսիացի ինժեներ Ա. Գ. Էյֆելի կողմից: 1889 թ. Համաշխարհային ցուցահանդեսի համար կառուցված աշտարակը դարձավ նոր ժամանակի խորհրդանիշ: Այդ աշտարակի 15 հազ. իրար զոդված մետաղամասերը ստեղծում են շատ անսովոր, համեմատաբար թեթև, նրբորեն իրականացված դինամիկ կառուցվածք, որը հանդիսավորությամբ վեր է խոյանում Փարիզի կենտրոնում և իշխող, խորհրդավոր դիրք ունի այդ անզուգական քաղաքում: Այդ աշտարակի հեղինակը շատ գնահատված է Ֆրանսիայում: Պատահական չէ, որ ֆրանսիական 200–ֆրանկանոց թղթադրամը զարդարում է Ա. Գ. Էյֆելի պատկերը:

Հայտնի է, որ այդպիսի պատվի արժանանում են միայն «մեծերը»: Էյֆելյան աշտարակին նվիրված են երգեր, բանաստեղծություններ, նկարներ ու կինոնկարներ, և անգամ բալետ: Հետաքրքիր է, որ այն երբեմն հանդիսացել է նաև որպես յուրօրինակ համերգասրահ Էդիտ Պիաֆի և Շառլ Ազնավուրի համար: Միրեյ Մարտիեն 1983 թ. ողջունել է Աշտարակի 100 միլիոներորդ այցելուին:

Հետաքրքիր է, որ ժամանակի ընթացքում, աշտարակի հռչակն ավելի է մեծանում: Կատարված հարցումների արդյունքով, ամենուրեք այն համարում են Եվրոպայի ճարտարապետական արվեստի գլուխգործոցը: Միայն գերմա-

նացիներն են, որ նախասիրությունը տալիս են Բրանդենբուրգյան դարպասներին: Մեր կարծիքով դրանք քիչ համեմատելի են:

Էյֆելյան աշտարակը, հիրավի, լեգենդ դարձած հուշարձան է: Այն որպես մագնիս իրեն է ձգում արկածների սիրահար տարբեր ծագման մարդկանց: Աշտարակ են բարձրացել ալպինիստները, նրա վրայով անցել են հեծանվորդներ և մոտոցիկլիստներ, դրանից օդապարիկով ցատկել են, ինքնաթիռով թռել են դրա «տտքերի» միջով: Այն մինչև այսօր շարունակում է հրապուրել արկածախնդիր մարդկանց:

Էյֆելյան աշտարակը բացառիկ է շատ առումներով: Աշտարակի բարձրությունը 318 մ է: Երկար ժամանակ այն աշխարհի ամենաբարձր կառույցն էր: Աշտարակն ունի ընդարձակ դիտակետեր, ռեստորաններ, սրճարաններ, որտեղից բացվում են գեղեցիկ տեսարաններ: Աշտարակի գոյության արդեն ավելի քան 110 տարիների ընթացքում նրա բարձունքից Փարիզ քաղաքով և դրա արվարձաններով հիացել են 170 մլն մարդ: Միայն 1996 թ. աշտարակ են բարձրացել 5.5 մլն հյուրեր, որը Փարիզին բերել է շուրջ 25 մլն ֆրանկ եկամուտ [20, 160]:

Աշտարակն ունի նաև մեկ այլ, ոչ պակաս ժամանակակից կարևոր նշանակություն: Դրա վրա տեղադրված են անտենաներ, որոնք իրապես լավացնում են քաղաքի ռադիոկապը: Բացի դրանից, այժմ Էյֆելյան աշտարակը Փարիզի վեց հեռուստակայանների և ութ ռադիոկայանների համար վերահեռարձակման դեր է կատարում:

Բացի այդ, դեռ Էյֆելի կենդանության ժամանակներից այնտեղ սկսվել էին կատարվել գիտատեխնիկական աշխատանքներ: Հետաքրքիր է, որ աշտարակի համակարգում աստղադիտարան է ստեղծված, որտեղից մշտապես դիտվում է նաև աշտարակի գագաթը, որն ուղղաձիգ ուղղությունից տատանվում, շեղվում է 10–20 սմ: Այն տատանվում է ոչ թե քամուց, այլ արևի ազդեցությունից, որը տաքացնում է մետաղը:

Փարիզի մյուս տեսարժան վայրը Լուվրն է, որը այցելուների թվով Էյֆելյան աշտարակից հետո երկրորդ տեղն է զբաղեցնում:

Նախկինում ամրոց, բանտ, ֆրանսիական թագավորների նստավայր, ակադեմիա, այսօր Լուվրն աշխարհի խոշորագույն թանգարաններից մեկն է և դասական արվեստի տաճար է հանդիսանում:

Դեռ 1991 թ. ամռանը թանգարանը հաշվառել է այցելուների ռեկորդային թիվ: Այդ տարվա օգոստոսի 11–ին նրանց թիվը հասավ 34211 մարդու [20, 161]: Այդ օրը թանգարանի 16 դրամարկղները ժամում սպասարկել են 120 մարդ: Իսկ 1996 թ. Լուվրը ընդունել է 4.7 մլն այցելողների: Ֆրանսիա այցելող զբոսաշրջիկների շրջանում մեծ ժողովրդականություն է վայելում նաև գիտության և տեխնիկայի բնագավառում մեծ համբավ ունեցող «Լյա–Վիլետ» փոքր քաղաքը, որը դեռ 1996 թ. ունեցել է 3.9 մլն այցելու:

Զբոսաշրջության բնագավառում համաշխարհային ճանաչում ունի Վերսալը, որը հանդիսանում է ֆրանսիական պալատական ճարտարապե-

տության գլուխգործոցը: Ամեն տարի այստեղ է այցելում մինչև 2.9 մլն զբոսաշրջիկ:

Միջազգային զբոսաշրջության լայն ճանաչում ստացած վայրեր են ֆրանսիայի մերձծովափնյա շրջանները: Դրանցից առավել ճանաչվածներից է ֆրանսիական «Ռիվյերան», որը գտնվում է երկրի հարավում: Զբոսաշրջության և հանգստի համար շատ հարմարավետ է Միջերկրականի ծովափնյա նեղ շերտը, մոտ 20 կմ լայնությամբ և 230 կմ երկարությամբ, որը ձգվում է արևելյան մասում Մենտոնից (Իտալիայի սահմանագլխին) մինչև Տուլոն՝ Արևմտյան ափ: Այդպես է անվանել այդ ափը Ս. Լյեժարը, իր բանաստեղծություններից մեկում: Ֆրանսիական Ռիվյերան, հիրավի, դեպի իրեն ձգող մեծ ուժ ունի: Ամեն տարի այստեղ են այցելում ինչպես աշխարհում հայտնի արվեստի մեծ թվով գործիչներ, «աստղեր», այնպես էլ միլիոնների հասնող զանգվածային զբոսաշրջիկների խմբեր: Ֆրանսիայի այս հատվածն իր տաք և մաքուր ծովային մեղմ կլիմայի, գեղատեսիլ շրջակայքի, պատմամշակութային տեսարժան բազմաթիվ վայրերի, հաճախակի իրականացվող բազմաբնույթ միջոցառումների շնորհիվ համարվում է աշխարհի ամենաշատ այցելվող վայրերից մեկը: Կարևոր է այն հանգամանքը, որ Միջերկրական ծովի այս ափի կլիմայական բարենպաստ օրերի թիվը տարեկան հասնում է 300–ի, որը առհասարակ եզակի երևույթ է: Օդի միջին ջերմաստիճանը այստեղ +20°C է, ձմռանը այն չի իջնում +8°C–ից, իսկ ամռան առանձին դեպքերում բարձրանում է +38°C, բայց շոգ և առավել ևս չորություն չի զգացվում: Կարևոր է, որ լողանալու սեզոնը այստեղ բավականին երկար է տևում, 4–5 ամիս:

Մեր օրերում կուրորտային կյանքը դարձել է ավելի տարաբնույթ: Զբոսաշրջիկներն այցելում են լողափեր ոչ միայն լողանալու նպատակով, այլ նաև զբաղվում են ջրային մարզաձևերով, առագաստասպորտով, սահում են ծովի վրա և այլն: Իսկ գոլֆի սիրահարների համար ստեղծված են չափազանց նպաստավոր պայմաններ և հարմարավետ խաղադաշտեր:

Շատ հաճախ ծովափի հանգիստը զբոսաշրջիկները համատեղում են մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցությամբ:

Ֆրանսիայի լազուրային ափի գիշերային կյանքը պակաս հետաքրքիր չէ, քան ցերեկայինը: Խաղատները, դիսկոտեկային ակումբները և ստրիպտիզ սրճարանները յուրաքանչյուր գիշեր սպասարկում են այցելուներին:

Զբոսաշրջիկների կողմից առավել ճանաչված և հռչակ վայելող լողափերից են համարվում Նիցցան, որը Ռիվյերայի վարչական, տնտեսական և մշակութային կենտրոնն է, ինչպես նաև Կանն քաղաքը, որտեղ միջազգային ամենամյա կինոփառատոնում հանդիպում են կինոյի համաշխարհային աստղերը:

Լազուրայի (երկնագույն) ափի ամենահարավային և հին կուրորտը Յեր քաղաքն է:

Վերջին ժամանակներս ֆրանսիական զբոսաշրջության շուկայում (այցելող) նկատվում են նոր միտումներ:

Շենգելյան համաձայնագրի ընդունումից ու Եվրամիության երկրների միջև այցելության հրավերների կանոնակարգի փոխումից հետո, ֆրանսիայում աճեց կարճաժամկետ զբոսաշրջային ուղևորությունների թիվը:

Ֆրանսիան, անկասկած, նախկինի պես մնում է աշխարհում ամենահիրապուրիչ և հանրաճանաչ զբոսաշրջային երկիրը: Սակայն, այն ինչ-որ չափով կորցնում է հետաքրքրությունը, որպես երկարատև զբոսաշրջային ու հանգստի վայրի: Եվրոպացիներն այժմ հիմնականում Ֆրանսիա են այցելում աշխատանքային շաբաթվա վերջում, իրենց կարճատև հանգիստն անցկացնելու նպատակով, իսկ հիմնական արձակուրդն անցկացնում են այլ վայրում: Դեռ 1997 թ. ֆրանսիայում գրանցվել է 242 մլն գիշերող արտասահմանյան զբոսաշրջիկ, նույն տարում Իսպանիայում այդպիսի զբոսաշրջիկների թիվը կազմել է 350 մլն [20, 162]:

Այժմ ֆրանսիայից բացի, Եվրոպայում զբոսաշրջիկներ ընդունող գլխավոր երկրներ են հանդիսանում Իսպանիան և Իտալիան: Այս երկու երկրները միասին ամեն տարի ընդունում են ավելի քան 80 մլն այցելու, որոնց գերակշռող մասը ծովափնյա հանգստի երկրպագուներն են: Ընդ որում, այդ երկրներ այցելողները հիմնականում Արևմտյան Եվրոպայի երկրներից են: Մասնավորապես, Իսպանիա այցելող զբոսաշրջիկներից յուրաքանչյուր հինգերորդը ժամանում է Գերմանիայից և Մեծ Բրիտանիայից: Իսկ Իտալիայում հանգստացողները հիմնականում բալկանյան երկրներից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Շվեյցարիայից և Ավստրիայից եկողներն են:

Այժմ Ֆրանսիան, Իսպանիան, Իտալիան շատ ակտիվ կերպով ներգրավված են ներտարածաշրջանային զբոսաշրջային փոխանակումների համակարգում: Ըստ ՁՀԿ-ի կանխատեսումների, 2020 թ. սպասվում է զբոսաշրջային ձևերի հերթափոխություն: Կանխագուշակվում է, որ հեռանկարում եվրոպացիները հիմնականում կմեկնեն հանգստանալու կամ պարզապես ճամփորդելու նպատակով այլ տարածաշրջաններ:

Այսպիսով, Եվրոպայի զբոսաշրջության կենտրոններն աստիճանաբար վերակողմնորոշվում և ձևավորում են նաև նոր շուկա՝ առավել հեռավոր երկրներից և տարածաշրջաններից այցելող զբոսաշրջիկների հոսքերով: Ենթադրվում է, որ հատկապես զբոսաշրջային խոշոր հոսքեր են սպասվում Ճապոնիայից, Ասիայի առավել զարգացած երկրներից, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկայից: Եվրոպական երկրները, առավել մեծ թվով զբոսաշրջիկներ գրավելու նպատակով, կձգտեն այսպես կոչված վերակենդանացնել զբոսաշրջային «ապրանքը» և փոխել իրենց «ապրանքանիշը»՝ ակտիվորեն փնտրելով շուկայական հեռանկարային վարկանիշ: Այդ երկրներից մի քանիսն այժմ արդեն ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Այսպես, օրինակ, Իսպանիան վերանայել է իր պետական քաղաքականությունը զբոսաշրջության բնագավառում, որն էլ հնարավորություն է տվել զգալիորեն ամրապնդել իր դիրքերը զբոսաշրջության համաշխարհային շուկայում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Եվրոպայից մեկնող զբո-

սաշրջիկների զբոսաշրջության աշխարհագրությունը տարածքային առումով հիմնականում համընկնում է եկող զբոսաշրջությանը: Սակայն, նկատվում է, որ զբոսաշրջիկների միջտարածաշրջանային փոխանակումների պարագայում նվազում է Ամերիկայի, Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի տեսակարար կշիռները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհի չափանիշով, մեկնող զբոսաշրջության ամենախոշոր շուկան Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն է: Դեռ 1996 թ. գերմանացիները կատարել են շուրջ 80 մլն արտասահմանյան ուղևորություն: Ըստ որում, ուղևորությունների թիվն այս երկրում միջին հաշվով տարեկան ավելանում է 5%–ով՝ ՁՀԿ–ը կանխատեսումներով 2020 թ. Գերմանիայում մեկնող զբոսաշրջության ծավալները կավելանան ավելի քան 2 անգամ, իսկ ուղևորությունների թիվը կկազմի 163.5 մլն: Ըստ որում, աշխարհում յուրաքանչյուր տասներորդ զբոսաշրջային ուղևորություն բաժին կընկնի Գերմանիայի քաղաքացիներին և այդ ցուցանիշով Գերմանիան կպահպանի իր առաջնային տեղը:

Այսպես կոչված մեկնող զբոսաշրջության գերմանական շուկայի համար բնորոշ է զբոսաշրջային հոսքերի խոշոր տարածաշրջանների համակենտրոնացումը: Իսկ ուղևորությունների ավելի քան 90%–ն էլ իրականացվում են Եվրոպայի տարածաշրջանի սահմաններում: ՁՀԿ–ի տվյալներով, Եվրոպայի զբոսաշրջային ամենախոշոր հոսքերի 10–ից 5–ը ձևավորվում են Գերմանիայում:

Գերմանացիներն իրենց արձակուրդը նախընտրում են անցկացնել Արևմտյան և Հարավային Եվրոպայի երկրներում՝ Իսպանիայում, Իտալիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Նիդերլանդիայում, Շվեյցարիայում:

3. Հանգստի և զվարճությունների նպատակով իրականացվող զբոսաշրջությունն Ամերիկա աշխարհամասում

Ըստ վերջին տվյալների, Ամերիկյան տարածաշրջանը զբոսաշրջիկներին գրավելու և այնտեղ այցելուների թվով աշխարհում երկրորդ տեղն է զբաղեցնում, զիջելով միայն Եվրոպային: Ըստ որում, այդ աշխարհամաս այցելող զբոսաշրջային հոսքերը խոշոր կտրվածքով կարելի է բաժանել չորս ենթատարածաշրջանների՝ Հյուսիսային Ամերիկա, Կարիբյան ավազան և կղզային պետություններ, Հարավային Ամերիկա և Կենտրոնական Ամերիկա: Նշենք, որ Արևմտյան կիսագունդ մեկնող յուրաքանչյուր տասը զբոսաշրջիկներից յոթը այցելում է Հյուսիսային Ամերիկա: Ասենք նաև, որ Հյուսիսային Ամերիկայի տեղը զբոսաշրջության Ամերիկյան համակարգում դանդաղ նվազում է: Միաժամանակ, աստիճանաբար մեծանում է Կարիբյան ավազան, Կենտրոնական և հատկապես Հարավային Ամերիկա այցելողների տեսակարար կշիռը:

Հատկապես արագ է մեծանում Հարավային Ամերիկա այցելող զբոսաշրջիկների թիվը: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ Հարավային Ամերիկան շատ հարուստ է բնական բացառիկ տեսարաններով, հարստություններով, պատմական ու մշակութային հուշարձաններով, որոնց շնորհիվ հարավամերիկյան ուղղությունը զբոսաշրջության համար գնալով ավելի հետաքրքիր է դառնում հատկապես եվրոպացի զբոսաշրջիկների համար:

Նշենք, որ այս մայրցամաքում է գտնվում աշխարհի ամենաբարձր ջրվեժը՝ Անխելի (1054 մ Վենեսուելա), աշխարհի ամենաջրառատ գետը՝ Ամազոնը (Բրազիլիա), Ամազոնի 7 մլն կմ² տարածք ունեցող դաշտավայրի դեռևս քիչ տրորված անտառները (ջունգլիներ)՝ իրենց եզակի ծառատեսակներով և կենդանական աշխարհով, Անդերի բարձրաբերձ լեռնագագաթները, հրաբուխները և այլն:

Մշակութային արժեքների շարքում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում պահպանված և մեզ հասած ինկերի հնագույն քաղաքակրթությունը, մշակութային հուշարձանները, Մաչու–Պիկչու և Կուսկո պաշտամունքային քաղաքները և այլն:

Ի դեպ, Հարավային Ամերիկայի հսկա, բազմազան զբոսաշրջային պոտենցիալը առայժմ չափազանց քիչ է օգտագործվում:

Ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ամերիկայում զբոսաշրջային հոսքերի, այցելուների ճնշող մեծամասնությունը կենտրոնացված է տարածաշրջանի ներսում:

Հատկապես, զբոսաշրջիկների շատ ակտիվ փոխանակումներ է կատարվում Հյուսիսային Ամերիկայի երեք երկրների՝ ԱՄՆ–ի, Կանադայի և Մեքսիկայի միջև: Ի դեպ, ԱՄՆ–ից դեպի Մեքսիկա զբոսաշրջային հոսքերը ՉՀԿ–ն տվյալների համաձայն՝ աշխարհում ամենախոշորն են հանդիսանում:

Նշենք, որ արևմտյան կիսագունդ այցելող և մեկնող զբոսաշրջության առավել տարողունակ շուկան ձևավորվել է ԱՄՆ–ում: Ամերիկյան տարածաշրջանում բոլոր հիմնական զբոսաշրջային հոսքերը սկիզբ են առնում կամ ավարտվում են ԱՄՆ–ում: Վերջին տարիների տվյալներով, ԱՄՆ–ում զբոսաշրջային այցելուների քանակը կայունացել է՝ տարեկան կազմելով 46–47 մլն ուղևորություն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զբոսաշրջիկները հիմնականում այցելում են ԱՄՆ՝ տեսնելու Գեյզերների հովիտը, Ելիոստոնյան ազգային պարկը, Կառլսբադյան քարանձավները, հիանալու «Ամերիկայի խոշորագույն տեսարժան վայրով» – Կոլորադո գետի եզակի կանիոնի (կիրճի) անզուգական տեսարանով, որի խորությունը 1700 մ է:

Սակայն, ԱՄՆ–ը զբոսաշրջիկներին գրավում է ոչ միայն իր բնական գեղատեսիլ բնությամբ, այլ նաև հատկապես Վաշինգտոնի և Նյու–Յորքի, Չիկագոյի երկնաքերերով, հանրահայտ Բռուկլինյան կամրջով, Մետրոպոլիտեն – օպերայով և այլն: Շատ անակնկալներ և հայտնություններ են սպասվում նաև զբոսաշրջիկներին ամերիկյան մյուս նահանգներում և քաղաքնե-

ռում, օրինակ, Լոս Անջելեսը, որտեղ և գտնվում է աշխարհահռչակ «Դիսնեյլենդը» և Հոլլիվուդը:

Տեսարժան այդ վայրերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն արտասահմանյան զբոսաշրջիկների համար, այլև հենց իրենց՝ ամերիկացիների համար: ԱՄՆ–ի քաղաքացիներն ամեն տարի իրականացնում են շուրջ 1 մլրդ ներքին ու արտաքին ուղևորություն հանգստի, բուժման, զվարճությունների, բնական հուշարձանների հետ ծանոթանալու, հարազատներին այցելելու և շատ այլ նպատակներով:

Ըստ որում, ԱՄՆ–ից միջտարածաշրջանային ուղևորությունների մեջ շարունակվում են գերակշռել դեպի Եվրոպա կատարվող այցելությունները: Մասնավորապես, այդ երկրներից զբոսաշրջային հոսքերը առավելապես ուղևորվում են Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Իսպանիա: Իսկ ընդհանուր առմամբ, ամերիկացիների կատարած յուրաքանչյուր չորրորդ ուղևորությունը բաժին է ընկնում Եվրոպային:

Արևմտյան կիսագնդից հաջորդ ամենաշատ այցելվողը Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանն է:

Ըստ որում, ամերիկյան զբոսաշրջիկներն առավել շատ այցելում են Չինաստան, միաժամանակ նաև Սյանգան (Հոնկոնգ), Ճապոնիա, ինչպես նաև Կորեայի Հանրապետություն և Սինգապուր:

Ասենք, որ ամերիկացիներին առավել շատ հետաքրքրում է Արևելյան Ասիան:

Աշխարհի զբոսաշրջության մյուս տարածաշրջանները՝ Աֆրիկան, Մերձավոր Արևելքը և Հարավային Ասիան զբոսաշրջության առումով ամերիկացիների կողմից դեռևս շատ թույլ են յուրացված:

Արևմտյան կիսագնդի տարածաշրջանի երկրների զգալի մասը, օրինակ, կանադացի զբոսաշրջիկներն, ի տարբերություն ԱՄՆ–ի քաղաքացիների, նախընտրում են ներտարածաշրջանային զբոսաշրջությունը, իսկ հեռավոր ուղևորությունների մեջ գերադասում են Հարավային Ասիան, հատկապես Հնդկաստանը:

ՁՀԿ–ի կանխատեսումների համաձայն՝ 2010 թ. Ամերիկայի և աշխարհի մյուս տարածաշրջանների միջև զբոսաշրջային փոխանակումների թիվն ավելի կմեծանա:

4. Զբոսաշրջությունն Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում

Միջազգային զբոսաշրջությունն Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում համեմատաբար նոր է զարգանում: Տարածաշրջանի որոշ երկրներում զբոսաշրջության ինդուստրիան փաստորեն նոր է սկսել ձևավորվել (80–ական թվերից):

Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան այցելողների գերակշռող մասը (18%–ը) կազմում են եվրոպական և ամերիկյան երկրներից ժամանող զբոսաշրջիկները: Իսկ Աֆրիկայից, Մերձավոր Արևելքից և Հարավային Ասիայից այստեղ այցելուների թիվը չի գերազանցում 3%–ը:

Զբոսաշրջային հիմնական հոսքերն ուղևորվում են Արևելյան Ասիա: Հաշվարկները ցույց են տալիս, որ Ասիա ժամանող զբոսաշրջիկների գրեթե կեսը բաժին է ընկնում այդ ենթատարածաշրջանին: Այդ տեսակետից, երկրորդ ենթատարածաշրջանը Հարավարևելյան Ասիան է: Իսկ այս երկու ենթատարածաշրջաններին բաժին է ընկնում ընդհանուր առմամբ Ասիա այցելող զբոսաշրջիկների շուրջ 99%–ը:

Զբոսաշրջության համաշխարհային համակարգում դեռևս ցածր է Ավստրալիայի և Օվկիանիայի տեսակարար կշիռը, այն կազմում է 9.5–10.0%:

Իսկ Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի զբոսաշրջային ժամանումների տարածքային կառուցվածքը մեծապես կախված է Չինաստանի միջազգային զբոսաշրջության վիճակից: Ըստ որում, Չինաստանին է բաժին ընկնում այդ տարածաշրջան այցելող զբոսաշրջիկների ավելի քան 30, իսկ Սյանգանի (Հոնկոնգ) և Թայվանի հետ միասին՝ շուրջ 50%–ը:

Առհասարակ, Չինաստանի զբոսաշրջության պատմությունը բնութագրվում է վերելքներով և վայրէջքներով:

Վերջին տասնամյակներում Չինաստանի դերը համաշխարհային զբոսաշրջության համակարգում տարեցտարի աճում է: Մասնավորապես, 1990 թ. այն զբոսաշրջային այցելություններով աշխարհում զբաղեցնում էր 12–րդ տեղը, 1995 թ. զգալիորեն առաջ անցնելով արդեն զբաղեցրել էր 8–րդ տեղը, իսկ 1999 թ. Չինաստանն արդեն մտել է առաջին հնգյակի մեջ: ՁՀԿ–ի տվյալների համաձայն, 1999 թ. Չինաստան է այցելել 14 մլն զբոսաշրջիկ, իսկ Սյանգանից կատարած այցելությունների հետ միասին՝ 21 մլն: Ընդհուպ մինչև 2003 թ. Չինաստանը զբոսաշրջային այցելություններով առաջին տեղն է զբաղեցրել ասիական երկրների շարքում:

Կանխագուշակումները ցույց են տալիս, որ III հազարակյակի առաջին տասնամյակներում այն արդեն առաջինը կլինի ոչ միայն Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, այլ ամբողջ աշխարհում: Մասնավորապես, կանխագուշակվում է, որ 2020 թ. Չինաստան (Սյանգանի հետ միասին) այցելողների թիվը կհասնի 196 մլն–ի, որը երկու անգամ ավելին կլինի, քան ԱՄՆ և Ֆրանսիա այցելողների թիվը միասին, երեք անգամ ավելին, քան Իսպանիա և չորս անգամ ավելին, քան Իտալիա և Մեծ Բրիտանիա այցելողների թիվը միասին:

Առհասարակ, միջազգային զբոսաշրջության վրա ժամանակ առ ժամանակ բացասական ազդեցություն են թողնում այս կամ այն երկրում բռնկվող համաճարակները, տարբեր տեսակի վարակիչ հիվանդությունները: 2003 թ. գարնանը Չինաստանում տարածվել էր թոքաբորբոքային գրիպի անհասկանալի վիրուս, որի պատճառով փաստորեն արտակարգ իրավիճակ էր ստեղծ-

վել այդ խոշոր երկրում, խիստ հսկողության տակ էր վերցվել երկրից դուրս եկողների ու այցելողների առողջական վիճակը, սահմանափակվել արտաքին այցելությունները: Այս հանգամանքը, անկասկած, բավականին ժամանակ խիստ կպակասեցնի Չինաստան այցելող զբոսաշրջիկների քանակը: Հետևաբար, վերը նշված կանխագուշակումների ցուցանիշները կարող են նկատելիորեն փոփոխվել: Նշված համաճարակը կարող է ազդել (բացասական առումով) ինչպես Չինաստանի, այնպես էլ տարածաշրջանի մյուս երկրների զբոսաշրջության վրա: Սակայն, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, այդտեղ արդեն 2003 թ. աշնանը վիճակը կարգավորվել է և նկատվում է զբոսաշրջության նոր աշխուժացում:

Չինաստանից բացի, Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում զբոսաշրջության բնագավառում հետաքրքրություն են ներկայացնում նաև նոր ինդուստրիալ երկրներից Մյանգանը (Հոնկոնգ), որն արդեն միավորվել է Չինաստանին, Մալազիան, Սինգապուրը, Թայլանդը, Կորեայի Հանրապետությունը, Ինդոնեզիան և Թայվանը:

Կարևոր է հիշատակել, որ այս երկրների՝ իրենց իսկ կողմից ստեղծած տնտեսական արագորեն զարգացող շուկան, մեծապես նպաստեց դեպի Ասիայի այդ տարածաշրջան կատարվող գործնական ուղևորությունների կտրուկ աճին: Ըստ որում, այդ երկրների հատկապես գործնական զբոսաշրջությունը նպաստեց հյուրանոցային գործի և զվարճությունների ինդուստրիայի կտրուկ աճին:

Բացի դրանից, ասիական այս երկրները միջազգային զբոսաշրջիկներին գրավում են առաջին հերթին իրենց էկզոտիկ բնությամբ, լողափնյա հանգստի հնարավորություններով: Դրանք ունեն նաև շահավետ առևտրի առավելություններ, որոնք պակաս գրավիչ չեն զբոսաշրջիկների համար:

Ասիայի այդ տարածաշրջանում, առավել շատ այցելող երկրների առաջին տասնյակի մեջ է մտնում Ճապոնիան:

Բարձր զարգացած ինդուստրիալ այս երկիրն ընդունում է զբոսաշրջային տարբեր նպատակներ ունեցող հոսքեր, որոնց թվում նաև հանգստի և զվարճությունների նպատակով:

Նշենք, որ ճապոնական զվարճությունների ինդուստրիան աշխարհում երկրորդն է, որով այն զիջում է միայն ամերիկյան համապատասխան ոլորտին:

Եթե ընդհանուր առմամբ գնահատելու լինենք, ապա պետք է նշել, որ Ասիայի այդ տարածաշրջանում, զբոսաշրջային բիզնեսը կայացել է և այն արագորեն զարգանում է հիմնականում զարգացած և նոր ինդուստրիալ երկրներում: Իսկ այդ բնագավառում Լաոսը, Վիետնամը, Մոնղոլիան, Կամպուչիան, չնայած գործադրվող բոլոր ջանքերի, դեռևս աննշան շուկայական բաժին ունեն:

Այդ տարածաշրջանում մեկնող զբոսաշրջության շուկան ձևավորվել է այն նույն երկրներում, որոնք նշանավոր են այցելող զբոսաշրջությամբ:

Նշենք, որ մեկնող զբոսաշրջիկների թվով արդեն երկար ժամանակ առաջին տեղը զբաղեցնում է Ճապոնիան: Նրան բաժին է ընկնում տարածաշրջանից մեկնող զբոսաշրջիկների ավելի քան 30%–ը:

Վերջին տվյալներով, ամեն տարի ճապոնացիները կատարում են մինչև 30 մլն արտասահմանյան ուղևորություններ, որից 60–80%–ը հաճույքների, գնումների, բնության գրկում հանգստանալու, այլ երկրների մշակութային օջախներին ծանոթանալու, միջոցառումների և սպորտով զբաղվելու նպատակով:

Հանգստի և զվարճությունների կարիքները բավարարելու համար, ճապոնացիները հաճախակի այցելում են Չինաստան, նաև Սյանգան, Կորեայի Հանրապետություն, Սինգապուր: Միաժամանակ, նաև ընդլայնվում են Ճապոնիայի միջտարածաշրջանային կապերը: Ըստ որում, միջմայրցամաքային զբոսաշրջային հոսքերից ավելի ինտենսիվը ԱՄՆ կատարվող այցելություններն են (5 մլն, իսկ Իտալիա 1.7 մլն ուղևորություն):

Ընդհանուր առմամբ, հեռավոր ճամփորդությունները, հատկապես հեռավոր Արևելքի, Աֆրիկայի կամ Հարավային Ասիայի երկրների բնակչության համար դեռևս մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում: ՉՀԿ տվյալներով, Ճապոնիայից զբոսաշրջային ուղևորությունների մեծ մասը տեղի է ունենում դեպի Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային երկրներ: Մասնավորապես, Ճապոնիա–Սյանգան տարեկան 2.4 մլն, Չինաստան՝ 1.5 մլն, Կորեայի Հանրապետություն՝ 1.5 մլն, Սինգապուր՝ 1.2 մլն, Թայլանդ՝ 0.9 մլն, Թայվան՝ 0.9 մլն և այլն:

5. Զբոսաշրջությունը Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և Հարավային Ասիայում

Վերջին տասնամյակներում միջազգային զբոսաշրջության կառուցվածքում բոլորից լուրջ փոփոխությունները կատարվել են այս տարածաշրջաններում: 80–ական թվականներին Եվրոպայից այս տարածաշրջաններ այցելող զբոսաշրջիկների թիվն ավելին էր, քան ներտարածաշրջանային ուղևորությունների թիվը: Հետագայում, արդեն 90–ականներից սկսեց նկատելիորեն զարգանալ նաև ներտարածաշրջանային զբոսաշրջային փոխանակումները՝ պահպանելով Եվրոպայի հետ այդ ոլորտի ամուր հարաբերությունները:

1999 թ. Աֆրիկայում զբոսաշրջիկների թիվը կազմել է 25 մլն, այդ թվում 10.5 մլն–ը հենց աֆրիկացիներ են եղել, 9 մլն–ն այցելել են Եվրոպայից, 5.5 մլն–ն՝ աշխարհի մյուս տարածաշրջաններից:

Զբոսաշրջության միջազգային շուկայում Աֆրիկայի երկրներից առավել առաջատարները Հյուսիսային, Արևելյան և Հարավային Աֆրիկայի երկրներն են: Մասնավորապես, կարևոր տեղ են զբաղեցնում Եգիպտոսը, Թունիսը, Մարոկկոն, որոնք մասնագիտացված են հատկապես լողափերի և ճանաչողական զբոսաշրջության բնագավառում: Զիմբաբվեն և Քենիան աշխար-

հում հանրահայտ են ազգային բազմաթիվ պարկերով, արգելոցներով և դրանցում կազմակերպվող շատ հետաքրքիր զբոսաշրջությամբ: Այստեղ զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում էկզոտիկ կենդանիների տեսակներն ու բուսական աշխարհը:

ՀԱՀ–ը զբոսաշրջիկներին շատ հետաքրքրում է իր բնակլիմայական նպաստավոր պայմաններով: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ տարվա ընթացքում արևոտ օրերի թվով Աֆրիկայի այդ Հանրապետությունն առաջին տեղն է գրավում աշխարհում:

Աֆրիկայի չափազանց գայթակղիչ և հիասքանչ տեսարանները չեն կարող անտարբեր թողնել անգամ ամենապահանջկոտ զբոսաշրջիկին: Աշխարհամասի շատ հարուստ, բազմազան, էկզոտիկ, բնական և մշակութային պոտենցիալը հնարավորություն է տալիս զբոսաշրջության հետագա զարգացման համար:

Սակայն, որպեսզի զբոսաշրջության միջազգային շուկայում այդ երկրները ընդլայնեն իրենց դիրքերը և մեծացնեն զբոսաշրջային փոխանակումների թիվը, ապա այդ տարածաշրջանի երկրները պետք է իրենց ենթակառուցվածքներում հաղթահարեն խրոնիկական հետամնացությունը, բարձրացնեն զբոսաշրջության ծառայությունների որակը, որ շատ կարևոր է, վերացնեն ահաբեկչական գործողությունների վտանգը և միջոցներ ձեռնարկեն իջեցնելու հանցագործությունների ընդհանուր մակարդակը:

6. Գործարար զբոսաշրջության աշխարհագրություն

Ներկա ժամանակաշրջանում համաշխարհային զբոսաշրջության համակարգում լայն ճանաչում է ստանում բիզնեսի նպատակով կատարվող ուղևորությունները, այլ կերպ բիզնես ուղևորությունների աշխարհագրությունը: Վերջին տվյալներով ամեն տարի աշխարհում կատարվում են ավելի քան 100 մլն բիզնես ուղևորություն: Նրա տարածքային բաշխումը բնականաբար խիստ անհավասարաչափ է: Ըստ որում, ծառայողական նպատակներով զբոսաշրջային հոսքերի մեծ մասը շարունակում են ուղևորվել դեպի Եվրոպա:

Գործարար այդպիսի ուղևորությունների կառուցվածքում գերակշռում են գործուղումներն արտադրական ձեռնարկություններ, համաժողովներ, ցուցահանդեսներ, տոնավաճառներ և բիզնեսային բնույթի այլ միջոցառումների մասնակցելու համար:

Նշենք, որ ծառայողական նպատակով ճանապարհորդող զբոսաշրջիկների տիպիկ ներկայացուցչի օրինակը բարձրագույն կրթությամբ, միջին տարիքի տղամարդն է, որակյալ մասնագետը կամ ղեկավար աշխատողը: Ներկա ժամանակաշրջանում, գործարար զբոսաշրջության համար գործնականում պարտադիր պայման է անգլերեն լեզվին տիրապետելը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Եվրոպայում գործարար զբոսաշրջիկների այսպես կոչված հիմնական «մատակարարը» Գերմանիան

է: Յուրաքանչյուր տարի ավելի քան 5 մլն գերմանացիներ ծառայողական գործուղման են մեկնում, դրանց 21%–24%–ը այդ նպատակով ճամփորդում են արտասահմանյան երկրներում, 76%–ը իրականացնում են ծառայողական ուղևորությունները միայն Գերմանիայի տարածքում:

Գերմանիայից ծառայողական ուղևորության միջին տևողությունը դեպի այլ մայրցամաքներում գտնվող երկրներ, կազմում է 12–13 օր, տվյալ տարածաշրջանի երկրներ՝ 5–6 օր, իսկ իր երկրի սահմաններում՝ 3–4 օր:

Գերմանիայից բացի, կարևոր տեղ ունեն գործարար զբոսաշրջիկների հոսքեր ընդունող եվրոպական երկրների շարքում նաև Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Նիդերլանդիան, Իտալիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան: Այս բնագավառում առանձնահատուկ տեղ է գրավում Բելգիան ու հատկապես նրա մայրաքաղաք Բրյուսելը, որը միաժամանակ հանդիսանում է նաև որպես Եվ. Միության մայրաքաղաք:

Ֆրանսիա և Բելգիա կատարվող յուրաքանչյուր տասներորդ այցելությունը իրականացվում է գործարար նպատակով, իսկ Մեծ Բրիտանիա կատարվող այցելություններից յուրաքանչյուր երրորդն է կատարվում այդ նպատակով:

Բիզնես – զբոսաշրջության շուկայում արդեն նկատելի դեր են խաղում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները: Այս բնագավառում առավել մեծ փոփոխություններ կատարվեցին և այդ երկրների նկատմամբ, և հետաքրքրություններ առաջացան հատկապես այդտեղ կատարված վերակառուցումից, սոցիալիստական կողմնորոշումից հետ նահանջելուց հետո:

Բիզնես – զբոսաշրջությունն արագորեն զարգանում է նաև ամերիկյան մայրցամաքում: Կարևոր է նշել, որ այստեղ արդեն յուրաքանչյուր ութերորդ ուղևորություն կատարվում է ծառայողական նպատակներով: Այս աշխարհամասում գործարար մարդկանց հիմնական հոսքերը բնականաբար ուղևորվում են առավել զարգացած երկրներ՝ ԱՄՆ և Կանադա:

Բիզնես զբոսաշրջության հոսքերը տարեցտարի ավելանում են Լատինական Ամերիկայում՝ հատկապես Բրազիլիա, Արգենտինա, Մեքսիկա, Չիլի: 1990–ական թվականներից գործարար ուղևորությունների թիվը Հարավարևելյան Ասիայում նկատելիորեն աճեց: Բավական է ասել, որ 1995 թ. տարածաշրջան կատարած յուրաքանչյուր հինգերորդ ուղևորություն կատարվում էր ծառայողական նպատակով: Այս տարածաշրջանի նշված նպատակով այցելությունների ավելի քան 30%–ը բաժին է ընկնում Սյանգանին (այժմ միացած է Չինաստանին), Սինգապուրին և Թայվանին:

Իսկ Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում գործարար զբոսաշրջությունը դեռևս զարգանում է տարերայնորեն: Ըստ որում, այս տարածաշրջանում բիզնեսային զբոսաշրջության զարգացման ընթացքը հիմնականում պայմանավորված է տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակով: Այդտեղ՝ հատկապես Մերձավոր Արևելքում տիրող անկայուն իրավիճակը (կապված Իրաքում, Պաղեստինում, Իսրայելում, այժմ նաև Իրանում տեղի ունեցող իրադրությունների հետ) բացասաբար է անդրադառնում զբոսաշրջության վրա:

7. Համաժողովների, ցուցահանդեսների կազմակերպման նպատակով իրականացվող զբոսաշրջության աշխարհագրություն

Գիտատեխնիկական առաջընթացի հետ կապված, գնալով աշխարհում աճում է հետաքրքրությունը համաժողովների, գիտագործնական սեմինարների, ինչպես նաև ցուցահանդեսների և տոնավաճառների նկատմամբ: Արտադրության բնագավառի աշխատողները, գործարարները, գիտնականները մասնակցում են աշխարհի տարբեր երկրներում կազմակերպվող ֆորումների, որտեղ ստանում են թարմ տեղեկություններ, շփվում կոլեգաների հետ, մտքեր փոխանակում, բանակցություններ վարում: Այդպիսի միջոցառումներին մասնակցությունը հնարավորություն է տալիս նրանց փոքր–ինչ շեղվել ամենօրյա լարված աշխատանքից և մասնակցել նաև առաջարկվող մշակութային ծրագրերին:

Այդ միջոցառումների մասին պատկերացում կազմելու համար ասենք, որ եթե XX դ. 30–ական թթ. տարեկան անց էր կացվում միջազգային շուրջ 200 համաժողովներ, ապա 90–ական թթ. արդեն դրանց թիվը գերազանցել է տարեկան 8 հազարի ցուցանիշը: Ըստ որում, դրանց գերակշռող մասը, շուրջ 80%–ը բաժին է ընկնում Արևմտյան Եվրոպային և Հյուսիսային Ամերիկային: Այդպիսի միջոցառումներ կազմակերպող և վճռական դեր խաղացող երկրներն են՝ ԱՄՆ–ը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան: Այս բնագավառում Գերմանիան չնայած զբաղեցնում է չորրորդ տեղը, սակայն այն աշխարհամասում նույնպես հայտնի է հաճախակի կազմակերպվող ցուցահանդեսներով և տոնավաճառներով: Դեռ ավելին, երկրորդ հազարամյակի վերջին, Համաշխարհային հանրագումարային ցուցահանդեսի անցկացման իրավունքը ստացավ Գերմանիան:

Այն՝ «ЭКСПО–2000–ը» բացվել է 2000 թ. հուլիսի 1–ին Գերմանիայի Հանովեր քաղաքում, որը համաշխարհային համաժողովների և ցուցահանդեսների կազմակերպման հանրահայտ կենտրոն է:

Այստեղ ներկայացված էին 189 երկիր, որոնց ցուցանմուշները տեղադրվել էին 53 տաղավարներում և զբաղեցնում էին 170 հա տարածք: Կազմակերպիչների և մասնագետների կարծիքով «ЭКСПО–2000» ցուցահանդեսը վիթխարի թատրոն էր բաց երկնքի տակ: Տարածքի հիմնական մասը զբաղեցնում էին «Մարդկությունը–Բնությունը–Տեխնոլոգիաները» թեմայով ցուցադրանմուշները:

Եվրոպայի միջազգային զբոսաշրջության համաժողովների–ցուցահանդեսների խոշորագույն կենտրոններ են նաև՝ Ամստերդամը, Մադրիդը, Բրյուսելը, Բարսելոնան, Վիեննան, Բեռնը, Կոպենհագենը, Լոնդոնը, Փարիզն ու Ստրասբուրգը, իսկ Ամերիկայում՝ Վաշինգտոնը:

Ամեն տարի բազմաթիվ երկրների պետական գործիչներ, գործարար մարդիկ են մեկնում բարձր լեռնային, չքնաղ բնություն ունեցող Դավոս քաղաք (Շվեյցարիա), որտեղ համաժողովներ են կազմակերպում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնահարցերի շուրջ:

Համաժողովները կազմակերպվում են այսպես կոչված «կոնգրես–կենտրոնում», հյուրանոցներում, թատրոններում և համերգային դահլիճներում, համալսարաններում և գիտակրթական այլ համալիրներում:

Վերջին տասնամյակների տվյալներով, միայն Եվրոպայում յուրաքանչյուր տարի կազմակերպվում է միջազգային զբոսաշրջության ավելի քան 200 ցուցահանդեսներ և բորսային միջոցառումներ: Միջազգային զբոսաշրջության այդ միջոցառումներից հանրահայտը բորսան է, որը սովորաբար կազմակերպվում է Բեռլինում: Դեռ 1988 թ. այդ միջոցառմանը մասնակցել են աշխարհի 188 երկիր: Մասնակցող երկրների թիվը խոսում է այն մասին, թե միջազգային զբոսաշրջության նկատմամբ աշխարհն ինչ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում: Նշենք նաև, որ Բեռլինի այդ ցուցահանդեսային համալիրին իր համեստ մասնակցությունն է ունեցել նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ժամանակ առ ժամանակ միջազգային զբոսաշրջությանը նվիրված խոշոր ցուցահանդեսներ են կազմակերպվում նաև Իսպանիայում՝ Մադրիդում, որին մասնակցում են նաև Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրները:

Ամեն տարի այդպիսի ցուցահանդեսներ են կազմակերպվում նաև Լոնդոնում, որին հատկապես մասնակցում են աշխարհում իր բնույթով խոշորագույն, այսպես կոչված «Մերիդիան» զբոսաշրջային ակումբի անդամները:

Այդ առումով, հանրահայտ է նաև «Ֆիերան» ցուցահանդեսը, որը կազմակերպվում է Իտալիայի Միլան քաղաքում: Ասենք, որ այդ միջոցառումներում ավելի քան 5 հազ. զբոսաշրջային կազմակերպություններ իրենց ապրանքն են առաջարկում խստապահանջ այցելուներին և ճանապարհորդության սիրահարներին:

Աշխարհի հինգ խոշորագույն ցուցահանդեսների շարքը համալրում է Մոսկվայի «ճանապարհորդության և զբոսաշրջության» միջազգային ցուցահանդեսը:

Ցուցահանդեսային շարժումն աշխարհում արագորեն մեծ վերելք է ապրում: Տարեցտարի ավելանում է զբոսաշրջության ոլորտի ցուցահանդեսների և տոնավաճառների թիվը, ընդլայնվում է մասնակիցների շրջանակներն ու աշխարհագրությունը, ուղղվածությունն ավելի բազմատեսակ և բազմաբնույթ է դառնում:

8. Ինսենտիվ զբոսաշրջության աշխարհագրություն

Գործարար զբոսաշրջությունը համաժողովներից, ցուցահանդեսներից, ուղևորություններից բացի, ընդգրկում է նաև ինսենտիվ շրջագայություններ: ԱՄՆ–ում աշխատանքային ոլորտում ձեռք բերած հաջողությունների համար խրախուսական ուղևորությունների ձևերը կիրառվում էին դեռևս 60–ական թ–ից: 70–80–ական թթ. միայն զբոսաշրջության այս ձևն արագ զարգացավ նաև Եվրոպայում, իսկ հետագայում այն նաև անցավ Ասիա:

Ինսենտիվ զբոսաշրջության աշխարհագրությունը գործնականում խոշոր

փոփոխություն չի կրել: Ինչպես նախկինում, այժմ էլ խրախուսվող զբոսաշրջիկների հիմնական «մատակարարը» համարվում է ԱՄՆ–ը: Այդ երկրին բաժին է ընկնում Եվրոպա այցելող ինսենտիվ հոսքերի 60%–ը:

Խրախուսման այս ձևը, ինչպես ասվեց, Եվրոպայում նույնպես արագորեն տարածվում է: Ի դեպ, ինսենտիվ շրջագայությունները մարդու աշխատունակության բարձրացման ամենալավ խթանիչն են:

Մեծ Բրիտանիայում տարբեր բնույթի գործակալությունների պարգևատրման ծախսերի ընդհանուր գումարի մինչև 40%–ը կազմում են ինսենտիվ շրջագայությունները, Ֆրանսիայում և Գերմանիայում դրանք կազմում են այդ ծախսերի գրեթե կեսը:

Ինսենտիվ շրջագայությունների ուղեգրի արժեքը տատանվում է 500–1500 ամերիկյան դոլարի սահմաններում, իսկ տևողությունը կազմում է 3–7 օր: Այս կարգի զբոսաշրջությունը հիմնականում իրականացվում է խմբերով: Ըստ որում, այդ խմբերում զբոսաշրջիկների թիվը կարող է տատանվել մի քանիսից մինչև 100 մարդու սահմաններում: Փորձը ցույց է տալիս, որ խմբերի մեծ մասում նրանց թիվը չի անցնում 10–ից:

9. Կրոնական զբոսաշրջության աշխարհագրություն

Ուխտագնացության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զբոսաշրջային հոսքերի վրա նշանակալից ազդեցություն են թողնում կրոնական շարժառիթները:

Կրոնական զբոսաշրջությունը դարերի պատմություն ունի: Պատմական փաստերը վկայում են, որ պաշտամունքային նպատակով ճամփորդությունները, ուխտագնացությունները հիշատակվում են դեռևս անտիկ ժամանակներից: Մասնավորապես, հին հույներն ու հռոմեացիները հաճախակի այցելում էին հանրահայտ սրբավայրեր ու տաճարներ:

Հին Հունաստանի ամենահայտնի պաշտամունքային կենտրոնը գտնվում էր Դելֆայում: Այն ուներ համահունական նշանակություն իր պատգամախոսական տաճարի շնորհիվ:

Միջնադարում բնակչության կրոնական շարժառիթներով տեղաշարժերը շարունակում էին զարգանալ՝ ձեռք բերելով նոր հատկանիշներ: Այդ ժամանակվանից ուխտագնացությունը փաստորեն մասսայական բնույթ է ստանում՝ ընդունելով յուրօրինակ Խաչակրաց արշավանքի ձև: Այդ պայմաններում մարդիկ համախմբվում էին կրոնական պայքարի պատրվակով, այսինքն եվրոպացիները պայքարում էին «անհավատների» (մուսուլմանների) դեմ, նրանցից քրիստոնեական սրբավայրերը ազատագրելու պատրվակով:

Ուխտագնացության շարժումը բավականին ընդլայնվել է XV և հատկապես XVI դարերում: Այդ ժամանակաշրջանում միաժամանակ մեծանում է նաև ուխտագնացության հոսքերի բազմատարրությունը: Ըստ որում, այսպես կոչված

դեպի Սուրբ երկիր ուղևորվողներից շատերի համար ուխտագնացությունը սոսկ քողարկում էր, թաքցնելու իրենց իրական նպատակների իրագործումը, որոնք իրականում շատ հաճախ ապաշխարվելուց շատ հեռու էին: Սակայն, այժմ էլ, ինչպես շատ դարեր առաջ, կրոնական համոզմունքները շարունակում են մնալ որպես ճամփորդությունների գլխավոր պատճառներից մեկը: Բավական է նշել, որ այժմ ամեն տարի ավելի քան 200 մլն մարդ ուխտագնացության է մեկնում: Նշենք նաև, որ նրանցից 150 մլն–ը քրիստոնյա են, 20–30 մլն–ը հինդու կրոնին, 40 մլն–ը՝ բուդդայականներ և մահմեդականներ են:

Հավատացյալները մեկնում են սրբերին խոնարհվելու համար, հոգևոր խաղաղություն ձեռք բերելու, մեղքերից ազատվելու, մտերիմ մարդկանց հետ հոգեպես միավորվելու նպատակներով և այլն:

Ընդհանուր առմամբ, աշխարհում առանձնացվում է ուխտագնացության 11 մակրոտարածաշրջաններ:

1. Քրիստոնեական Եվրոպա – քրիստոնեության գերակշռությամբ, ինչպես նաև մի քանի այլ դավանանքների առկայությամբ

2. Հյուսիսային Ամերիկա –.. –.. –.. –.. –.. –.. –.. –.. –.. –.. –.. –.. –.. –..

3. Լատինական Ամերիկա – քրիստոնյաների գերակշռությամբ և տեղի ավանդական մի քանի այլ դավանանքներով:

4. Հյուսիսային Աֆրիկա – մահմեդականության գերակշռությամբ.

5. Արևմտյան և Արևելյան Աֆրիկա – մահմեդականության, քրիստոնեության և մի շարք այլ դավանանքների առկայությամբ:

6. Արևմտյան Ասիա – մահմեդականության գերակայությամբ և քրիստոնեության ու հինդուիզմի առկայությամբ:

7. Հարավային Ասիա – որտեղ լայնորեն տարածված են հինդուիզմն ու բուդդիզմը, ինչպես նաև գոյություն ունեն ջայնիզմի, սիկխիզմի կենտրոններ:

8. Հարավարևելյան Ասիա – բուդդիզմի գերակայությամբ, մահմեդականության և քրիստոնեականության առկայությամբ:

9. Արևելյան Ասիա – որտեղ գերիշխում է բուդդայականությունը կան մահմեդականներ ու քրիստոնեության հատվածներ, ինչպես նաև մի շարք այլ համեմատաբար սահմանափակ բնակչություն ընդգրկող դավանանքներ (կոնֆուցիանիզմ, սինտոիզմ և այլն):

10. Կենտրոնական Ասիա – բուդդայականության գերակշռությամբ:

11. Միջին Ասիա – որտեղ գերիշխում է մահմեդականությունը:

Յուրաքանչյուր մակրոտարածաշրջան հայտնի է, որպես համաշխարհային ուխտագնացության տարածաշրջան: Բացի դրանից, մակրոտարածաշրջաններում գոյություն ունեն ազգային և տեղական նշանակության վայրեր:

Աշխարհում կրոնական խոշորագույն, հին կենտրոն է Երուսաղեմը: Այն սրբավայր է բոլոր երեք կրոնների հավատացյալների համար՝ քրիստոնեության, եբրայականության (հրեականություն) և մահմեդականության:

Ի տարբերություն Երուսաղեմի, որն իր մեջ մարմնավորում է զարմանա-

լիորեն բազմատեսակ կրոնական կապեր, աշխարհի ուխտավայրերի այլ կենտրոնների գերակշռող մասը կապված է մեկ կրոնի հետ:

Երկրագնդի քրիստոնյա աշխարհի համար շատ սրբավայրեր գոյություն ունեն: Սակայն, դրանցից պաշտամունքային առումով առավել հանրահայտը Հռոմն է (Իտալիա), այնուհետև Փարիզը (Լուվրը՝ Ֆրանսիա), Ֆատիման (Պորտուգալիա), Վարշավան (Լեհաստան) և Մոնսերրատը (Իսպանիա):

Աշխարհում լայն ճանաչում ունի այդ տեսակետից Էջմիածինը, որը համայն հայության հավատի, սրբության կենտրոնն է, որտեղ հայերից բացի այցելում են նաև քրիստոնյա աշխարհի շատ այլ հավատացյալներ:

Մահմեդականության ուխտագնացության գլխավոր կենտրոնն է Մեքքա քաղաքը, Սաուդյան Արաբիայում: «Մեքքա» բառը ուխտագնացության հոմանիշն է, սակայն միայն մուսուլմաններին է թույլատրվում այցելել այդ սուրբ քաղաք, որտեղ այդ կրոնական ուսմունքի համաձայն ծնվել է նրա հիմնադիր Մուհամեդ մարգարեն:

Ճամփորդությունը դեպի Մեքքա մահմեդականների գլխավոր պարտականություններից մեկն է:

Նրանց մյուս սրբավայրը գտնվում է Մեդինայում, նույնպես Սաուդյան Արաբիայում:

Համաշխարհային երեք կրոններից մեկն էլ բուդդայականությունն է: Այն առաջացել է Հին Հնդկաստանում VI–V դար մ.թ.ա. և այնուհետև տարածվել է Հարավարևելյան և Կենտրոնական Ասիայում, մասամբ Միջին Ասիայում և Սիբիրում:

Օրթոդոքս (ուղղափառ) բուդդայականները ուխտագնացության չեն գնում, այն իմաստով, ինչպես քրիստոնյաները կամ մահմեդականները: Սակայն, նրանք նույնպես ունեն իրենց սրբավայրերը և իրականացնում են յուրօրինակ ճամփորդություններ, այսպես կոչված հոգևոր կատարելության հասնելու նպատակով:

1951 թ. հազարավոր ուխտագնացներ ուղևորվեցին երկարատև և վտանգավոր ճամփորդության՝ դեպի Տիբեթի սուրբ Լհասա քաղաքը, որը գտնվում է Հիմալայներում, 3650 մ բարձրության վրա: Հայտնի է, որ Լհասան բուդդայականության կենտրոնն է, որտեղ էլ գտնվում է նրանց հոգևոր առաջնորդի՝ Դալայ–Լամայի ամրոցն ու նստավայրը:

Բուդդայական աշխարհի առավել նշանավոր սրբավայրերից հաջորդը գտնվում է Կանդի քաղաքում (Շրի Լանկա):

10. Բուժառողջարարական զբոսաշրջության աշխարհագրություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուժման նպատակով կատարվող ճամփորդությունները շատ հին պատմություն ունեն: Հայտնի է, որ

հին հույները և հռոմեացիները բուժիչ աղբյուրները, բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող վայրերն օգտագործում էին, որպեսզի վերականգնեին իրենց առողջությունը, առույգությունը: Ըստ որում, կուրորտներ էին այցելում ոչ միայն հիվանդ, այլ նաև առողջ մարդիկ, որոնք պարզապես ցանկանում էին հանգստանալ:

Հունաստանում այդ նպատակով առավել հայտնի էին Էպիդավր վայրը և Կոս կղզին, իսկ Հռոմի բարձրաշխարհիկ հասարակությունը հանգստանում էր Բաի մերձծովյան կուրորտում:

Ժամանակները, սոցիալ–տնտեսական պայմանները փոխվում են, սակայն ճամփորդության նպատակները հիմնականում մնացել են նույնը:

Բնական պայմանների, գործոնների բուժիչ, կազդուրիչ նշանակությունն ինչպես և միշտ, այսօր էլ գրավում և հետաքրքրում են բոլորին, հատկապես հիվանդներին: Սակայն, ճշմարտությունն այն է, որ առայժմ բուժման նպատակով զբոսաշրջային հոսքերը դեռևս մեծաթիվ չեն, որքան որ ասենք հանգստի և զվարճությունների նպատակով կազմակերպվող հոսքերը: Սակայն, հատկանշականն այն է, որ աճի միտում ունեն, նկատելիորեն ընդլայնվում է նաև դրանց աշխարհագրությունը:

Հայտնի է, որ դեռ հնում պատմական Հայաստանին հարակից երկրներում մեծ համբավ ուներ Ջերմուկի հանքային ջուրը: Պատմական փաստերը ցույց են տալիս, որ նույնիսկ հեռավոր երկրներից այստեղ էին գալիս շատ հիվանդներ, ընդունում տաք ջրի լոգանք, բուժվում: Նրանք որպես շնորհակալական երախտիք մետաղե դրամներ էին գցում Ջերմուկի այն փոքրիկ ջրավազանը, որտեղ նրանք լոգանք են ընդունել: Ի դեպ, այդ ջրավազանն այսօր էլ Ջերմուկ քաղաքում պահպանվում է, որը հիրավի, պատմական կարևոր փաստ է:

Բուժառողջարարական զբոսաշրջության յուրահատկությունները

Բուժառողջարարական զբոսաշրջությունն ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին, անկախ հիվանդության տեսակից և բնույթից, առողջարանում (կուրորտում) մնալու տևողությունը պետք է լինի երեք շաբաթից ոչ պակաս: Միայն այդ դեպքում կարելի է ակնկալել բուժման ցանկալի արդյունք:

Հաջորդը, առողջարաններում (կուրորտում) բուժումը չափազանց թանկ է (չնայած վերջին տարիներին այդ նպատակով սկսեցին կազմակերպվել համեմատաբար մատչելի շրջագայություններ):

Սակայն, զբոսաշրջության այդ տեսակը հիմնականում նյութապես ապահով խավի համար է, որոնք բնականաբար նախընտրում են ոչ թե միօրինակ (ստանդարտ) բուժում, այլ գերադասում են ստանալ անհատական, ամբողջական, բազմակողմանի բուժում:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ առողջարաններ մեկնում են հիմնականում տարեց մարդիկ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդպիսիք մեկնում են առողջարաններ, հատկապես, երբ սրվում են խրոնիկական հիվանդությունները, երբ թուլացող օրգանիզմն այլևս ի վիճակի չէ դի-

մակայել ամենօրյա լարվածությանը թե՛ ընտանիքում, թե՛ կենցաղում: Ըստ որում, զբոսաշրջիկները բնականաբար ընտրություն են կատարում որոշակի հիվանդությունների բուժման համար մասնագիտացված առողջարանների կամ համալիր բուժում ունեցող կուրորտների միջև, որոնք նպաստում, օգնում են վերականգնել ուժերը և բարձրացնել օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը:

Վերջին տասնամյակներում բուժառողջարարական համաշխարհային զբոսաշրջության շուկան փոփոխությունների է ենթարկվում: Կարևոր է նաև, որ ավանդական բուժառողջարանները այժմ արդեն կարծես թե դադարում են ծառայել միայն տարեցներին: Մեծանում է առողջ ապրելակերպի նշանակությունը, և ամբողջ աշխարհում ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր ցանկանում են պահպանել իրենց առողջ, մարզական կեցվածքը, հոգևոր և ֆիզիկական առողջությունը: Դրանք, հիմնականում միջին տարիքի մարդիկ են, որոնք նախընտրում են թեև սահմանափակ ժամանակով, բայց ակտիվ հանգիստ: Շատ փորձագետների կարծիքով, սպառողների հենց այդ տեսակն էլ կնպաստի XXI դարի բուժառողջարարական զբոսաշրջության զարգացմանը և կլինի դրա հիմնական և մշտական պատվիրատուն:

Պահպանելով բուժիչ նշանակությունը՝ կուրորտային տնտեսությունները միաժամանակ իրենց այցելուների համար կազմում և մշակում են հետաքրքիր, բազմաբնույթ, մշակութային մարզական ծրագրեր: Նրանք առաջարկում են ընդլայնված ծառայությունների համակարգ՝ բուժման և ուժերի վերականգնման նպատակով: Համաշխարհային չափանիշով այժմ լայն չափերով զարգանում է ծովափնյա առողջարարական հանգիստը, որը համատեղում է բուժումը ծովային կլիմայի, ջրային և արևային լոգանքներով:

Կուրորտների հիմնական տեսակները

Սովորաբար, առանձնացվում են կուրորտների երեք հիմնական տեսակներ. ընդհանուր առողջարարական, ցեխաբուժման և կլիմայաբուժման: Ընդհանուր առողջարարական կուրորտում, որպես բուժման կարևոր և գլխավոր գործոն, օգտագործվում է բնական բուժիչ հանքային ջուրը: Բժշկական կարևոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնական հանքային ջրերով իրականացվող բուժման արդյունքները նույնքան, երբեմն ավելի արդյունավետ են, որքան սովորական դեղամիջոցներով բուժումը, ըստ որում, հանքային ջրաբուժումը բացառում է դեղամիջոցների անցանկալի ազդեցությունը և հետևանքները:

Հայաստանի Հանրապետության տարածքում բուժիչ հանքային ջրերի բազայի վրա կազմակերպված կուրորտների, հատկապես Ջերմուկի և Արզնու նշանակությունն այդ առումով, շատ խոշոր է:

Կուրորտների հաջորդ տեսակը, ինչպես նշվել է, ցեխաբուժումն է: Ժամանակակից առաջավոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ ցեխաբուժությունը դարձել է բուժման բարձր արդյունավետ եղանակ: Ահա թե ինչու տարեցտարի ավելի է մեծանում բուժման այս եղանակից օգտվողների թիվը:

Կլիմայաբուժման կուրորտները նույնքան բազմազան են, որքան որ բազմազան են կլիմայի տիպերը: Անտառային, լեռնային, ծովային կլիմայական ենթատիպերից յուրաքանչյուրին բնորոշ են եղանակակլիմայական գործոնների ամբողջության (ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, արևային ճառագայթումը և այլն) գնահատումը, արդյունավետությունը, որոնք էլ օգտագործվում են բուժման նպատակով: Այս գործոնների զուգակցմամբ և դրանց բուժական արդյունավետությամբ է պայմանավորված կուրորտի մասնագիտական ուղղությունը:

Կլիմայաբուժման կուրորտների առավել տարածված տեսակը ծովայինը կամ մերձծովյանն է: Աշխարհի չափանիշով ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ գերադասում են լինել ծովափին՝ համատեղելով զբոսաշրջությունը հանգստի և բուժման հետ:

Աշխարհում կլիմայաբուժման կուրորտների ընդհանուր թվաքանակում գերակշռում են ծովային կամ մերձծովյան կուրորտները, որոնք կազմում են 60.3%, լեռնային կուրորտների տեսակարար կշիռը 24.2% է, անտառայինը՝ 11.3% [20, 209]:

Հայաստանի Հանրապետությունում այդ տեսակետից շատ արդյունավետ են Դիլիջանի, Ստեփանավանի և Սևանի ավազանի կուրորտները:

Կան նաև այսպես կոչված կլիմայակումիսաբուժային կուրորտներ, որոնց տեսակարար կշիռը 4.2% է:

Դրանցից բացի կան նաև կուրորտներ, որոնք այսպես կոչված միջանկյալ դեր են խաղում և որտեղ փաստորեն բուժման համալիր մեթոդներ են կիրառում: Դրանք կարող են օգտագործել միաժամանակ մի քանի բնական բուժիչ գործոններ, օրինակ, հանքային ջրերը և ցեխը, կամ կլիման և հանքային ջրերը:

Ասենք, որ միջանկյալ կամ անցումային կուրորտների թիվը մեծ և համեմատաբար լայն տարածում ունեն Եվրոպայում, որոնք ավելի ու ավելի շատ զբոսաշրջիկներ են գրավում դեպի իրենց:

Եվրոպական երկրների շարքում սանատոր–կուրորտներ այցելողների թվով առաջինը Չեխիան է, իր խոշոր և աշխարհում հանրահայտ Կարլովի Վարի առողջարանով:

Չեխիայի այս հանքային ջուրն անզուգական հատկանիշներ ունի: Ավելորդ չենք համարում այստեղ նշել, որ Կարլովի Վարի հանքային բուժիչ ջրի հետ կարելի է միայն համեմատել Հայաստանի «Ջերմուկ» հանքավայրի ջուրը: Դրանք երկուսն էլ ունեն քիմիական նույն բաղադրությունը: «Ջերմուկի» մասին կխոսենք համապատասխան բաժնում:

Չեխիայի ազգային զբոսաշրջության կազմակերպության տվյալներով յուրաքանչյուր տարի բուժման նպատակով 50 հազար մարդ Կարլովի Վարի է այցելում աշխարհի ավելի քան 70 երկրներից, ինչպես նաև այստեղ է այցելում տարեկան շուրջ 2 մլն էքսկուրսանտ [20, 210]:

Կարլովի Վարիում գործում է հանքային ջրի 12 աղբյուր: Դրանցից առա-

վել խոշորը «Վոժիդլոն» է: Այն իրենից ներկայացնում է մի հսկա 12 մ բարձրություն ունեցող գեյզեր, որը մեկ րոպեում շատրվանում է մոտ 200 լիտր տաք ջուր: Շատ շատերն այցելում են Կարլովի Վարի ոչ միայն բուժվելու, այլև հիանալու բնական այդ անզուգական երևույթով:

Եվրոպայում Չեխիայից բացի համաշխարհային ճանաչում ստացած կուրորտներ կան նաև Լեհաստանում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Հունաստանում:

Այս բոլոր երկրներն էլ հանրահայտ են զբոսաշրջային–բուժառողջարանային կուրորտներով, հանգստավայրերով:

Հյուսիսային Եվրոպայում բուժառողջարանային զբոսաշրջությունը համեմատաբար թույլ է զարգացած: Այս տարածաշրջանում մերձծովյան կլիմայաբուժման կուրորտներով առանձնանում են հատկապես Դանիան և Նիդերլանդները: Իսկ մերձլճային կլիմայաբուժման կուրորտներով առավել հայտնի են Նորվեգիան, Ֆինլանդիան և Շվեդիան, որոնք, սակայն, դեռևս հիմնականում ներքին նշանակության կուրորտներ են:

Ամերիկա աշխարհամասում համաշխարհային բուժառողջարանային զբոսաշրջության շուկայում շարունակում է վճռական դեր խաղալ ԱՄՆ–ը:

Իսկ Մերձավոր Արևելքում բուժառողջարանային զբոսաշրջության հիմնական հոսքերը ձգվում են այսպես կոչված «կյանքի ճանապարհով» դեպի Մեռյալ ծով: Այստեղ այցելող միջազգային մեծաթիվ զբոսաշրջիկներն արդեն մինչև այցելությունն էլ համոզված են լինում, որ կստանան բարձրակարգ, ժամանակակից մեթոդներով բուժում:

Հարավարևելյան և Հարավային Ասիայի երկրներում բուժառողջարանային զբոսաշրջությունը նույպես դեռևս թույլ է զարգացած: Այս տեսակետից այժմ և հատկապես հեռանկարում ակնառու տեղ կզբաղեցնի Ավստրալիան, որը հարուստ է բնական այն բոլոր նախապայմաններով, ռեսուրսներով, որոնք անհրաժեշտ են բուժառողջարանային զբոսաշրջությանը: Ավստրալիայի մերձծովյան կլիմայաբուժման շատ կուրորտներ արդեն իսկ հայտնի են ամբողջ աշխարհում: Մասնավորապես, Դեյդրիմ–Այլենդը, Ոսկե Ափը, Կեռնսը հանգստի, բուժման, զբոսաշրջության համար լայն ճանաչում ունեցող կուրորտներ են:

Աֆրիկայում բուժառողջարանային զբոսաշրջությունը դեռևս դանդաղ է զարգանում: Այնուհանդերձ, այժմ այդ բնույթի համաշխարհային ճանաչում ստացած կուրորտներից է նրա հյուսիսային, Միջերկրական ծովի ափերին գտնվող և զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող Եգիպտոսը: Այդ բնույթի կուրորտներ կան նաև ՀԱՀ–ում, Մարոկկոյում, Քենիայում, Թունիսում:

ԳԼՈՒԽ IV

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԶԱՐԳԱՑՈՂ ԲՆԱԳԱՎԱՌ (ՃՅՈՒՂ)

1. Ժամանակակից զբոսաշրջության դերը տնտեսության զարգացման գործում

Զբոսաշրջության դերը ժամանակակից համաշխարհային տնտեսության, ինչպես նաև ազգային տնտեսությունների մեջ արագորեն աճում է: Փոփոխվում է նրա կառուցվածքը, կատարելագործվում է կառավարման համակարգը: Այն երկրներն ու տարածաշրջանները, որոնք նախկինում (ոչ վաղ անցյալում) առաջատար տեղ էին զբաղեցնում զբոսաշրջության մեջ, այժմ աստիճանաբար նահանջում են՝ զրավելով երկրորդ, երրորդ տեղերը: Դրանց փոխարինելու են գալիս նոր, առաջատար երկրներ: Ըստ որում, այդպիսի փոփոխությունները չեն կարող բացատրվել միայն ներքին գործոնների ազդեցությամբ: Դա փաստորեն մակրոտնտեսական վերլուծությունների բնագավառ է և բազմակողմանի ուսումնասիրությունների կարիք ունի:

Զբոսաշրջությունն այսպես թե այնպես, գործնականում իր ազդեցությունն է ունենում հասարակական կյանքի բոլոր ոլորտների և հատկապես տնտեսության վրա:

Տնտեսագիտական առումով զբոսաշրջությունը կարելի է դիտել, քննարկել.

1) Որպես հասարակական հարաբերությունների որոշակի ամբողջություն արտադրանքի թողարկման, փոխանակման և բաշխման ոլորտում:

2) Որպես տվյալ երկրի ժողովրդատնտեսական համալիրի մի մաս՝ ներառելով տնտեսական գործունեության նեղ մասնագիտական տեսակներ:

3) Որպես տնտեսագիտական գիտություն, որն ուսումնասիրում է զբոսաշրջությունը՝ որպես որևէ տարածաշրջանի կամ երկրի տնտեսության ոլորտ:

4) Որպես հասարակական գիտություն, որն ուսումնասիրում է զբոսաշրջային ապրանքի արտադրությունը, սպառումը, բաշխումը և փոխանակումը:

5) Որպես ժամանակակից տնտեսագիտական տեսություն, որն ուսումնասիրում է զբոսաշրջության բոլոր բնագավառներում, մարդկանց պահելակերպը, վարքագիծը՝ որպես տնտեսական սուբյեկտ, որպես զբոսաշրջային ծառայությունների սպառող:

Հիմնարար տնտեսագիտության տեսանկյունից, զբոսաշրջությունը տնտեսական համալիր է, որի զարգացումն առավելապես բացատրվում է համաշխարհային տնտեսական գործընթացներով և հարաբերություններով, քան ներքին պատճառներով: Սակայն, զբոսաշրջությունը նաև արագորեն զարգացող շատ երկրների տնտեսության աճի կարևորագույն խթանիչ է: Այն ապահովում է օտարերկրյա կապիտալի հոսք և նոր աշխատատեղերի ստեղծում:

Ժամանակակից զբոսաշրջությունը, որպես տնտեսական գործընթաց, բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով:

Նախ և առաջ, այն ունի ինդուստրիալ կառուցվածք: Այն հանդես է գալիս զբոսաշրջային ապրանքի և ծառայությունների տեսքով, որոնք հնարավոր չէ կուտակել և սովորական ապրանքի նման տրանսպորտով տեղափոխել:

6) Զբոսաշրջությունն ստեղծում է նոր աշխատատեղեր, շատ հաճախ հենց ինքն է առաջինը լինում նոր շրջանների յուրացնողը և ազգային տնտեսության արագորեն զարգացման խթանիչը:

Այն հանդես է գալիս նաև, որպես ազգային եկամուտների վերաբաշխող գործոն այն երկրների օգտին, որոնք զբոսաշրջային մասնագիտացում ունեն:

Քննարկվող ոլորտը բնութագրվում է արդյունաբերության բարձր մակարդակով և ներդրված կապիտալի արագ փոխհատուցմամբ, որը շատ կարևոր առանձնահատկություն է:

Այն հանդիսանում է նաև որպես ազգային եկամուտների աճի, զբաղվածության, տեղական ենթակառուցվածքների զարգացման և տվյալ տարածաշրջանի բնակչության կյանքի մակարդակի բարձրացման կարևոր պայմաններից մեկը:

Բացի դրանից, զբոսաշրջությունը հանդես է գալիս, որպես մշակութային ժառանգության և բնության պահպանության արդյունավետ միջոց, քանի որ հենց այդ տարրերն են կազմում այդ ոլորտի ռեսուրսային հիմնական բազան:

Եվ վերջապես, այս ոլորտի առանձնահատկություններից է նաև այն, որ զբոսաշրջությունը գործնականում համատեղում, կապակցում է տնտեսության բոլոր բնագավառները:

Այս առանձնահատկություններից ելնելով, կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջությունը բավականին մեծ ազդեցություն է թողնում յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության և առհասարակ յուրաքանչյուր տարածաշրջանի սոցիալ–տնտեսական զարգացման գործում:

Ըստ որում, այժմ էլ միջազգային, ինչպես նաև տարածաշրջանային զբոսաշրջության հիմնական կենտրոնները տեղաբաշխված են տնտեսապես,

մշակութային, գիտակրթական առումներով զարգացած երկրներում: Հենց այդ կենտրոններում էլ զբոսաշրջությունը դարձել է այսպես կոչված «միջին խավի» բարգավաճման խորհրդանիշներից մեկը և զանգվածային սպառման «ապրանք»:

Իսկ նախկին գաղութային, կիսագաղութային զարգացող երկրներում այժմ արագորեն սաղմնավորվում, շատ երկրներում վերելք է ապրում մուտք գործող զբոսաշրջությունը: Այս հանգամանքը կարևոր դեր է խաղում նշված խմբերի երկրների տնտեսության, սպասարկման ոլորտի զարգացման, եկամտի և բնակչության զբաղվածության աճի բնագավառում:

Այսպիսով, զբոսաշրջությունն արդեն իսկ կարևոր դեր է խաղում զարգացող երկրների ազգային տնտեսությունների զարգացման գործում: Իսկ միջազգային զբոսաշրջությունն այդ երկրներում զարգանում է հիմնականում արտասահմանյան ներդրումների հաշվին:

2. Զբոսաշրջությունը՝ որպես տնտեսական համընդհանուր գործընթաց

Զբոսաշրջությունը, որպես համընդհանուր տնտեսական գործընթաց, բնութագրվում է իր իսկ վիճակագրությամբ, ինչպես նաև հոսքերի մասին տեղեկատվությամբ, զբոսաշրջության միտումներով, նրա տարածաշրջանային կառուցվածքով, զբոսաշրջիկներ ընդունող երկրներով և այն երկրներով, որտեղից մեկնում են զբոսաշրջիկները:

Այս ամբողջ տեղեկատվությունները անընդհատ հավաքվում, վերլուծվում են և ամեն տարի հրատարակվում են Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կողմից:

Ամբողջ աշխարհում չափազանց մեծացել է և շարունակում է մեծանալ հետաքրքրությունը զբոսաշրջության նկատմամբ:

XX դարի կեսերից մինչև XXI դարի սկիզբը զբոսաշրջիկների թիվն աճել է մոտ 24 անգամ:

1951 թ. աշխարհի զբոսաշրջիկների թիվը կազմել է շուրջ 25 մլն մարդ, իսկ արդեն 2000 թ. այն հասել է մոտավորապես 600 մլն–ի [23, 24]:

Անկասկած, մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, թե զբոսաշրջությունն ինչպես է անդրադառնում աշխարհի բնակչության և ազգային տնտեսությունների սոցիալ–տնտեսական կյանքի վրա:

Տնտեսագիտական առումով կարևոր է այն հանգամանքը, որ զբոսաշրջությունից ստացվող եկամուտները աճում են ավելի արագ, քան զբոսաշրջիկների և այցելուների թիվը:

Հաշվարկները ցույց են տալիս, որ վերջին 50 տարվա ընթացքում յուրաքանչյուր զբոսաշրջիկից ստացվող եկամուտը մոտ 9 անգամ աճել է և 80–ից հասել մոտավորապես 700 դոլարի:

Ազգային տնտեսության մեջ զբոսաշրջության տեղի և դերի փոփոխության համար ընդունված է զբոսաշրջության հիմնական տնտեսական ցուցանիշները հարաբերակցել ազգային արտադրանքի ծավալները չափող, համադրող ցուցանիշների հետ:

ՄԱԿ–ի վիճակագրական ծառայությունն առաջարկում է, որպես համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հիմնական ցուցանիշ օգտագործել թողարկվող ապրանքի ու ծառայությունների ավելացված արժեքի գումարը: Այդ ցուցանիշներով էլ պետք է հաշվարկել զբոսաշրջությունից ստացվող եկամուտի գումարը տվյալ երկրի ՀՆԱ–ի մեջ:

Այդ ձևով հաշվարկելու դեպքում համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) զբոսաշրջության տեսակարար կշիռը (%–ով) Ավստրիայում կազմում է 8.5, Պորտուգալիայում՝ 6.5, Իսպանիայում՝ 4.2, Հունաստանում՝ 4.5, Մեծ Բրիտանիայում՝ 1.9, ԳՖՀ՝ 0.9, ԱՄՆ՝ 1.0 տոկոս [23, 24]:

Ի դեպ, զբոսաշրջության տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ այդ երկրների տեղը ավելի մեծ է: Մասնավորապես, Ավստրիայում այն կազմում է 8.9%, Նորվեգիայում՝ 6.7%, Շվեյցարիայում՝ 5.6%, Դանիայում՝ 5.4%, ԱՄՆ–ում՝ 3.2%:

Տնտեսագիտական առումով հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հանգամանքը, թե զբոսաշրջության տեղը ինչպիսին է ներմուծման մեջ:

Այդ նպատակով նպատակահարմար ենք համարում բերել մի շարք երկրների փաստացի տվյալները:

Մասնավորապես, զբոսաշրջության տեսակարար կշիռը Ավստրիայի ներմուծման համակարգում կազմում է 10.7%, Իսլանդիայում՝ 11, Շվեդիայում՝ 7.2, Շվեյցարիայում՝ 7.0, Նոր Զելանդիայում՝ 9.0% և այլն:

Նշենք, որ աշխարհի զարգացած բոլոր երկրներում այդ ցուցանիշը 6%–ից բարձր է:

Համաշխարհային զբոսաշրջությունն ունի վառ արտահայտված տարածքային տարբերակում: Ըստ որում, այս ոլորտի տարածաշրջանային տարբերություններն ավելի պարզորոշ են արտահայտված, քան կառուցվածքայինը:

Իրավացիորեն կարելի է պնդել, որ տնտեսական գործունեության ոչ մի ոլորտ տարածականորեն այդքան աշխարհագրական չէ, որքան որ զբոսաշրջությունը: Իսկ այդ հանգամանքն այն նախապայմաններից մեկն է, որը հնարավորություն է տվել, որպեսզի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունն անցկացնի զբոսաշրջության հատուկ շրջանացում:

Զբոսաշրջության տարածքային շրջանացման կառուցվածքի (այցելությունների և եկամուտների) վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել կայուն զարգացման հեռանկարները և անել համապատասխան եզրակացություններ: Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս հետևյալը.

ա) դանդաղ, բայց անշեղորեն կրճատվում է Եվրոպայի տեսակարար կշի-

ող, որպես մեծ թվով զբոսաշրջիկներ ընդունողի, ինչպես նաև՝ որպես զբոսաշրջությունից խոշոր եկամուտներ ստացողի

բ) այդ նույն միտումը նկատվում է նաև Ամերիկայում, հատկապես՝ ԱՄՆ–ում: Ըստ որում, ԱՄՆ–ում համեմատաբար արագ կրճատվում են եկամուտները, հանգստանալն այս երկրում դառնում է ավելի էժան, քան ասենք՝ Եվրոպայում:

գ) զբոսաշրջությունը շատ արագ է զարգանում Արևելյան Ասիայի և Օվկիանիայի երկրներում: Բնորոշ է այն հանգամանքը, որ այդ տարածաշրջանում միջազգային զբոսաշրջության զարգացումն ակնհայտորեն պայմանավորված է ոչ միայն ռեկրեացիոն բացառիկ ռեսուրսներով, այլ նաև սպասարկման չափազանց բարձր մակարդակով, որը շատ կարևոր գործոն է այս ոլորտի համար: Եվ այս բոլորը համեմատաբար քիչ ծախսերով, քան Եվրոպայում և ԱՄՆ–ում:

Միջազգային զբոսաշրջության վերջին տարիների այցելությունների տարածաշրջանային կառուցվածքի փոփոխությունները տոկոսներով (ըստ ՁՀԿ տվյալների)

աղյուսակ 1

Տարածաշրջանները	Փոփոխությունները %–ով	Տարածաշրջանները	Փոփոխությունները %–ով
Եվրոպա	1.9	Մերձավոր և Միջին Արևելք	– 4.0
Ամերիկա	4.1	Հարավային Ասիա	7.0
Արևելյան Ասիա և Օվկիանիա	7.6		

Միջազգային զբոսաշրջությունից ստացվող եկամուտների վերջին տարիների տարածաշրջանային կառուցվածքի փոփոխությունները տոկոսներով (ՁՀԿ տվյալները)

աղյուսակ 2

Տարածաշրջան	Փոփոխությունը %–ով	Տարածաշրջան	Փոփոխությունը %–ով
Եվրոպա	0.6	Աֆրիկա	– 4.0
Ամերիկա	8.9	Մերձավոր և Միջին Արևելք	– 12.0
Արևելյան Ասիա և Օվկիանիա	14.0	Հարավային Ասիա	11.0

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում մեկ զբոսաշրջիկի միջին ծախսերի փոփոխությունները վերջին տարիներին տոկոսներով (ԶՀԿ տվյալները)

աղյուսակ 3

Տարածաշրջանները	Փոփոխությունները %-ով	Տարածաշրջանները	Փոփոխությունները %-ով
Եվրոպա	71.2	Աֆրիկա	20.5
Ամերիկա	69.6	Մերձավոր և Միջին Արևելք	51.9
Արևելյան Ասիա և Օվկիանիա	79.0	Հարավային Ասիա	14.5

Բերված աղյուսակների տվյալները ցույց են տալիս, թե աշխարհի տարբեր տարածաշրջաններում ինչպիսի փոփոխություններ են տեղի ունենում զբոսաշրջության համակարգում՝ զբոսաշրջիկների այցելությունների թվի, այդ ոլորտից ստացվող եկամուտների, մեկ զբոսաշրջիկի միջին ծախսերի բնագավառում:

դ) Աֆրիկան աստիճանաբար զբոսաշրջիկներ է «հավաքում» ի հաշիվ զբոսաշրջությունից բարձր եկամտաբերություն ունեցող երկրների՝ անցնելով աշխարհում ամենաէժան զբոսաշրջային երկրի: Սակայն, էժան՝ դա դեռ չի նշանակում լավ: Զբոսաշրջիկների հոսքն Աֆրիկա կտրուկ կավելանա, եթե սպասարկման և ծառայությունների մակարդակը բարձրանա:

ե) Մարձավոր ու Միջին Արևելքը և Հարավային Ասիան դեռևս համարվում են զբոսաշրջային թույլ զարգացած ենթակառուցվածքով տարածաշրջաններ: Սակայն, Թուրքիայի, Կիպրոսի և այս տարածաշրջանի որոշ այլ երկրների կառավարությունների կողմից տարվող հովանավորչական քաղաքականության արդյունքում, միջերկրածովյան զբոսաշրջության զարգացման շնորհիվ արագորեն կբարձրանա Մերձավոր ու Միջին Արևելքի զբոսաշրջության մակարդակը:

Միջազգային Զբոսաշրջության Կազմակերպության կանխատեսումներով 2010 թ. միջազգային զբոսաշրջիկների թիվը կհասնի 1 մլրդ մարդու: Ըստ որում, այս ոլորտի միջին տարեկան աճի տեմպերը տարբեր տարածաշրջաններում, անկասկած, կլինեն խիստ տարբեր:

Եվրոպայում այն կկազմի մինչև 2.7%, Մերձավոր և Միջին Արևելքում՝ 4.0, Աֆրիկայում՝ 5.0, Ամերիկայում՝ 4.6, Արևելյան Ասիայում և Օվկիանիայում՝ 6.8, Հարավային Ասիայում՝ 4.1% [23, 27]: Վերջին տասնամյակում չափազանց բարձր են զբոսաշրջության աճի տեմպերը Թուրքիայում, Հոնկոնգում,

Պորտուգալիայում: Առավել ակնհայտ է աճը Թուրքիայում, որտեղ այն կազմում է մոտավորապես 20%:

Սեփական երկրից զբոսաշրջության ինդուստրիայի միջոցով կապիտալ արտահանող առավել խոշոր երկրներից են ԱՄՆ–ը, Գերմանիան, Ճապոնիան: Կարևոր է հիշատակել այն հանգամանքը, որ ԱՄՆ–ի զբոսաշրջիկները ճամփորդում են ամբողջ աշխարհում չափազանց անհոգ և ապահով: Նրանք հիմնականում օգտվում են «Հոլիդեյ–Ինն» հյուրանոցների ծառայությունից, որոնք պատկանում են ամերիկյան կապիտալին և որոնք տեղավորված են աշխարհի բոլոր մայրցամաքներում: Նրանց սպասարկում են «Ամերիկն–Էքսպրես» կրեդիտ քարտերով: Աշխարհի ցանկացած մայրաքաղաքում ամենից առաջ նրանք փնտրում են «Մակդոնալդս», որտեղ ստանում են իրենց համար «աշխարհում բոլորից լավ» «ֆաստ–ֆուդ»:

Այսպիսով, աշխարհի ցանկացած մասում, ամերիկայի զբոսաշրջիկներն ամենուրեք փնտրում են ամերիկյան ապրելակերպի նմանօրինակություն:

Վերջին տասնամյակում ցանկացած զբոսաշրջային երկրներում հատկապես չափազանց ավելացել է ճապոնացիների թիվը: Նրանք «զինված» նորագույն տեխնիկայով (տեսախցիկներ, լուսանկարչական ապարատներ) նոր հետաքրքրություններ և տպավորություններ են փնտրում: Ճապոնացիները ժամանակ չեն խնայում այցելելու էքսկուրսիոն հետաքրքիր վայրեր, մշակութային կենտրոններ՝ ծանոթանալու և վայելելու աշխարհահռչակ արվեստագետների ստեղծագործությունները:

Ի տարբերություն ամերիկացիների, ճապոնացիները Փարիզում կամ աշխարհի մյուս քաղաքներում երբեք չեն օգտվում ճապոնական ռեստորաններից, քանի որ դա կարող են անել նաև Ճապոնիայում, հակառակը, նրանք ցանկացած բնագավառում և ամենուրեք նորություններ և հետաքրքրություններ են փնտրում: Ճապոնացիները հիանալի զբոսաշրջիկներ են:

Զբոսաշրջային կազմակերպությունները հաստատ գիտեն, թե ինչ են ցանկանում ճապոնացիները և նրանց ցանկությունները դժվար չէ բավարարել:

Վերջին տարիներին կատարվող ուսումնասիրությունների և դրանց արդյունքում կատարվող հաշվարկների հիման վրա, կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջիկներ արտահանող երկրները գործնականում խմբավորվում են նույն հերթականությամբ և կարգով, ինչպիսին որ դրանց տնտեսական զարգացման մակարդակն է:

Եթե համեմատենք այդ ցուցանիշները, ապա կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջության ճանապարհով ԱՄՆ–ից, Գերմանիայից, Ճապոնիայից, Բելգիայից, Շվեդիայից, Ավստրալիայից, Դանիայից, Նորվեգիայից, Կորեայից, Ֆինլանդիայից և Սինգապուրից դուրս եկող գումարներն օգնում են լրացուցիչ եկամուտներ ստանալ և նոր աշխատատեղեր ստեղծել Ֆրանսիայում, Կանադայում, Հունգարիայում, Չինաստանում, Հունաստանում, Չեխիայում, Սլովակիայում, Պորտուգալիայում, Հոնկոնգում և Թուրքիայում: Ասվածից հետևում է, որ զբոսաշրջության միջոցով կամ դրա օգնությամբ կապիտալի անընդհատ

տեղափոխություն է կատարվում ինչպես տնտեսապես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների միջև: Դրանով պայմանավորված աշխարհի շատ երկրներ զբոսաշրջության զարգացման միջոցով կառուցում են իրենց տնտեսական, ազգային քաղաքականությունը, իջեցնում են հարկերը, ստեղծելով ազատ տնտեսական գոտի, հեշտացնում են այցելությունների թույլատրությունները, իրագործում են խոշոր ազգային և միջազգային ծրագրեր:

Այսպիսով, զբոսաշրջությունը գնալով ավելի ու ավելի է դառնում առավել արդյունավետ ինդուստրիալ համալիրներից մեկը, որը չի կարելի հաշվի չառնել հատկապես կառուցվածքային վերափոխումների միջոցով ազգային տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու համար: Նշենք, որ աշխարհում զբոսաշրջիկներ արտահանող առավել խոշոր հինգ երկրներն են ԳՖՀ, ԱՄՆ, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Ընդ որում, ընդամենը հինգ երկրները տալիս են համաշխարհային զբոսաշրջության ամբողջ մուտքերի 50%-ը:

Այս ոլորտի տնտեսական կարևորագույն գնահատականներից մեկն այն է, որ այն մյուս շուկաների համեմատությամբ կապիտալի համակենտրոնացման չափազանց բարձր ցուցանիշ է ապահովում: Պատահական չէ, որ հենց այդ նշված երկրներում են կազմակերպվում հիմնական զբոսաշրջային ցուցահանդեսները, տոնավաճառները և բորսաները: Դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ աշխարհի առաջատար զբոսաշրջային գործակալները ձգտում են իրենց կազմակերպությունների գրասենյակները տեղավորել հենց այդ երկրներում:

Խոշոր երկրների զբոսաշրջության ծախսերի ու եկամուտների հաշվեկշիռը վերջին տասնամյակում:

աղյուսակ 4

Երկրներ	Հաշվեկշռի փոփոխությունը	Երկրներ	Հաշվեկշռի փոփոխությունը
Իսպանիա	+ 14.3	Մեծ Բրիտանիա	– 4.8
Ֆրանսիա	+ 6.7	Գերմանիա	– 18.3
Իտալիա	+ 5.9	Ճապոնիա	– 18.7
ԱՄՆ	+ 1.9		

Կատարված հաշվարկներից և բերված փաստերից ելնելով կարելի է եզրակացնել, որ միջազգային զբոսաշրջության շուկայում տարաղրամի հիմնական մատակարարներն են՝ Ճապոնիան (–18.7 մլդ), Գերմանիան (–18.3 մլդ),

Մեծ Բրիտանիան (–4.8 մլդ): Միևնույն ժամանակ, միջազգային զբոսաշրջությունն առավել եկամտաբեր է Իսպանիայի (14.3 մլդ), Ֆրանսիայի (6.7 մլդ), Իտալիայի (5.9) համար [23, 34]:

Զբոսաշրջային ինդուստրիայի զարգացումը հնարավոր է շատ երկրներում: Սակայն, միշտ չէ, որ այն հանդիսանում է ամենաարդյունավետ ներդրումը տնտեսության մեջ:

Այդ առումով, օրինակ, Ճապոնիայում, Ավստրալիայում զբոսաշրջության ինդուստրիայի զարգացման պասիվությունը բացատրվում է տնտեսության այլ ճյուղերի չափազանց բարձր մակարդակի մասնագիտացմամբ:

Այդ երկրներից, միջազգային շուկայում լայն ճամաչում ունեն և խոշոր եկամուտներ են ստանում էլեկտրոնային տեխնիկայի, ամենատարբեր մեքենաների, բրդի, կաթի, յուղի արտահանմամբ, և հետևաբար զբոսաշրջության ռենտան ամենաեկամտաբերը չի կարող հանդիսանալ:

Եթե ճշմարտացի կերպով ասում և հիմնավորում ենք, որ զբոսաշրջությունը որոշակիորեն ազդում է երկրների ազգային տնտեսության, եկամուտի զարգացման ու աճի վրա, ապա նշանակում է, որ մենք պետք է որոշենք զբոսաշրջության ազդեցությունը մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վրա՝ մասնավորապես, համախառն ազգային եկամուտի, քաղաքացիների անձնական սպառման ու խնայողությունների, կապիտալ ներդրումների ու տնտեսությունը, սոցիալական կյանքը բնութագրող այլ ցուցանիշների վրա: Իսկ ընդհանուր առմամբ, տնեսագիտական գրականության մեջ տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցությունը որոշելու համար օգտագործում են այսպես կոչված մուլտիպլիկացիայի մոդելը:

Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է որոշել օգտակար գործուղության գործակիցը, որը ցույց է տալիս եկամուտների փոփոխությունները՝ կախված կապիտալ ներդրումների փոփոխությունից:

Մուլտիպլիկացիայի գործակիցն ազդում է տնտեսության բոլոր բնագավառների վրա:

Մասնավորապես, այն ազդում է՝ առևտրի, արտադրանքի թողարկման, եկամտի, բնակչության զբաղվածության, պետական եկամուտների և այլ բնագավառների վրա:

Զբոսաշրջության ուղղակի ազդեցությունը տվյալ երկրի ազգային տնտեսության վրա կարելի է գնահատել՝ որոշելով ոլորտի (զբոսաշրջության) բաժինը ներքին համախառն արդյունքի մեջ (ՀՆԱ):

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ միայն մի քանի կղզային պետություններում է, որ այդ ոլորտի բաժինը գերազանցում է ՀՆԱ-ի 30%-ը (Անտիգուա՝ 58%, Բահամյան կղզիներ՝ 52%, Բերմունդյան կղզիներ՝ 35%) [23, 44]:

Սակայն, անգամ զբոսաշրջությամբ հանրահայտ այնպիսի կղզային երկրներում, ինչպիսիք են Կիպրոսը, Մալթան, Ֆիջին դրանց ներքին համախառն արդյունքի մեջ զբոսաշրջությունից ստացվող եկամուտները չեն գերա-

զանցում 20%-ը: Դա բացատրվում է նրանով, որ զբոսաշրջությանը զուգահեռ, այդ երկրներում զարգանում են նաև տնտեսական այլ համակարգեր:

Չնայած դրան, այդ երկրների տնտեսության մեջ զբոսաշրջությունը մնում է որպես եկամտի ոչ պակաս աղբյուր:

Զբոսաշրջության զարգացման մակարդակը մեծապես պայմանավորված է զբոսաշրջության նկատմամբ երկրում ֆինանսական կարգով և պետության կողմից տարվող ֆինանսական և առհասարակ տնտեսական քաղաքականությամբ:

Հայաստանի Հանրապետությունն աշխարհի այն երկրներից է, որտեղ կա զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բազմազան նախապայմաններ, որոնք ռացիոնալ, նպատակային, պետական մակարդակով հոգացությամբ օգտագործելու դեպքում, զբոսաշրջությունը կարող է դառնալ հանրապետության ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը (այս մասին հանգամանորեն կխոսվի հաջորդ գլխում):

ԳԼՈՒԽ V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

1. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի գնահատումը, միջազգային զբոսաշրջության զարգացման առումով

Հայաստանը ժամանակակից մարդու ծագման օրրաններից է: Հայաստանի մասին առաջին գրավոր հիշատակությունները հանդիպում են դեռևս չորս հազար տարվա վաղեմություն ունեցող սեպագիր արձանագրություններում:

Օտարները մեր երկիրն անվանում են Արմենիա, Արմանա, Արմենի և այլն:

Հայաստան աշխարհը և հայերի բնակության սահմանները հիմնականում համընկել են Հայկական լեռնաշխարհ կոչվող ֆիզիկաաշխարհագրական մարզի հետ, որը զբաղեցնում է շուրջ 400 հազ. կմ² տարածք: Ի դեպ, Հայկական Լեռնաշխարհ և Մեծ Հայք հասկացությունները տարածական առումով չպետք է շփոթել:

Հայաստան պետության սահմանները պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր են եղել:

Տիգրան Մեծի տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանը ձգվել է Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով և Կովկասյան լեռնաշղթայից մինչև Միջագետք: Պատմական Հայաստանի տարածքը կազմել է ավելի քան 300 հազ կմ²:

Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքը 29.8 հազ. կմ² է: Այն կազմում է պատմական Հայաստանի տարածքի շուրջ 1/10 մասը: Հայաստանի Հանրապետությունն ընկած է Եվրասիա մայրցամաքի հարավարևմտյան մասում: Աշխարհագրական առումով այն պատկանում է Ասիա աշխարհամասին ու Արևելքին, մինչդեռ պատմամշակութային առումով ժողովրդի մտածելակերպով ու հոգեբանությամբ՝ Արևմուտքին՝ եվրոպական քաղաքակրթությանը:

Հայաստանի աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն գտնվել է տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում՝ հանդիսանալով կամուրջ Արևմուտքի ու Արևելքի, Հյուսիսի ու Հարավի միջև: Ճանապարհորդության, առևտրի, զբոսաշրջության համար նպաստավոր դիրք է զբաղեցրել դեռ վաղ անցյալում:

Այսօրվա Հայաստանի Հանրապետությունն զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան փոքր մասը միայն: Նրա տարածքը գտնվում է հյուսիսային լայնության 38.5 և 41.18 աստիճանների և արևելյան երկայնության 43.3 և 46.37 աստիճանների միջև: Հյուսիսային մասում այն սահմանակից է Վրաստանին (որի հետ սահմանագծի երկարությունը 196 կմ է), նրա արևելյան մասում գտնվում է 1991 թ. սեպտեմբերի 2–ին անկախություն հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (որի տարածքը հիմնականում համապատասխանում է Մեծ Հայքի 15 նահանգներից մեկի՝ Արցախի տարածքին), հյուսիսարևելյան նասում սահմանակից է Ադրբեջանին, հարավային մասում՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը (որը բռնակցվել է Ադրբեջանին և որը եղել է Հայաստանի անքակտելի մասը): Հարավային և հարավարևմտյան մասում ՀՀ սահմանակից է Թուրքիային (որի հետ սահմանագիծը 280 կմ է), իսկ հարավարևելյան մասում՝ Իրանին (որի հետ սահմանագիծը 42 կմ է):

Հանրապետության սահմանագծի ընդհանուր երկարությունը կազմում է 1431 կմ: Ամենամեծ ձգվածությունը 360 կմ (հյուսիսարևմտյան ծայրից հարավարևելյան ծայր), արևմուտքից արևելք ձգվածությունը ամենալայն հատվածում 200 կմ է, իսկ ամենաեղ հատվածում՝ 26 կմ:

Հայաստանի Հանրապետությունն օվկիանոսներից և ծովերից գտնվում է բավականին մեծ հեռավորության վրա: Մասնավորապես, Կասպից ծովից այն հեռու է 193, Սև ծովից՝ 163, Միջերկրական ծովից՝ 750, Պարսից ծոցից՝ շուրջ 1000 կմ:

Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները խիստ բազմազան են: Հայաստանի Հանրապետությունը ցամաքային պետություն է: Քանի որ այն հեռու է ծովերից և օվկիանոսներից, բնականաբար ուղղակիորեն չի կարող օգտվել դրանց առավելություններից (հաղորդակցության ուղիներից և բնական հարստություններից): Այս առումով, այն նպաստավոր պայմաններ չունի ծովափնյա զբոսաշրջության զարգացման համար:

ՀՀ դիրքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ բավականին հեռու է աշխարհի տնտեսապես բարձր զարգացած երկրներից: Այս հանգամանքը նույնպես բացասական ազդեցություն է թողնում զբոսաշրջության զարգացման վրա:

Սակայն, շատ առումներով ՀՀ աշխարհագրական դիրքը չափազանց նպաստավոր է զբոսաշրջության զարգացման համար, այդ պայմանները առավել նպաստավոր են եղել պատմական անցյալում:

Պատմական Հայաստանը, գտնվելով արևմուտքից արևելք, հյուսիսից հարավ տանող գլխավոր ճանապարհների հանգույցում, դեռևս հնուց առևտրատնտեսական հարաբերությունների մեջ է եղել հին աշխարհի մի շարք երկրների հետ: Այդ հարաբերությունների մասին են վկայում ոչ միայն գրավոր աղբյուրները, այլ նաև Հայաստանի պատմական մայրաքաղաքների, ամրոցների ու այլ բնակատեղերի պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ նմուշները, որոնց մեջ կան այլ երկրներից ներմուծված շատ առարկաներ ու իրեր:

Չնայած լեռնային դժվարամատչելի պայմաններին և շնորհիվ աշխարհագրական հարմար և շրջապատի նկատմամբ իշխող դիրքի՝ Հայաստանը, հնագույն ժամանակներից սկսած, իր լեռնանցքներով անցնող կարևոր ճանապարհներով Չինաստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի, Միջագետքի, Սև և Միջերկրական ծովերի ավազանների ու դրանցից հյուսիս գտնվող երկրների հետ հանդիսացել է կապող կարևոր օղակ: Հայաստանով են անցել մեծաթիվ ճանապարհորդներ, որոնք չնայած այն ժամանակ չեն կոչվել «զբոսաշրջիկներ», սակայն նրանց ճանապարհորդական գրավոր տպավորությունները, գրքերը Հայաստանի անզուգական բնությունը, բնակչությունը, կենցաղն ու տնտեսությունը բնութագրող գիտաճանաչողական մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Դեռ հնագույն ժամանակներում Հայկական լեռնաշխարհի ու նրա պատմությանը ծանոթանալու նպատակով, Հայաստանով ճանապարհորդել են Հերոդոտը, Քսենոֆոնը, Ստրաբոնը, Պլուտարքոսը, Պակիտոսը: Միջնադարյան Հայաստան են այցելել եվրոպացի շատ ճանապարհորդներ, որոնց թվում Մարկո Պոլոն, որն առաջինն է Եվրոպային հաղորդակից դարձրել Արարատի գեղեցկությանը: Ավելի ուշ Հայաստանում շրջագայել է ֆրանսիացի բուսաբան և բժիշկ Ժ. Տուրնեֆորը (1656–1708 թթ.), Ժ. Շարդենը, Ֆ. Պարրոտը, Հ. Աբեխխը, Հ. Լինչը: 1829 թ–ին Ա. Պուշկինը Թիֆլիսից այժմյան Պուշկինի լեռնանցքով, Գյումրի–Կարս երթուղով ուղևորվել է Էրզրում:

Հայաստանի տարածքով անցնող առևտրական բանուկ և կարևոր ճանապարհները խոշոր դեր են խաղացել նրա տնտեսության և քաղաքների զարգացման համար: Քաղաքներում կառուցվել են իջևանատներ, որոնք չափազանց անհրաժեշտ են եղել ճանապարհորդների, առևտրական քարավանների սպասարկման համար:

Պատմական Հայաստանի վրայով անցնող ամենանշանավոր ուղին Միջին Ասիան, Սև և Միջերկրական ծովերի ավազանների հետ կապող ճանապարհն էր: Սա այն գլխավոր ճանապարհն էր, որն Արևելքի և Արևմուտքի երկրները կապում էր իրար:

Մյուս ճանապարհները, սկսվելով Միջերկրական ծովի ափերից ու Եգիպտոսից, անցնում էին Սիրիայի վրայով, Եփրատ գետի հովտով և Արաքսի հովտում միանում Թեհրանից եկող նշված գլխավոր ճանապարհին: Այս ճանա-

պարհով Եգիպտոսը, Սիրիան և Միջերկրականի ափերին գտնվող երկրներն ու Բաբելոնը Հայաստանի վրայով կապվում էին Կասպից ծովի ավազանի ու հյուսիսային մի շարք երկրների նետ:

Չինաստանից, Հնդկաստանից և արևելյան այլ երկրներից ապրանքները Հայաստանի վրայով եվրոպական երկրներ էին արտահանվում այն նշանավոր ճանապարհով, որը կոչվում էր «Մետաքսի ճանապարհ», որի օրինակով «Մետաքսի նոր ճանապարհ» անունն է ստացել Հարավային Կովկասով (և Հայաստանով) անցնող Հարավարևելյան Ասիան և Կենտրոնական Ասիան Եվրոպային միացնող ցամաքային ճանապարհը: Այսօր արդեն դրա (այսպես կոչված Տրասեկայի) զարգացմամբ շահագրգռված են ոչ միայն տարածաշրջանի երկրներն, այլև ԱՄՆ–ի և Արևմուտքի մյուս խոշոր, տնտեսապես հզոր երկրները:

Հին Հայաստան կատարած ճամփորդությունների համար խոշոր դեր են խաղացել Արտաշատը, Դվինը, Տիգրանակերտը, Անին: Մայրաքաղաք Արտաշատը կառուցված լինելով Արաքսի ափին՝ բերքաշատ Արարատյան հարթավայրում դարձել էր տարանցիկ (տրանզիտային) նշանավոր կենտրոն: Արտաշատն ունեցել է խոշոր և հարուստ քաղաքի համբավ: Այստեղ այցելած նշանավոր ճանապարհորդներից է եղել Պլուտարքոսը, որն այն անվանել է «Հայաստանի Կարթագեն» [14, 15]:

Տիգրան Մեծի տիրապետության ժամանակաշրջանում, երբ Հայաստանը ձգվում էր Կասպից ծովի, Կուր գետի ավազաններից մինչև Պաղեստին ու Միջերկրական ծով, նրա միջազգային նշանակությունն ավելի ընդլայնվեց, և ավելի մեծ թվով ճանապարհորդներ էին անցնում ու միաժամանակ հիանում, գայթակղվում Հայաստանի անզուգական բնությամբ և այդ ժամանակների համար արդեն ինքնատիպ ճարտարապետությամբ: Ի դեպ, Հայաստանի հռչակավոր, չքնաղ մայրաքաղաքներից մեկում՝ Անիում, կառուցված էին բազմաթիվ եկեղեցիներ, իջևանատներ, առևտրական կենտրոններ և այլ հարմարություններ, որտեղ կարելի էր տեսնել բազմաթիվ երկրներից, այդ թվում նաև Ռուսիայից եկած ճանապարհորդների, առևտրականների:

Միջին դարերում հատկապես արտաքին առևտուրն ընդարձակեց իր սահմանները, որը և նպաստեց մեծ թվով օտարերկրացիների այցը Հայաստան: Դրա վառ ապացույցներից են նաև պատմական Հայաստանի տարբեր մասերում մինչև այժմ կանգուն կամ կիսականգուն պահպանվող բազմաթիվ իջևանատները (քարվանսարաները): Այդպիսի հանրահայտ քարվանսարաներից մեկը վերականգնվել և պահպանվում է Հայաստանի Հանրապետության այժմյան Մարտունու և Եղեգնաձորի տարածաշրջանների սահմանագլխին՝ Սելիմի լեռնանցքում: Սելիմի քարավանատունը սպասարկում էր Մերձավոր և Միջին Արևելքից դեպի Արաքսի հովիտ, այստեղից էլ՝ դեպի Կուր գետի հովիտը ձգվող առևտրական ճանապարհով անցնող քարավաններին: Նման քարավանատների կիսականգուն շենքեր են պահպանվում Աշտարակի, Թալինի տարածաշրջաններում ու Հայաստանի այլ վայրերում:

Պատմական Հայաստանի շատ քաղաքներ՝ Արտաշատը, Դվինը, Անին, Կարսը, Վանը, Մանազկերտը, Արճեշը և շատ ուրիշ քաղաքներ միջազգային առևտրի նշանավոր կենտրոններ էին: Այս բոլոր քաղաքներում ամեն տարի կազմակերպվում էին տոնավաճառներ: Այս ավանդույթը շարունակվում է մինչև մեր օրերը, և Հայաստանի Հանրապետությունը վերջին տասնամյակներում նույնպես շարունակում է կարևոր դեր խաղալ որպես այդպիսի միջոցառումների կազմակերպիչ: Միայն 1978–1983 թթ. հանրապետությունում կազմակերպվել են 28 միջոցառումներ (ցուցահանդեսներ, սիմպոզիումներ և այլն):

1984 թ–ից հետո ևս Երևանում կազմակերպվել են միջազգային խոշոր ցուցահանդեսներ, տոնավաճառներ: Դրանց մասնակցել են ԳԴՀ–ի, Չեխիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Շվեյցարիայի, Շվեդիայի և Նիդերլանդների ֆիրմաներն ու կազմակերպությունները:

Հայաստանում միայն վերը նշված ժամանակաշրջանում կազմակերպված ցուցահանդեսներին ու միջոցառումներին մասնակցել են 47 երկրների 176 ֆիրմաներ, իսկ այդ կապակցությամբ Հայաստան են ժամանել արտասահմանյան ֆիրմաների 1240 ներկայացուցիչներ [14, 178]:

Սակայն, պետք է նշել, որ նախկինում առևտրականները, ճանապարհորդները, հետագայում արդեն զբոսաշրջիկները Հայաստան էին այցելում ոչ միայն նպաստավոր, տարանցիկ աշխարհագրական դիրքի պատճառով, այլև ծանոթանալու Հայաստանի պատմական անզուգական հուշարձաններին, արդյունաբերության, գիտության և հատկապես մշակույթի նվաճումների հետ: Արդեն 1980–1985 թթ. միջին հաշվով տարեկան ավելի քան 300 հազար արտասահմանյան զբոսաշրջիկներ են այցելել Հայաստան: Ընդ որում, հանրապետությունում զբոսաշրջային հարմարավետ հանգրվանների, բարեկարգ երթուղիների ստեղծման, սպասարկման մակարդակի զգալի բարձրացման հետ այցելությունները մեծ չափով ավելացել են:

Եթե 1961 թ. Հայաստան է այցելել օտարերկրյա (առանց ԽՍՀՄ–ի) 1700 զբոսաշրջիկ, ապա 1980 թվականին աշխարհի 82 երկրներից ավելի քան 50 հազար զբոսաշրջիկ է այցելել հանրապետություն: Հետագա տարիներին դրանց թիվը զգալիորեն ավելացել է:

Հայաստան այցելած զբոսաշրջիկները հիացմունքով են խոսում կյանքի բոլոր բնագավառներում հայերի ձեռք բերած հաջողությունների, պատմաճարտարապետական և բնական անզուգական հարստությունների մասին:

Ամերիկյան հանրահայտ նկարիչ Ռոքուել Քենտը գրել է. «Եթե ինձ հարցնեին, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է ավելի շատ հրաշքների հանդիպել, ես ամենից առաջ կտայի Հայաստանի անունը: Ակամայից զարմանում ես, որ աշխարհի այս փոքրիկ անկյունում կարելի է հանդիպել այնպիսի հուշարձանների և այնպիսի մարդկանց, որոնք կարող են դառնալ ամբողջ աշխարհի զարդն ու հպարտությունը: Երիցս կեցցե՛ս դու, հո՛ղ հայկական, տաղանդների՛ օրրան, հրաշագործների՛ օրրան» [14, 180]:

Այսօր էլ իր տարածքով պատմական Հայաստանի 1/10 զբաղեցնող Հայաստանի Հանրապետությունը շարունակում է աշխարհագրական և քաղաքական առումով նպաստավոր դիրք զբաղեցնել և դրանով իսկ չափազանց մեծ հետաքրքրություն ներկայացնել և իր վրա բևեռել գեր պետությունների ուշադրությունը:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Եվրոպան՝ Կենտրոնական ու Հարավային Ասիային և Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող միջազգային ուղիների խաչմերուկում: Հայաստանի Հանրապետության տարածքով անցնում են Թուրքիան՝ Իրանին, Ադրբեջանին ու Կասպից ծովի ավազանին, ինչպես նաև Հյուսիսային Կովկասը և Սև ծովը՝ Իրանին ու արաբական երկրներին կապող երթուղիներն ու գլխավոր ավտոմոբիլային ճանապարհները:

Հայաստանի Հանրապետությունն ամբողջ Կովկասի և Մերձավոր Արևելքի հետ միասին գտնվում է Ռուսաստանի, ԱՄՆ–ի, Թուրքիայի ու Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման ոլորտում:

Վերջին տասնամյակում տարածաշրջանում առկա է քաղաքական անկայունությունը, որը լուրջ դժվարություններ ու խոչընդոտներ է առաջացրել Հայաստանի Հանրապետության տնտասական զարգացման և դրա հետ պայմանավորված զբոսաշրջության զարգացման համար:

Չնայած այդ ժամանակավոր դժվարություններին, տնտեսության կայունացման հետ միասին, արդեն նկատելի տեղաշարժեր են կատարվում հանրապետության միջազգային զբոսաշրջության աշխուժացման բնագավառում (այդ մասին կխոսվի ստորև):

2. Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության զարգացման բնական նախապայմանները

Հայկական լեռնաշխարհն, իրավամբ, անվանում են «լեռնային կղզի»: Այն իր հարակից տարածաշրջանների նկատմամբ ավելի բարձր դիրք ունի: Մասնավորապես, Արաբական ու Անատոլիական բարձրավանդակներից Հայկական լեռնաշխարհը բարձր է 500–700 մ–ով:

Հայկական լեռնաշխարհը տիպիկ հրաբխային երկիր է: Հրաբխականությունը ընդգրկել է հատկապես լեռնաշխարհի կենտրոնական մասը, որտեղ գոյացել են հրաբխային հզոր լեռներ, լեռնազանգվածներ, հրաբխային կոներ ու լավային սարավանդներ: Ըստ որում, այստեղ լեռնակազմական երևույթները դեռևս շարունակվում են: Դրա խոսուն վկաներն են Նեմրութ և Թոնդրակ գործող հրաբուխները և հաճախակի տեղի ունեցող երկրաշարժերը: Նեմրութի վերջին հզոր ժայթքումները տեղի են ունեցել 1441–1442 թթ.:

Ինչպես ասվեց, շարունակվող լեռնակազմական պրոցեսների մասին են վկայում պարբերաբար կրկնվող երկրաշարժերը:

Հայ պատմիչների վկայությամբ վերջին մեկուկես հազարամյակում այստեղ տեղի են ունեցել բազմաթիվ ավերիչ երկրաշարժեր: Մասնավորապես, Եփրեմ Էդեսացու վկայությամբ 341 թ–ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը մեծ վնասներ է հասցրել Հայոց աշխարհին:

735 թ–ին շատ ուժեղ և ավերիչ երկրաշարժ է տեղի ունեցել Վայքում: Հայ պատմաբան Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ այն տևել է 40 օր: Այդ երկրաշարժի հետևանքով ավերվել են բազմաթիվ բնակավայրեր, այդ թվում նաև Եղեգիս գետի հովտում եղած պատմական Մոզ քաղաքը, որտեղ զոհվել են շատ մեծ թվով բնակիչներ [27, 16]: Հենց այդ ողբերգությունց հետո է, որ այդ տարածաշրջանը կոչվեց Վայոց Ձոր: Ի դեպ, Եղեգիս գետի հովիտն իր բնական անկրկնելի գեղեցկություններով զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Արդեն ավարտվել և 2003 թվականին շահագործման է հանձնվել Եղեգնաձորից Եղեգիսի հովտով դեպի Սևանի ավազան անցնող ճանապարհի վերակառուցումը: Այդ ժամանակակից բարեկարգված մայրուղու վրա է նաև միջնադարյան հանրահայտ Սելիմի քարավանատունը:

IX դարի վերջերին երկրաշարժից մեծ վնասներ է կրել Արաքս գետի ձախ ափին գտնվող պատմական Հայաստանի մայրաքաղաքը՝ Դվինը:

1319 թ–ին երկրաշարժն ավերել է նաև պատմական Հայաստանի մյուս մայրաքաղաքը՝ Անին: Վերջինս հայտնի իր «հազար ու մի եկեղեցիներով», տաճարներով, հզոր պարիսպներով, հայ ճարտարապետական մտքի գլուխգործոցներով (նրանց մի մասը այսօր էլ կանգուն կամ կիսավեր վիճակում են): Միջնադարյան Հայաստանի հանրահայտ մայրաքաղաք Անի քաղաքի փլատակները գտնվում են Արևմտյան Հայաստանում, Ախուրյան գետի աջ ափին և հանդիսանում են շատ կարևոր զբոսավայր:

Ավերիչ երկրաշարժերն իրենց փոքր ու մեծ հզորությամբ շարունակվում են մինչև մեր օրերը: Վերջին ամենաուժեղ և ավերիչ երկրաշարժը տեղի ունեցավ 1988 թ–ի դեկտեմբերի 7–ին Հայաստանի Հանրապետությունում, որի էպիկենտրոնը Սպիտակ քաղաքն էր: Սա Կովկասի նորագույն պատմության մեջ ամենախոշոր երկրաշարժն էր:

Հետաքրքիր է, որ բնության այդ հզոր ուժերը կարող են ոչ միայն քանդել, ավերել, ահուսարսափ պատճառել, այլև ընդունակ են ստեղծել, արարել, լույս աշխարհ բերել բնական այնպիսի անզուգական կոթողներ, անկրկնելի հրաշքներ, որոնցով այդքան հարուստ է Հայկական լեռնաշխարհը: Բնության ստեղծած հրաշալիքներից են Արարատ սուրբ լեռը և Վանա լիճը, Արագածն ու Սևանը, Ուրմիա լիճը, Գեղամա լեռները, Բյուրակն կոչվող լեռան լանջերից բխող բյուրավոր ջրառատ աղբյուրները, Նեմրութ լեռը, անընդհատ ծխացող Թոնդրակը, Սիփան լեռը, Սարդարի աղբյուրը, Որոտանի կիրճը, լեռնային արագահոս գետերն ու գահավիժող ջրվեժներն ու բնության ստեղծած էլի շատ ու շատ գլուխգործոցներ, հրաշագեղ կոթողներ, որոնցով հպարտանում ու հիանում է ոչ միայն հայ ժողովուրդը, այլև աշխարհի ցանկացած անկյունում

ապրող և տարբեր ազգության մարդիկ, որոնց երբևէ բախտ է վիճակվել լինել Հայաստանում: Դրա մասին են վկայում մեծ թվով նշանավոր գիտնական ճանապարհորդների, այցելուների վկայությունը, հիշատակություններն ու տպավորությունները, բարի խոսքն ու հիացմունքն, որ նրանք հայտնում են Հայաստանի, նրա չքնաղ ու անկրկնելի բնության մասին:

Ինչպես արդեն ասել ենք, Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասում: Այն տիպիկ լեռնային երկիր է: ՀՀ տարածքի կարևոր ֆիզիկաաշխարհագրական յուրահատկություններից մեկն այն է, որ հարակից տարածքների նկատմամբ այն ավելի բարձր դիրք ունի: Նրա միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1837 մետր:

Ինչպես ամբողջ Հայկական լեռնաշխարհի, Հայաստանի Հանրապետության մակերևույթը նույնպես աչքի է ընկնում ռելիեֆի բազմապիսի ձևերով՝ երկնասլաց լեռնակատարներ, անդնդախոր կիրճեր, գեղատեսիլ հովիտներ, ինչպես նաև բարձրադիր սարահարթեր:

Դաշտավայրեր այստեղ չկան, ամենացածր վայրը Մեղրու կիրճն է և Դեբեդ գետի հովիտը, որոնք ծովի մակերևույթից ունեն 370–390 մ բարձրություն: Հանրապետության տարածքի ամենաբարձր կետն Արագած լեռան գագաթն է, որի բարձրությունը ծովի մակարդակից 4090 մ է: ՀՀ մակերևույթի առանձնահատկություններից մեկն այն է, որ բնութագրվում է բացարձակ բարձրությունների մեծ տարբերությամբ և կազմում է ավելի քան 3700 մ: Հանրապետության ամբողջ տարածքի միայն 2%–ն է, որ գտնվում է ծովի մակարդակից մինչև 800 մ բարձրության վրա: ՀՀ տարածքի շուրջ 60% ունի ծովի մակարդակից մինչև 2000 մ բարձրություն: Դրանք տնտեսական յուրացման համար առավել նպաստավոր տարածքներ են և այստեղ է կենտրոնացված հանրապետության բնակչության հիմնական մասը:

Հանրապետության տարածքի գրեթե 40%–ը 2000 մ–ից բարձր է և տնտեսական գործունեության համար անբարենպաստ: Սակայն, չօգտագործված և անաղարտ բնությունը էկոլոգիական զբոսաշրջության զարգացման համար բավական հետաքրքրություն է ներկայացնում: Ի դեպ, էկոլոգիական զբոսաշրջությունը ժամանակակից միջազգային զբոսաշրջության համակարգում ավելի ու ավելի ծանրակշիռ տեղ է զբաղեցնում:

Մեր կարծիքով էկոզբոսաշրջությունը առավելապես նպատակահարմար է զարգացնել Սյունիքում, Վայոց Ձորում, Սևանի ավազանում, Լոռու և Արագածոտնի մարզերում, որտեղ կան բնական ու մարդածին բազմազան հրաշալիքներ:

Ընդհանուր առմամբ հանրապետության տարածքի ընդամենը 18%–ն է հարթավայր, իսկ մնացած 82%–ը փաստորեն լեռնային է:

ՀՀ ռելիեֆի բազմազանության մեջ գերակշռում են ծալքավոր ու հրաբխային լեռները, հրաբխային սարավանդները:

Հանրապետությունում գերակշռում են միջին և բարձր լեռները, որոնք հե-

տաքրքրություն են ներկայացնում նաև զբոսաշրջության առումով: Դրանք աչքի են ընկնում ռելիեֆի բազմապիսի ձևերով՝ երկնասլաց լեռնակատարներ, հրաբխային գեղեցիկ կոներ, միջլեռնային գոգավորություններ, մերձգագաթային պարզ և անուշահամ լճեր և այլ ձևեր: Հայկական լեռնաշխարհի այս հատվածում՝ Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքում ռելիեֆի զգալի մասը նույնպես ձևավորվել է հրաբխային գործունեությամբ: Սակայն, այստեղ այժմ գործող հրաբուխներ չկան, բայց շատ են հանգած հրաբուխները:

Հանրապետության արևմտյան մասում՝ Ախուրյան և Քասաղ գետերի միջև է գտնվում վեհաշուք, ծիրանավառ թագուհի Արագած լեռնազանգվածը, որը զբոսաշրջության, լեռնագնացության համար մեծ հետաքրքրություն ունի:

Այն ունի աղեղաձև դասավորված չորս գագաթ, որոնցից հյուսիսայինը հանրապետությունում ամենաբարձր կետն է (4090 մ): Երկրաբանական անցյալում Արագածն եղել է ակտիվ գործող հրաբուխներից մեկը: Նրա խառնարանն ունի 550 մ խորություն և 3 կմ լայնություն:

Արագածի գագաթին են գտնվում անուշահամ, Ավ. Իսահակյանի արտահայտությամբ «լույս–փերուզ» Քարի լիճը, ինչպես նաև մեծ ու փոքր, պերճ ոսկեհյուս գոտիներ հիշեցնող բազմաթիվ առուներ:

Հայաստանի Հանրապետությունում էկոզբոսաշրջության կազմակերպման համար առավել հետաքրքիր երթուղիներից մեկն Արագածի գագաթ բարձրանալն է:

Արագածի լանջերին գտնվող լճերն ամռան ամիսներին զբոսաշրջիկների համար կարող են հանդիսանալ կարճաժամկետ հանգստյան վայրեր, իսկ ձմռան ու գարնան ամիսներին նրա ձյունաշատ լանջերը դահուկային մարզաձևի սիրահարների համար անփոխարինելի կլինեն: Լեռնագնաց զբոսաշրջիկների համար առավել հրապուրիչ են նրա ձյունածածկ գագաթներ բարձրանալը:

Հրապուրիչ կլինի Քարի լճի ափին զբոսաշրջության փակ համալիրի ստեղծումը, սպասարկման մարզային, պարերի, տարբեր տեսակի խաղերի կազմակերպման և այլ ձևերով: Հրապուրիչ կլինի այստեղ այդ համալիրի համակարգում խաղատների կազմակերպումը արտասահմանյան շատ երկրների համանման արդեն իրենց արդարացրած, մեծ եկամուտ բերող կենտրոնների օրինակով: Այս համալիրը, որը կգործի ամբողջ տարին, կարևոր դեր կխաղա նաև զգալի չափով աշխատատեղերի ստեղծման գործում:

Զբոսաշրջության առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Գեղամա, Ջավախքի ու Վարդենիսի հրաբխային լեռնաշղթաները:

Գեղամա լեռնաշղթան գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում: Այն ձգվում է Սևանա լճի արևմտյան ափին զուգահեռ: Շատ հետաքրքիր է, որ այս լեռնավահանի առանցքային մասում բարձրանում են մոտ երկու տասնյակ հրաբխային հրաշագեղ կոներ՝ մինչև 500 մ հարաբերական բարձրությամբ: Դրանցից ամենաբարձրն Աժդահակ լեռն է

(3598 մետր բացարձակ բարձրությամբ): Գեղամա լեռնաշղթայի գրեթե բոլոր կոնակերպ գագաթներն ունեն լավ արտահայտված խառնարաններ, որոնցից մի քանիսում գոյացել են լճեր: Իսկ վերջիններս էլ իրենց քաղցրահամ ջրերով ավելի են հետաքրքիր դարձնում բնական այդ հուշարձանները:

Գեղամա լեռների մերձգագաթային սարավանդի վրա է գտնվում բնության անզուգական ստեղծագործություններից մեկը՝ հրաբխային ծագման Ակնա լիճը: Այն շրջապատված է երիտասարդ հրաբխային կոներով և ալպյան մարգագետիններով: Ջուրը պարզ է, անուշահամ, լճի հայելում արտացոլվում են շրջակա լեռները և կապույտ երկնակամարը:

Բնության անկրկնելի և հազվադեպ երևույթներից են Արմաղանի հրաբխային խառնարանում առաջացած լճերը, ինչպես նաև գեղատեսիլ Աժդահակ լեռը:

Սրանք եզակի «զբոսաշրջային ռեսուրսներ» են, որոնցով այդքան հարուստ է մեր հանրապետությունը, և որոնց օգտագործումը զբոսաշրջային մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել: Մասնավորապես, Գեղամա լեռների հրաբխային հետաքրքիր ձևեր, նշված քաղցրահամ ջրեր ունեցող լճերը, ձմռան և գարնան ամիսներին ձյան առկայությունը և այդտեղից մի կողմից դեպի Սևանա լիճ, մյուս կողմից դեպի Արարատ և Արագած լեռները նայվող հրաշագեղ տեսարանները, մաքուր օդը զբոսաշրջային բնական տարրերի անզուգական համակցություն է: Այսպիսով, Գեղամա լեռների զբոսաշրջային այդ ռեսուրսները հնարավոր է օգտագործել տարվա բոլոր եղանակներին, ստեղծելով ճոպանուղի Սևանի ափից մինչև լեռների բարձրադիր մաս, ինչպես նաև տեղում կազմակերպելով կարճաժամկետ հանգրվան՝ սպասարկման հիմնական ձևերով: Սևանա լճի հարավային ափին զուգահեռ ձգվում է ևս մեկ հրաբխային լեռնաշղթա՝ Վարդենիսի լեռները, որոնք գոյացնում են վահանաձև գեղատեսիլ համակարգ: Այն ջրբաժան է Սևանա լճի և Արփա գետի ավազանների միջև: Դրա ջրբաժան մասը նեղ է և մասնատված հնագույն սառցապատումների խորը տաշտահովիտներով: Դեպի Արփա գետի ավազանը նրա լանջերն իջնում են զառիթափ կերպով, իսկ հյուսիսում՝ համեմատաբար մեղմաթեք փեշերով ցածրանում են դեպի Սևանա լիճը:

Հայաստանի Հանրապետության տարածքում է գտնվում նաև Ջավախքի լեռնավահանի միայն հարավային մասը: Այստեղ նեղ ու ժայռոտ կատարային գոտու վրա բարձրանում են մի շարք հրաբխային գեղատեսիլ կոներ:

Հրաբխաէրոզիոն ռելիեֆի լավագույն օրինակն է Եղնախաղի լեռնավահանը, որը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության ռելիեֆի ձևերից են նաև ծալքավոր լեռնաշղթաները, որոնք Փոքր Կովկասի համակարգին պատկանող լեռնաշղթաներ են: Դրանցից հանրապետության տարածքում են գտնվում Վիրահայոց, Բազումի, Շիրակի, Գուգարաց, Միափորի, Փամբակի, Ծաղկունյաց, Արեգունու, Սևանի, Զանգեզուրի, Վայքի, Բարգուշատի, Մեղրու լեռնաշղթաները:

Սրանցից յուրաքանչյուրը յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, ինչպես բնատնտեսական առումով ընդհանրապես, այնպես էլ զբոսաշրջության տեսակետից՝ մասնավորապես:

Վիրահայոց լեռները ձգվում են Հայաստանի Հանրապետության հյուսիսային սահմանամերձ շրջանից մինչև Դեբեդ գետի հովիտը: Դրանք համեմատաբար մեղմաթեք լանջերով ցածրանում են դեպի Լոռու սարահարթ: Իսկ Լոռու սարահարթի եզրով ձգվում է Բազումի լեռնաշղթայի արևմտյան մասը: Նրա արևելյան մասը Վանաձորի մոտով անցնում է Փամբակ գետի կիրճից աջ և կոչվում է Հալաբի լեռնաշղթա: Բազումի լեռնաշղթայի արևմտյան հատվածում է գտնվում Պուշկինի լեռնանցքը (2038 մ), որով, մինչև նրա տակով թունելի կառուցումը, անցնում էր Վանաձոր – Ստեփանավան ավտոճանապարհը:

Բազումի լեռնաշղթայից հարավ–արևմուտք, որոշ չափով նրան զուգահեռ, մինչև Ախուրյան գետը ձգվում է Շիրակի լեռնաշղթան: Հալաբի լեռնաշղթայի Բովաքար լեռնագագաթի մոտից առանձնանում է Գուգարաց լեռնաշղթան, որը զառիվեր լանջերով ձգվում է հյուսիս՝ դեպի Դեբեդ գետի հովիտը: Լեռնաշղթայի արևելյան ճյուղավորությունները տարածվում են մինչև Աղստև գետի հովիտը:

Բազումի լեռնաշղթայից հարավ, դրան զուգահեռ ձգվում է Փամբակի լեռնաշղթան, որի բազուկները հարավ–արևելքում հասնում են մինչև Սևանի թերակղզի:

Փամբակի լեռնաշղթայի ճյուղավորումներից աչքի է ընկնում Ծաղկունյաց լեռնաշղթան, որն սկսվում է նրա միջին մասից և ձգվում է դեպի հարավ–արևելք՝ մինչև Հրազդան գետի հովիտը:

Փամբակի լեռնաշղթայի շարունակությունը դեպի հարավ–արևելք, Սևանա լճի հյուսիսարևելյան ափերին՝ մինչև Ճամբարակ, կոչվում է Արեգունի լեռնաշղթա: Վերջինիս շարունակությունը Սևանա լճի արևելյան ափերով կրում է Սևանի լեռնաշղթա անվանումը: Սևանի լեռնաշղթայի Քաշաթաղ լեռնագագաթից դեպի հյուսիս–արևմուտք, Արեգունի լեռնաշղթային գրեթե զուգահեռ ձգվում է Միափորի լեռնաշղթան:

Հայաստանի Հանրապետության հարավարևելյան մասում, գրեթե միջօրեականի ուղղությամբ՝ Վարդենիսի լեռնաշղթայից հարավ՝ մինչև Արաքս գետի հովիտը, ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթան: Նրա ամենաբարձր կետը Կապուտջուղ լեռնագագաթն է (3904 մ), որը ՀՀ–ում Արագածից հետո երկրորդ բարձր լեռն է: Այս լեռնաշղթայի կարևորագույն լեռնանցքներից են Սիսիանի լեռնանցքը, որով Զանգեզուրը կապվում է Նախիջևանի հետ, և Որոտանի լեռնանցքը, որտեղով անցնում է Զանգեզուրից դեպի Վայք (Արփայի հովիտ) տանող ճանապարհը: Զանգեզուրի լեռնաշղթայի ճյուղավորումներից աչքի է ընկնում Վայքի լեռնաշղթան, որը նրա հյուսիսային մասից ձգվում է դեպի արևմուտք՝ հանդիսանալով ջրբաժան Արփա և Նախիջևան գետերի միջև:

Զանգեզուրի լեռնաշղթայից դեպի հարավ–արևելք են ձգվում Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները, որոնք համապատասխանաբար ջրբաժան են Որոտան ու Ողջի և Ողջի ու Մեղրի գետերի միջև:

Նշված այս բոլոր լեռնաշղթաներն իրենց երկրաբանական կառուցվածքով, գեղատեսիլ, անդնդախոր կիրճերով, լեռնային զուլալ գետերով և աղբյուրներով զբոսաշրջային մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Այս տեսակետից անզուգական են հատկապես միջլեռնային Փամբակ և Դեբեդ, Աղստև, Արփա, Որոտան գետերի կիրճերը: Շատ կարևոր է, որ այդ վայրերում բնական ռեկրեացիոն գեղատեսիլ հուշարձանները զուգորդվում են մարդածին հուշարձանների, հայկական պատմաճարտարապետական կոթողների հետ, որոնք անկասկած, միջազգային զբոսաշրջության համար խոշոր առավելություններ են:

Բոլոր հարթ տարածությունները 500 մ–ից բարձր են, այսինքն սարավանդներ են, որոնք գրեթե բոլորն եզրավորված են բարձր լեռներով:

Հայաստանի Հանրապետության տարածքում առավել նշանակավոր են Շիրակի, Աշոցքի, Լոռու սարավանդները:

Համեմատաբար փոքր են Ապարանի, Թալինի, Կարմրաշենի, Եղվարդի, Կոտայքի սարավանդները: Հայ ժողովրդի համար առանձնահատուկ դեր ունի Արարատյան դաշտը:

Ռելիեֆային առանձնահատուկ հետաքրքրություն ունի Սյունիքի (Ղարաբաղի) բարձրավանդակը:

Հանրապետության տարածքի ֆիզիկաաշխարհագրական այդ ձևերը, այդտեղ առկա պատմաճարտարապետական կոթողներով նույնպես զբոսաշրջային մեծ հետաքրքրություն են ներկայացնում. փաստորեն այստեղ բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսները կողք կողքի են և զուգորդվում են, հետևաբար զբոսաշրջային արդյունավետ նախապայման են:

Շիրակի դաշտը գտնվում է հանրապետության հյուսիս–արևմուտքում՝ Ախուրյան գետի միջին հոսանքի ավազանում: Այն պարփակված է հյուսիսում՝ Շիրակի, արևելքում՝ Փամբակի լեռնաշղթաների, հարավ–արևելքում՝ Արագած լեռնազանգվածի միջև: Արևմուտքում այն աստիճանաբար ձուլվում է Կարսի սարահարթին: Ծովի մակարդակից բարձր է 1550–1600 մ:

Շիրակի դաշտից հյուսիս՝ Աշոցքի սարավանդն է, որն ունի 1900–2100 մ բարձրություն: Սարահարթի արևմտյան մասում գտնվում է Արփա լիճը, որից սկիզբ է առնում Ախուրյան գետը:

Լոռու գեղատեսիլ սարահարթը գտնվում է հանրապետության հյուսիսում: Այն շրջապատված է արևմուտքում՝ Ջավախքի, հարավում՝ Բազումի լեռնաշղթաների և հյուսիս–արևելքում՝ Վիրահայոց լեռներով: Բարձրադիր (1400–1600) հարթավայր է, որի տարածքում Ձորագետ և Տաշիր գետերը միլիոնավոր տարիների ընթացքում փորել են խոր կիրճեր:

Ապարանի սարավանդը գտնվում է Շիրակի դաշտից արևելք, Քասաղ գետի վերին հոսանքի ավազանում՝ արևմուտքում Արագած վեհաշուք, քառա-

գագաթ լեռնազանգվածի, արևելքում՝ Ծաղկունյաց անտառածածկ լեռնաշղթայի միջև ծ.մ. 1800–2000 մ բարձրության վրա:

Թալինի քարածածկ սարավանդը տեղադրված է Արագած լեռնազանգվածի և Ախուրյան գետի միջև՝ 1300–1800 մ բարձրության վրա: Այն ունի թույլ մասնատված բլրաթմբային մակերևույթ և ընդհանուր թեքություն՝ հարավ–արևմտյան ու հարավային ուղղությամբ:

Կարմրաշենի սարավանդը փաստորեն Թալինի սարավանդի շարունակությունն է Արագածի հարավ–արևմտյան փեշերին, ունի 1200–1500 մ բարձրություն, թույլ մասնատված բլրաալիքավոր մակերևույթ: Այն հարավ–արևելյան ուղղությամբ ցածրանալով՝ աննկատելիորեն ձուլվում է Արարատյան դաշտին:

Եղվարդի սարավանդը գտնվում է Հրազդան և Քասաղ գետերի միջագետքում՝ Արայի լեռ հրաբխային զանգվածից հարավ, 1200–1600 մ բարձրության վրա: Այն ունի թույլ ալիքավոր, բլրաշատ մակերևույթ և դեպի հարավ աստիճանաբար ցածրանալով՝ միանում է Արարատյան դաշտին:

Կոտայքի սարավանդը տարածվում է Եղվարդի սարավանդից արևելք՝ Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա հրաբխային լեռնաշղթայի արևմտյան ստորոտը: Այն հյուսիսից սահմանափակվում է Գութանասարի, հյուսիս–արևելքից՝ Հատիս լեռներով: Ունի 1200–1500 մ բարձրություն, թույլ մասնատված ալիքավոր մակերևույթ և ընդհանուր թեքություն դեպի հարավ–արևմուտք: Այս սարավանդի կենտրոնով է անցնում Երևան–Սևան բարեկարգ, զբոսաշրջային հույժ կարևոր նշանակություն ունեցող ավտոմայրուղին:

Արարատյան դաշտը գրավում է Արաքս գետի միջին հոսանքի հարթավայրային տարածքը: Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 800–1200 մ է: Դառը պատմական ճակատագրի բերումով, այժմ Հայաստանի Հանրապետությանն է պատկանում պատմական Հայաստանի սիրտը հանդիսացող Արարատյան դաշտի միայն ձախափնյա մասը (աջափնյա մասը բռնազավթված է և գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ):

Ռելիեֆային, զբոսաշրջության առումով մեծ հետաքրքրություն ներկայացնող Սյունիքի (Ղարաբաղի) բարձրավանդակը գտնվում է հանրապետության հարավ–արևելքում, Զանգեզուրի լեռնաշղթայից դեպի հյուսիս–արևելք՝ Որոտան և Հագարու գետերի միջև: Հետաքրքիր է նշել, որ սա ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի ամենաբարձր (հյուսիսում ծ. մ. ունի 2800–3200 մ բարձրություն) բարձրավանդակն է: Հրաբխային այս բարձրավանդակի մակերևույթին բնորոշ, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող ձևերից են Ծղուկ (3581 մ) և Մեծ Իշխանասար (3548 մ) լեռնազանգվածները:

Այդպիսի հետաքրքրություն են ներկայացնում նաև Սյունիքի բարձրավանդակի հարավ–արևմտյան և արևելյան լանջերին՝ ծ.մ. 1400–2400 մ բարձրության վրա գտնվող Եռաբլրի և Գորիսի սարավանդները, թեք, թույլ մասնատված գեղատեսիլ մակերևույթով:

Գորիսի շրջակայքում զբոսաշրջային առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում քարանձավային բնակատեղերն ու քարե բնական բազմազան հուշարձանները: Այդ առանձնահատկությունն այն է, որ այստեղ՝ Գորիսի շրջակայքում, Խնձորեսկ գյուղում արտասահմանյան զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում քարանձավային երկհարկանի բնակարաններն, իրենց օժանդակ հարմարություններով: Կարծում ենք, որ հետաքրքիր կլինի որպեսզի քարանձավային Խնձորեսկում էլ կազմակերպվի զբոսաշրջային կարճաժամկետ հանգրվաններ, հայկական ազգային սպասարկման ձևերով, ճաշատեսակներով, խաղաձևերով և այլն: Ի դեպ, Հունաստանում ավելի քան 3500 քարանձավներ կան, որոնք նախատեսված են զբոսաշրջիկների այցելությունների համար: Այսպիսի քարանձավներ կան ԱՄՆ – ում, Ֆրանսիայում, Հարավսլավիայում և այլ երկրներում, որոնք որպես զբոսաշրջային օբյեկտներ ամեն տարի մեծ եկամուտներ են բերում: Հայաստանի Հանրապետության տարածքի, հատկապես Գորիսի տարածաշրջանի նշված քարանձավային բնակավայրերն իրենց բնույթով նույնպես մեծ հետաքրքրություն են ներկայացնում և դրանք պետք է նախապատրաստել զբոսաշրջության նպատակով լայնորեն օգտագործելու համար:

3. Հայաստանի Հանրապետության կլիմայական առանձնահատկությունները զբոսաշրջության առումով

Զբոսաշրջության կազմակերպման, զարգացման համար շատ կարևոր նշանակություն ունեն կլիմայական բարենպաստ պայմանները:

Հայաստանի Հանրապետության կլիմայական պայմանների ձևավորման վրա խոշոր ազդեցություն են թողնում հանրապետության մակերևույթի տիպիկ լեռնային բնույթը, խիստ կտրտվածությունը, ծովային ավազաններից հեռու լինելը:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային մասում: Այստեղ արևը կեսօրին հորիզոնի նկատմամբ ունի համեմատաբար բարձր դիրք: Արեգակնային ճառագայթման ուժգնությունը բավականին մեծ է և ըստ տեղանքի բարձրության՝ աճում է: Այն ամենամեծն է Արագածի գագաթամերձ մասում:

Արեգակի բարձրությունը հորիզոնի հարթության նկատմամբ տատանվում է 27°–ից (դեկտեմբեր) մինչև 74° (հունիս): Դրա հետ կապված փոփոխվում է նաև ցերեկվա տևողությունը՝ համապատասխանաբար 9 ժամ 20 րոպեից մինչև 15 ժամ:

Մեծ է նաև արևափայլի տևողությունը, որը Իջևանում կազմում է 1924 ժամ, իսկ Արարատյան դաշտում և Սևանի ավազանում (մասնավորապես, Մարտունիում) տարեկան հասնում է 2779 ժամի, այսինքն, մոտավորապես այնքան, որքան Ալեքսանդրիայում:

Արևափայլի այսպիսի բացառիկ տևողությունը շատ կարևոր նշանակություն ունի զբոսաշրջության կազմակերպման, զբոսաշրջության սեզոնի տևողության համար:

Ամպամած օրերի թիվը հանրապետությունում տարեկան կազմում է 18–ից (Մարտունի) մինչև 64 օր (Իջևան): Բնական այս պայմանը նույնպես շատ կարևոր է հանրապետությունում զբոսաշրջությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Ամենացուրտ ամիսը հունվարն է, և միջին ջերմաստիճանը տատանվում է +1.2°–ից –12.8°–ի սահմաններում: Բայց առանձին դեպքերում ձմռանն օդի ջերմաստիճանը կարող է իջնել շատ ավելի ցածր: ՀՀ տարածքում երբևէ գրանցված ամենացածր ջերմաստիճանն եղել է Աշոցքում՝ Արփի լճի ափին, Պաղակն բնակավայրում, և այն կազմել է –46°: Ասենք, որ Աշոցքի սարահարթը շատ հարմար է դահուկային սպորտի համար, ձմեռն այստեղ բավական երկար է տևում, իսկ ձյան շերտի հզորությունը հասնում է 1.5 մետրի:

Հանրապետությունում ամենատաք ամիսներն հուլիսն ու օգոստոսն են, երբ միջին ջերմաստիճանը տատանվում է 9°–26°–ների միջև: Հանրապետության տարածքում առավելագույն ջերմաստիճանը +42°է, որը գրանցվել է Արարատյան դաշտում (Արմավիրի հանգույցում):

Այսպիսով, ՀՀ տարածքում բացարձակ առավելագույն ու նվազագույն ջերմաստիճանների ամպլիտուդան կազմում է 88 աստիճան:

Հայաստանի Հանրապետությունը թեև գտնվում է այն նույն աշխարհագրական լայնությունների տակ, ինչ որ Պիրենեյան, Ապենինյան, Բալկանյան, Փոքր Ասիա թերակղզիները (որտեղ մեղմ կլիմայի շնորհիվ ամբողջ տարին զբոսաշրջության համար ակտիվ շրջան է), սակայն առանձնանում է իր կլիմայի խստությամբ:

Պատճառները հանրապետության տարածքի՝ ծովի մակարդակից ունեցած բարձր դիրքն է, օվկիանոսներից հեռու լինելը, Փոքրասիական ու Իրանական բարձրավանդակների կիսաանապատների և անապատների մոտիկությունը: Նման պայմաններում հանրապետության կլիման դառնում է ցամաքային:

Իսկ ընդհանուր առմամբ, հանրապետության կլիմայական պայմանները բավական նպաստավոր են զբոսաշրջության գրեթե բոլոր տեսակների զարգացման համար:

Հանրապետության ցածրադիր վայրերում ոչ սառնամանիքային օրերի թիվը կազմում է 224–234 օր, նախալեռնային ու միջին լեռնային վայրերում՝ 118–196 օր, բարձր լեռնային վայրերում՝ 90–92 օր: Այսինքն, կլիմայական պայմանների առանձնահատկությունները հիմնականում նպաստավոր են հանրապետությունում ամբողջ տարվա ընթացքում զբոսաշրջության գործընթացի համար:

Չնայած հանրապետության ոչ մեծ տարածքին՝ մթնոլորտային տեղումների քանակի տատանումները բավականին մեծ են:

Հանրապետության տարածքում՝ ըստ վերընթաց գոտիների, տեղումների քանակը փոփոխվում է՝ 211–309 մմ–ից (Արարատյան դաշտում) մինչև 1000–1100 մմ (Արագածի գագաթին):

Միջին բարձրության լեռնային գոտում տեղումների քանակը հասնում է 600–700 մմ:

Տեղումների քանակը փոփոխվում է ոչ միայն ըստ բարձրության, այլ նաև ըստ տարվա եղանակների: Առավելագույնը թափվում է մայիս–հունիսին, նվազագույնը՝ ձմռանը: Օրինակ՝ Ստեփանավանում տարվա տաք կեսին թափվում է տարեկան տեղումների 76%–ը (519 մմ), իսկ տարվա ցուրտ կեսին՝ միայն 26%–ը (164 մմ):

Հանրապետության տարածքում ձմռանը տեղումները թափվում են հիմնականում ձյան տեսքով: Սակայն ցածրադիր գոտում՝ Մեղրիում, Դեբեդի ստորին ավազանում, մասամբ Արարատյան դաշտում, կայուն ձյունածածկույթ չի գոյանում:

Ավելի տևական, մինչև ամռան կեսերը, ձյունածածկույթը պահպանվում է բարձրադիր լեռներում, իսկ առանձին լեռնազանգվածների (Արագած, Կապուտջուղ և այլն) վրա այն պահպանվում է ամբողջ տարին: Ձնածածկույթի ամենամեծ հաստությունը լինում է հանրապետության հյուսիսային շրջաններում և երբեմն հասնում է 2 մ–ի: Այս շրջաններն էլ հատկապես նպաստավոր են ձմեռային հանգստի, դահուկային սպորտի կազմակերպման համար:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության առումով կլիմայի գլխավոր առանձնահատկություններից մեկը տարվա չորս եղանակների լավ արտահայտվածությունն է, իսկ մյուսը՝ կլիմայի վերընթաց գոտիականությունը: Իսկ այս հանգամանքն, անկասկած, զբոսաշրջության կազմակերպման առումով չափազանց նպաստավոր է, մասնավորապես, ամռան շոգ ամիսներին լեռների բարձրադիր մասերում կարելի է վայելել ալպյան մարգագետինների բուրմունքն ու մաքուր օդը:

Հանրապետության տարածքում արտահայտված են ուղղաձիգ (վերընթաց) հետևյալ գոտիները՝ անապատային և կիսաանապատային, չոր տափաստանային, լեռնատափաստանային, լեռնաանտառային, լեռնամարգագետնային (ալպյան) և լեռնատունդրային:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության ռելիեֆային ու կլիմայական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունը, դրանց տնտեսական գնահատումը հնարավորություն կտա զբոսաշրջության համար այդքան կարևոր և յուրատիպ բնական ռեսուրսները ճիշտ օգտագործել: Այսպիսով, ռելիեֆային ու կլիմայական գործոնների յուրահատկությունների գիտականորեն գնահատումը և օգտագործումը շատ խոշոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ինդուստրիայի նպատակային ու ռացիոնալ կազմակերպման բնագավառում:

4. Հայաստանի Հանրապետության բուսական և կենդանական ռեսուրսների նշանակությունը զբոսաշրջության զարգացման գործում

Բուսական ռեսուրսները կենսական նշանակություն ունեն մարդկության համար: Դրանով է պայմանավորված մարդու և օրգանական բոլոր տեսակի նյութերի գոյությունը երկրագնդի վրա:

Երկրագնդի բուսականությունը տարեկան սինթեզում է ավելի քան 375 մլրդ տոննա օրգանական նյութեր, որոնք մարդկության և կենդանական սննդի միակ աղբյուրն են: Դրա շնորհիվ մթնոլորտից յուրացվում է 450 մլրդ տոննա ածխաթթու գազ, հողից՝ 5 մլրդ տոննա ազոտ, շուրջ 1 մլրդ տոննա ֆոսֆոր և 10–15 մլրդ տոննա հանքային տարրեր: Այդ բոլորի փոխարեն մթնոլորտը հարստանում է 350 մլրդ տոննա թթվածնով [15, 40]: Այս խոսուն փաստը բավական է, որպեսզի պատկերացում կազմվի, թե բուսականությունն ինչ վճռական դեր ունի մարդկության կենսագործունեության համար ընդհանուր առմամբ և զբոսաշրջության համար՝ մասնավորապես: Բուսականության դերն ու նշանակությունը մարդու կյանքում չափազանց բազմազան է: Այն ապահովում է մարդուն սննդային ու բուժիչ բուսատեսակներով, պտուղներով, փայտանյութով, ունի կլիմայապաշտպան, հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարական խոշոր նշանակություն:

Հատկապես, հարկ է նշել նրա ռեկրեացիոն և զբոսաշրջային նշանակությունը: Բուսական աշխարհի հարուստ և բազմազան ռեսուրսներ ունենալը յուրաքանչյուր երկրի զբոսաշրջության զարգացման գլխավոր նախապայմաններից մեկն է:

Հայկական լեռնաշխարհի, ինչպես նաև նրա մասը կազմող Հայաստանի Հանրապետության բուսական և կենդանական աշխարհը աչքի է ընկնում բացառիկ բազմազանությամբ: Այդ բազմազանությունը պայմանավորված է նրանով, որ Հայկական լեռնաշխարհը գտնվում է տարբեր՝ իրանական, կովկասյան և միջերկրածովային բուսական և կենդանական աշխարհի մարզերի շփման հանգույցում:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված է ավելի քան 4000 բուսատեսակ, որից 200–ը էնդեմիկ են, այսինքն յուրահատուկ են միայն այս լեռնաշխարհին: Հայաստանի Հանրապետությունը, որը ինչպես արդեն ասել ենք Հայկական լեռնաշխարհի 1/10 մասն է կազմում միայն, իր փոքր տարածքում ունի ավելի քան 3200 բարձրակարգ բուսատեսակ, այսինքն՝ յուրաքանչյուր 1000 կմ² վրա միջին հաշվով կա մոտ 107 բուսատեսակ: Համեմատության համար ասենք, որ այստեղ բույսերի տեսականին ավելի հարուստ է, քան օրինակ, արևադարձային գոտում գտնվող Հնդկաստանինը, որտեղ յուրաքանչյուր 1000 կմ²–ին ընկնում է ավելի քան 7 տասնյակ, կամ Ցեյլոնը, որտեղ 1000 կմ² վրա կա ընդամենը 46 բուսատեսակ:

Հայաստանի Հանրապետության տարածքում հանդիպող 3200 բուսատե-

սակներից 120 էնդեմիկ են: Դրանցից շատերը կոչվում են մեր երկրի և նրա առանձին մասերի անուններով: Այսպես, օրինակ՝ «պատատուկ հայկական», «ոզնաթուփ հայկական», «օշինդր հայաստանյան», «Հայաստանի արմատ», «սզնի Զանգեզուրի», «կաղնի արաքսյան» և այլն:

Բուսական ռեսուրսների համակարգում զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունեն անտառները:

Անտառները բազմաբնույթ նշանակություն ունեցող բնական այն ռեսուրսների թվին են պատկանում, որոնցով որոշվում է տվյալ երկրի զբոսաշրջության զարգացման հնարավորությունների չափերը:

Դրանցով է պայմանավորված զբոսաշրջիկների հետաքրքրությունը հանգստի և առողջարանական զբոսաշրջության նկատմամբ:

Անտառային ռեսուրսները հզոր պոտենցիալ են էկոլոգիական զբոսաշրջության զարգացման համար, ինչպես նաև դրանով է պայմանավորված տվյալ երկրի էկոլոգիական հիմնախնդիրների և շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերը:

Վերջին տասնամյակներում ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, անտառների անխնա օգտագործման հետևանքով դրանց տարածքը խիստ կրճատվել է: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության անտառները կազմում են հանրապետության տարածքի 10–12 տոկոսը միայն և այն էլ տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ: Դրանք հիմնականում ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, կլիմայապաշտպան և որ շատ կարևոր է՝ նաև ռեկրեացիոն նշանակություն:

Վերջին տվյալներով հանրապետության անտառների, թփուտների զբաղեցրած ընդհանուր տարածքը կազմում է ավելի քան 459.9 հազ. հեկտար, որից անտառներով ցածկված է շուրջ 334 հազ. հեկտարը:

Վերջին տվյալներով, հանրապետության յուրաքանչյուր բնակչին ընկնում է միայն 0.09 հա անտառածածկ տարածք [15, 44]:

Հայաստանի Հանրապետության տարածքում բնական անտառները հիմնականում տարածված են երկրի հյուսիսարևելյան և հարավարևելյան մասերում: Հյուսիսարևելքում անտառները համեմատաբար ավելի ընդարձակ տարածք են զբաղեցնում և անտառապատվածությունն այստեղ կազմում է 30%: Այս անտառների վերին սահմանը հասնում է ծովի մակերևույթից մինչև 2000 մ բարձրությունները: Մասնավորապես, անտառային ռեսուրսներով հատկապես հարուստ են Տավուշի և Լոռու մարզերը (Նոյեմբերյանի, Իջևանի, Տավուշի, Թումանյանի և Գուգարքի տարածաշրջանները): Այստեղ տարածված հիմնական ծառատեսակներից են արևելյան հաճարենին, որի անտառը տեղ–տեղ ընդմիջվում է կաղնուտներով, ինչպես նաև սոճուտներով: Հանդիպում են նաև բոխի, թխկի, հացենի:

Հանրապետության հենց այս մասերում էլ կազմակերպված գործում են մեծ թվով հանգստյան տներ, առողջարաններ, ինչպես նաև մարզական և զբո-

սաշրջային հանգրվաններ: Հենց այս մարզերի տարածքներն էլ զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Այսօր արդեն նկատելի աշխատանքներ են կատարվում այս տարածաշրջանում միջազգային մակարդակին համապատասխանող զբոսաշրջության ոլորտի ու նրա ենթակառուցվածքների ձևավորման ուղղությամբ:

Միաժամանակ, պետք է նշել, որ ինչպես այս տարածաշրջանների, այնպես էլ ողջ հանրապետության համար զբոսաշրջային ոլորտի ձևավորման, կայացման ու զարգացման առումով անելիքները դեռևս շատ են:

Ինչպես արդեն ասվել է, հանրապետության բնական անտառների զգալի մասը տարածված են նաև նրա հարավարևելյան մասերում (հատկապես Կապանի տարածաշրջանում): Սրանք համեմատաբար ավելի փոքր տարածություն են զբաղեցնում: Զանգեզուրում անտառի վերին սահմանը հասնում է 2400 մ բարձրությունները:

Այստեղ տարածված ծառատեսակներից են վրացական կաղնին, արաքսյան կաղնին, հացենին, թխկին, ընկուզենին և այլն:

Համեմատաբար անտառապատ է նաև Հրազդանի տարածաշրջանը: Թփուտային անտառներ կան Արագածի լանջերին, Արարատյան գոգավորության լեռնալանջային հատվածներում, Վայքում և հանրապետության այլ վայրերում:

Թվարկված, ինչպես նաև Շիրակի, Լոռու, Եղվարդի, Կոտայքի սարահարթերը, Զանգեզուրի հյուսիսային մասում, ինչպես նաև Սևանի ավազանում, հատկապես Սևանա լճի մակարդակի իջնելու հետևանքով ջրից ազատված ամբողջ տարածքում 1950–1990–ական թվականներին ստեղծվել են արհեստական անտառաշերտեր, որոնք ընդհանուր առմամբ կազմում են հանրապետության տարածքի շուրջ 2%–ը [15, 44]: Հայաստանի Հանրապետության համար բնապահպանական հարցերն այսօր տնտեսական, սոցիալական, էկոլոգիական կարևոր հիմնախնդիրներ են:

Բնապահպանական նպատակով մեր հանրապետության տարածքում ստեղծվել է մի քանի արգելոց, արգելավայրեր և «Սևան» ազգային պարկը, որոնց դերը շատ յուրահատուկ է նաև էկոզբոսաշրջության առումով:

Ինչպես արդեն նշել ենք, բուսականության դերը շատ բազմազան է մարդու կյանքում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետության տարածքում աճող բնական բուսատեսակների զգալի մասն ունի բուժիչ նշանակություն: Բուսաբուծության բնագավառում Հայաստանը, հիրավի, հարուստ պատմություն ունի: Ղազար Փարպեցու վկայությամբ, դեռևս դարում (մ.թ.ա.) Արարատյան դաշտի բնակավայրերում ամենատարբեր հիվանդությունների բուժման համար օգտագործում էին հատուկ բուսարմատներ:

Հույն ականավոր պատմագիր Քսենոֆոնը Հայաստանը նկարագրել է որպես ընդեղենով, անուշաբույր գինիներով, քունջութով, նշի, անուշահամ յուղերով և օգտակար այլ բուսատեսակներով հարուստ երկիր: Թովմա Արծրունու

տվյալներով, առաջին դարում (մ.թ.ա.) Արտաշես Բ. թագավորն Արտամետ ամրոցի շուրջը տարբեր տեսակի բույսերից այգի էր աճեցնում ոչ միայն գեղեցկության, այլև այդ բույսերից բուժամիջոցներ պատրաստելու համար: Պլինիուսի վկայությամբ, պոնտական թագավոր Միհրդատը՝ Տիգրան Մեծի մերձավորն ու բարեկամն, առաջին դարում (մ.թ.ա.) Հայաստանում աճող բույսերից պատրաստել էր փսխեցնող միջոց՝ հակաթույն, որը Միհրդատը պարբերաբար ընդունել է այն ժամանակների համար տարածված բոլոր տեսակի թույների դեմ:

Հայաստանում աճող դեղաբույսերի համբավը տարածված է եղել ոչ միայն երկրի ներսում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Հայտնի է, որ Հայաստանից շատ դեղաբույսեր արտահանվել են Հին Հունաստան, Հին Հռոմ և բազմաթիվ այլ երկրներ: Հայտնի է նաև, որ շատ բուսատեսակներ, ինչպիսիք են երեքնուկը, խավրծիլը, հայկական հողմածաղիկը, տորոնը և այլն, Եվրոպա են թափանցել Հայաստանից:

Հայաստանում բուսաբուժությունն իր ծաղկումն է ապրել Գրիգոր Մագիստրոսի, Մխիթար Հերացու, Ամիրդովլաթ Ամասիացու, Գրիգորիսի, Ստեփանոս Շահրիմանյանի և ուրիշների շնորհիվ, որոնց անունները հայտնի են համաշխարհային բժշկության ասպարեզում [4, 4]:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհը, հատկապես Տավուշի, Լոռու, Սյունիքի մարզերի պտղառատ անտառները, Արագածի լանջերին և մյուս բարձր լեռնային ալպյան ծաղկառատ մարգագետիններն ունեն նաև զբոսաշրջային, հատկապես էկոզբոսաշրջային և հանգստի կազմակերպման, բուժական կարևոր նշանակություն:

Զբոսաշրջության, հատկապես միջազգային զբոսաշրջիկների համար ՀՀ բուսական աշխարհն, անկասկած, հետաքրքրություն է ներկայացնում հանրապետության հյուսիսային և հարավային շրջանների լեռնալանջային մաքուր օդ, զուլալ աղբյուրներ և ջրեր ունեցող անտառներում զբոսաշրջային հանգրվանները (կազդուրվելու համար), այդ անտառների անուշահամ պտուղները, էկզոտիկ բուսատեսակները, բանջարեղենի տեսակները, որոնք ճաշատեսակների ձևով մատուցվում են զբոսաշրջիկներին:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհը նույնպես շատ բազմազան է: Բազմազան են նաև կենդանական ռեսուրսների դերը և նշանակությունը: Բացի մարդկության համար սննդամթերք հանդիսանալուց, խոշոր է նրանց դերը նյութերի կենսաբանական շրջանառության, հողառաջացման, բուսատեսակների տարածման և շատ այլ բնագավառներում:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի բազմազանությունը և առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես բուսականության բազմազանությամբ, այնպես էլ վերընթաց գոտիականությամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվվում է մոտ 12 հազ. կենդանատեսակ, որից՝ կաթնասուններ 75, թռչուններ՝ 302, սողուններ՝ 43,

ձկներ՝ 26, երկկենցաղներ՝ 6, միջատներ և անողնաշարավորներ՝ ավելի քան 11 հազ. տեսակներ:

Շատ կենդանիներ էնդեմիկ են: Օրինակ՝ հայկական վայրի ոչխարը, բեզոարյան այծը, կովկասյան փասիանը, հայկական եղջերավոր օձը, գյուրզան: Կան նաև հարևան երկրներից ներթափանցած կենդանատեսակներ: Դրանցից են՝ լուսանը, անտառային կատուն, գորշ արջը, վարազը, եղջերուն, չախկալը, սիրիական արջը, աղվեսը, բորենին, բազմաթիվ կրծողներ:

Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհը տեղաբաշխված է հիմնականում ըստ վերընթաց գոտիականության:

Անապատակիսաանապատային գոտում տարածված են ճագարամուկն ու դաշտամուկը, տափաստանային կատուն, ոզնին և այլն: Անապատային գոտուն բնորոշ են օձերը, որոնցից առանձնապես հայտնի է գյուրզան, որի խայթոցը մահացու է: Հանդիպում են նաև արագիլներ, լորտու, օձակեր բազեներ, աքիս, ժանտաքիս և այլն: Շատ կան նաև միջատներ, որոնցից են թունավոր մորմերն ու կարիճները:

Հանրապետության լեռնային գոտուն բնորոշ են բեզոարյան այծը, վայրի ոչխարը (մուֆլոն), հովազը (ընձառյուծ): Այս վերջիններս անհետացման վտանգի տակ են և գրանցված են միջազգային «Կարմիր գրքում»: Լեռնային տափաստաններում հանդիպում են ճագարամկներ, գետնասկյուռ, դաշտամուկ, խլուրդ, գիշատիչներից՝ ժանտաքիսը: Հատկապես շատ են թռչունները, որոնց դերը շատ մեծ է այս գոտու համար: Նրանք ոչնչացնում են մշակաբույսերը վնասող միջատներին: Օգտակար այդ թռչուններից հատկապես տարածված են սև ճակատ ճամփրուկը, սարյակները և այլն:

Ինչպես արդեն նշվել է, զբոսաշրջության զարգացման համար շատ կարևոր են անտառային ռեսուրսները: Հայաստանի Հանրապետության անտառային գոտու կենդանական աշխարհը շատ բազմազան է: Հյուսիսային անտառներում հանդիպում են այծյամ, լուսան, գորշ արջ, վարազ: Զանգեզուրում՝ մացառախոզ, շնագայլ, սիրիական արջ, բեզոարյան այծ և այլն: Թռչուններից տարածված են արծիվը, բազեն, փայտփորիկը, անտառային աղավնիները, հոպոպը, կկուն, հսկա անգղները, որոնց քաշը հասնում է մինչև 12 կգ, իսկ թևերի բացվածքը՝ 280 սմ:

Մերձալպյան ու ալպյան գոտու կենդանական աշխարհի տեսականին շատ սահմանափակ է: Այստեղ հատկապես տարածված են թռչուններ, միջատներ և թիթեռներ:

Հայաստանի Հանրապետության գետերում, լճերում, ճահճուտներում հանդիպում են բազմազան ձկնատեսակներ: Դրանց թիվը հասնում է 26-ի: Այդ տեսակետից առավել հանրահայտը Սևանա լիճն է՝ իշխան ձկով և նրա տարատեսակներով:

Տասնամյակներ առաջ Լադոգա լճից Սևանա լիճ է տեղափոխվել սիգ ձկնատեսակը, որը լավ հարմարվել է լճի կլիմայական պայմաններին:

Արփի լիճը հայտնի է իր ծածանով, աճում է նաև խրամուլին: Արաքս գե-

տում կա ձկան 13 տեսակ (լոքո, սպիտակաձուկ, բեղլու և այլն): Արփա, Որոտան և մյուս գետերում աճում են հիմնականում կարմրախայտ, կողակ և այլ ձկնատեսակներ:

Հանրապետության կենդանական և հատկապես բուսական ռեսուրսները զբոսաշրջության զարգացման կարևոր նախապայմաններ են, որոնք ունեն պետական հոգածության խիստ կարիք: Զբոսաշրջիկների համար հետաքրքրություն են ներկայացնում հանրապետության լեռնային վայրերում դեռևս պահպանվող, «Կարմիր գրքի» մեջ մտցված կենդանատեսակները, իսկ շատ–շատերը ցանկանում են անպայման լինել Սևանի ափին, Ջերմուկում՝ ճաշակելու իշխան, կարմրախայտ և լեռնային մյուս լճերի, գետերի համեղ ձկնատեսակները:

Տնտեսության, քաղաքականության գլոբալացման արդի պայմաններում, Հայաստանի Հանրապետության բնապահպանության, զբոսաշրջության հիմնախնդիրները նույնպես գլոբալ ինտեգրման պահանջներից զերծ չեն կարող մնալ:

Հայաստանի Հանրապետությունը բնապահպանական ոլորտում արդեն ընդգրկված է միջազգային համագործակցության համակարգի մեջ: Հանրապետությունն այսօր արդեն միացած է միջազգային 9 կոնվենցիաների:

Ըստ որում, բնապահպանման հարցերով Հայաստանի Հանրապետությունը լայնածավալ աշխատանքներ ունի կատարելու, հատկապես՝ էկոկրթության, էկոլոգիական տեղեկատվության և մոնիտորինգի սերտացման, լեռնային էկոհամակարգերի կառավարման, էկոլոգիապես մաքուր արտադրության բնագավառներում:

Հայաստանի Հանրապետությունն այդ տեսակետից համագործակցում է հատկապես ԱՊՀ անդամ երկրների հետ: Մասնավորապես, ստորագրվել են մի շարք համաձայնագրեր Միջպետական էկոլոգիական խորհրդի աշխատանքների շրջանակներում՝ կապված ինֆորմացիոն, անտառարդյունաբերության ու անտառտնտեսության ոլորտի, էկոլոգիական մոնիտորինգի և այլ հարցերի հետ:

Հանրապետությունն այդ բնագավառներում համագործակցում է նաև այլ երկրների հետ:

Աթենքում ստորագրվել է Հայաստան – Իրան – Հունաստան տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր, որի շրջանակներում նախատեսվում է ստեղծել բնապահպանական բլոկ:

Աշխատանքներ են տարվել նաև Հայաստան – Վրաստան և Հայաստան – Սիրիա համագործակցության շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունը բնապահպանության ոլորտում միջազգային հանրության հետ համագործակցությունն ավելի ընդլայնման և ակտիվացման ճանապարհին է:

Նշենք նաև, որ ՀՀ կառավարության կողմից, բացի Սևանա լճի բնապահպանական գործողությունների ծրագրից, նախաձեռնվել է ևս մեկ այլ՝ «Ազ-

գային բնապահպանական գործողությունների» ծրագիր, որոնց իրականացումը պայմանավորված է բնապահպանական նպատակային, համալիր խնդիրների լուծմամբ [12, 53]:

Իսկ բնապահպանական այս հիմնահարցերի լուծումը սերտորեն կապված է նաև միջազգային զբոսաշրջության, այդ թվում նաև էկոզբոսաշրջության զարգացման հետ, որի համար Հայաստանի Հանրապետության բնական պայմանները շատ յուրատիպ ու բազմազան են:

5. ՀՀ ջրային ռեսուրսների գնահատումը զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի զարգացման առումով

Ջուրը ոչ միայն անհրաժեշտ է կյանքի համար, այլ ինքը կյանքն է: Մեր մոլորակի վրա կյանքի սկզբնական սաղմերը ծագել են ծովերում և օվկիանոսներում՝ մոտ 1350 մլն տարի առաջ:

Ջրի առկայությամբ է պայմանավորված նյութափոխանակությունը, կենդանի բջջի ստեղծումը և վերջապես կենդանի արարածի ծնունդը: Առանց ջրի հնարավոր չէ պատկերացնել մարդկային հասարակության գոյությունը:

Անգլիացի ֆիզիկոս Գ. Կավենը 1783 թ. առաջինը պարզեց, որ էլեկտրական կայծի ներթափացմամբ ջրածինը և թթվածինը միանալով կազմում են ջուր:

Ֆրանսիացի գիտնականներ Ա. Լավուազեն և Ժ. Մենեն 1785 թ. գտան, որ ջուր ստանալու համար երկու գրամ ջրածինը պետք է միացնել մեկ գրամ թթվածնի հետ: Հետագայում ստեղծվեց H_2O դասական ֆորմուլան [17, 8]:

Ջրածնի օքսիդը, որը չունի գույն, հոտ, համ, չափազանց կարևոր տարր է բոլոր տեսակի կենդանական և բուսական օրգանիզմների գոյության համար: Յուրաքանչյուր օրգանիզմում ջուրը կազմում է նրա կենդանի քաշի 50–99%–ը: Օրինակ՝ մարդու օրգանիզմի 65%–ը, ձկների քաշի մինչև 80%–ը և ջրիմուռների քաշի 99%–ը ջուր է:

Շատ կարևոր է նաև ջրի քանակային հավասարակշռության պահպանումն օրգանիզմում: Ինչպես արդեն նշել ենք, մարդու օրգանիզմի 65%–ը ջուր է (նույնիսկ ոսկորների 22%–ը): 10% ջրի կորուստը կարող է առաջացնել ուշագնացություն, ուժասպառություն: Ջրի մեծ քանակության կորստի դեպքում օրգանիզմը թունավորվում է, արյունը քանձրանում է, և սիրտն այլևս չի կարողանում աշխատել, վրա է հասնում մահը:

Առանց ջրի մարդիկ կարող են ապրել 5–6 օր, իսկ կենդանիներն ավելի դիմացկուն են: Օրինակ՝ ընձուղտը կարող է ջուր չխմել կես տարի, իսկ եգիպտական ճագարամուկը՝ 3 տարի [5, 29]:

Նախկինում ջուրը հանդիսացել է պաշտամունքի առարկա և այն համարվել է բոլոր գոյությունների սկզբնաղբյուրը:

Ջուր կա ամենուր և այն մշտապես գտնվում է շարժման մեջ:

Ջրային ռեսուրսների դերը խիստ բազմազան է և այն շատ կարևոր դեր ունի մարդու կյանքի և գործունեության բոլոր բնագավառներում՝ կենցաղում, արդյունաբերության, գյուղատնտեսության և շատ այլ բնագավառներում:

Քաղաքակրթության զարգացման հետ, մարդն իր կենսագործունեության մեջ ավելի մեծ քանակությամբ ջուր է օգտագործում:

Վերջին տվյալներով, ժամանակակից քաղաքակիրթ մարդուն օրական անհրաժեշտ է ավելի քան 500 լիտր ջուր: Միայն սննդառության պրոցեսը նորմալ կազմակերպելու համար մարդուն անհրաժեշտ է լինում մինչև 10 լիտր ջուր [16, 59]:

Այսպիսով, ջուրը վճռական դեր է խաղում մարդու կենսագործունեության բոլոր բնագավառներում: Քանի որ այժմ զբոսաշրջության և հանգստի ինդուստրիան դարձել է մարդու ապրելակերպի բաղկացուցիչ մասը, հետևաբար ջրի դերն այս բնագավառում նույնպես վճռական է:

Այս առումով, որևէ երկրում զբոսաշրջության կազմակերպման, զարգացման համար շատ կարևոր նախապայման է բավարար քանակությամբ ջրային ռեսուրսների առկայությունը, դրանց ուսումնասիրությունը, քանակական, որակական հատկանիշների գնահատումը:

Ջուրը Հայաստան երկրի ամենաթանկ և անփոխարինելի հարստությունն է: Հետաքրքիր է նշել, որ մեր երկիր այցելած հյուրերից մեկը՝ հայտնի գեղանկարիչ Ռոքուել Քենտն ասել է. «Ես լսել էի հայկական կոնյակի մասին, բայց այժմ երազելու եմ երևանյան ջրի մասին: Դա ձեր հարստությունն է, պահպանեցեք այն»:

Զբոսաշրջության և հանգստի համար անսահման մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայկական լեռնաշխարհի անկրկնելի, ինքնատիպ լեռնային արագահոս գետերն ու առվակները, խոր կիրճերն ու գահավիժող ջրվեժները, տարբեր ծագման լեռնային անզուգական լճերը:

Հայկական լեռնաշխարհի խոշորագույն լճերից են Ուրմիան, Վանն ու Սևանը:

Այս լճերը (հատկապես Վանա և Սևանա) նշանավոր են, ոչ միայն որպես բնության արարած հրաշքներ, այլև հայ ազգի խորհրդանիշը հանդիսացող, հայապահպան և ազգապահպան նշանակություն ունեցող, միաժամանակ այստեղ գտնվող արվեստի բացառիկ նմուշ հանդիսացող հայկական եկեղեցիներով:

Վանա լիճը, բնության այդ հրաշալիքը, ստեղծվել է Արճեշ և Տոսպա լճակների միացումից:

Արևմտյան Հայաստանում գտնվող Վանա լիճն իր անվանումը ստացել է Վան քաղաքից, որը գտնվում է լճի ափին, պտղաբեր դաշտում՝ շրջապատված խաղողի այգիներով և պարտեզներով: Իսկ ենթադրյալ դրախտի մաս կազմող այդ գեղատեսիլ քաղաքն իր անվանումը ստացել է Բիայնա կամ Բիահնի անունից, որը ժամանակի ընթացքում ձևափոխվել և դարձել է Վան: Պատմական անցյալում հայերը Վանա լիճը կոչել են ծով և որպես այդպիսին

կոչվել է տարբեր անվանումներով՝ «Աղթամարի ծով» (Աղթամար կղզու անունով), «Արճեշի ծով» (Արճեշ քաղաքի անունով) [1, 180]:

Երկրաբանական այժմյան փուլում Վանա լիճը դանդաղորեն բարձրանում է, որի հետևանքով լճի հյուսիսային ափին գտնվող Արճեշ քաղաքը XIX դարի առաջին քառորդին ծածկվել է ջրով:

Լիճը հայտնի է իր Վանա տառեխ կոչվող ձկնատեսակով, որը հանդիպում է միայն այստեղ և այս առումով նույնպես զբոսաշրջային հետաքրքրություն է ներկայացնում:

Իսկ առհասրակ, Վանա լիճը Հայկական լեռնաշխարհի ամենագեղատեսիլ, զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող վայրերից մեկն է: Այժմ հնարավորություններ են ստեղծված, որպեսզի Հայաստանի Հանրապետության այժմյան սերունդը նույնպես հիանա իր պատմական Հայրենիքի այդ հրաշալիքով: Արդեն, 1990–ական թվականներից ՀՀ–ից զգալի թվով զբոսաշրջիկներ են այցելում Արևմտյան Հայաստան, այդ թվում նաև Վանա լիճ:

Վանա լճում կան մի շարք կղզիներ, որոնցից նշանավոր է Աղթամարը, Լիմը, Կտուցը:

Աղթամար կղզում պահպանվել է հայ ճարտարապետական մտքի գլուխգործոցներից մեկը՝ Աղթամարի տաճարը: Այն Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու պալատական եկեղեցին էր՝ կառուցված հայ նշանավոր ճարտարապետ և քանդակագործ Մանուելի կողմից՝ 915–921 թվերին: Եկեղեցին աշխարհում նմանակը չունեցող կենտրոնագմբեթ, քառաբսիդ հորինվածք է՝ զարդարված բարձրաքանդակներով և որմնանկարներով:

Հայ ժողովրդի համար առանձնահատուկ նշանակություն ունի Սևանա լիճը: Սևանը, հիրավի, բնության հրաշալիքն է, Հայաստանի Հանրապետության զարդն ու հարստությունը:

Հանրահայտ է, որ մերձարևադարձային լայնություններում քաղցրահամ ջուրն ամենամեծ գանձն է, առատության ու բարեկեցության աղբյուր: Եվ այդ անջուր մերձարևադարձերում, որտեղ արեգակի ճառագայթները չորացնում են ամեն ինչ, Հայկական լեռնաշխարհի բարձրում՝ վեհաշուք, հսկա լեռների գրկում, բնությունը խնամքով ամբարել և մեզ էր պարգևել 59 միլիարդ խորանարդ մետր, բյուրեղի նման մաքուր, քաղցրահամ, Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող ջուր [15, 49]:

Մարգարտյա Սևանը դարեր շարունակ բանաստեղծական ներշնչումի անսպառ աղբյուր է հանդիսացել, բազմաթիվ պոետներ գովերգել են զմրուխտ երկնագույն գեղեցկուհուն:

Ռուս հանրահայտ գրող Մաքսիմ Գորկին Սևանա լիճը տեսնելով՝ բացականչել է. «Կարծես երկնքի մի պատառիկ է, որ իջել է լեռների գիրկը» [2, 15]:

Սևանն աշխարհին հայտնի է հնագույն ժամանակներից, նրա մասին հիշատակություններ կան հունական անտիկ աշխարհագետների մոտ: Ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Սեն Մարտենի կարծիքով, անտիկ

աշխարհի մեծ աշխարհագետ Պտղոմեոսի քարտեզում Սևանը հայտնի է Լուխնիտես անունով:

Պատմական անցյալում Սևանա լճի անվանումը բազմիցս փոխվել է: Սևան անվան առաջացումն երկար ժամանակ կապել են կղզում գտնվող վանքի՝ «Սև վանքի» հետ, որը կառուցված է սև տուֆից: Լիճը կոչվել է նաև Գեղամա ծով, Գեղարքունի, Գյոկչա և այլն: Պարսիկներն այն Դարյա Շիրի՝ «անուշահամ լիճ կամ գետ» են կոչել:

Սևանի անվան առաջացման պատմությունը պայմանավորված է Օձաբերդի պեղումների ժամանակ հայտնաբերված սեպագիր արձանագրությամբ, որը թողել էր Ռուսա II թագավորը (մ.թ.ա. 730–714 թթ.): Այս փաստը հանդիսացավ լճի «ծննդյան վկայականը», որտեղ հիշատակվում է Սևանի անվանումը, «Սուինա» կամ «Ծուինիա» ձևով, որը նշանակել է «ծով», «ջուր» [1, 172]:

Սևանը բնության հրաշալիք ու առեղծված ենք անվանում, ոչ միայն որպես մերձարևադարձերում գնվող քաղցրահամ կենարար ջրի խոշոր պաշար, այլև այն առումով, որ այն հիրավի բնության առեղծվածներից մեկն է իր ծագմամբ: Լճի ծագումը այսօր էլ վիճելի է:

Մինչև Սևանի մակարդակի արհեստական իջեցումը, լճի հայելու բացարձակ բարձրությունը կազմում էր 1916 մետր, առավելագույն խորությունը՝ 99 մետր է, մակերեսը՝ 1416 կմ^2: Լճի մակարդակի շատ անհեռատես իջեցման հետևանքով նրանում տեղի ունեցան բացասական խոշոր փոփոխություններ: Մասնավորապես, լճի մակարդակն իջել է ավելի քան 18 մ–ով, նույնքանով էլ պակասել է նրա խորությունը, իսկ մակերեսը նվազել է գրեթե 12%–ով և կազմում է 1260 կմ^2: Փաստորեն մոտ 42%–ով փոքրացել է լճի ջրի ծավալը, բարձրացել ջրի միջին տարեկան ջերմաստիճանը, վատացել թթվածնային պայմանները: Այս հանգամանքները խիստ բացասաբար են անդրադարձել լճի ֆաունայի և ֆլորայի վրա:

Ներկայումս, լճի մեջ թափվում են 28 մանր գետեր, գետակներ, դուրս է գալիս միայն մեկը՝ Հրազդան գետը: Լիճը բաղկացած է երկու անհավասար մասերից՝ Մեծ Սևանից և Փոքր Սևանից, որոնց միացման մասերում առաջացել են Արտանիշ ու Նորադուզ թերակղզիները: Լճի հյուսիսարևմտյան մասում է գտնվում Սևանա թերակղզին, որը մինչև 1950–ական թվականների սկզբները եղել է կղզի: Որպես կղզի՝ այն շատ մեծ հետաքրքրություն էր ներկայացնում: Սևանի այժմյան թերակղզին ունի ժայռոտ մակերևույթ: Զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում թերակղզում գտնվող միջնադարյան վանք–հուշարձանները: Քառաթև հորինվածքով՝ Սուրբ Առաքելոց և Սուրբ Աստվածածին եկեղեցիները կառուցված են 874 թ. Սյունյաց Մարիամ իշխանուհու կողմից, Սևան կղզու հարավարևմտյան մասում [10, 112]:

Հիրավի, Սևանը բնության առեղծվածն ու ազգային մեծ հարստությունն ունի տնտեսական, էկոլոգիական և զբոսաշրջային բացառիկ մեծ նշանակություն:

Դեռևս տասնամյակներ առաջ Հայաստանի Հանրապետության Կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի ինստիտուտում կլիմայական պայմանների ուսումնասիրություններ են կատարվել, որոնց արդյունքները թույլ են տալիս հստակ հիմնավորել, որ Սևանի ավազանը հանրապետության ռեկրեացիոն ռեսուրսների շարքում բացառիկ նշանակություն ունի:

Զբոսաշրջության կազմակերպման գործում չափազանց կարևոր են կլիմայական ռեսուրսների դերը՝ մաքուր օդը, արևի ճառագայթումը, ջերմային պայմանները, խոնավությունը, ջրավազանի գոյությունը:

Կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լճի ավազանում օդը մաքուր է: Դրան նպաստել է նաև արհեստական անտառային զանգվածի ստեղծումը:

Լճի ավազանի ջերմային պայմանները որոշիչ են զբոսաշրջային ժամանակաշրջանի տևողության առումով: Սևանում զբոսաշրջության համար առավել նպաստավոր ժամանակաշրջանը հունիսից մինչև սեպտեմբեր ընկած հատվածն է: Սակայն, լողանալու, արևի լոգանք ընդունելու համար նպաստավոր ժամանակահատվածն ավելի կարճ է, և այն հիմնականում ընդգրկում է հուլիս–օգոստոս ամիսները: Այստեղ լողանալու համար առավել հարմար ժամերն են 13–16–ը, երբ ջրի ջերմաստիճանը հասնում է առավելագույնի (18–20°–ի):

Հանրահայտ է, որ զբոսաշրջության համար շատ կարևոր են նաև լանդշաֆտային պայմանները: Բարձրաբերձ լեռները, թավշյա անտառները՝ մասնավորապես սոճու անտառները, որոնք արձակում են բակտերիաները ոչնչացնող, մարդու համար շատ օգտակար խեժանյութեր՝ ֆիտոնցիդներ, արագահոս, քչքչան առվակները, մեղմ զեփյուռը, թռչունների դայլայլը չափազանց կարևոր նախապայմաններ են հանդիսանում տարածաշրջանում, Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության զարգացման համար:

Բարձր լեռնային լանդշաֆտները հնարավորություն են տալիս այստեղ զբոսաշրջությունը զարգացնել ոչ միայն ամառային ամիսներին, այլև շուրջ տարին: Օրինակ՝ Գեղամա լեռների ձյունապատ գագաթները նպաստավոր են ձմեռային հանգստի սիրահարների, դահուկային մարզաձևով զբաղվողների համար:

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետությունը հարուստ է բնական հուշարձաններով՝ հրաբխային ռելիեֆի հետաքրքիր ձևերով, շատ դեպքերում անմատչելի լեռնազանգվածներով և լեռնագագաթներով: Հանրապետությունը չափազանց մեծ պոտենցիալ հնարավորություններ ունի էկոզբոսաշրջության զարգացման համար և մեր կարծիքով, Սևան այցելող զբոսաշրջիկները կարող են չսահմանափակվել ջրային հանգստի ձևերով, նրանք լիճը շրջապատող լեռներում իրենց համար նոր հետաքրքրություններ կգտնեն: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կարելի է կառուցել ճոպանուղի՝ Սևանի ափամերձ վայրից մինչև Աժդահակի գագաթը, որը հնարավորություն կտա զբոսաշրջիկներին արագ և հանգիստ բարձրանալ այդ

հրաբխային լեռնագագաթն ու այնտեղից հիանալ ինչպես Սևանով, այնպես էլ շրջապատի անզուգական մյուս գեղեցկություններով: Մասնավորապես, նպատակահարմար ենք համարում այստեղ նույնպես ստեղծել զբոսաշրջային համալիր՝ համապատասխան ծառայություններով և զբոսաշրջիկներին առանձնապես հետաքրքրող սպասարկման օբյեկտներով: Այժմ արդեն Սևանի ափին կառուցվել և գործում են մեծ թվով հանգստյան տներ, առողջարաններ, հյուրանոցներ, մարզական բազաներ:

Վերը նշել ենք, որ լճի մակարդակի անհեռատես իջեցման հետևանքով զգալի չափով խախտվել է Սևանի ավազանի բնության հավասարակշռությունը: Դրա հետ կապված՝ բնության պահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և վերականգնման, հանգստի, զբոսաշրջության զարգացման, պատմական ու մշակութային հուշարձանների, ազգագրական ու ճարտարապետական կառույցների պահպանման նպատակով, 1977 թ. Սևանի ավազանի տարածքում ստեղծվել է «Սևան» ազգային պարկը: Ազգային պարկի տարածքում ստեղծվել են առանձին արգելավայրեր, հանգստյան գոտի, տնտեսական գոտի: Կարծում ենք, որ այստեղ անհրաժեշտ է կազմակերպել հայկական ազգային արհեստանոցներ, սպասարկման յուրատիպ օբյեկտներ, որոնք շատ են հետաքրքրում զբոսաշրջիկներին:

Եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ աշխատանքների ճիշտ կազմակերպման դեպքում կարելի է բնության պահպանման և զբոսաշրջության զարգացման աշխատանքները զուգորդել՝ լրացնելով մեկը մյուսին:

Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջության զարգացման համար իր բացառիկ գեղեցկությամբ ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում Պարզ լիճը: Այն գտնվում է Աղստև գետի հովտում, Դիլիջանից 8 կմ. հեռավորության վրա: Լիճը փոքր է, բայց շրջապատված է թավշյա անտառներով, որն առանձնահատուկ գեղեցկություն և հմայք է տալիս ողջ տարածքին: Պարզ լիճն իր շրջապատի գեղատեսիլ անտառի հետ միասին մեծ հեռանկար ունի զբոսաշրջության զարգացման համար:

Զբոսաշրջության որոշ ձևերի՝ հատկապես էկոզբոսաշրջության համար առանձնահատուկ նշանակություն կարող է ունենալ Գեղամա լեռնաշղթայի ջրբաժան հատվածի գրեթե կենտրոնական մասում, հրաբխային կոներով շրջապատված, հանրապետությունում հրաբխային ծագում ունեցող ամենամեծ՝ Ակնա լիճը: Այս անզուգական լիճն ունի ջինջ, թափանցիկ և քաղցրահամ ջուր: Լճի հայելին կազմում է 0.8 կմ² և գտնվում է ծովի մակերևույթից 3032 մ բարձրության վրա: Առավելագույն խորությունը հասնում է 15 մ: Ձմռանը ջուրը ծածկվում է սառույցով, իսկ ամռանը՝ ալպյան մարգագետիններում գտնվող, երփներանգ ծաղիկներով շրջապատված բնության այդ չքնաղ գեղեցկուհին իր լազուրի փայլով շողշողում է՝ արևի ճառագայթներով ողողված: Այստեղ լճի գեղեցկությունն ու հրաբխային լեռների հմայիչ հատկությունները զուգորդվում են, որոնք բնականաբար զբոսաշրջային հետաքրքրություն են ներկայացնում:

Հրաբխային ծագման լճերից են նաև Աժդահակ, Արմաղան և մյուս լճերը, որոնք գտնվում են Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների և Ղարաբաղի բարձրավանդակի հանգած հրաբուխների խառնարաններում:

Հանրապետության տարածքում զբոսաշրջության առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև սառցադաշտային ծագում ունեցող լճերը, այդ թվում Քարի, Սև և այլն: Քարի լիճը գտնվում է Արագած լեռան հարավային լանջին 3185 մ բարձրության վրա: Լճի շրջագիծը 3–4 կմ է, իսկ առավելագույն խորությունը 8 մ: Լճի ջուրը քաղցրահամ է, վճիտ, ափերը տեղ–տեղ քարքարոտ են: Մարգագետնային գոտում, ձյունածածկ կատարների մեջ գտնվող այս զուլալ ջուրն իր առանձնահատուկ գեղեցկությամբ կարող է էկոզբոսաշրջության երթուղիների մեջ իր արժանի տեղը զբաղեցնել:

Զբոսաշրջության համար բնական անզուգական ռեկրեացիոն ռեսուրսներ են, հատկապես հանրապետության բարդ, բայց շատ հետաքրքիր, անդնդախոր, գեղատեսիլ կիրճերով հոսող գետերը, գահավիժող ջրվեժները:

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես Որոտան, Արփա, Հրազդան, Դեբեդ, Աղստև, Ողջի գետերի հովիտները: Ի դեպ, Որոտանի կիրճն իր խորությամբ (ավելի քան 700 մ) աշխարհում զիջում է միայն Կոլորադոյի աշխարհահռչակ կիրճին (ԱՄՆ), որը տեսնելու համար ամեն տարի միլիոնավոր զբոսաշրջիկներ են այցելում այնտեղ: Սակայն, Որոտանի կիրճն իր գեղեցկությամբ, Սատանի կամրջով ու բնական մյուս հրաշալիքներով, Տաթևի, Որոտնավանքի ու մյուս պատմաճարտարապետական հնագույն համալիրներով նույնպես զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Որոտանը Զանգեզուրի ամենամեծ գետն է (179 կմ): Այն սկիզբ է առնում Ղարաբաղի հրաբխային և Զանգեզուրի լեռնաշղթայի մերձեցման շրջանում գտնվող փոքրիկ լճերից և աղբյուրներից: Գետի գեղատեսիլ հատվածներից է Շաքի վտակի վրա գտնվող համանուն ջրվեժը: Որոտանի վրա ստեղծվել են Տոլորսի (90 մլն մ³ ծավալով) և Սպանդարյանի (270 մլն մ³ ծավալով) ջրամբարները: Ի դեպ, այս ջրամբարները նույնպես զբոսաշրջային հետաքրքրություն են ներկայացնում:

Այդպիսի անզուգական հետաքրքրություն են ներկայացնում նաև Արփայի կիրճը (Կեչուտի ջրամբարի, Արփա – Սևան ջրատար թունելի ու Ջերմուկի հրաշագեղ ջրվեժի հետ) հատկապես Ջերմուկի հանգույցում, ինչպես նաև Դեբեդ և Աղստև գետերը:

Դեբեդը հանրապետության հյուսիսային մասի ամենամեծ գետն է, որը կազմվում է Ձորագետ և Փամբակ գետերի միավորումից: Գետն ունի 178 կմ երկարություն, նրա ջրհավաք ավազանը 4000 կմ² է: Հանրապետության սահմաններում նրա վտակներից են Ախթալան, Շնողը, Մարցը և ուրիշներ: Դեբեդ գետի ու նրա վտակների զուլալ ջրերի զբոսաշրջային, հանգստյան հետաքրքրությունները զուգորդվում են նրա ավազանի անտառային գեղատեսիլ տարածքների հետ: Այդպիսի հետաքրքրություն է ներկայացնում նաև Աղստև գետը:

Աղստև գետը հանրապետության հյուսիսարևելյան մասով հոսող գետերից ամենաերկարն է: Սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի լանջերից բխող աղբյուրներից: Անտառապատ լանջերով ցած թափվելով՝ հասնում է Համզաչիմանի գոգավորություն և աստիճանաբար մխրճվում է գեղատեսիլ ձորի մեջ: Աղստևի երկարությունը 133 կմ է, որից 34 կմ Ադրբեջանի տարածքում:

Նրան շրջապատող անտառապատ լեռնալանջերից դեպի մայր գետն են հոսում Դիլիջան, Գետիկ, Աղդան, Ոսկեպար գետակները: Աղստևի ստորին հոսանքում կառուցված է ջրամբար:

Շատ կարևոր է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության պատմաճարտարապետական հուշարձանները աշխարհագրական տեղաբաշխման առումով զուգորդվում են բնական հրաշալիքների (հուշարձանների) հետ, որը զբոսաշրջության առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այսպես, օրինակ, Որոտանի հովտի բնական գեղեցկությունները համալրվում են Տաթևի, Որոտնավանքի հրաշագեղ կոթողներով, Արփայի հովտի անզուգական բնությունը (բնական բազալտե սյուներով և Ջերմուկի ջրվեժով)՝ Նորավանքի, Գլաձորի, Գնդեվանքի հին կոթողներով և Ջերմուկ քաղաքով: Դեբեդի անտառապատ հեքիաթային ձորը՝ Հաղպատի, Սանահինի և այլ եկեղեցական, պատմական համալիրներով ու մեծն Թումանյանի տուն–թանգարանով, Աղստևի հովիտը՝ Գոշավանքով ու գեղատեսիլ անտառներով շրջապատված Հաղարծնի եկեղեցական կոթողներով, Դիլիջանով:

Սևանա լճի բնական եզակի գեղեցկությունը համալրվում է նրա թերակղզու վրա գտնվող երկու հին վանքերով, Այրի վանքով, Սևան ՀԷԿ–ի ստորերկրյա շինությամբ, Արփա–Սևան թունելի ելքով:

Աշխարհի ոչ մի վայրում այսպիսի փոքր տարածքում չկան այդքան շատ բնական և ճարտարապետական հուշարձաններ, որքան Հայաստանի Հանրապետությունում:

Ջրային ռեսուրսների զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի կազմակերպման նշանակությունը թերի կլիներ, եթե չնշվի նաև հանրապետության հանքային ջրերի մասին:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են հանքային ջրերի 700 ավելի ելքեր, որոնցից ավելի քան 400 կարող են ունենալ գործնական նշանակություն: Հանրապետության բուժիչ հանքային ջրերի զգալի մասն իրենց որակական հատկանիշներով համաշխարհային չափանիշով առաջնակարգ տեղեր կարող են զբաղեցնել, եթե դրանց օգտագործումը դրվի միջազգային չափանիշների մակարդակի: Մեր հանքային բազմազան ջրերի թագն ու պսակն անկասկած Ջերմուկն է: Այն իր որակական հատկանիշներով, քիմիական բաղադրությամբ չի տարբերվում աշխարհահռչակ Կարլովի Վարիի (Չեխիա) հանքային ջրից, փաստորեն նրա նմանակն է: Սակայն, վերջինիս օգտագործումը, նրա բազայի վրա կազմակերպված կուրորտային համալիրը, սպասարկումն այն աստիճանի բարձր մակարդակի վրա է, որ շատ վաղուց համաշխարհային համբավ ունի և հսկայական եկամուտ է բերում: Ցավով պետք է

նշենք, որ Ջերմուկն իր պաշարներով, որակով. տեղանքի անզուգական գեղեցկությամբ, բուժման և ակտիվ հանգստի, զբոսաշրջության տեսակետից մեծ հետաքրքրություն ներկայացնելով հանդերձ, խիստ անբավարար է օգտագործվում: Ով գեթ մեկ անգամ եղել է Ջերմուկում, տեսել հանքային տաք ջրի, թամանյանական ոճով կառուցված սյունազարդ ըմպասրահը, խմել այդ անմահական ջուրը, եղել Ջերմուկի ձորում, հմայվել ջրվեժով, իր ամբողջ կյանքում չի կարող մոռանալ ոչ միայն հանքային ջրի, այլև տեղանքի անջնջելի հմայքը:

Այդ բուժիչ ջրի բազայի վրա ձևավորվել են կուրորտային համալիրներ, կառուցվել է Ջերմուկ քաղաքը: Վերջինս մեր հանրապետության հենց այն վայրն է, որը մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել միջազգային զբոսաշրջության ու հանգստի, բուժման տեսանկյունից:

Ջերմուկը մեր բնական ռեկրեացիոն ռեսուրսներից թերևս առաջինն է, որը կարող է հսկայական եկամուտներ բերել հանրապետությանը, եթե դրա համալիր օգտագործումը, դրա բազայի վրա հանգստի ու բուժման կազմակերպումը, սպասարկումը դրվի բարձր մակարդակի վրա: Հայտնի է, որ միջազգային շուկայում մեկ լիտր բարձրորակ հանքային ջրի արժեքը բարձր է նավթից: Տասնամյակներ շարունակ Ջերմուկի ըմպասրահի 7 ծորաններից հանքային ջուրն առատորեն հոսում, թափվում է գետի մեջ: Ի դեպ, հանքային այս հարստությունն անխնա է օգտագործվում նաև հանրապետության մյուս հանքավայրերում՝ Արզնիում, Հանքավանում, Դիլիջանում և մյուս վայրերում:

Ջերմուկի նշանակությունը զբոսաշրջության, հանգստի կազմակերպման և բուժիչ այդ կարևոր հանքային ջրի արտադրության, արտահանման բնագավառներում կմեծանա, եթե նրա տրանսպորտային հնարավորությունները կարգավորվի: Այժմ այն արտաքին աշխարհի հետ կապված է ավտոճանապարհով, որը խիստ անբավարար է այդպիսի եզակի հնարավորություններ ունեցող քաղաքի ռեսուրսները բազմակողմանի օգտագործելու համար: Գտնում ենք, որ հրամայական պահանջ է դարձել Ջողից Վարդենիսի լեռնաշղթայի վրայով դեպի Ջերմուկ երկաթուղու կառուցումը: Ի դեպ, այդ երկաթուղու կառուցումը ոչ միայն խոշոր դեր կխաղա Ջերմուկի տնտեսական հզորացման, հանքային ջրի արտադրության ավելացման և շատ հարմար տրանսպորտային միջոցով արտահանման այլև միջազգային զբոսաշրջության զարգացման համար: Խնդիրն այն է, որ երկաթուղով, զբոսաշրջության համար անզուգական Սևանա լճի ավազանը կարճ ճանապարհով, եզակի բարձր լեռնային գեղեցիկ վայրով, Ալագյոլեր բարձր լեռնային լճի ավազանով կկապվի մի այլ անզուգական վայրի՝ Ջերմուկի և Արփայի գեղատեսիլ ավազանի հետ: Սակայն, Արփայի ավազանի ռեկրեացիոն ռեսուրսները զբոսաշրջության և հանգստի նպատակով օգտագործելու համար շատ կարևոր նշանակություն կունենա նաև Երևան–Ջերմուկ օդային ուղու վերականգնումը:

Երևանից 22 կմ դեպի հյուսիս, Հրազդանի կիրճում և ձախափնյա սարավանդի վրա է գտնվում Արզնու առողջարանը: Առողջարանային համալիրի կառուցման աշխատանքներն սկսվել են 1925 թվից:

Արզնի առողջարանը բուժառողջարարական զբոսաշրջության զարգացման համար չափազանց նպաստավոր պայմաններ ունի:

Կլիման բարեխառն է, ձմեռը՝ մեղմ, ամառը՝ զով: Հուլիսի միջին ջերմաստիճանը 22.3°C է, հունվարինը՝ –5.2°C, արևափայլքի տևողությունը՝ տարեկան 2236 ժամ, տեղումների քանակը՝ 385 մմ:

Արզնի հանքային ջրերը հայտնի են հին ժամանակներից:

Բուժիչ հիմնական գործոններն են ածխաթթվային, նատրիում–քլորիդահիդրոկարբոնատային ջրերը: Բուժման մեթոդները՝ հանքային ջրով լոգանքները, ջրաբուժությունը և ֆիզիոթերապիան, բուժմարմնամարզությունը:

Այստեղ գործում են մեծահասակների և մանկական առողջարաններ լոգանքների շենքով և ըմպելասրահով:

Բուժվում են սիրտ–անոթային և ստամոքսաաղիքային համակարգի հիվանդություններ ունեցող հիվանդներ: Գործում է նաև սրտամկանի ինֆարկտով հիվանդների բուժումն ավարտելու բաժանմունքը:

Հանքային ջրի աղբյուրները բխում են 70–80 մետր խորությունից: Ընդհանուր հանքայնացումը 6–13 գր/լիտր է, ջերմաստիճանը՝ 15–23°C, CO_2–ի պարունակությունը՝ 1.8–3 գր/լիտր:

Արզնու բազայի վրա գործում է հանքային ջրերի շշալցման գործարանը:

Այժմ արդեն մեծ ճանաչում ունեն Հրազդան գետի միջին հոսանքներում գտնվող Հանքավանի, Բջնի–Արզականի և Մարմարիկի հանքային աղբյուրները:

Հանքավանի հանքային աղբյուրները գտնվում են Երևանից 85 կմ դեպի հյուսիս, ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: Հանքավանի աղբյուրների ջերմաստիճանը հասնում է 42°–ի, ջրերը հագեցած են ածխաթթու գազով: Թերապևտիկ մեծ նշանակություն ունեն աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար: Տեղի գեղատեսիլ բնությունը, բարենպաստ կլիմայական պայմանները, բուժիչ հանքային ջրերի աղբյուրների առկայությունը նպաստում են, որպեսզի Հանքավանը դառնա միջազգային նշանակության առողջարանային վայր:

6. Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմաճարտարապետական հուշարձաններն ու թանգարանները[x]

Բնական հրաշալիքներից բացի, Հայաստան աշխարհը հարուստ է նաև պատմաճարտարապետական անզուգական հուշարձաններով, որոնք միջազգային զբոսաշրջության համար նույնպես մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

---

[x] Այստեղ օգտագործված են Հայաստանի ճարտարապետությանը և մշակույթին վերաբերող հրապարակի վրա եղած աղբյուրների տվյալները, որոնք նշված են գրականության ցանկում:

Հայկական հնագույն մշակույթի համակարգում հատուկ տեղ է գրավում ճարտարապետությունը, ուր վառ արտահայտություն են գտել հայ ժողովրդի երևակայությունը, մտքի թռիչքն ու կառուցողական արվեստը: Եվ պատահական չէ, որ այսօր հազարամյակներ անց, Հայաստանում պատմության և բնության արհավիրքներին դիմադիր, իրենց վեհությամբ և դասական հպարտությամբ, կանգուն, կիսականգուն կամ ավեր վիճակով մեզ են հասել հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ:

Շինարարական աշխատանքները Հայկական լեռնաշխարհում սկզբնավորվել են նախապատմական շրջանում, հայ ժողովրդի կազմավորումից դեռ շատ առաջ:

Ավելի քան երկու հազար տարվա արհավիրքները ոչնչացրել են նախաքրիստոնեական Հայաստանի ճարտարապետական շատ հուշարձաններ:

Պաշտամունքի կառուցվածքների շինարարությունը հատկապես մեծ թափ է ստանում, երբ Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը 301 թվին քրիստոնեությունը հռչակում են որպես պետական կրոն: Քրիստոնեության ընդունման առաջին օրերին Գրիգոր Լուսավորիչը հիմնադրում է նոր հավատի անդրանիկ տաճարներն ու վկայարանները, որոնց թվում և 301–303 թթ. Էջմիածնի տաճարի կառուցումը: Ագանթագեղոսը բերում է տաճարի անունը բացատրող մի ավանդություն, որի համաձայն՝ Գրիգոր Լուսավորիչն երազում տեսնում է Քրիստոսին, Աստծո միածին որդուն, որը հրեղեն մուրճը ձեռքին՝ իջնում է երկնքից և ցույց է տալիս տաճարի կառուցման տեղը: Այստեղից էլ առաջացել է տաճարի անվանումը Էջմիածին, այսինքն՝ միածնի իջնելու տեղը: Էջմիածնի տաճարն առաջին քրիստոնեական եկեղեցին է ոչ միայն Հայաստանում, այլև առաջինն է ամբողջ քրիստոնեական աշխարհում:

Ըստ Թորոս Թորոմանյանի՝ Էջմիածնի տաճարի նախնական հատակագիծը մի ուղղանկյուն քառանկյունի էր, ներգծած հավասարաթև խաչով, որի չորս թևերը կազմում էին կիսաշրջան աբսիդներ: Տաճարը պսակվում էր հինգ գմբեթներով, որոնցից գլխավորը բարձրանում էր կենտրոնում, իսկ չորս փոքրերը՝ անկյունային խորանի վրա:

Տաճարի ներսում, գլխավոր գմբեթի տակ, կա ավանդական մի սեղան, որ «իջման սեղան» է կոչվում:

Ավագ սեղանի տակ պեղված է բազալտե մեծ կոթող, որն անհամեմատ շատ ավելի վաղ ժամանակների կառույց է (մ.թ.ա.) և վկայում է Էջմիածնի տաճարի կառուցման տեղի ավելի հին պաշտամունքային նշանակության մասին: Ավագ սեղանի տակ հայտնաբերվել է նաև կրակարան, որը հավանաբար վկայում է, որ եկեղեցին ժամանակավորապես կրակապաշտական տաճարի է վերածվել:

480–ական թվերին իշխան Վահան Մամիկոնյանի կողմից վերակառուցված կենտրոնագմբեթ, դրսից և ներսից խաչաձև տաճարի հորինվածքը պահպանվել է մինչև մեր օրերը:

Ավերված գլխավոր գմբեթը 1627 թ. վերակառուցել է Մովսես Սյունեցի

կաթողիկոսը, արևմտյան զանգակատունը 1654 թ. կառուցել է Փիլիպոս կաթողիկոսը:

Ապսիդների վրա երեք զանգակատները կառուցված են 1682 թ. Եղիազար կաթողիկոսի կողմից: Տաճարի արևելյան կողմի ավանդատունը կառուցված է 1868 թ. Գևորգ Դ. կաթողիկոսի օրոք:

Էջմիածնի տեսարժան, մեծ հետաքրքրություն ներկայացնող կոթողներից է Գայանե եկեղեցին: Այն գտնվում է քաղաքի հարավային մասում, վանքի լճից մի փոքր հեռու: «Գայանե» եկեղեցին հայկական ճարտարապետության ծաղկման առաջին շրջանի լավագույն հուշարձաններից մեկն է: Գմբեթահարկ բազիլիկա է, կառուցված 630 թ. Եզր կաթողիկոսի կողմից: Նախագավիթը կառուցված է 1683 թ. Եղիազար Այնթապցի կաթողիկոսի կողմից:

Էջմիածնի արևելյան ծայրամասում է գտնվում «Շողակաթ» եկեղեցին: Նահատակված կույսերի հիշատակին նվիրված այս եկեղեցին ավելի ուշ շրջանի գործ է և կառուցվել է 1694 թ. Նահապետ Ա Եղեսացի կաթողիկոսի կողմից, VII դարում ավերված եկեղեցու տեղում: Հորինվածքով այն գմբեթահարկ սրահ է, ունի նախագավիթ, զանգակատնով:

Էջմիածին քաղաքի արևելյան ծայրում, ամբողջ շուքով վեր է խոյանում Հռիփսիմեի եկեղեցին: Այն կառուցվել է 618 թ., Կոմիտաս կաթողիկոսի օրոք:

Էջմիածին քաղաքից երեք կիլոմետր արևելք է գտնվում հայ ճարտարապետության անզուգական մի այլ յուրատիպ կոթող՝ Զվարթնոց կամ ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարը: Զվարթնոց տաճարը և կից կաթողիկոսական պալատը կառուցել է Ներսես Գ. Շինող կաթողիկոսը 641–661 թթ.: Այն կառուցվել է Վաղարշապատից (Էջմիածին) Արտաշատ տանող հին ճանապարհի վրա, այնտեղ, ուր միմյանց են հանդիպել Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը: Տաճարը կանգուն է եղել ավելի քան 300 տարի և կործանվել է երկրաշարժից: Պեղվել է 1900–1907 թթ. Խաչիկ Վարդապետ Դաղյանի կողմից: Այժմ պահպանված են տաճարի և պալատի ավերակները: Կատարվել են մասնակի վերականգնման աշխատանքներ:

Ինչպես Էջմիածնի եկեղեցական նշանավոր կոթողներն, այնպես էլ Զվարթնոցը տեսնելու համար ամեն տարի այցելում են մեծ թվով արտասահմանյան զբոսաշրջիկներ: Վերջիններիս համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Էջմիածնի մայր տաճարի թանգարանը, որտեղ պահվում են նաև հայկական այբուբենի ոսկեձույլ բոլոր տառերը: Էջմիածին այցելող զբոսաշրջիկների համար Մայր տաճարի, Գայանեի, Հռիփսիմեի, Շողակաթ եկեղեցիներից բացի մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Ամենայն հայոց կաթողիկոսի վեհարանի շենքը, մայր տաճարի բակում հանգող հայոց բոլոր կաթողիկոսների մարմարածածկ շիրիմները, եկեղեցու շրջակայքում գտնվող անզուգական խաչքարերը, ճեմարանի շենքը և վերջերս կառուցված Տրդատյան դուռ կամարը:

Զբոսաշրջության համար առանձնահատուկ մեծ հետաքրքրություն է ներկայացնում նախաքրիստոնեական ժամանակաշրջանի կոթող Գառնի ամրո-

ցի հեթանոսական տաճարը: Այն կառուցվել է հայոց Տրդատ Ա. թագավորի օրոք, առաջին դարի երկրորդ կեսին: Հատակագիծն ուղղանկյուն սրահ է, շրջապատված 24 սյուներով՝ դրված բարձր պատվանդանի վրա: Տաճարի սյունազարդ կառուցվածքը, որ կանգնեցված է ամրոցի հարավարևելյան հատվածի բարձունքի վրա, վեհորեն ներդաշնակում է շրջապատի հիասքանչ բնանկարին: Հրվանդանից ցած՝ ավելի քան 300 մետր խորության վրա, Ազատ գետն է մեղմ աղմկում, շուրջը դեպի երկինք են ձգվում Գեղամա լեռները: Շենքը գլխավոր ճակատով ուղղված է դեպի հյուսիս, ուր և գտնվում է մուտքը: Գլխավոր ճակատի ամբողջ լայնությամբ ձգվում են 0.3 մետր բարձրության ինն զանգվածային աստիճաններ, որոնք տաճարին տալիս են հանդիսավորություն և վեհություն:

Հայաստանի Հանրապետության տարածքում կան մեծ թվով վանքային խոշոր համալիրներ, որոնցից Գեղարդն իր ժայռափոր կառուցվածքներով գրավում է առանձնահատուկ տեղ: Որպես այդպիսին, այն շատ յուրատիպ է ընդհանուր առմամբ:

Երևանից մոտ 40 կմ դեպի հարավ–արևելք, Երևան–Գառնի–Գողթ երթուղու գեղատեսիլ ձորում վեր է խոյանում Գեղարդի ժայռափոր վանքը: Ավանդության համաձայն Գեղարդի վանքը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը IV դարի առաջին տարիներին: Սկզբնական շրջանում, տեղում գոյություն ունեցած քարայրային կառուցվածքների պատճառով վանքը կոչվել է «Այրիվանք», իսկ XIII դարից՝ «Գեղարդ»:

Գեղարդը միջնադարյան Հայաստանի հոգևոր մշակույթի նշանավոր կենտրոններից էր:

Գեղարդի ճարտարապետական խումբը դասվում է հայ մշակույթի ամենանշանակալից ստեղծագործությունների շարքին:

Շրջապատող բնությունն ու ճարտարապետական ամբողջ խումբը միմյանց օրգանական շարունակությունն են կազմում:

Համաշխարհային ճարտարապետության համակարգում յուրատիպ է նաև Խոր Վիրապի վանքը, որը գտնվում է Արարատյան դաշտում, Արաքս գետի ափին, որտեղ արգելափակված է եղել Գրիգոր Լուսավորիչը: Այստեղ գտնվող ս. Աստվածածին և ս. Լուսավորիչ եկեղեցիները կառուցված են 1661 թվին, մինչ այդ գոյություն ունեցող եկեղեցիների տեղում: Հայ ժողովրդի համար առանձնահատուկ սրբավայր է Օշականի եկեղեցին: Աշտարակի շրջանի Օշական գյուղում գտնվող ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին կառուցված է գյուղում գտնվող ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանի վրա եղած հին եկեղեցու հիմքերի վրա: Այն կառուցվել է 1875 թ. Գևորգ Դ կաթողիկոսի կողմից: Ունի թաղածածկ սրահի հորինվածք:

Զբոսաշրջային յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Եղվարդի երկհարկանի եկեղեցի դամբարանը, որը կառուցված է 1321–1328 թթ.:

Այդպիսի հետաքրքրություն են ներկայացնում նաև Աշտարակի Կարմրավոր եկեղեցին, որը կառուցվել է VII դարում:

Աշտարակում է գտնվում նաև ս. Մարինե եկեղեցին՝ կառուցված XIII դարում:

Աշտարակի տարածաշրջանի Հովհաննավանք գյուղում է գտնվում համանուն եկեղեցին, կառուցված IV–V դարերում, որն ունի թաղածածկ սրահ: Այս եկեղեցու հարավային պատին կից 1216–1221 թթ. կառուցվել է վանքի գլխավոր ս. Կարապետ եկեղեցին՝ գմբեթահարկ սրահի հորինվածքով:

Զբոսաշրջիկներին շատ հետաքրքրում է յուրահատուկ դիրք ունեցող Ամբերդ դղյակ եկեղեցին, որը գտնվում է Արագած լեռան հարավային լանջին: Այս եկեղեցին կառուցել է Վահրամ Պահլավունին 1026 թ.:

Արուճի տաճարը գմբեթահարկ սրահ է, կառուցված VII դարի 70–ական թվերին, իշխան Գրիգոր Մամիկոնյանի կողմից՝ Արուճում:

Հայկական եկեղեցական ճարտարապետության համակարգում եզակի երևույթ է Նորավանքի հուշարձանախումբը: Այն գտնվում է Եղեգնաձորի տարածաշրջանի Ամաղու գյուղից երկու կիլոմետր հեռավորության վրա և բաղկացած է երկու եկեղեցիներից: Այս համալիրի, ս. Կարապետ եկեղեցու (1221–1227 թթ.) արևմտյան կողմում 1261 թվին կառուցվել է գավիթը: Ս. Գրիգոր թաղածածկ եկեղեցին կամ Օրբելյան իշխանների դամբարանը, կառուցված է ս. Կարապետին կից՝ 1275 թվին: Ս. Աստվածածին երկհարկանի եզակի եկեղեցի–դամբարանը կառուցված է 1339 թվին Բուրթել Օրբելյանի կողմից: Եկեղեցական այս համալիրը զբոսաշրջիկներին գրավում է ոչ միայն ճարտարապետական հիասքանչ լուծումներով, այլև ռելիեֆային դիրքով, շրջակայքի լեռների գեղեցկությամբ:

Նույն տարածաշրջանում է գտնվում Ցախաց քար վանքը՝ կառուցված Վայոց ձորի Եղեգիս ավանից վեց կիլոմետր հեռավորության վրա: Այն բաղկացած է երկու հուշարձանախմբից՝ արևմտյանը, որ առավել հին է, ունի երկու եկեղեցի՝ ս. Աստվածածին (X դար) և ս. Հովհաննես: Արևելյան խմբի ս. Կարապետ եկեղեցին գմբեթահարկ սրահ է՝ կառուցված 1041 թ.: Նույն թվին է կառուցվել նաև ս. Նշան թաղակածածկ եկեղեցին, որի արևմտյան կողմի ուղղանկյունաձև հատակագիծ ունեցող նախամուտք դամբարանի վրա կառուցված է փոքր մատուռ:

Այս տարածաշրջանում է նաև Սպիտակավոր վանքը: Վանքի ս. Աստվածածին եկեղեցին գմբեթավոր սրահ է՝ կառուցված XIII դարում: Եկեղեցին արևմտյան կողմից ունի գավիթ (XIV դար), հարուստ զարդաքանդակված շքամուտքով:

Զբոսաշրջային մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Գլաձորի համալսարանը, որը գտնվել է պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառի Գլաձոր կոչվող վայրում (ներկայումս Եղեգնաձորի տարածաշրջան):

XIII–XIV դարերում ստեղծված (հիմնական տարեթիվը համարվում է 1280 թ.) Գլաձորի համալսարանն ուսումնագիտական կենտրոն լինելուց բացի, եղել է նաև քաղաքական մտքի խոշոր կենտրոն: Համալսարանի հիմ-

նաղրման նախաձեռնողներն են Խաղբակյան իշխանը և մանկավարժ ու գիտնական Ներսես Մշեցին:

Համալսարանը գործել է Թանահատի Ս. Ստեփանոս վանքի հովանավորության ներքո:

Գլաձորի միջնադարյան համալսարանում ուսանողության և ուսուցչության համար գոյություն են ունեցել բնակելի մի քանի շենքեր, պարապմունքի մեկ–երկու լսարան և տնտեսական բնույթի մի շարք կառույցներ:

Իսկ նույն տարածաշրջանի Արենի գյուղի ս. Աստվածածին եկեղեցին ունի գմբեթահարկ սրահի հորինվածք: Այն կառուցել է Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսը 1221 թվին:

Իր ճարտարապետական կառուցվածքով և աշխարհագրական դիրքի գեղեցկությամբ զբոսաշրջային մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հաղարծնի վանքը: Այն գտնվում է Դիլիջանից 18 կմ հեռավորության վրա, անտառի մեջ: Հաղարծնի վանքի համալիրը բաղկացած է ս. Աստվածածին (1281 թ.), ս. Գրիգոր (XI դար) և ս. Ստեփանոս եկեղեցիներից, ս. Գրիգոր եկեղեցու գավթից (XII–դարի վերջ և XIII–ի սկիզբ) և ճարտարապետ Մինասի կողմից կառուցված սեղանատնից (1248 թ.):

Այդ տարածաշրջանում է նաև եզակի նշանակություն ունեցող Գոշավանքի համալիրը: Այն բաղկացած է ս. Աստվածածին եկեղեցուց (1191–1196 թթ.) և կից կառուցված գավթից (1197 թ.), կառուցված Մխիթար Գոշ վարդապետի օրոք, Մխիթար հյուսն ճարտարապետի կողմից: Ս. Աստվածածին եկեղեցու և գավթի հարավային կողմում կառուցված են ս. Գրիգոր (1237 թ.) և ս. Լուսավորիչ (1241 թ.) եկեղեցիները: Գավթի հյուսիսային կողմում 1231 թվին կառուցված գրադարանի վրա 1291 թվին բարձրացվում է զանգակատունը: Եկեղեցական այս մեծ հետաքրքրություն ներկայացնող համալիրը հանրահայտ է նաև նրանով, որ այստեղ է գտնվում հայկական խաչքարերի զարդը, որը իր նրբությամբ կարծես ասեղնագործված է: Պողոս վարպետի երկու խաչքարերից մեկը 1935 թ–ին տեղափոխվել է ՀՊՊԹ: Ըստ արձանագրության՝ տեղում մնացած խաչքարը ստեղծվել է 1291 թվին:

Իջևանի տարածաշրջանում՝ Աչաջուր գյուղի մոտ է գտնվում նաև Մակարավանքը: Այն բաղկացած է գլխավոր տաճարից (1205 թ.), Խաչաձև եկեղեցուց (X դար), ս. Աստվածածին կլոր եկեղեցուց (1198 թ.), գավիթից (XIII դարի սկիզբ), մատուռից և վանական այլ կառուցվածքներից:

Հանրապետության հյուսիսային մասում, Լոռու մարզի տարածքում են գտնվում Սանահինի ու Հաղպատի եկեղեցական համալիրները:

Սանահինի վանքը գտնվում է Թումանյանի տարածաշրջանի համանուն գյուղում: Այն հայկական ճարտարապետության առավել նշանավոր հուշարձանախմբերից է, որը կառուցվել է X–XIII դդ.: Բյուզանդիայից հալածված մի խումբ հայ կրոնավորներ X դարի առաջին կեսին այստեղ հիմնադրել են ս. Աստվածածին եկեղեցին, որի շուրջը X դարի երկրորդ կեսերին կառուցվել են ս. Ամենափրկիչ գլխավոր տաճարը (966 թ.), Մագիստրոսի ճեմարանը

(XI դար), ս. Գրիգոր Լուսավորիչ բոլորակ եկեղեցին (1061 թ.), գրատունը (1063 թ.), Ամենափրկիչ տաճարի գավիթը (1185 թ.), Մեծ գավիթ կամ նախագավիթը (1211 թ.), գրատուն նախագավիթը (XIII դարի առաջին կես) և զանգակատունը (XIII դար):

Ինչպես տեսնում ենք, իր կառուցվածքով այս համալիրը զբոսաշրջային առումով մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել: Այդպիսին է նաև Հաղպատի եկեղեցական համալիրը, որը գտնվում է Թումանյանի տարածաշրջանում, Սանահին գյուղից 3 կմ հեռավորության վրա: Այն հիմնադրվել է հայոց Աբաս Բագրատունի թագավորի օրոք (928–951 թթ.):

Վանքի գլխավոր տաճարը՝ ս. Նշանը, կառուցվել է 967–991 թթ. Խոսրովանուշ թագուհու և նրա որդիներ Գուրգենի և Սմբատի կողմից: Տաճարի շրջապատում կառուցվել են ս. Գրիգոր (1005 թ.) և ս. Աստվածածին եկեղեցիները, ս. Նշան եկեղեցու գավիթը (1201 թ.), մեծ ժամատունը (1257 թ.), իսկ ժամանատան և ս. Նշանի միջանկյալ տարածքում կառուցվել է կամարասրահը, գրատունը (XIII դար), զանգակատունը (1245 թ.) և սեղանատունը (XIII դար):

Հաղպատի այս բարդ, հետաքրքիր կառուցվածք ունեցող համալիրը նշանավոր է նաև նրանով, որ հայ խոշոր բանաստեղծ, երգահան, աշուղ Սայաթ–Նովան այստեղ ապրել և ստեղծագործել է մի քանի տարի, երբ որ նրան Թբիլիսիից աքսորել էին: Հենց այստեղ էլ նա գրել է իր հանրահայտ «Աշխարհս մե փանջարա է» երգը: Հաղպատ այցելող զբոսաշրջիկները կարող են տեսնել այն խուցը, որը աքսորի ժամանակ տրամադրվել էր Սայաթ–Նովային, և որն ունի մի փոքր պատուհան, որով նա կապ ուներ «աշխարհի» հետ:

Թումանյանի տարածաշրջանում են գտնվում նաև Խորակերտ վանքն ու Օձունի տաճարը: Խորակերտ վանքը գտնվում է Լալվար լեռան արևմտյան լանջին: Վանքի եկեղեցին գմբեթահարկ սրահ է, կառուցված XIII դարի առաջին կեսին, իսկ կից գավիթը՝ 1252 թվին:

Իսկ Օձունի տաճարը VI–VII դարերում կառուցված գմբեթահարկ բազիլիկա է, հյուսիսից և հարավից ունի կամարակապ սրահներ, որոնք արևմտյան ճակատում դառնում են խուլ պատ՝ մուտքի բացվածքով: Այն գտնվում է համանուն գյուղում:

Որպես հնություն՝ զբոսաշրջային հետաքրքրություն է ներկայացնում Մաստարայի ս. Հովհաննես տաճարը, որը կառուցվել է VI դարի վերջին: Այն գտնվում է Թալինի տարածաշրջանի Մաստարա գյուղում: Կենտրոնագմբեթ, խաչաձև, քառաբսիդ հորինվածք է: Այժմյան կանգուն վիճակով մեզ է հասել մասնակի վերանորոգումներով:

Երկու եկեղեցի կա բուն Թալին բնակավայրում: Մասնավորապես, Թալինի փոքր եկեղեցին կառուցել է Ներսեհ Կամսարական իշխանը, VII դարի երկրորդ կեսին: Խաչաձև, եռաբսիդ, կենտրոնագմբեթ եկեղեցի է:

Իսկ Թալինի մեծ եկեղեցին կամ Կաթողիկե եկեղեցին նույնպես կառուցված է VII դարում, Կամսարական իշխանների կողմից: Եռաբսիդ գմբեթա-

հարկ բազիլիկա է: 1840 թվին երկրաշարժից ավերվել են գմբեթի և պատերի հարավարևմտյան մասերը:

Շիրակի դաշտում է գտնվում հանրահայտ Լմբատավանքի ս. Ստեփանոս եկեղեցին: Այն կառուցվել է VII դարում, խաչաթև, կենտրոնագմբեթ կառույց է: Գտնվում է Արթիկ քաղաքի մոտ:

Զբոսաշրջության առումով մեծ հետաքրքրություն ունի անտառներով, գեղատեսիլ սարերով շրջապատված Ծաղկաձորում գտնվող Կեչառիսի վանքը: Ճարտարապետական այս համալիրը բաղկացած է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց, կառուցված 1033 թվին, Գրիգոր Մագիստրոսի կողմից, նրան կից գավթից (XIII դարի սկիզբ), ս. Նշան եկեղեցուց (XII դար) և Կաթողիկե եկեղեցուց կառուցված XIII դարում, Խաղբակյան Վասակ իշխանի կողմից և ս. Հարություն փոքրիկ եկեղեցուց (1220 թ.):

Զբոսաշրջիկներին Ծաղկաձորը շատ հետաքրքրում է ոչ միայն Կեչառիսի ճարտարապետական այդ համալիրի, այլև այստեղ գտնվող հայ ականավոր գիտնականներ Օրբելյան երեք եղբայրների (որոնք ծնվել են Ծաղկաձորում) թանգարանի, Ծաղկաձոր քաղաքից մինչև Ալիբեկ սարը ձգվող ճոպանուղու, Ծաղկաձորի մարզական բազայի, այստեղ գտնվող բազմաթիվ հանգստյան տների և առհասարակ այս կուրորտային քաղաքի անզուգական, մեղմ կլիմայական պայմանները:

Հայաստանի միջնադարյան ճարտարապետական կոթողներից է Բջնու ս. Աստվածածին եկեղեցին: Այն գտնվում է Բջնի գյուղում, կառուցվել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից 1031 թվին:

Հայաստանի պատմաճարտարապետական, եկեղեցական, կրթագիտական մեծ դեր խաղացած կենտրոններից է Տաթևի վանքի համալիրը, պատմական Սյունիքի կրոնական կենտրոնը: Այն գտնվում է Գորիսի տարածաշրջանի Տաթև գյուղում, Որոտան գետի անդնդախոր, գեղատեսիլ կիրճի պռնկին: Այս համալիրի մեջ մտնում են ս. Պողոս Պետրոս գլխավոր տաճարը, կառուցված 895–906 թթ. Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի կողմից, Գրիգոր Լուսավորիչ թաղածածկ եկեղեցին (848 թ.): Վանքի պարսպամուտքի և դամբարանի թաղակապ տանիքների վրա XII դարում կառուցվել է ս. Աստվածածին եկեղեցին: Զբոսաշրջային մեծ հետաքրքրություն են ներկայացնում վանքի ճոճվող հուշասյունը (շարժվող գավազան): Այն կառուցվել է 895 թվին:

Տաթևի վանքը բազմիցս ավերվել է սելջուկների և այլ արշավանքների ժամանակ և երկրաշարժերի պատճառով: Վերջին անգամ, 1931 թվին երկրաշարժից կործանվել են տաճարի գմբեթն ու զանգակատունը: Այժմ այն իր ամբողջ վեհությամբ վերականգնված ու բարեկարգված է և մեծ տպավորություն է թողնում այցելուների վրա:

Տաթևի համալիրի մասին պատկերացումն ամբողջական լինելու համար, նշենք, որ նրա կազմում ժամանակին խոշոր դեր է խաղացել Տաթևի հանրահայտ համալսարանը (որի շենքն այժմ էլ պահպանվում է և գտնվում է անմի-

ջապես Որոտանի կիրճում), գետի ափին, որից ուղիղ վերև՝ բարձունքի պռնկին էլ վանքն է:

Հանրապետության եկեղեցական կոթողների շարքում, անկասկած, չենք կարող չնշել Երևանի ս. Սարգիս (կառուցված 1450 թվին) և հատկապես XX դարի վերջերին կառուցված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, որոնք միշտ մարդաշատ են լինում, այդ թվում այստեղ են այցելում մեծ թվով արտասահմանյան զբոսաշրջիկներ:

Հայ ժողովուրդն իր հազարամյակների պատմության ընթացքում ստեղծել է մշակութային բազում արժեքներ, որոնք քաղաքակիրթ աշխարհում լայն ճանաչման և գնահատանքի են արժանացել: Հայկական միջնադարյան ճարտարապետությունը, մանրանկարչությունը և երաժշտությունը վաղուց դուրս են եկել հայ ժողովրդի մշակույթի պատմության սահմաններից և պատշաճ տեղ գրավել համաշխարհային արվեստի ընդհանուր պատմության մեջ:

Եկեղեցական հոյակերտ կոթողներից բացի, հայկական միջնադարյան արվեստի ինքնատիպ նմուշներից են «խաչքարեր» հուշարձանները, որոնք լայն տարածում եմ գտել Հայաստանի բոլոր նահանգներում:

Խաչքարերը, որպես հայկական քանդակագործության անբաժանելի մաս, իրենց բարձր արվեստով և ազգային վառ նկարագրով հայ ժողովրդի քրիստոնեական հավատի, հայրենասիրության, նրա գեղագիտական բարձր ճաշակի արտահայտություններից են: Որպես այդպիսիք, խաչքարերը, իրավամբ, իրենց արժանի տեղն ունեն համաշխարհային արվեստի գանձարանում: «Խաչքարը» միջնադարյան Հայաստանի մշակույթին բնորոշ կոթող–հուշարձան է՝ խաչի պատկերով:

Աշխարհի տարբեր երկրներից ժամանող զբոսաշրջիկները Էջմիածնի, Գառնու, Գեղարդի, Տաթևի, Սանահինի, Հաղարծնի, Գոշավանքի ու եկեղեցական այլ հնամենիներների հետ միասին շատ մեծ հետաքրքրությամբ են դիտում, ուսումնասիրում Հայաստանին ու հայ ժողովրդին յուրահատուկ խաչքարերը:

Հայոց բնաշխարհի բնական հրաշալիքները, նրա պատմությունն ու հուշարձանները հնուց ի վեր գրավել են տարաշխարհիկ հետաքրքրություններ որոնողներին: ՀՀ զբոսաշրջության զարգացման բազմազան նախապայմանների համակարգում առանձնահատուկ տեղ ունի Երևան քաղաքը:

Հայտնի է, որ քաղաքամայր Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է, և նրա տարիքը 50 տարով մեծ է աշխարհահռչակ Հռոմից (ի դեպ 2003 թվին լրացել է Երևանի 2785–ամյակը): Մեր թվարկությունից առաջ 782 թ. Արգիշտի թագավորի կողմից կառուցված և 2785 տարվա պատմություն ունեցող Երևանի հիմնադրման ժամանակն ու տարիքի անժխտելի փաստն այժմյան Երևան քաղաքի հարավարևելյան մասում գտնվող բլրի վրա հայտնաբերված Էրեբունու փլատակներն են, որտեղ 1968 թ. մեր մայրաքաղաքի 2750–ամյակի կապակցությամբ կառուցվել է «Էրեբունի» թանգարանը:

Երևանի հիմնադրման քարագիր արձանագրության մեջ նրա հիմնադիր

Ուրարտուի թագավոր Արգիշտի Ա–ն վկայում է «Խալդ աստծու մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք ի հզորություն Բիայնայի և ի ահաբեկում թշամու երկրի»:

Զբոսաշրջիկների համար Երևանի հիմնադրման պատմության վերաբերյալ այս թանգարանում ցուցադրված բազմաթիվ ցուցանմուշներից, վերականգնված շինություններից բացի, յուրօրինակ հետաքրքրություն է ներկայացնում այդտեղ հայտնաբերված մեր մայրաքաղաքի «սեպագիր արձանագրությունը», «անձնագիրը»: Խոսքը այդտեղ կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված բազալտի այն մշակված խոշոր կտորի մասին է, որի վրա սեպագրված է Էրեբունի–Երևանի հիմնադրման տարին: Մեր մայրաքաղաքի հիմնադրման վերաբերյալ այս քարակերտ փաստը թերևս երևույթ է աշխարհի չափանիշով: Այսպիսով, Էրեբունի բլրի վրա կառուցված թանգարանը, վերականգնված հնագույն շինություններն ու այդ բազալտե «անձնագիրը» այժմյան մեր մայրաքաղաքի միջազգային զբոսաշրջության համար այստեղ առկա ձեռակերտ մեծ հետաքրքրություն ներկայացնող համալիրների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում:

Երևան քաղաքում պահպանված և զգալի թիվ կազմող պատմական հուշարձաններից զատ, այստեղ կառուցվել են շատ մեծ թվով հոյակերտ կոթողներ, համալիրներ, հուշարձաններ, որոնք իրենց ճարտարապետական բնույթով, բնական քարանյութի օգտագործման վարպետությամբ, բովանդակությամբ շատ դեպքերում չեն զիջում աշխարհի հանրահայտ քաղաքների ձեռակերտ կոթողներին:

Մենք նկատի ունենք Ալեքսանդր Թամանյանի հանճարով կերտված, ձևավորված Երևանի կենտրոնական հրապարակը՝ Հանրապետության հրապարակը շրջափակող կառավարական 1–ին և 2–րդ տները, փոստը, արհեստակցական միությունների ու «Արմենիա» հյուրանոցի շենքերը, Հայաստանի պատմության թանգարանի շենքը և նրա դիմաց կառուցված ջրավազանը՝ շատ հետաքրքիր շատրվաններով: Աշխարհի տարբեր երկրներից ժամանող զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն ներկայացնող այս համալիրի շարունակությունն է կազմում Երևանի հիմնադրման 2750–ամյակին նվիրված 2750 շատրվաններից բաղկացած համալիրը Շահումյանի հրապարակում:

Արտասահմանցի ոչ մի զբոսաշրջիկ անտարբեր չի կարող դիտել Ծիծեռնակաբերդի Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված շատ յուրատիպ բազալտակերտ հուշահամալիրը, ցեղասպանության թանգարանը և դրանից ոչ մեծ հեռավորության վրա կառուցված Մարզահամերգային համալիրը: Եզակի հետաքրքրություն է ներկայացնում Ա. Թամանյանի հանճարով կերտած Երևանի Օպերայի և բալետի գրանիտակուռ յուրատիպ շենքը: Զբոսաշրջության համար ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում Երևանի պատմության, Թումանյանի, Իսահակյանի, Ա. Խաչատրյանի, Մ. Սարյանի, Ա. Փարաջանովի թանգարանները, աշխարհահռչակ հայկական

հնագույն ձեռագրերի բազալտակուռ թանգարանը՝ Մատենադարանը, Սասունցի Դավթի, Մայր Հայաստանի և շատ այլ հուշարձաններ:

Իսկ ընդհանուր առմամբ, Երևան քաղաքը, հիրավի, մի թանգարան է, որը իր բազմագույն տուֆակերտ շենքերով, փողոցներով, հրապարակներով, հուշարձաններով կարող է զբոսաշրջության առումով դասվել այդ տեսակետից աշխարհի նշանավոր քաղաքների շարքը: Սակայն, այդ առավելություններից մեր մայրաքաղաքը կարող է օգտվել և այն կարող է դառնալ անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության եկամտի կարևոր աղբյուրներից մեկը, եթե այստեղ ստեղծվեն զբոսաշրջիկներին սպասարկող, միջազգային չափանիշներին համապատասխանող պայմաններ: Վերջին տասը տարիներին կարծես թե այդ բացը լրացվում է, Երևանում արդեն շահագործման են հանձնվել բարձր կարգի հյուրանոցներ և սպասարկման այլ օբյեկտներ:

7. Էկոզբոսաշրջությունը՝ որպես Հայաստանի Հանրապետության միջազգային զբոսաշրջության զարգացման և տնտեսական աճի հիմնախնդիր

Էկոլոգիական զբոսաշրջությունը ժամանակակից զբոսաշրջության համակարգում ավելի ու ավելի ծանրակշիռ տեղ է զբաղեցնում:

Տնտեսության այդ նոր բնագավառի տեսակարար կշռի արագորեն բարձրացումը պայմանավորված է համաշխարհային չափանիշով, էկոլոգիական ճգնաժամի վտանգով: Խնդիրն այն է, որ ժամանակակից տեխնիկական միջոցներով իրականացվող զբոսաշրջությունն զգալիորեն ծանրացնում է շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը: Այն բացասաբար է անդրադառնում ինչպես բնական ռեկրեացիոն ռեսուրսների՝ շրջակա օդային զանգվածի, բուսական, կենդանական աշխարհի, ջրային, այնպես էլ բազմատեսակ հուշարձանների, պատմաճարտարապետական կոթողների վրա: Այժմ արդեն համաշխարհային չափանիշով միջազգային զբոսաշրջիկների թիվը տարեկան անցնում է 600 միլիոնից: Պետք է պատկերացնել, թե այսքան զբոսաշրջիկների տեղափոխությունը ժամանակակից տրանսպորտային միջոցներով ինչպիսի ազդեցություն կարող է թողնել շրջակա միջավայրի վրա: Բավական է ասել, որ երկրագնդի անտառները տարեկան միջին հաշվով կրճատվում են 25 մլն հա–ով:

Էկոլոգիական զբոսաշրջության զարգացումը շատ կարևոր է բոլոր երկրների համար: Սակայն այն հույժ կարևոր է հատկապես այն երկրների համար, որոնք հանրահայտ են եզակի ռեկրեացիոն ռեսուրսներով, սակայն դրանց անտառային, ջրային ռեսուրսները տարածական առումով սուղ են: Այդ երկրների թվին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը: Էկոզբոսաշրջությունը մեր հանրապետության պայմաններում արդյունավետ կարող է լինել ոչ միայն մեր տարածական առումով սահմանափակ (բայց

խիստ հետաքրքրաշարժ) բնական ռեկրեացիոն ռեսուրսների պահպանության առումով, այլև տիպիկ լեռնային խիստ կտրտված ռելիեֆային պայմանների առանձնահատկություններից ելնելով: Այսպիսի պայմաններում մեծ հետաքրքրություն ներկայացնող բարձրաբերձ հրաբխային լճերը, բնական հուշարձանները, լեռնային անդնդախոր կիրճերը, եկեղեցական և ճարտարապետական կոթողները մատչելի են ոչ թե ավտոմեքենաների, այլ ավանդական տրանսպորտային միջոցներով՝ ձիերով, ջորիներով, հետիոտն: Ի դեպ, զբոսաշրջության այս ձևը վաղուց արմատավորված է զբոսաշրջության առումով մեծ հետաքրքրություն ներկայացնող շատ երկրներում, հատկապես արգելոցային վայրերում: Մեր հանրապետությունում էկոզբոսաշրջությունը (ինչպես և տնտեսության մյուս բոլոր ճյուղերը) նույնպես պահանջում է ներդրումային նպատակային քաղաքականություն:

Մեր նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս բնագավառում (մեր պայմաններում) առանձնապես խոշոր ներդրումներ չեն պահանջվում: Սակայն, դրանցից ստացվող տնտեսական ու հատկապես՝ էկոլոգիական արդյունավետությունը նշանակալից կլինի:

Էկոզբոսաշրջությունը խթան կհանդիսանա մեր բոլոր լեռնային այն շրջաններում, որտեղ կան զբոսաշրջության մեծ հետաքրքրություն ներկայացնող ռեսուրսներ, արգելոցներ, արգելավայրեր, նորից վերակենդանացնել հայկական փառաբանված ձիաբուծությունը: Էկոզբոսաշրջությունն առավելապես նպատակահարմար է զարգացնել Սյունիքում, Վայոց Ձորում, Սևանի ավազանում, Լոռու և Արագածոտնի մարզերում, որտեղ կան ավտոմեքենաների համար դժվարամատչ բնական ու մարդածին բազմազան հրաշալիքներ: Հայտնի է, որ հատուկ պետական օրենք է ընդունված Սևանի էկոհամակարգը պահպանելու համար: Հետևաբար, նպատակահարմար է հատկապես ամռան ամիսներին Սևանի ազգային պարկի ամբողջ տարածքում դադարեցնել ավտոմեքենաների երթևեկությունը զբոսանքի, հանգստի նպատակներով և այդպիսիք իրականացնել ձիազբոսանքով կամ հետիոտն:

Զբոսաշրջության այս ձևը խիստ անհրաժեշտ է Դիլիջանի արգելոցի և առհասարակ Աղստևի ավազանի, Խոսրավի, Շիկահողի արգելոցների բնական հրաշալիքները դիտելու համար:

«Խոսրով» պետական արգելոցը գտնվում է Գեղամա լեռնավահանի հարավային և Ուրծի ու Երանոսի լեռնաշղթաների հյուսիսարևմտյան լեռնալանջին, Ազատ և Խոսրով գետերի ավազաններում՝ 1400–2250 բարձրությունների սահմաններում: Արգելոցն զբաղեցնում է 29196 հեկտար մակերեսով տարածք: Ստեղծվել է 1958 թ–ին:

Բազմազան են այստեղի բուսատեսակները՝ առկա է բույսերի 1686 տեսակ, որոնց 8.7%–ը կամ 146–ը հազվադեպ են: Հանդիպում են վայրի կենդանիների 213 տեսակ: Պահպանվում են «Կարմիր գրքի» մեջ մտցված բեզոարյան այծը, մուֆլոնը, առաջավորասիական ընձառյուծը, կովկասյան գորշ արջը, անտառակատուն և այլ կենդանատեսակներ: Արգելոցում բնակ-

վում է 142 տեսակ թռչուն, որոնցից 66–ը գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում», առկա են նաև 5 ձկնատեսակ:

«Դիլիջան» պետական արգելոցը գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում, Փամբակի, Արեգունու, Միափորի, Գուգարաց լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Զբաղեցնում է 27.995 հեկտար մակերես, գտնվում է ծովի մակարդակից 1000–2300 մ բարձրությունների սահմաններում: Ստեղծվել է 1958 թ.: Այստեղ հանդիպում են ավելի քան 812 բուսատեսակ, կենդանիներից 112 տեսակ, որից 3–ը՝ հազվադեպ, 107 թռչնատեսակ, որից 49–ը հազվադեպ են, 5 ձկնատեսակ:

Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում ֆլորայի հնագույն տեսակներից պահպանված կարմրածառի պուրակները:

Այս տարածքում են գտնվում «Դիլիջան» հանքային աղբյուրը, Պարզ լիճը, Գոշավանքի և Հաղարծնի վանական համալիրները:

«Շիկահող» պետական արգելոցը գտնվում է հանրապետության հարավարևելյան մասում՝ Ծավ և Շիկահող գետերի ավազաններում՝ 700–2400 մետր բարձրությունների սահմաններում: Այն զբաղեցնում է 10 հազ. հեկտար մակերես, որի 94%–ը ծածկված է անտառներով: Ստեղծվել է 1958 թվին:

Արգելոցում աճում են 1000–ից ավելի բուսատեսակ: Առավել տարածված են սոսու, կարմրածառի, բոխու, տանձենու ծառատեսակները:

«Էրեբունի» պետական արգելոցը գտնվում է մերձարաքսյան ծալքավոր լեռնաշղթաների քայքայված լանջերին, Ողջաբերդ գետակի ավազանում, Կոտայքի և Արարատի մարզերի սահմաններում, ք. Երևանի շրջակայքում:

Զբաղեցնում է 89 հեկտար մակերես: Ստեղծվել է 1981 թվին: Սա աշխարհում միակ արգելոցն է, որը կազմակերպվել է վայրի հացազգիների պահպանության և վերարտադրության նպատակով: Արգելոցում աճող արարատյան ցորենը և վայրի միահատիկ ցորենը մտել են Հայաստանի Հանրապետության «Կարմիր գիրքը»:

«Սև լիճ» պետական արգելոցը գտնվում է Հանրապետության հարավում՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասարի արևելյան լեռնաստորոտի խառնարանային մասում, Հայաստանի և ԼՂՀ–ի սահմանային հատվածում՝ 2658 մ բարձրության վրա: Զբաղեցնում է 240 հեկտար մակերես: Ստեղծվել է 1987 թ.: Արգելոցում աճում են 160 տեսակ բուսատեսակ, որից 7–ը հազվագյուտ են:

«Սևան» ազգային պարկը ստեղծվել է 1977 թ.: Այն ընդգրկում է Սևանա լճի հայելին և լճի մակարդակի իջեցման պատճառով ազատված հատակային գոտիները: Զբաղեցնում է 150.1 հազ. հա մակերես, որից 24.8 հազ. հեկտարը ցամաքային է: Պարկը բաժանված է 3 ֆունկցիոնալ գոտիների՝ արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական:

Ռեկրեացիոն զոնայի տարածքը կազմում է 7200 հա., որից 3.000 հեկտարը ցամաքային է: Այս տարածքը հիմնականում ծածկված է արհեստական անտառաշերտերով և թփուտներով:

Հանրապետության տարածքում դեռևս 1950–70–ական թվականներին կազմակերպվել են նաև արգելավայրեր: Դրանց հիմնական նպատակը գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրների և նրանց տարրերի պահպանությունն ու վերարտադրությունն է: Սակայն դրանք կարող են նաև մեծ հատաքրքրություն ներկայացնել էկոզբոսաշրջության համար:

Իսկ ընդհանուր առմամբ ՀՀ տարածքի հատկապես լեռնային բոլոր հատվածները, ինչպես նաև բոլոր արգելոցներն ու արգելավայրերը էկոզբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Իսկ Վայոց Ձորի և Սյունիքի դժվարամատչ լեռնային վայրերի անզուգական հուշարձանների՝ Արփայի կիրճի բնական սյունաշարերի, «Վարդան Մամիկոնյան» բնական ժայռաքանդակի, Գլաձորի, Գնդեվանքի, Նորավանքի, Որոտանի կիրճի, «Սատանի կամուրջի», քարանձավային Խնձորեսկի հրաշալիքները ոչ միայն մատչելի, այլև հաճելի է դիտել ձիազբոսանքով և հետիոտն զբոսանքով:

Հանրահայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը հարուստ է քարանձավներով: Քարանձավները միշտ էլ հրապուրել են մարդկանց: Սկզբում հեքիաթային գանձեր էին փնտրում դրանցում, իսկ հետո սկսեցին թափանցել ստորգետնյա թագավորության գաղտնարանները, որտեղ թաքնված են հնագույն պատմության յուրօրինակ մի աշխարհ ու բնական անկրկնելի հրաշագործություններ:

Բնության այս անկրկնելի գանձերն էլ կարելի է վերածել էկոզբոսաշրջության երթուղիների: Հայաստանի Հանրապետության այս բացառիկ հարստությունը կարող է գրավել և գայթակղել ամենախստապահանջ զբոսաշրջիկներին և շոյել նրանց նուրբ ճաշակը:

Արևմուտքի բարձրակարգ հյուրանոցների բարձր մակարդակով սպասարկմանը սովոր զբոսաշրջիկներին կարելի է առաջարկել բնության ստեղծած գլուխգործոցներ, որոնք ոչ միայն տեսարժան վայրեր կարող են հանդիսանալ, այլև կարճաժամկետ հանգրվան:

Ինչպես ասվել է, Հայաստանի Հանրապետությունն ունի բնական շատ գեղատեսիլ, զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող վայրեր: Սակայն, այդ վայրերում զբոսաշրջիկներին այլ գրավիչ հրապուրանքներ և հետաքրքրություններ դեռևս չեն առաջարկվում: Մինչդեռ, յուրաքանչյուր տեսարժան վայր (բնական, թե մարդածին) այդ առումով նպատակահարմար է բարելավել այնպես, որ ներկայացվի օտարերկրացիներին, որպես իրենց այցելության գլխավոր հրապուրանք կամ գրավչություն՝ ապահովելով համապատասխան ծառայություններ: Միաժամանակ, ինչպես ասվել է, հանրապետությունում կստեղծվեն նոր աշխատատեղեր (հյուրանոցներ, ռեստորաններ, որոնք որոշակի եկամուտներ կապահովեն):

Էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության անզուգական ձև կարող է հանդիսանալ նաև Արագածի լանջերին, Լոռու հրաշագեղ ձորում և հանրապետության մյուս տարածաշրջաններում, ինչպես նաև Արցախում:

Այս բնագավառում կատարվող ներդրումները հնարավորություն կտան հանրապետության նշված մարզերում և Արցախում նորից զարգացնելու ձիաբուծությունը, ստեղծել ձիաբուծական տնտեսություններ, աճեցնել վաղուց մեծ համբավ ստացած արցախյան նժույգներ, որոնցով մեծ հաճույք կպատճառվի արտասահմանյան ցանկացած զբոսաշրջիկի:

Այսպիսով, էկոզբոսաշրջության զարգացումը հնարավորություն կտա ոչ միայն պահպանել մեր ռեկրեացիոն ռեսուրսների անաղարտությունը, ապահովել զգալի արդյունավետություն, այլև հանրապետության մարզերում ստեղծել մեծ թվով աշխատատեղեր: Բացի դրանից, նշված տարածաշրջաններում պետք է ստեղծվեն զբոսաշրջությանը սպասարկող համակարգ, որտեղ նույնպես զբաղված կլինեն մեծ թվով աշխատողներ:

Այս բնագավառում ներդրումային քաղաքականությունը, որը կարող է դառնալ հանրապետության տնտեսական աճի կարևոր աղբյուր, պետք է գտնվի ոչ միայն անհատ ձեռներեցների, այլև հանրապետության կենտրոնական ու տեղական իշխանությունների ուշադրության կենտրոնում:

8. Զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման ու գլոբալացման միտումները Հայաստանի Հանրապետությունում

Վերը մենք արդեն հանգամանորեն վեր ենք լուծել, լուսաբանել բոլոր հիմնական այն նախապայմանները, որոնք առկա են Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար: Նշել ենք նաև, որ զբոսաշրջության սաղմերը Հայաստանում ի հայտ են եկել դեռ շատ հնուց, երբ օտարերկրյա գիտնականները, ճանապարհորդներն այցելել են Հայաստան, կատարել տարբեր կարգի ուսումնասիրություններ, իսկ արտասահմանյան առևտրական քարավանները հանգրվանել են մեր մայրաքաղաքներում ու առևտրական ճանապարհների վրա գտնվող իջևանատներում:

Նրանք բոլորն էլ Հայաստանի բնության, մարդկանց, տնտեսության վերաբերյալ մեծ տպավորություններ են թողել իրենց նոթագրություններում:

Զբոսաշրջությունը, որպես այդպիսին, պետական մակարդակով Հայաստանում սկսել է զարգանալ խորհրդային իշխանության տարիներին: Ըստ որում, այդ ժամանակաշրջանում հանրապետությունում գործում էին 110 առողջարանային և հանգստի տներ, գործում էին զբոսաշրջային 30 հանգրվաններ՝ 6000 տեղով:

Կարևոր է հիշատակել հետևյալ փաստարկը՝ 1933 թվին հեռավոր արտասահմանից Խորհրդային Հայաստան այցելել է ընդամենը 19, 1934 թվին՝ 67, 1935 թվին՝ 255 քաղաքացի:

Միջազգային զբոսաշրջությունն այստեղ հիմնականում սկսել է զարգանալ 1950–ական թվականներից հետո: Մասնավորապես, 1985 թվին արտասահմանյան երկրներից (առանց ԽՍՀՄ–ի) Խորհրդային Հայաստան է այցե-

լել 70, իսկ 1987 թվին՝ 100 հազար զբոսաշրջիկ: ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի Հանրապետությունում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր պայմանների հետևանքով, 1990–ական թվականների սկզբներից հանրապետություն այցելող զբոսաշրջիկների թիվը խիստ կրճատվել է և 1996 թվին այն կազմել է միայն 13 հազար, որից հետո նորից սկսել է նկատելիորեն աճել և 1999 թվին կազմել է 40 հազար զբոսաշրջիկ [15, 53]: Նշենք, որ նախկին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից մինչև 1980–ական թվականները Խորհրդային Հայաստան են այցելել տարեկան միջին հաշվով ավելի քան 300 հազար զբոսաշրջիկ:

1996 թվականից հետո, երբ անկախություն ստացած Հայաստանի Հանրապետությունում սոցիալ–տնտեսական կյանքը սկսվել է նորմալանալ և այն դրվել է կայուն զարգացման ուղու վրա, այդ հանգամանքն, անկասկած, իր ազդեցությունն է թողել նաև միջազգային զբոսաշրջության զարգացման վրա: Դա հատկապես ցայտուն կերպով նկատելի էր 2000 թվականից սկսած, երբ մինչև այդ գոյություն ունեցած արտասահմանյան զբոսաշրջիկներ ընդունող «Արմենիա», «Էրեբունի» և «Երևան» շատ թե քիչ բարեկարգ հյուրանոցների արմատական վերակառուցումից բացի, հանրապետությունում սկսեցին կառուցվել բարձրակարգ, ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող հյուրանոցներ: Այդ ժամանակվանից նկատելիորեն փոխվեցին նաև հյուրանոցներում սպասարկման մակարդակը, հանրապետությունում աշխուժացավ ժամանակակից ավտոմայրուղիների կառուցումը և զբոսաշրջությունը փաստորեն ամբողջապես անցավ մասնավոր ձեռներեցների իրավասության տակ, ստեղծվեցին զբոսաշրջային բազմաթիվ կազմակերպություններ: Մասնավորապես, հանրապետության առևտրի ու տնտեսական զարգացման նախարարության զբոսաշրջության վարչության տվյալներով այժմ (2003 թվին) հանրապետության պետական ռեգիստրով գրանցված են զբոսաշրջային 4800 կազմակերպություն, որոնցից ռեալ գործում են 150–ը: Վերջին տվյալներով հանրապետությունում զբոսաշրջիկների համար նախատեսված երեք և բարձր աստղանի հյուրանոցների թիվը հասնում է 29–ի, որոնք ընդհանուր առմամբ ունեն 2700 տեղ:

Այսպիսով, հատկապես 2000–2003 թթ. Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության բնագավառում զգալի տեղաշարժեր են կատարվել, որոնց վերաբերյալ պատկերացում է տրված ստորև զետեղված (5) աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության միջազգային զբոսաշրջության 2000–2003 թթ. մի քանի կարևոր ցուցանիշներ[1]

աղյուսակ 5

	2000 թ. հունվար - դեկտեմբեր	2001 թ. հունվար - դեկտեմբեր	2002 թ. հունվար - հունիս	2002 թ. հունվար - դեկտեմբեր	2003 թ. հունվար - հունիս	2003.06/ 2003.06 %
Հյուրանոցների քանակը, որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների, հատ ժամանողներ	14	28	27	29	28	103.7%
ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՁՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկ	84.461	123.262	58.458	162.089	74.633	127.7%
որոնցից տեղավորվել են հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	23.230	30.732	11.223	26.075	12.794	114.0%
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	61.231	92.530	47.235	136.014	61.839	130.9%
մեկնողներ մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՁՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկ	111.250	109.976	56.002	130.806	73.050	130.4%
որոնցից ուղևորությունը կազմակերպել է զբոսաշրջային կազմակերպությունների կողմից	9.174	4.423	1331	3565	2090	156.8%
ինքնուրույն	102.076	105.553	54.669	127.241	70.960	129.8%

Ինչպես երևում է, ընդամենը երեք տարում 2000–2002 թթ. հանրապետություն այցելած զբոսաշրջիկների թիվը շուրջ 84.5 հազարից հասել է շուրջ 163 հազարի, իսկ հանրապետությունից մեկնած զբոսաշրջիկների թիվը 111.2 հազարից՝ 130.8 հազարի:

Կարևոր է այն հանգամանքը, որ վերակենդանանում է նաև հանրապետության ներքին զբոսաշրջությունը, որի վերաբերյալ պաշտոնական տվյալները բերված են ստորև:

[1] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2003 թվի հունվար–հուլիս ամիսներին տեղեկատվական ամսական զեկույցը:

Հայաստանի Հանրապետության ներքին զբոսաշրջության 2001–2003 թթ. մի քանի կարևոր ցուցանիշներ[1]

աղյուսակ 6

	2001 թ. հունվար – դեկտեմբեր	2002 թ. առաջին կիսամյակ	2002 թ. հունվար – դեկտեմբեր	2003 թ. առաջին կիսամյակ
Ընդամենը զբոսաշրջիկ-ներ որոնցից ըստ նպատակի՝	117.079	50.994	121.315	52.291
գործնական	45.181	25.403	49.199	20.569
հանգստի և ժամանցի	25.516	6.328	28.864	7.190
բուժման	3.491	692	6005	3079
այլ	42.891	18.571	37.247	21.453

Ինչպես երևում է աղյուսակից, չնայած ոչ մեծ չափերով, սակայն ներքին զբոսաշրջիկների թիվը նույնպես տարեցտարի զգալիորեն աճում է՝ 2001 թվականին 117.1 հազարից 2002 թվականին հասնելով 121.3 հազարի:

Ըստ որում, ներքին զբոսաշրջիկների 38.6%–ը կազմում են գործնական նպատակով այցելողները, 29.8%–ը՝ հանգստի ու ժամանցի, 3.0%–ը՝ բուժման, 36.6%–ը՝ մարզական, մշակութային, կրոնական և այլ նպատակներով այցելողները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների ավելի քան 32.5%–ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներից ժամանողներին: Այդ թվում շուրջ 19.8%–ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, 4.5%–ը՝ Վրաստանին: Բավականին մեծ թիվ են կազմում Եվրոմիության երկրներից ժամանողները: Վերջին տվյալներով այդ երկրներին բաժին է ընկնում ՀՀ ժամանող զբոսաշրջիկների ավելի քան 25.4%–ը, մասնավորապես, մեծ թիվ են կազմում Ֆրանսիայից (4.9%), Գեր-

[1] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրության ծառայության 2003 թվի հունվար–հուլիս ամիսների տեղեկատվական ամսական զեկույցը:

մանիայից (4.2%) և Մեծ Բրիտանիայից (7.7%): Եվրամիության մյուս երկրներից ժամանողները կազմում են 8.6%:

Ընդհանուր առմամբ ՀՀ ժամանող զբոսաշրջիկների 67.5%–ը բաժին է ընկնում ոչ ԱՊՀ երկրներին, որից ինչպես նշվեց 25.4%–ը ԵՄ երկրներին: Մեծ թվով զբոսաշրջիկներ են ժամանում ԱՄՆ–ից (17.3%), Իրանից (3.8%), Լիբանանից (3.4%), Կանադայից (2.7%) և այլ երկրներից, որոնց բաժին է ընկնում 18.5%–ը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2002 թվին զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 130.8 հազ. մարդ, որը 2001 թվի համեմատությամբ աճել է 18.9%–ով: Ըստ որում, զբոսաշրջային կազմակերպությունների միջոցով մեկնողների թիվը կազմել է 3565 մարդ, իսկ ինքնուրույն ձևով մեկնողների թիվը՝ 127.241 մարդ: ՀՀ–ից արտասահմանյան երկրներ մեկնող զբոսաշրջիկների ավելի քան 39.2%–ը մեկնում են հանգստի և ժամանցի նպատակով, 25.2%–ը՝ գործնական նպատակներով, այլ նպատակներով այցելողները կազմում են 35.6%–ը:

Իսկ արտասահմանյան երկրներից ժամանող զբոսաշրջիկների ընդհանուր թվի 50.1%–ը կազմում են գործնական նպատակով ժամանողները, 34.1%–ը՝ հանգստի ու ժամանցի նպատակով, 1.5%–ը՝ կրթության և բուժման, 14.3%–ը՝ այլ նպատակներով:

Այսպիսով, բերված փաստացի տվյալները վկայում են, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներքին զբոսաշրջությունը տարեցտարի զգալիորեն աճում է: Բավական է ասել, որ արդեն 2002 թվին զբոսաշրջությունից ստացված եկամուտը կազմել է շուրջ 200 մլն ԱՄՆ դոլար, որը կազմում է հանրապետության այդ տարվա ՀՆԱ–ի շուրջ 8.1%–ը: Ըստ որում, դրսից եկած յուրաքանչյուր զբոսաշրջիկ հանրապետությունում ծախսում է շուրջ 1000 դոլար:

Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ տարեցտարի ավելանում է այն երկրների թիվը, որոնց հետ ՀՀ–ն զբոսաշրջային կապերի մեջ է: Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տվյալներով, այժմ ՀՀ–ն աշխարհի 90 երկրների հետ այդպիսի կապերի մեջ է:

Նախկինում հանրապետություն այցելող զբոսաշրջիկները գերազանցապես հանգրվանում էին միայն Երևանում: Այժմ Երևան քաղաքից բացի, հանրապետության տարածքում կան զբոսաշրջային 49 հանգրվան, այդ թվում՝

Արագածոտնի մարզում . . . 1
Արարատի 1
Գեղարքունիքի 6
Կոտայքի 10
Լոռու 5
Շիրակի 7
Սյունիքի 5
Տավուշի 7
Վայոց Ձորի 7

Ինչպես ասվել է, համաշխարհային չափանիշով զբոսաշրջությունը բուռն աճ է ապրում, ինչպես այդ ճյուղի ներքին կառուցվածքի, այնպես էլ դրա տարածքային առումով: Ասենք նաև, որ ինչպես տնտեսության մյուս բոլոր բնագավառներում, այնպես էլ միջազգային զբոսաշրջության համակարգում տեղի է ունենում գլոբալացման գործընթաց:

Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության գործընթացին մեծապես նպաստում է այն հանգամանքը, որ 1997 թ–ից Հայաստանի Հանրապետությունը Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության անդամ է (այդ որոշումը կայացվել է նշված տարվա հոկտեմբերին ՁՀԿ Ստամբուլ քաղաքում տեղի ունեցած 12–րդ ընդհանուր ժողովում):

Հայաստանի Հանրապետությունը իր բնական բազմազան նախապայմանների, ինչպես նաև մշակութային, պատմաճարտարապետական անզուգական կոթողներով լայն հնարավորություններ ունի մասնակցելու միջազգային զբոսաշրջության գլոբալացման գործընթացին: Դա հնարավորություն կտա մեր մշակութային արժեքները, բնական արժեքները, ճարտարապետությունը, երաժշտությունն ավելի լայնորեն ու խորությամբ ներկայացնելու աշխարհի մյուս ժողովուրդներին, դրանք դարձնել աշխարհի մյուս երկրների համանման արժեքների ընդհանրության բաղկացուցիչ մասը, պահպանելով, չաղճատելով, չկորցնելով հայկական ազգային արժեքների յուրահատկությունները, հայ ժողովրդին բնորոշ առանձնահատկությունները:

Որպեսզի զբոսաշրջության մեր ազգային արժեքները մատչելի լինեն համաշխարհային հանրությանը, այն դառնա աշխարհի համանման արժեքների ընդհանրության մաս, այսինքն գլոբալացվի, անհրաժեշտ է այդ բնագավառում իրականացնել նոր խոշոր միջոցառումներ:

Կառավարության մակարդակով լուրջ միջոցառումներ ձեռնարկելով՝ կարծում ենք հնարավոր է մոտակա հեռանկարում զբոսաշրջությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Այդ միջոցառումներն ուղղված պետք է լինեն իրազեկության ապահովմանը, պատմատեսարժան վայրերի բարեկարգմանն ու վերանորոգմանը, ճամփորդությունների հետ առնչվող բազմաթիվ խնդիրների լուծմանը: Այդ բոլորի իրականացումն, անկասկած, կպահանջի կառավարման ժամանակակից մեթոդների կիրառում՝ զբոսաշրջությունը սպասարկող ճյուղերում (ավիառուղիներ, հյուրանոցներ և այլն): Ըստ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այդ միջոցառումները պետք է մրցակցային պայմաններում մրցունակ լինեն միջազգային զբոսաշրջության կազմակերպությունների համակարգում: Իսկ դրա համար անհրաժաշտ է, որպեսզի հայկական զբոսաշրջության կազմակերպությունները, ընկերությունները, գործակալություններն ունենան ժամանակակից պահանջներին համապատասխան առաջավոր տեխնոլոգիաներ, հմտություններ այնպիսի ասպարեզներում, ինչպիսիք են կոմերցիոն ավիացիան, հյուրանոցները, միջազգային զբոսաշրջության տնտեսական հարաբե-

ությունները և համապատասխան հեղինակության ստեղծումը, պատմական հուշարձանների պահպանությունը և այլն:

Գտնում ենք, որ խիստ անհրաժեշտություն է հյուրանոցներում ներդնել համակարգչային տեխնիկայի լայնորեն օգտագործմամբ ղեկավարման ամենաժամանակակից մեթոդներ, ինչը հնարավորություն կընձեռի բարձր մակարդակով և ժամանակին կազմակերպելու հյուրանոցային նախնական պատվերների գրանցումը, գույքագրումը, հաշվառումը, հաշվապահական և այլ գործընթացներ, բարձրացնելու դրանց արդյունավետությունը:

Ինչպես ասվել է, Հայաստանի Հանրապետությունն ունի բնական գեղատեսիլ, զբոսաշրջության համար շատ մեծ հետաքրքրություն ներկայացնող վայրեր: Սակայն, այդ վայրերում զբոսաշրջիկներին այլ գրավիչ հրապուրանքներ և հետաքրքրություններ դեռևս չեն առաջարկվում:

Մինչև 1980–ական թվականները, Հայաստան այցելող զբոսաշրջիկների մեջ մեծ էր առողջարանային և մարզական (դահուկային) նպատակով այցելողների տեսակարար կշիռը: Ի դեպ, արտասահմանյան զբոսաշրջիկները խիստ պահանջկոտ են և համաշխարհային շուկայում այդ բնագավառում մրցակցությունը շատ ուժեղ է: Այս բնագավառը Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին հասցնելու համար անհրաժեշտ են մեծ ներդրումներ և ժամանակ: Կարծում ենք, որ հիմնահարցը նպատակային, հիմնավորված ներկայացնելու դեպքում, նշված բնագավառում ներդրումային քաղաքականությանը կարող են մասնակցել նաև սփյուռքահայ մեր հայրենակիցները:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության հետագա զարգացման համար կան դեռևս ոչ լրիվ օգտագործվող կամ առհասարակ չօգտագործվող մի շարք հնարավորություններ, որոնց ռացիոնալ օգտագործումն անկախություն ստացած մեր հանրապետության համար հրամայական պահանջ է:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ինդուստրիայի զարգացման համար անհրաժեշտություն է զգացվում իրականացնել ռազմավարական հետևյալ միջոցառումները.

1. Ձևավորել զբոսաշրջության զարգացման բարենպաստ իրավական դաշտ.

2. Միջազգային օդային կապերի, ծառայությունների կազմակերպումն իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան.

3. Հանրապետության զբոսաշրջության ցրված տնտեսությունն (առավելապես վիճակագրությունը) ժամանակակից հիմքերի վրա դնել՝ օգտագործելով համակարգիչների ընձեռած մեծ հնարավորությունները.

4. Հանրապետությունում հաճախակի իրականացնել զբոսաշրջության, արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրական միջազգային ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպումը.

5. Հյուրանոցային համալիրների, զբոսաշրջության ժամանակակից հան-

գրվանների ստեղծումն իրականացնել միջազգային սպասարկման չափանիշներին համապատասխան ձևերով, մեթոդներով.

6. Այդ բնագավառի համար պատրաստել ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետներ, ունենալ մայրենի լեզվով համապատասխան գրականություն (մենագրություններ, ձեռնարկներ, դասագրքեր, մեթոդական ցուցումներ).

7. Մշակել զբոսաշրջության զարգացման համար համապետական և ռեգիոնալ(տարածաշրջանային) ծրագրեր.

8. Շատ կարևոր է միջազգային զբոսաշրջության շուկաների ուսումնասիրությունը և նոր շուկաներում Հայաստանի Հանրապետությանը վերաբերող գովազդատեղեկատվական աշխատանքների ծավալումը.

9. Օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավումը՝ հանրապետության զբոսաշրջության ոլորտի ու նրա ենթակառուցվածքների ձևավորման նպատակով.

10. Պետական և մասնավոր ներդրումային քաղաքականություն ծավալել հանրապետության տարածքում սփռված պատմամշակութային ռեզակի կոթողների վերականգնման, դրանց շրջապատի ու տրանսպորտային ուղիների կարգավորման, տեղերում համապատասխան կարճաժամկետ սպասարկման օբյեկտների ստեղծման բնագավառներում.

11. Պետական առանձնահատուկ հոգացություն ցուցաբերել Սևանա լճի պահպանման, զբոսաշրջային առանձնահատուկ նշանակություն ունեցող այդ լճի ափերի էկոլոգիական վիճակի կարգավորման, Սևանի ազգային պարկի տարբեր հատվածներում հայկական խոհանոցի կետերի, հայկական հնագույն արհեստի ու արվեստի ցուցադրման, մեծ հետաքրքրություն ներկայացնող առարկաների, հուշանվերների արտադրության համալիրների կազմակերպման խնդիրներին.

12. ՀՀ զբոսաշրջության զարգացման գործին մեծապես կնպաստի հանրապետության մարդածին ու բնական ռեկրեացիոն և զբոսաշրջության առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող ռեսուրսներին, հուշարձաններին վերաբերող հատուկ, մատչելի, բազմալեզու ուղեցույցների, նկարագրող ալբոմների ստեղծումը, հրատարակումը:

13. Այս հույժ կարևոր ոլորտի զարգացմանը մեծապես կնպաստի նաև վերը թվարկված այդ բոլոր նյութերին, տվյալներին վերաբերող հատուկ DVD դիսկետների ստեղծումը, կոորդինացումը և ինտեգրացումը միջազգային զբոսաշրջության համակարգին:

ԳԼՈՒԽ VI

ԶԲՈՍԱԾՐՋՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆԳՍՏԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնտեսության հեռանկարային զարգացման և եկամտաբեր ուղղություններից մեկը կարող է դառնալ զբոսաշրջության և հանգստի ինդուստրիան:

Հիրավի, Արցախի էկոլոգիական առումով մաքուր բնությունը և ռեկրեացիոն բազմազան տեսուրսները հանգստի ու զբոսաշրջության ինդուստրիայի կազմակերպման լայն հնարավորություններ ունեն: Դրանք շատ մեղմ կլիմայական պայմաններն են, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, զուլալ և շատ մաքուր գետերն ու աղբյուրները, հանքային ջրերը, բնության անձեռակերտ հրաշալիքները և պատմաճարտարապետական հնագույն հազարավոր հուշարձանները:

Նշենք, որ Արցախի տարածքը շատ հնուց հայտնի է ոչ միայն տաք, այլև սառն հանքային ջրերով, որոնցից առավել հանրահայտը Շուշի քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Երկաթաջուրն է, որի վրա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Մակար Բարխուդարյանը դեռ նախանցյալ դարում (Տե՛ս. Մակար եպիս Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 11):

Հենց այդ ռեսուրսներն էլ անվանում են ռեկրեացիոն ռեսուրսներ, որոնք հիմք են հանդիսանում մարդու հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար:

Լեռնային Ղարաբաղի ռեկրեացիոն ռեսուրսները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ առողջապահական, մասսայական հանգստի ու զբոսաշրջային –մարզական:

Համեմատաբար բազմազան են առողջարանային ռեսուրսները: Դրանք են՝ առաջին հերթին հանքային բուժիչ աղբյուրները, լեռնային մաքուր օդը, ջերմության, ուլտրամանուշակագույն ճառագայթների առատությունը, մեղմ կլիման և անտառային լայն զանգվածների առկայությունը:

Նշված առանձնահատկությունների տեսակետից զբոսաշրջության, առողջապահական և հանգստի ինդուստրիայի կազմակերպման առումով

կարևոր դեր կարող են ունենալ Շուշիի շրջանը, Հադրութի շրջանի հյուսիսային մասը՝ Տումի–Ազոխ–Դրախտիկ գոտին, Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի հանգույցն ու Թարքառ գետի միջին հոսանքի ավազանը:

Զանգվածային հանգստի և զբոսաշրջության համար շատ նպաստավոր են Թարքառ, Խաչեն, Ինջա, Կարկառ, Վարանդա, Խոնաշեն գետերի միջին ու վերին հոսանքների գեղատեսիլ, անտառածածկ ավազանները, Սարսանգի ջրամբարը, բոլոր շրջաններում առկա բարձրադիր անտառածածկ սարավանդները:

Զբոսաշրջային–մարզական ինդուստրիայի կազմակերպման համար շատ նպաստավոր պայմաններ ունեն Ղարաբաղի լեռնաշղթայի, Մռավի լեռնաշղթայի ու դրանց բազմաթիվ լեռնաճյուղերի բարձրադիր գագաթների (Գոմշասար, Մռավ, Քառասուն աղջիկ, Կարմրասար, Մեծ Քիրս, Փոքր Քիրս, Դիզափայտ, Բովուրխան), լեռնազանգվածների լանջերը, որոնք տարվա զգալի մասը ձյունածածկ են լինում և հարմար են նաև դահուկային մարզաձևերի համար: Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Թարքառ, Կարկառ, Իշխանագետ, Վարանդա գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, բազմատեսակ քարանձավային համալիրները (հատկապես Ազոխի շատ եզակի քարանձավային համալիրը, այդպիսիք կան նաև Շուշիի կիրճում, Բերդաձորում, Թարքառի հովտում):

Ինչպես մասսայական հանգստի, այնպես էլ զբոսաշրջային–մարզական ինդուստրիայի կազմակերպման լավ նախադրյալներ են Ամարասի, Գանձասարի, Դաղիվանքի, Գտչավանքի, Մայրաբերդի, Շուշիի ու ԼՂՀ տարածքի հատկապես նախալեռնային ու լեռնային վայրերում գտնվող հայկական ճարտարապետական հնագույն բազմաթիվ համալիրները:

Դրանք բոլորն էլ պատմագիտական, ճանաչողական մեծ հետաքրքրություն ներկայացնող մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ են, որոնցից առանձնահատուկ ուշադրության են արժանի Ամարասի ու Գանձասարի համալիրները: Ըստ որում, Գանձասարը հայ ճարտարապետության 13–րդ դարի հանրագիտարան է (այդպես է անվանել այս անզուգական կոթողը ռուս արվեստաբան Յակոբսոնը), որը կառուցվել է 1216–1230 թթ. (Տե՛ս. Բագրատ Ուլուբաբյան, Գանձասար, 1981, էջ 9):

Իսկ Ամարասն Էջմիածնի վանքի հասակակիցն է, կառուցվել է 4–րդ դարի սկզբին Գրիգոր Լուսավորիչի ու նրա թոռ Գրիգորիսի կողմից: Վերջինս թաղված է այստեղ: Կան փաստեր, որ Մ. Մաշտոցը հայոց գրերի տարածումն Արցախում սկսել է Ամարասից, որտեղ նա բացել է առաջին դպրոցը: Հաշվի առնելով այս բացառիկ ռեսուրսների մեծ նշանակությունը՝ ամեն տարի այստեղ են այցելում արտասահմանյան զգալի թվով մասնագետներ, պետական գործիչներ, զբոսաշրջիկներ:

Խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի ռեկրեացիոն այդ անզուգական ռեսուրսները (մասնակի բացառությամբ՝ Շուշիի) բնակչության հանգստի, բուժման նպատակներով պետական մակարդակով չեն օգտագործվել:

Անկախություն ձեռք բերելուց հետո, երբ Արցախի ժողովուրդն ինքն է տնօրինում իր ռեսուրսները, դրանք կարող են դառնալ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր ուղիներից մեկը:

Լեռնային Ղարաբաղում առողջապահական հանգստի ու զբոսաշրջության, մարզական ժամանակակից համակարգի ստեղծումը ոչ միայն կբավարարի հանրապետության բնակչության պահանջներն այդ բնագավառներում, այլև կարող է ունենալ միջազգային նշանակություն: Իսկ դա նշանակում է, որ առողջարանային, հանգստի ու զբոսաշրջության ինդուստրիան կդառնա ԼՂՀ տնտեսության բաղկացուցիչ, բարձր արդյունավետ ճյուղերից մեկը:

Առողջապահական ժամանակակից համակարգի ստեղծման եզակի պայմաններ ունի Շուշին: Այն գտնվում է ծովի մակարդակից 1450–1500 մ բարձրություն ունեցող անզուգական գեղեցիկ սարահարթի վրա, որը շրջապատված է Ղարաբաղի լեռնաշղթայի բարձրադիր լեռնաճյուղերով: Լեռնային մաքուր օդը, չափավոր տաք ամառը, մեղմ ձմեռն այն նախապայմաններն են, որոնք հնարավորություն են տալիս Շուշիում ստեղծել ամբողջ տարին գործող առողջարանային համալիր:

Այստեղ տարեկան միջին ջերմաստիճանը +8.4°C է, ամենատաք ամիսը հուլիսն է +18.9°C միջին ամսական ջերմությամբ: Հունվարն ամենացուրտ ամիսն է, –1.5°C ջերմությամբ: Կլիմայական այսպիսի պայմանները շատ հարմար են մարդու առողջության, բուժման և հանգստի համար: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Շուշին կարող է լավ ապահովված լինել նրանից փոքր հեռավորության վրա գտնվող Շրլանի աղբյուրներից բերվող բուժիչ հանքային ջրով, ապա այն, հիրավի, առողջարանային անզուգական քաղաք կարող է դառնալ: Ավելի ճիշտ, այդ քաղաքի առողջարանային կարևոր դերը պետք է վերականգնվի ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխան:

Դեռ խորհրդային իշխանության տարիներին, այստեղ գործում էր հանրապետական նշանակություն ունեցող առողջարան: Սակայն 1988–1992 թթ. պատերազմական գործողությունների հետևանքով 1000 տեղանոց առողջարանի բոլոր 8 մասնաշենքերն ու բուժման, սպասարկման, օժանդակ հարմարությունները շարքից դուրս են եկել: Փաստորեն մնացել են կանգուն միայն առողջարանին կից 100 բնակարանոց բնակելի շենքի պատերը: Քանի որ Շուշին առայժմ ԼՂՀ տարածքում առողջարանային միակ կենտրոնն է, ապա խիստ անհրաժեշտ է վերականգնել քաղաքի առողջարանային համակարգը: Իսկ առողջարանային ու հանգստի ինդուստրիան ԼՂՀ եկամտի հիմնական աղբյուրներից մեկը դարձնելու նպատակով, անհրաժեշտ կլինի արդեն մոտակա հեռանկարում, հատկապես Շուշիում, կոնկրետ միջոցներ ձեռնարկել ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխանող հնարավորություններ ստեղծելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շուշիում մոտակա հեռանկարում 1000 տեղանոց առողջարանային համալիրի վերականգնումից բացի, կան բնական բոլոր նախապայմանները հետագայում այդտեղ առողջարա-

նային տեղերի թիվը հասցնելու 2.5–3.0 հազարի: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի կառուցել երկու ժամանակակից առողջարանային մասնաշենքեր, որոնք ընդհանուր առմամբ կունենան 2000 տեղ: Նշենք, որ Շուշիից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Շրլանի հանքային ջրի աղբյուրի հնարավորությունները բավարար են այդ հարցը լուծելու համար:

Քանի որ առողջարանային տնտեսության զարգացումը պետք է իրականացվի միջազգային չափանիշներին համապատասխանող պահանջներով, ապա նպատակահարմար է Շուշիում կազմակերպել նաև համապատասխան սպասարկող անձնակազմի պատրաստման կենտրոն:

Շուշիի բնական պայմանները շատ նպաստավոր են նաև հակապալարային մանկական առողջարանի համար: Նախկինում այստեղ եղել է այդպիսի մեկ առողջարան՝ 100 տեղով, որը սակայն զուրկ է եղել տարրական հարմարություններից, իսկ այժմ էլ այն կիսավեր վիճակում է:

Կատարված սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խիստ անհրաժեշտ է այստեղ կառուցել 100 տեղանոց բոլորովին նոր այդպիսի մանկական առողջարան ժամանակակից պահանջներին համապատասխան, որտեղ կարող են բուժվել ոչ միայն ԼՂՀ բոլոր շրջանների, այլև Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի այդպիսի հիվանդությամբ տառապող երեխաները: Այսպիսով, մոտակա հեռանկարում ԼՂՀ զբոսաշրջության և առողջարանային ինդուստրիայի կենտրոնը կլինի Շուշին: Իսկ մոտ ապագայում, երբ Շուշին կդառնա միջազգային ճանաչում ստացած առողջարանային (սպասարկման համապատասխան համակարգով) կենտրոն, դրան զուգահեռ անհրաժեշտ կլինի համեմատաբար սահմանափակ տեղերով առողջարաններ կառուցել Հադրութի շրջանի Տումի գյուղի մոտ գտնվող գեղատեսիլ անտառում, որտեղ մեղմ կլիմայական պայմաններից բացի, կա հանքային բուժիչ ջրի աղբյուր, ինչպես նաև Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ, որտեղ նույնպես շատ նպաստավոր բնական պայմանների (անտառ, մեղմ կլիմա, զուլալ օդ) հետ միասին կա բուժիչ հանքային ջրի աղբյուր:

Լեռնային Ղարաբաղն ունի հանգստյան տների՝ ամբողջ տարին գործող հնարավորություններով համակարգի ստեղծման նպաստավոր պայմաններ:

Մինչև 1980–ական թվականները, Լեռնային Ղարաբաղում սեզոնային ձևով (միայն ամռան ամիսներին) գործող միակ հանգստյան տունն եղել է Շուշիում: Քանի որ Շուշին պետք է զարգանա առողջարանային բուժման ժամանակակից համակարգի ստեղծման ուղղությամբ, ապա այստեղ գտնվող պատերազմից խարխլված հանգստյան տունը նպատակահարմար չէ այդ նպատակի համար վերականգնել: Տեղում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող հանգստյան տների կազմակերպման համար նպաստավոր պայմաններ կան ԼՂՀ վարչական բոլոր շրջաններում: Մասնավորապես, այդ նպատակի համար, բնական պայմանների ու տրանսպորտային առանձնահատկություններից ելնելով, նախընտրելի են Մարտունու շրջանի Թաղավարդ, Ասկերանի շրջանի Քաղարա, Մարտակերտի շրջանի Քոլատակ և Թալիշ, Հադրութի շր-

ջանի Դրախտիկ գյուղերի հանգույցները: Դրանք բոլորն էլ ունեն գեղատեսիլ շրջապատ, պտղառատ անտառներ, մեղմ կլիմա, զուլալ գետեր և աղբյուրներ:

Իր անզուգական դիրքի, զբոսաշրջային մեծ հետաքրքրություն ներկայացնող բնական և պատմաճարտարապետական նախապայմաններից ելնելով՝ ԼՂՀ–ում միջազգային զբոսաշրջության հիմնական բազա կարող է դառնալ Շուշի քաղաքը: Այստեղ ժամանակին եղել է այդ նպատակով կառուցված երկու մասնաշենք 300 տեղով: Սակայն դրանք պետք է վերակառուցվեն, վերականգնվեն ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխան: Նպատակահարմար է ստեղծել 500 տեղանոց միանգամայն նոր բազա իր բոլոր հարմարություններով: Շուշիի միջազգային զբոսաշրջության այս բազան կունենա իր մասնաճյուղերը Սարսանգի ջրամբարի ափին կամ Վանք գյուղում՝ (որտեղ հանրահայտ Գանձասարի վանքն է)՝ Մարտակերտի, Շահումյանի (նախկին Քարավաճառի) և տարածաշրջանի երթուղիները սպասարկելու համար, ինչպես նաև Թաղավարդ գյուղում (որը հանրահայտ է գեղատեսիլ անտառներով և մոտակա Սխտորաշեն գյուղի 2000 տարեկան սոսի ծառով, զուլալ աղբյուրով)՝ Մարտունու և Հադրութի շրջանների երթուղիները սպասարկելու համար:

Զբոսաշրջիկների համար առանձնահատուկ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն նախկին ԽՍՀՄ տարածքում եղած ամենատարեց այս ծառն իր շքեղ տեսքով ու կայծակի հարվածից առաջացած հսկա փչակով, որտեղ տեղավորվում է 100 մարդ, այլև այն, որ այս ծառի շվաքի տակ հանգստացել են Գրիգոր Լուսավորիչը, Հայոց արևելյան կողմանց առաջին եպիսկոպոս Գրիգորիսը, Մ. Մաշտոցը, Վաչագան Բարեպաշտ թագավորը, Մովսես Կաղանկատվացին, Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, Ռաֆֆին, Ավետիք Իսահակյանը: Իսկ Շուշիի, Ասկերանի ու Քաշաթաղին շրջանները կսպասարկվեն անմիջապես Շուշիի բազայից:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը նույնպես մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջազգային զբոսաշրջության զարգացման տեսակետից, որտեղ այս բնագավառում մինչև 1980–ական թվականների վերջերը զգալի նվաճումներ են ձեռք բերվել, ստեղծվել էր զբոսաշրջային ինդուստրիայի բազա, պատրաստվել են կադրեր, և որտեղ արդեն նորից վերականգնվում է այս կարևոր ճյուղը, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջությունը կարող է զարգանալ միայն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության հետ սերտ ինտեգրված: Այսինքն՝ ԼՂՀ զբոսաշրջային երթուղիների ցանցը պետք է դառնա ՀՀ համապատասխան ցանցի բաղկացուցիչ մասը: Դրանք պետք է իրար հետ կապվեն Տաթև–Գորիս–Բերձոր (Լաչին)–Շուշի և Սևան–Մոքք–Տաքջուր (Իստիսու)–Գանձասար երթուղիներով:

Այսպիսով, զբոսաշրջության և հանգստի ինդուստրիան ԼՂՀ տնտեսության հեռանկարային հիմնական ուղղություններից մեկն է, որն ունի զարգացման հիմնավոր, լայն հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ. Մ. Ավետիսյան, Աշխարհագրական անունների բացատրական բառարան, Երևան, 1983:
2. Հ. Կ. Գաբրիելյան, Մարգարտյա Սևան, Երևան, 1980:
3. Գիտամեթոդական և գիտամատչելի պարբերական, Կրթությունը և գիտությունը Արցախում, Երևան, 2001 (1–2):
4. Ա. Թ. Թորոսյան, Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983:
5. Ս. Հ. Հայրապետով, Առողջություն, հույզեր, գեղեցկություն, Երևան, 1986:
6. Հանդես Երևանի համալսարանի, Երևան, 2000:
7. Վ. Մ. Հարությունյան, Զվարթնոց, Երևան, 1985:
8. Վ. Մ. Հարությունյան, Էջմիածին, Երևան, 1985:
9. Մայր աթոռ Ս. Էջմիածին, Գեղարդ, 1978:
10. Մայր աթոռ Ս. Էջմիածին, Հայկական եկեղեցիները, 1970:
11. Մայր աթոռ Ս. Էջմիածին, Հայկական խաչքարերը:
12. Մարդկային զարգացման զեկույց, Գլոբալիզացիա, Երևան, 2000:
13. Ն. Ա. Մաքսիմով, Աշխարհագրության դասագրքի էջերից դուրս, Երևան, 1984:
14. Ս. Ա. Մելքումյան, ՀՀ արտաքին տնտեսական կապեր, Երևան, 2002:
15. Ս. Ա. Մելքումյան, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2000:
16. Ս. Ա. Մելքումյան, Տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2002:
17. Բ. Կ. Միքարջյան, Աշխարհագրական մանրապատումներ, Երևան, 1981:
18. Ա. Ա. Սահինյան, Գառնի, Երևան, 1985:
19 Վիճակագրական վերլուծական ժողովածու, Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2001:
20. А. Ю. Александрова, Международный туризм, Москва, 2001.
21. И. С. Иванова, Страны мира, Москва, 1997.
22. Н. И. Кабушкин, Менеджмент туризма, Минск, 2001.
23. Экономика туризма, под ред. В. А. Квартальнов, Москва, 2002.
24. М. М. Маринин, Туристические формальности и безапасность в туризме, Москва, 2002.
25. Экономика туризма, под ред. С. А. Семеницкого, Страны мира, Минск, 2000.
26. Е. А. Окладникова, Международный туризм. География туристских ресурсов мира, Москва, 2002.
27. Энциклопедия путешественника, под ред. К. С. Худавердян, Ереван, 1990.
28. Туризм и гостиничное хозяйство, под. ред. А. Д. Чудновского, Москва, 2000.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ I

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՆՐԱ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ 5

1.1 Զբոսաշրջությունը որպես աշխարհագրական և տնտեսագիտական ուսումնասիրման, գնահատման բնագավառ 5
1.2 «Զբոսաշրջություն» հասկացության բովանդակությունն ու բնորոշումը 8
1.3 Զբոսաշրջիկների խմբերն ըստ նախասիրությունների 14
1.4 Զբոսաշրջության տեսակները և ձևերը 16
1.5 Զբոսաշրջության պահանջարկը և առաջարկը 20
1.6 Զբոսաշրջային տարածաշրջան (ռեգիոն) 24

ԳԼՈՒԽ II

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 28

2.1 Զբոսաշրջության ձևավորման պատմատնտեսական նախադրյալները 28
2.2 Զբոսաշրջության ձևավորման առաջին (հնագույն) փուլ 29
2.3 Զբոսաշրջության ձևավորման ինդուստրիալ փուլ (1800–1917) 30
2.4 Զբոսաշրջության զարգացման և մենեջմենթի համակարգման փուլ (1918–1990) 33
2.5 Զբոսաշրջության առանձնահատկությունները՝ որպես կառավարման օբյեկտ 34
2.6 Զբոսաշրջության կառավարման համակարգը և կառուցվածքը 48
2.7 Տնտեսության ազդեցությունը զբոսաշրջության վրա 50
2.8 Զբոսաշրջության ազդեցությունը տնտեսության վրա 51
2.9 Էկոլոգիան և զբոսաշրջությունը 54
2.10 Սոցիալական ոլորտը՝ որպես զբոսաշրջության արտաքին միջավայր 57
2.11 Քաղաքականության ազդեցությունը զբոսաշրջության զարգացման վրա 58
2.12 Զբոսաշրջության զարգացումն ապահովող տեխնիկական միջոցները (տեխնոլոգիաները) 62

ԳԼՈՒԽ III

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅՆ՝ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ 65

3.1 Զբոսաշրջության աշխարհագրության ընդհանուր առանձնահատկությունները 65
3.2 Հանգստի և զվարճությունների նպատակով իրականացվող զբոսաշրջությունը Եվրոպայում 68
3.3 Հանգստի և զվարճությունների նպատակով իրականացվող զբոսաշրջությունն Ամերիկա աշխարհամասում 73
3.4 Զբոսաշրջությունն Ասիա–Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում 75

3.5 Զբոսաշրջությունն Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և Հարավային Ասիայում 78
3.6 Գործարար զբոսաշրջության աշխարհագրություն 79
3.7 Համաժողովների, ցուցահանդեսների կազմակերպման նպատակով իրականացվող զբոսաշրջության աշխարհագրություն 81
3.8 Ինսենտիվ զբոսաշրջության աշխարհագրություն 82
3.9 Կրոնական զբոսաշրջության աշխարհագրություն 83
3.10 Բուժառողջարարական զբոսաշրջության աշխարհագրություն 85

ԳԼՈՒԽ IV

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԶԱՐԳԱՑՈՂ ԲՆԱԳԱՎԱՌ (ՃՅՈՒՂ) 90
4.1 Ժամանակակից զբոսաշրջության դերը տնտեսության զարգացման գործում 90
4.2 Զբոսաշրջությունը՝ որպես տնտեսական համընդհանուր գործընթաց 92

ԳԼՈՒԽ V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ 100
5.1 Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի գնահատումը, միջազգային զբոսաշրջության զարգացման առումով 100
5.2 Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության զարգացման բնական նախապայմանները 105
5.3 Հայաստանի Հանրապետության կլիմայական առանձնահատկությունները զբոսաշրջության առումով 113
5.4 Հայաստանի Հանրապետության բուսական և կենդանական ռեսուրսների նշանակությունը զբոսաշրջության զարգացման գործում 116
5.5 Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների գնահատումը զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի զարգացման առումով 122
5.6 Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմաճարտարապետական հուշարձաններն ու թանգարանները 131
5.7 Էկոզբոսաշրջությունը՝ որպես Հայաստանի Հանրապետության միջազգային զբոսաշրջության զարգացման և տնտեսական աճի հիմնախնդիր 141
5.8 Զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման ու գլոբալացման միտումները Հայաստանի Հանրապետությունում 145

ԳԼՈՒԽ VI

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 153